
2007
ՀՀ կենտրոնական բանկի
բանբեր
3-րդ
եռամսյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն **4**

1. Գնաճի հաշվետվություն **6**
Գնաճի զարգացումներ **6**
Գնաճի գործոններ **10**
Մակրոտնտեսական կանխատեսումներ **37**
ՀՀ ԿԲ խորհրդի նիստի արձանագրություններ **45**

2. ՀՀ ֆինանսական համակարգը **58**

3. Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումները **68**

Մակրոտնտեսական ցուցանիշները 2007 թ. հունվար – սեպտեմբերին **76**

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ **91**

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական համակարգի քաղաքականության ու վերլուծությունների վարչություն

ՀՀ և ԼՂՀ տարածքներում գործող առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային ներդրումների և ներգրավված միջոցների կազմն ու կառուցվածքը ըստ մարզերի (30.06.2007 թ. դրությամբ) **83**

Վիճակագրության վարչություն

Կ. Կարապետյան, Ա. Դավթյան, Ա. Ալեքսանյան
Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը 2006 թվականին **122**

Ներածություն

2007 թվականի երրորդ եռամսյակի արդյունքներով՝ նախորդ եռամսյակի նկատմամբ արձանագրվել է 3.9% գնանկում, որի պարագայում տ/տ գնաճը կազմել է 2.7%: Այն տարվա համար նախատեսված տատանման թույլատրելի միջակայքում է, չնայած առավելապես մոտ է ներքին սահմանին, ինչն էլ հիմնականում պայմանավորվել է 2006 թ. օգոստոս-հոկտեմբեր ժամանակահատվածում դրամավարկային պայմանների խստացմամբ (ռեպո տոկոսադրույքի 0.75 տոկոսային կետով բարձրացում) և գյուղմթերքների սեզոնային ավելի խորը գնանկմամբ (նպաստումը՝ -1.2%): Սպառողական գների զամբյուղի երեք խոշոր բաղադրիչների՝ պարենային, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գները համապատասխանաբար աճել են տ/տ 3.8%, -2.1% և 3.3%-ով:

Չնայած 2007 թ. առաջին կիսամյակի գնաճի զարգացումներն ընթացել են արտաքին միջավայրից գնաճային թույլ ճնշումների և տնտեսությունում համախառն առաջարկի ու պահանջարկի գնահատված հավասարակշռության պայմաններում, այնուամենայնիվ, հաշվի առնելով հունիսին ցորենի միջազգային գների զգալի աճը և միջազգային շուկայում պարենային այլ ապրանքների (կաթնամթերք, մսամթերք, բուսական յուղեր, սուրճ) գների աճի հավանականությունը, ԿԲ-ն երկրորդ կիսամյակից հետամուտ եղավ դրամավարկային խիստ պայմաններով քաղաքականության իրականացմանը. հուլիսի 4-ին բարձրացրեց ռեպո տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 4.75%: Միաժամանակ, պահպանելով մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքները ռեպո գործառնության տոկոսադրույքից հավասարաչափ հեռացված լինելու դրույթը, դրանք նույնպես բարձրացվեցին 0.25 տոկոսային կետով:

2007 թվականի երրորդ եռամսյակում տնտեսության իրական աճի տեմպերը զգալիորեն ավելացել են՝ տ/տ 15.4%, որը հիմնականում պայմանավորվել է շինարարության, ծառայությունների և գյուղատնտեսության ճյուղերում ավելացված արժեքի իրական աճի բարձր տեմպերով: Ըստ եռամսյակի արդյունքների՝ դրանք կազմել են համապատասխանաբար տ/տ 18%, 16.6% և 13.8%:

Հաշվետու եռամսյակում ներքին պահանջարկի իրական աճը կազմել է տ/տ 13.3%՝ պայմանավորված մասնավոր սպառման 11% և մասնավոր ներդրումների 17.2% աճով: Պետական սպառման և պետական ներդրումների իրական աճը երրորդ եռամսյակում համապատասխանաբար կազմել է տ/տ 14.7% և 29.4%:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ երրորդ եռամսյակում արձանագրվել է տնտեսության միջին անվանական և իրական աշխատավարձերի աճ՝ համապատասխանաբար 20.3% և 23.1% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 23% և 17.4%): 2007 թվականի անցած 9 ամիսների ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գործազրկության մակարդակը նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել 7.2%: Գնաճի վրա աշխատանքի շուկայի ազդեցությունը շարունակում է խթանող լինել, քանի որ արտադրողականության եռամսյակային աճի տ/տ ցուցանիշը՝ 15%, դեռևս ցածր է աշխատավարձի աճի ցուցանիշից:

2007 թվականի երրորդ եռամսյակում ևս ընթացիկ հաշվի պակասուրդը խորացել է (տ/տ 16.6 մլն ԱՄՆ դոլարով)՝ հիմնականում պայմանավորված առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճով (տ/տ 168.9 մլն ԱՄՆ դոլարով): Ընդ որում, ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը, անցած իննամիսների արդյունքներով, կազմել է 4.1% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 2.0%): Ընթացիկ հաշվի պակասուրդի խորացումը տեղի է ունեցել արտահանման տ/տ 25.6% և ներմուծման 47.5% աճի արդյունքում: Եռամսյակի ընթացքում բանկային համակարգով ստացված ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը ավելացել է տ/տ 46.3%-ով:

Ըստ 2007 թվականի երրորդ եռամսյակի արդյունքների՝ անցած իննամիսների ընթացքում իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է փոքր-ինչ՝ 0.3% ընդլայնող ազդեցություն, որը հիմնականում պայմանավորվել է հարկային եկամուտների գերակատարմամբ (1.3% զսպող ազդեցություն) և կատարված ծախսերով (1.6% ընդլայնող ազդեցություն):

Հաշվետու եռամսյակում դրամավարկային միջավայրը, ինչպես և սպասվում էր, բնութագրվել է դրամայնացման ակտիվ գործընթացով, ինչն արտահայտվել է փողի ագրեգատների դրամային բաղադրատարրերի բարձր աճով. դրամային զանգվածի տ/տ աճը եռամսյակի վերջին կազմել է 61.3%, որը պայմանավորվել է շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամային ավանդների համապատասխանաբար 50.7% և 78.9% աճով: Դրամի շարունակական արժեքավորման պայմաններում դրամային արտահայտությամբ արտարժութային ավանդների համեմատաբար փոքր՝ 5.3% աճի հետևանքով փողի զանգվածն ավելացել է տ/տ 43.5%-ով: Նույն ժամանակահատվածում փողի բազան ավելացել է 44.1%-ով: Եռամսյակի ընթացքում պահպանվել են նաև տնտեսության վարկավորման՝ տարեսկզբից դրսևորված բարձր աճի տեմպերը՝ տ/տ 64.6%, որի կառուցվածքում ավելի քան 2 անգամ ավելացել են դրամով վարկերը:

Գնաճի հաշվետվությունում ներկայացվում են մինչև տարեվերջ և 2008 թվականի առաջին երեք եռամսյակների գնաճի կանխատեսումները (ներառյալ նաև վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ ԿԲ խորհրդի նիստերի արձանագրությունները): Ներքին և արտաքին միջավայրերի գնահատված սցենարի պայմաններում 2008 թվականի երրորդ եռամսյակի գնաճն ակնկալվում է 5.6%, որը փոքր -ինչ բարձր է ծրագրված տարեկան 4% $\pm$ 1.5% միջակայքի վերին սահմանից:

«ՀՀ ԿԲ բանբերի» երկրորդ բաժնում ամփոփվում են 2007 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ ֆինանսական համակարգի գործունեության արդյունքները, քննարկվում են համակարգի ընդհանուր կապիտալի, ակտիվների և պարտավորությունների, եկամուտների և ծախսերի եռամսյակային միտումները: Ներկայացվում են նաև ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները:

Երրորդ բաժնում դիտարկվում են 2007 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում վճարահաշվարկային հարաբերությունների զարգացման միտումները: Մասնավորապես ամփոփվում են վճարային համակարգերի կարգավորմանը, հսկողության իրականացման նպատակով իրավական դաշտի կանոնակարգմանը, անկանխիկ վճարումների զարգացմանն ուղղված միջոցառումներն ու կատարված աշխատանքները:

1. ԳՆԱԾԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գնաճի զարգացումներ

ԳՆԱՆՇՆ ԸՍՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ, ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՆՇ

2007 թ. սեպտեմբերին, 2006 թ. սեպտեմբերի նկատմամբ, գրանցվել է 2.7% գնաճ, ընդ որում՝ պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունը համապատասխանաբար կազմել է 3.8%, -2.1% և 3.3%՝ նպաստելով գնաճի ամփոփ մակարդակին համապատասխանաբար 2.1, -0.3 և 1.0 տոկոսային կետով:

«Ոչ պարենային ապրանքներ» ապրանքախմբի 2.1% գնանկումը հիմնականում պայմանավորվել է «Անձնական մեքենաներ և բենզին» և «Դեղամիջոցներ» ենթաապրանքախմբերում գրանցված 11.3% և 4.5% գնանկմամբ, ինչը մեղմել է տվյալ ապրանքախմբի գնաճը 0.4 և 0.1 տոկոսային կետով: Գնաճ է գրանցվել «Գեղահարդարման ապրանքներ» (5.1%) և «Կոշկեղեն» (3.4%) ենթաապրանքախմբերում: Այս տարի ոչ պարենային ապրանքների գները նվազել են՝ անցած տարվա 3.3% աճի պարագայում:

«Պարենային ապրանքներ» ապրանքախմբի (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 3.8% գնաճը հիմնականում «Հացամթերք» (11.4%), «Ձկնամթերք» (106.4%), «Յուղ և ճարպ» (7.7%), «Միրգ» (10.9%), «Կաթ և կաթնամթերք» (2.8%), «Սուրճ, թեյ, կակաո» (3.8%) ենթաապրանքախմբերի գնաճի հետևանք է. դրանք նպաստել են ապրանքախմբի գնաճին համապատասխանաբար 1.7, 0.5, 0.3, 0.3, 0.1 և 0.1 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, «Բանջարեղեն» (-8.2%) և «Շաքարավազ» (-20.3%) ենթաապրանքախմբերում գրանցված գնանկումները մեղմել են պարենային ապրանքախմբի գնաճը համապատասխանաբար -0.4 և -0.3 տոկոսային կետով:

«Ծառայություններ» ապրանքախմբի 3.3% գնաճի վրա էական ազդեցություն է ունեցել «Բուժսպասարկման ծառայություններ» (7.7%) և «Կրթության համակարգի ծառայություններ» (6.3%) ենթաապրանքախմբերի գնաճը:


2007 թ. 3-րդ եռամսյակի գնաճը նախորդ եռամսյակի վերջի նկատմամբ կազմել է -3.9%, ինչը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 7.3%, ոչ պարենային ապրանքների գների 1.1% նվազմամբ և ծառայությունների սակագների 1.1% աճով՝ նպաստելով գնաճին համապատասխանաբար -4.0, -0.2 և 0.3 տոկոսային կետով:

2007 թ. 3-րդ եռամսյակի գնաճը պայմանավորող հիմնական ապրանքախմբերը

Անվանում	Գնի ինդեքսը սեպտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %
ՍԳԻ	**99.8**
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**98.5**
հացամթերք	110.3
յուղ և ճարպ	107.9
ձկնամթերք	138.9
բանջարեղեն	65.6
միրգ	86.4
շաքարավազ	85.6
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**99.8**
կոշկեղեն	103.0
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	102.5
դեղամիջոցներ	95.2
մշակույթի ապրանքներ	92.0
Ծառայություններ, որից՝	**102.3**
բուժսպասարկման	104.8
կրթության	105.5
այլ կենցաղային	107.3
բնակարանային, կոմունալ	98.3

Գնաճը 2007 թ. 3-րդ եռամսյակում՝ նախորդ տարվա համապատասխան եռամսյակի, և 2007 թ. հունվար-սեպտեմբերին՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, համապատասխանաբար կազմել է 2.1% և 3.8%:

ՍԳԻ փոփոխությունները ըստ հիմնական ապրանքային խմբերի և ծառայությունների (2006 թ. դեկտեմբերի նկատմամբ)



Դրամավարկային քաղաքականության տեսանկյունից կարևորվում է գների բնականոն փոփոխությունների գնահատումը, ինչն էական ազդեցություն է թողնում դրամավարկային քաղաքականության իրականացման վրա՝ գնաճի ծրագրված տարեկան ցուցանիշի մակարդակի ապահովման առումով: 2004 թվականի հունիսից սկսած՝ ՀՀ ԿԲ-ն որպես բնականոն գնաճի պաշտոնական ցուցանիշ հրապարակում է 15 տոկոսով հատած միջինի մեթոդով հաշվարկված ցուցանիշը[1]:


Սեպտեմբերի գնաճը և բնականոն գնաճը՝ ըստ տարիների

Տարի	Ցուցանիշ	Նախորդ ամսվա համեմատ	Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ	Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ
2004	Գնաճ	-0.7	6.1	-1.3	7.9
	Բնականոն գնաճ	-0.3	6.0	-0.3	5.9
2005	Գնաճ	0.9	-0.4	-3.6	0.9
	Բնականոն գնաճ	0.29	0.26	-0.40	0.38
2006	Գնաճ	-0.3	5.9	2.3	2.0
	Բնականոն գնաճ	0.02	2.67	0.93	2.22
2007	Գնաճ	0.7	2.7	-0.2	3.8
	Բնականոն գնաճ	0.36	1.62	0.98	1.39

Նախորդ տարվա սեպտեմբերի համեմատությամբ 2007 թ. սեպտեմբերին բնականոն գնաճը կազմել է 1.62%՝ հիմնականում պայմանավորված «Ալյուր բարձր տեսակի» (10.2%), «Բուսական յուղ» (8.2%), «Ախտորոշման կենտրոնների ծառայություններ» (6.5%) ու «Միջին բժշկական անձնակազմի և լաբորանտների ծառայություններ» (10.6%) ապրանքատեսակների գների աճով, որոնք բնականոն գնաճին նպաստել են համապատասխանաբար 0.3, 0.1, 0.1 և 0.1 տոկոսային կետով:

[1] *Ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է «ՀՀ ԿԲ բանբեր, 2004 թ. 1-ին եռամսյակ» պարբերականում:*

ՍԳԻ և բնականոն ՍԳԻ փոփոխությունները, % (նախորդ տարվա դեկտեմբեր = 100)



Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն

Սպառողական գների ինդեքսի և սպառողական զամբյուղի առանձին ապրանքախմբերի գների ինդեքսների փոփոխությունների ուսումնասիրման և դրանց տատանումները պայմանավորող գործոնների բացահայտման նպատակով 2004 թվականի հոկտեմբերից մինչև 2007 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածի համար տարանջատվել և գնահատվել է վիճակագրության տեսության մեջ ընդունված երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը:

Գների ամսական ինդեքսների տատանումները պայմանավորող բաղադրատարրերի տեսակարար կշիռները (2004 թ. հոկտեմբեր - 2007թ. սեպտեմբեր) (%)

	Տրենդ	Սեզոնայնություն	Պատահական տարր	Ընդամենը
ՍԳԻ	1.1	78.0	20.9	100.0
1. Հացամթերք	23.1	24.2	52.7	100.0
2. Մսամթերք	0.7	51.8	47.5	100.0
3. Ձկնամթերք	2.2	58.2	39.6	100.0
4. Կաթնամթերք և յուղեր	0.0	40.4	59.6	100.0
5. Միրգ և բանջարեղեն	3.1	85.7	11.2	100.0
6. Այլ մթերք	4.5	64.1	31.5	100.0
7. Ոչ ոգելից խմիչք	25.1	27.6	47.3	100.0
8. Ոգելից խմիչք և ծխախոտ	0.0	32.6	67.4	100.0
9. Հագուստ և կոշկեղեն	8.2	39.5	52.3	100.0
10. Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք	2.1	42.0	55.9	100.0
11. Տնային գույք	0.4	28.3	71.3	100.0
12. Բուժսպասարկում և դեղորայք	6.2	27.3	66.6	100.0
13. Տրանսպորտ և կապ	0.2	10.7	89.2	100.0
14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ	7.1	80.7	12.2	100.0
15. Այլ ապրանքներ և ծառայություններ	1.4	54.6	44.0	100.0

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2003 թ. հոկտեմբեր – 2006 թ. սեպտեմբեր ժամանակահատվածի համեմատ 2004 թ. հոկտեմբեր – 2007 թ. սեպտեմբեր ժամանակահատվածում գնաճի ամփոփ ցուցանիշի վրա մի փոքր ավելացել է սեզոնայնության բաղադրատարրի (6.0 տոկոսային կետ) և նվազել տրենդի (2.3 տոկոսային կետ) ու պատահական տարրի (3.8 տոկոսային կետ) ազդեցությունը:

Ըստ ապրանքախմբերի՝ երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը փոփոխվել է տարբեր կերպ: ՍԳԻ–ի վրա սեզոնայնության ազդեցության 6.0 տոկոսային կետով աճը հիմնականում պայմանավորվել է այս բաղադրատարրի՝ «Միրգ և բանջարեղեն», «Ոգելից խմիչք և ծխախոտ», «Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք», «Տնային գործածության ապրանքներ», «Տրանսպորտ և կապ», «Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ» և «Այլ ապրանքներ և ծառայություններ» ապրանքախմբերի վրա ունեցած ազդեցությամբ (համապատասխանաբար 2.9, 8.7, 7.3, 10.1, 4.8, 29.1 և 12.7 տոկոսային կետով):

Այնուամենայնիվ, որոշ ապրանքախմբերում գրանցվել է սեզոնայնության բաղադրատարրի զգալի նվազում. «Այլ մթերքներ» և «Ոչ ոգելից խմիչք» ապրանքախմբերի սեզոնայնության տեսակարար կշիռը համապատասխանաբար նվազել է 11.6 և 11.9 տոկոսային կետով:

Տրենդի ամենամեծ աճը դրսևորվել է «Ոչ ոգելից խմիչք» (18.4 տոկոսային կետ) և «Հաց և հացամթերք» ապրանքախմբերում (13.9 տոկոսային կետ), իսկ ամենաշատը նվազել է «Տնային գործածության ապրանքներ» (-16.0 տոկոսային կետ) ապրանքախմբում: Փոխարենը ավելացել է այս ապրանքախմբի վրա սեզոնային և պատահական տարրի ազդեցությունը (5.9 տոկոսային կետ):

Պատահական տարրի ազդեցությունը մեծացել է նաև «Կաթնամթերք և յուղ» (9.6 տոկոսային կետ), «Այլ մթերքներ» (7.3 տոկոսային կետ) և «Բուժսպասարկում և դեղորայք» (5.2 տոկոսային կետ) ապրանքախմբերում:

Սպառողական գների ինդեքսների տատանողականությունն ուսումնասիրվել է նաև յուրաքանչյուր ապրանքախմբի ամսական գների ինդեքսների տատանման գործակիցների օգնությամբ:

Գների ամսական ինդեքսների տատանման գործակիցները 2004, 2005, 2006 և 2007թթ. 3-րդ եռամսյակներում (%)

	2004 թ.	2005 թ.	2006 թ.	2007 թ.
ՍԳԻ	1.0	2.8	0.3	1.94
1. Հացամթերք	0.6	0.5	0.2	1.44
2. Մսամթերք	0.2	0.3	0.5	1.13
3. Ձկնամթերք	5.9	10.6	10.9	1.71
4. Կաթնամթերք և յուղեր	1.5	0.8	0.0	2.2
5. Միրգ և բանջարեղեն	8.9	19.6	4.1	13.4
6. Այլ մթերքներ	1.1	3.7	0.8	1.1
7. Ոչ ոգելից խմիչք	0.6	0.1	0.6	0.0
8. Ոգելից խմիչք և ծխախոտ	0.1	0.0	0.0	0.0
9. Հագուստ և կոշիկ	0.1	0.7	0.8	0.2
10. Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք	0.1	0.0	1.1	0.0
11. Տնային գույք	0.2	0.3	0.5	0.4
12. Բուժսպասարկում և դեղորայք	0.2	0.0	3.0	0.3
13. Տրանսպորտ և կապ	1.0	1.9	1.2	0.1
14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ	0.3	1.5	2.0	2.5
15. Այլ ապրանքներ և ծառայություններ	0.2	0.2	0.0	0.1

Ըստ աղյուսակի տվյալների՝ 2005 թ. գրեթե բոլոր ապրանքախմբերի ՍԳԻ-ի տատանողականությունը աճել է, այնուհետև՝ 2006 թ-ին նվազել և 2007 թ-ին՝ նորից աճել: Տատանողականության բարձր աճ է գրանցվել մասնավորապես «Հացամթերք», «Մսամթերք», «Կաթնամթերք և յուղ», «Միրգ և բանջարեղեն» ապրանքախմբերում: Տատանողականության կտրուկ անկում է գրանցվել «Ձկնամթերք», «Հագուստ և կոշիկ», «Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք», «Բուժսպասարկում և դեղորայք» ապրանքախմբերում:

ԳՆԱՃԻ ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Դրամավարկային քաղաքականության տեսանկյունից կարևորվում է դրամավարկային իշխանությունների կողմից գնաճի նպատակի իրագործման գործընթացը նախորդ մեկ տարվա ընթացքում, որը ենթադրում է ԿԲ գործողությունները՝ ուղղված գնաճի նպատակային և կանխատեսված ցուցանիշների միջև շեղման վերացմանը: Ուստի, հաշվետվության այս ենթաբաժնում դիտարկվում են ԿԲ գլխավոր նպատակի՝ գնաճի կառավարման ընթացքը նախորդ մեկ տարվա ժամանակահատվածում և դրսևորված տարաբնույթ ռիսկերի պայմաններում ԿԲ կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը:

2007 թվականի երրորդ եռամսյակի փաստացի արդյունքներով՝ նախորդ եռամսյակի նկատմամբ գրանցվել է 3.9% գնանկում, որի պարագայում տ/տ գնաճը կազմել է 2.7%:

Ըստ ՀՀ ԿԲ 2006 թ. սեպտեմբերի կանխատեսումների՝ 2007 թ. երրորդ եռամսյակում ակնկալվում էր տ/տ 3.3% գնաճ (տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 2006 թ. հոկտեմբերի 3-ի նիստի արձանագրությունը): Ընդ որում, այդ կանխատեսումները կատարելիս հացահատիկի միջազգային գների բարձրացման ռիսկեր չկային, և ենթադրվում էր, որ գյուղատնտեսության ճյուղում կգրանցվեն բնականոն՝ 3-4% աճի տեմպեր:

Միաժամանակ, 2006 թվականի օգոստոս-հոկտեմբերին ԿԲ-ն իրականացնում էր զսպողական դրամավարկային քաղաքականություն (ռեպո տոկոսադրույքի 0.75 տոկոսային կետով բարձրացում)՝ նպատակ ունենալով խարսխել այդ եռամսյակում նավթահումքային ապրանքների միջազգային գների և գյուղատնտեսական ապրանքների գների աճով պայմանավորված գնաճային սպասումները և թուլացնել հետագա 12-ամսյա ժամանակահատվածում գնաճի վրա եկամուտների շարունակական ավելացման հետևանքով համախառն պահանջարկի աճի ազդեցությունը:

Հիմնականում վերոնշյալ գործողությունների արդյունքում հաջողվել է 2006 թ. դեկտեմբերին արձանագրված տարեկան 5.2% գնաճի ցուցանիշը 2007 թ. երրորդ եռամսյակի ավարտին նվազեցնել մինչև տ/տ 2.7%: Միևնույն ժամանակ, գնաճի այս մակարդակի ձևավորման վրա ազդեցություն են ունեցել հիմնականում իրար չեզոքացնող ոչ մոնետար գործոններ: Այսպես, ցուցանիշի ձևավորմանը նպաստել են «Միրգ», «Բանջարեղեն ու կարտոֆիլ» ապրանքախմբերի՝ 2007 թ. երկրորդ եռամսյակից արձանագրված սեզոնային ավելի խորը գնանկումը (նպաստումը՝ -1.2%)[2] և «Հացամթերք»[3] և «Կենդանական և բուսական յուղ» ապրանքախմբերի ներքին գների աճը (նպաստումները՝ համապատասխանաբար 1.7% և 0.3%):

Այդուհանդերձ, արդեն երրորդ եռամսյակի ավարտին ակնհայտ էր, որ միջազգային շուկայում նավթահումքային և պարենային մի շարք ապրանքների գների՝ բարձր տեմպերով շարունակվող աճը զգալի գնաճային ռիսկեր է պարունակում ՀՀ տնտեսության համար: Իսկ քանի որ դրանք դիտվում են որպես արտաքին ցնցումներ, որոնք դուրս են գտնվում դրամավարկային քաղաքականության ազդեցությունից և ոչ մոնետար գործոններ են, դրամավարկային գործիքների միջոցով դրանց չեզոքացումն անհնար է:

Սակայն արտաքին միջավայրի նման զարգացումների երկրորդային ազդեցությամբ (զուգորդվելով մասնավոր սպառման աճի տեմպերի ավելացման և ակնկալվող բյուջետային ծախսերի ընդլայնողական ազդեցության հետ), հետագա մեկ տարվա ընթացքում կշարունակվեն գնաճային զգալի ճնշումները: Դրանք մեղմելու և գնաճն իր նպատակային թիրախի միջակայքում կառավարելու նպատակով ԿԲ խորհուրդը հոկտեմբերի 2-ի նիստում բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով (այն սահմանվել է 5%)՝ պահպանելով կոշտ դրամավարկային քաղաքականության ուղղվածության շարունակականությունը:

Գնաճի գործոններ


ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Համաշխարհային տնտեսության աճի տեմպերը պահպանվել են նաև երրորդ եռամսյակում, չնայած վարկային ճգնաժամին, որը կտրուկ սրվել է օգոստոսին: Այդ ճգնաժամն էական ազդեցություն է ունեցել ֆինանսական շուկայի երրորդ եռամսյակի զարգացումների վրա: Ճգնաժամի հետևանքով օգոստոսը նշանավորվել է ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից ռիսկային դիրքերի փակմամբ, որի հետևանքով նվազել են հումքային ապրանքների գները և բարձրացել ԱՄՆ դոլարի և ճապոնական իենի փոխարժեքները: Հիմնական կենտրոնական բանկերը արագ արձագանքել են վարկային ճգնաժամին՝ իրացվելիության խոշորածավալ ներարկմամբ: Առաջինը արձագանքել է Եվրոպական կենտրոնական բանկը, այնուհետև՝ Ֆեդերալ պահուստային համակարգը, Ճապոնիայի և Անգլիայի բանկերը: Այդ ամենի հետևանքով հումքային շուկայում գների նվազումը հետագայում վերափոխվել է ավելի մեծ աճի, և սեպտեմբեր ամսվա ընթացքում ԱՄՆ դոլարի դիրքերը էլ ավելի են թուլացել: ԱՄՆ դոլարը գերազանցել է վերջին տարիներին հիմնական արժույթների նկատմամբ արձանագրված իր նվազագույն մակարդակները՝ երրորդ եռամսյակի վերջին եվրոյի նկատմամբ փոխարժեքը կազմել է 1.4179 ԱՄՆ դոլար (պատմական առավելագույն մակարդակ), իսկ բրիտանական ֆունտի նկատմամբ՝ 2.0374 ԱՄՆ դոլար:

[2] Գյուղատնտեսության ճյուղի իրական աճը 2007 թ. անցած ինն ամիսների ընթացքում կազմել է 8.3%, մասնավորապես՝ բուսաբուծությունում ցուցանիշն ավելացել է 10%-ով:


[3] Ցորենի միջազգային գները տարվա ինն ամիսների ընթացքում (սեպտեմբերի միջին ցուցանիշը՝ 2006 թ. դեկտեմբերի միջինի նկատմամբ) բարձրացել են 55%-ով:

2007 թվականի երրորդ եռամսյակում ԱՄՆ դոլարի փոխարժեքը շարունակել է արժեզրկվել եվրոյի և ֆունտ ստեռլինգի նկատմամբ



2007 թվականի երրորդ եռամսյակում նավթի գների աճն էապես արագացել է վարկային ճգնաժամի ակտիվացումից հետո: Այսպես՝ 2007 թվականի երրորդ եռամսյակում Brent տեսակի հում նավթի միջին գինը Լոնդոնում կազմել է 75.0 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց, իսկ սեպտեմբերի վերջի դրությամբ՝ գրեթե 80 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց: Այդ աճի հետևանքով երրորդ եռամսյակում գրանցվել է նավթի գների տ/տ 7.0 տոկոս աճ՝ նախորդ եռամսյակի 1.6 տոկոս նվազման փոխարեն: Այս աճը հիմնականում պայմանավորվել է վարկային ճգնաժամի հետևանքով միջոցների արտահոսքով արժեթղթերի և անշարժ գույքի շուկաներից դեպի հումքային ապրանքների շուկա (հիմնականում նավթի և ոսկու): Մյուս կողմից, գների աճին նաև նպաստել է ԱՄՆ դոլարի դիրքերի կտրուկ թուլացումը, ինչպես նաև համաշխարհային աճող պահանջարկի և գրեթե անփոփոխ առաջարկի պայմաններում ԱՄՆ նավթի պաշարների նվազումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Նավթամթերքների գների աճը 2007 թ. երրորդ եռամսյակում սկսեց արագանալ



Ամերիկայի Միացյալ Նահանգների տնտեսական աճի[4] տեմպերը 2007 թվականի երրորդ եռամսյակում նույնիսկ գերազանցել են երկրորդ եռամսյակում գրանցված բարձր մակարդակը՝ տ/տ 4.9 տոկոս (երկրորդ եռամսյակում գրանցվել էր տ/տ 3.8 տոկոս աճ): Հիմնական շարժիչ ուժը մնում է ներքին մասնավոր սպառումը, որին ավելացել է նաև արտաքին պահանջարկը: Մասնավոր սպառման աճը երրորդ եռամսյակում կազմել է տ/տ 2.7 տոկոս, իսկ արտահանման աճը՝ տ/տ 18.9 տոկոս, որոնց ազդեցությունը կազմել է համապատասխանաբար 1.9 և 1.4 տոկոսային կետ: Մասնավոր ներդրումների աճը կազմել է 5.9 տոկոս տ/տ, իսկ ազդեցությունը՝ 0.9 տոկոսային կետ:


Ջուտ արտահանման շարունակական դրական ազդեցությունը տնտեսական աճի վրա հիմնականում պայմանավորվել է վերջին տարիներին ԱՄՆ դոլարի իրական արդյունավետ փոխարժեքի արժեզրկմամբ, որի արդյունքում ընթացիկ հաշվեկշիռը փոքր-ինչ բարելավվել է: Սեզոնային հարթեցված արտաքին առևտրի պակասուրդը ՀՆԱ-ում 2007 թվականի երրորդ եռամսյակում կազմել է 4.6 տոկոս՝ նախորդ եռամսյակի համեմատ նվազելով 0.4 տոկոսային կետով: Ընթացիկ հաշվի բարելավումը այս եռամ-

[4] *Աղբյուրը՝ Bureau of Economic Analysis, US Department of Commerce.*

սյակում նույնպես պայմանավորվել է խնայողությունների որոշակի աճով, որը գերազանցել է ներդրումների աճը: Սակայն ընդհանուր պակասուրդի չափը դեռևս մնում է բավականին բարձր մակարդակի վրա, որը շարունակում է ֆինանսավորվել արտաքին պարտավորությունների կուտակման հաշվին: Վերջինիս հետևանքով համաշխարհային շուկայում շարունակվում է դոլարի դիրքերի թուլացումը, որը կանխատեսվում է նաև ապագայում:

2007 թվականի երրորդ եռամսյակում ԱՄՆ գնաճի միջին ցուցանիշը կազմել է տ/տ 2.4 տոկոս (նախորդ եռամսյակում՝ 2.7 տոկոս): Գնաճի դանդաղումը հիմնականում պայմանավորվել է ներքին գործոններով, այն է՝ աշխատուժի շուկայի որոշակի թուլացմամբ: Սակայն ԱՄՆ դոլարի արժեզրկումը, ինչպես նաև երրորդ եռամսյակում հումքային ապրանքների գների աճը 2007 թվականի չորրորդ եռամսյակում անխուսափելիորեն կհանգեցնեն գնաճի արագացմանը: Երրորդ եռամսյակի ընթացքում դրսևորված վարկային ճգնաժամի ժամանակ Ֆեդերալ պահուստային համակարգը իրացվելիության ներարկման նպատակով նախևառաջ նվազեցրել է իր դիսկոնտային տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով, իսկ այնուհետև նույնչափ նվազեցրել ֆեդերալ ֆոնդերի նպատակային տոկոսադրույքը՝ հասցնելով 4.75 տոկոսի: Ավելացնենք նաև, որ վարկային ճգնաժամի հետևանքով շուկաներում առաջացած իրացվելիության կտրուկ անկման պարագայում, ԱՄՆ ֆեդերալ պահուստային համակարգը բավականին կտրուկ է արձագանքել և մի քանի օրում շուկա է ներարկել 342 մլրդ ԱՄՆ դոլարի իրացվելիություն:

ԱՄՆ տնտեսական աճը դեռևս մնում է բարձր, իսկ գնաճը կառավարելի մակարդակում է




Եվրոգոտու տնտեսական աճը, ըստ Եվրոստատի, 2007 թվականի երրորդ եռամսյակում փոքր-ինչ արագացել է. արձանագրվել է տ/տ 2.7 տոկոս աճ, իսկ եռ/եռ՝ 0.7 տոկոս աճ, մինչդեռ տնտեսագետները ակնկալում էին եռ/եռ 0.5 տոկոս տնտեսական աճ: Տնտեսական աճը ապահովվել է հիմնականում ներդրումների (4.4 տոկոս) հաշվին, որոնց համար հիմք են հանդիսացել ներքին և արտաքին պահանջարկի դրական զարգացումները: Այնուամենայնիվ, տնտեսական աճի հեռանկարները կարճաժամկետ հատվածում վտանգվում են եվրոյի բարձր փոխարժեքի և ֆինանսական շուկաների անկայունության, իսկ երկարաժամկետ հատվածում՝ դեռևս պահպանվող կառուցվածքային խնդիրների պատճառով[5]:

Սպառողական գների ինդեքսի աճը երրորդ եռամսյակում պահպանվելով Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած առավելագույն մակարդակին մոտ, սեպտեմբերին գերազանցել է այն՝ կազմելով տ/տ 2.1 տոկոս: Եռամսյակի ընթացքում Եվրոպական կենտրոնական բանկն անփոփոխ է պահել տոկոսադրույքները՝ 4.00 տոկոս: Դրանք պետք է բարձրացվեն հոկտեմբերի 4-ի խորհրդի նիստում՝ գնաճի չեզոքացման նպատակով: Սակայն շուկայի մասնակիցները, հաշվի առնելով վարկային ճգնաժամի ժամանակ ԵԿԲ կողմից իրացվելիության ներարկման հանգամանքը, ակնկալում են, որ ԵԿԲ-ն չի բարձրացնի տոկոսադրույքները, և դրանք կմնան 4.00 տոկոս մակարդակի վրա:

---

[5] Եվրոմիության կառուցվածքային խնդիրների շարքը կարելի է դասել աշխատուժի շուկաների կոշտությունը, ոչ լրիվ ինտեգրումն ու ներդաշնակեցումը, անդամ երկրների տնտեսությունների՝ տարբեր բիզնես-պարբերաշրջաններում գտնվելը, հարկաբյուջետային քաղաքականությունների ներդաշնակության բացակայությունը՝ մասնավորապես երկրների միջև ֆիսկալ տրանսֆերտների բացակայությունը և այլն:

Եվրոգոտու գնաճը կրկին գերազանցել է ԵԿԲ նպատակային ցուցանիշը



Ռուսաստանի տնտեսական աճը 2007 թ. հունվար-օգոստոսին կազմել է 7.7%: Մասնավորապես՝ 2007 թ. երրորդ եռամսյակում Ռուսաստանի տնտեսական աճի բարձր տեմպերը պահպանվել են, չնայած աճի տեմպերի դանդաղում է արձանագրվել սեպտեմբերին[6]: Վերլուծաբանների կանխատեսումների համաձայն՝ մինչև տարեվերջ տնտեսական աճի բարձր տեմպերը կպահպանվեն: Բացի այդ, տարեսկզբից գրանցվող տնտեսական աճի ցուցանիշը գերազանցել է տարբեր վերլուծաբանների անգամ ամենալավատեսական կանխատեսումները:

Երրորդ եռամսյակում գրանցվել է արդյունաբերության ճյուղի տ/տ 4.9% աճ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 3.8%)[7]: Հունվար-սեպտեմբերին[8] վերջինիս աճը կազմել է 6.6% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 4.2%):

Ոչ արտահանելի ճյուղում պահպանվել են աննախադեպ բարձր աճի տեմպերը: Մասնավորապես՝ շինարարության ճյուղում հունվար-օգոստոսին արձանագրված 24.4% աճը կրկնակի գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հունվար-օգոստոսին մանրածախ առևտրի ճյուղում աճը կազմել է 14.7% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 13.1%):

Վճարային հաշվեկշռի զարգացումները. 2007 թ. երրորդ եռամսյակում վճարային հաշվեկշռի հիմնական փոփոխությունները վերաբերում են կապիտալի և ֆինանսական հաշվով 10.2 մլրդ ԱՄՆ դոլար զուտ արտահոսքին[9]՝ ի տարբերություն կապիտալի և ֆինանսական արտարժութային միջոցների զուտ ներհոսքի՝ նախորդ երկու եռամսյակներում արձանագրված զգալի ծավալների: Երրորդ եռամսյակում մասնավոր հատվածի կողմից զուտ արտահոսքը կազմել է 9.4 մլրդ ԱՄՆ դոլար (բանկերի կողմից՝ 0.7 մլրդ ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք, մինչդեռ այլ մասնավոր հատվածի կողմից գրանցվել է 10.1 մլրդ ԱՄՆ դոլարի զուտ արտահոսք): Նշված զարգացումների վրա ազդեցություն է ունեցել ընթացիկ եռամսյակում համաշխարհային շուկայում ծագած իրացվելիության ճգնաժամը, որը խնդիրներ է առաջացրել նաև Ռուսաստանում: Այնուամենայնիվ, ընթացիկ հաշվի հավելուրդը ավելի քան փոխհատուցել է կապիտալի արտահոսքը և հանգեցրել վճարային հաշվեկշռի հավելուրդի ձևավորմանը, ինչն էլ ապահովել է կենտրոնական բանկի արտաքին պահուստների 7.9 մլրդ ԱՄՆ դոլարով աճը:

Ընթացիկ հաշվի հավելուրդի՝ 2006 թ. երկրորդ եռամսյակից դրսևորվող նվազման միտումը շարունակվել է նաև 2007 թ. երրորդ եռամսյակում. առևտրային հաշվեկշռի հավելուրդի նվազման արդյունքում ընթացիկ հաշվի հավելուրդը կրճատվել է տ/տ 6.1 մլրդ ԱՄՆ դոլարով և կազմել 18.1 մլրդ ԱՄՆ դոլար: Ներմուծման տ/տ աճը կազմել է 38.1%, ինչը զգալիորեն գերազանցել է արտահանման 15.8% աճը: Արտահանման աճը հիմնականում պայմանավորվել է էներգակիրների գների աճով, քանի որ օգտակար հանածոների արդյունահանման տ/տ աճը 2007 թ. երրորդ եռամսյակում կազմել է ընդամենը 0.8%:

Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանի բանկը օգոստոսի ընթացքում կապիտալի արտահոսքի բացասական հետևանքների վերացման համար իրականացրել է արտարժութային ինտերվենցիաներ (օգոստոսի 10-ից մինչև օգոստոսի 24-ն ընկած ժամանակահատվածում բանկի պահուստները նվազել են 6.4 մլրդ ԱՄՆ դոլարով), այնուամենայնիվ սեպտեմբերից Ռուսաստանի բանկի արտարժութային

---

[6] Մոսկվայում տեղի ունեցած կոնֆերանսի ժամանակ նշել է ՌԴ ֆինանսների փոխնախարարը:
[7] Աղբյուրը՝ Ռուսաստանի վիճակագրական ծառայություն:
[8] Արդյունաբերության աճին մեծապես նպաստել է վերամշակող արդյունաբերության բարձր աճը՝ հունվար-սեպտեմբերի աճը կազմել է 10.0% (2006 թ. նույն ժամանակահատվածում՝ 4.4%): Արդյունաբերության բարձր աճը փոխհատուցել է էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրության՝ հունվար-սեպտեմբեր ամիսների 2.1% նվազումը: Իսկ օգտակար հանածոների արդյունահանման աճը նույն ժամանակահատվածում կազմել է 2.2%:
[9] Նշված ցուցանիշում ներառված է նաև «Զուտ սխալներ և բացթողումներ» հոդվածի ցուցանիշը, ինչը վերաբերում է այլ մասնավոր հատվածի գործարքներին:

պահուստները շարունակել են դրսևորել աճի միտում և արդեն սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել են 425.4 մլրդ ԱՄՆ դոլար: Նշված ցուցանիշով Ռուսաստանը զիջում է Չինաստանին, Ճապոնիային, ինչպես նաև Եվրոգոտուն՝ բավականին առաջ անցնելով Թայվանի (սեպտեմբերի վերջի դրությամբ՝ 263.0 մլրդ ԱՄՆ դոլար) նույն ցուցանիշից: Չինաստանի համախառն պահուստները սեպտեմբերի վերջի դրությամբ հասել են ռեկորդային ցուցանիշի՝ 11434.0 մլրդ ԱՄՆ դոլարի, իսկ Ճապոնիայի համախառն պահուստները՝ 946.0 մլրդ ԱՄՆ դոլարի: Եվրոգոտու համախառն պահուստները օգոստոսի վերջի դրությամբ կազմել են 453.0 մլրդ ԱՄՆ դոլար:

Գնաճի նպատակային ցուցանիշի ապահովման խնդիրները բարդանում են. Երրորդ եռամսյակի ընթացքում, հատկապես օգոստոս-սեպտեմբերին, Ռուսաստանի բանկի քաղաքականությունը բարդացել է երկու՝ իրար հակադրվող ճակատներում առաջացած հիմնախնդիրների պատճառով. մի կողմից՝ գնաճի տեմպերի արագացում է արձանագրվել, ինչը բարդացրել է գնաճի տարեկան 8.0% նպատակային ցուցանիշի ապահովումը, մյուս կողմից՝ առևտրային բանկերում իրացվելիության խնդիրներ են առաջացել:

Այսպես՝ երրորդ եռամսյակի ընթացքում գների աճի տեմպերը արագացել են, և գրանցվել է տ/տ 8.9% ցուցանիշ[10], մինչդեռ նախորդ եռամսյակի տ/տ աճը 8.0% էր: Գների աճի արագացման հիմքում ընկած են կառուցվածքային գործոններ, և գների նման աճը չի կրում մոնետար ազդեցություն[11]:

Օգոստոսի կեսերից սպեկուլյատիվ կապիտալի արձանագրված արտահոսքն արտահայտվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուբլու անվանական փոխարժեքի ժամանակավոր ցածր արժեզրկմամբ (օգոստոսի միջին արժեզրկումը հուլիսի նկատմամբ կազմել է ընդամենը 0.3%): Ռուբլու փոխարժեքի արժեզրկման ցածր տեմպերը պայմանավորվել են նշված ժամանակահատվածում Ռուսաստանի բանկի կողմից իրականացված մեծածավալ ինտերվենցիաներով: Երրորդ եռամսյակում գրանցվել է ռուբլու փոխարժեքի տ/տ 4.9% արժևորում, ինչի արդյունքում հունվար-սեպտեմբերին ռուբլու միջին փոխարժեքի արժևորումը կազմել է 5.9%:

Իրացվելիության խնդիրներից զերծ չմնաց նաև Ռուսաստանը

Միջազգային շուկաներում ծագած իրացվելիության ճգնաժամից զերծ չմնաց նաև Ռուսաստանի տնտեսությունը: Տեղի ունեցավ արտարժութային միջոցների զգալի արտահոսք՝ բանկերի համար ստեղծելով լուրջ խնդիրներ: Վերջինս արտահայտվել է միջբանկային շուկայում տոկոսադրույքների աճով՝ օգոստոսի վերջերին հասնելով մինչև 9.47%-ի: Ինչպես շատ կենտրոնական բանկեր, Ռուսաստանի բանկը, երկարատև դադարից հետո, նույնպես ձեռնամուխ է եղել իրացվելիության խնդիրների հարթմանը՝ ռեպո գործառնությունների միջոցով: Սակայն Ռուսաստանի բանկի համար ռեպո գործառնություններով բանկերին իրացվելիության միջոցներով ապահովելը սահմանափակված է այն հանգամանքով, որ շատ բանկերում առկա են համապատասխան արժեթղթերով գրավադրման խնդիրներ: Այդ իսկ պատճառով Ռուսաստանի բանկը ընդլայնել է գրավադրվող արժեթղթերի ցանկը: Վերջինս նպատակաուղղված է ոչ մեծ բանկերին իրացվելիության ապահովմանը: Բացի այդ, հաշվի առնելով իրացվելի միջոցների սեզոնային պահանջարկի հետագա աճը[12], Ռուսաստանի բանկը հոկտեմբերի 11-ից երեք ամսով նվազեցրել է պարտադիր պահուստավորման նորմատիվը մեկ տոկոսային կետով՝ ֆիզիկական անձանց պարտավորությունների գծով 4.0%-ից նվազեցնելով 3.0%, իսկ այլ պարտավորությունների գծով՝ 4.5%-ից 3.5%: Նման որոշումը հնարավորություն կտա բանկերին լրացուցիչ օգտագործելու 100 մլրդ ռուբլի միջոցներ, ինչպես նաև հաղթահարելու այն մտավախությունը, որ իրացվելի միջոցների պակասուրդը կարող է վերափոխվել վստահության ճգնաժամի[13]: Փաստորեն, Ռուսաստանի բանկի բոլոր գործողությունները, որոնք նպատակաուղղված են շուկայի իրացվելիության աճին, որոշ վերլուծաբանների կարծիքով, թույլ են տալիս ենթադրելու, որ գնաճի զսպման խնդիրը մղվել է երկրորդ պլան:

Ռուսաստանի բանկային համակարգում, պայմանավորված համաշխարհային իրացվելիության ճգնաժամով, դեֆոլտի մեծ ռիսկերի նախադրյալներ ներկայումս չեն կուտակվել

Ի տարբերություն ԱՄՆ-ի, որտեղ արտաքին միջոցներով ներքին ֆինանսավորումը համեմատաբար մեծ տոկոսներ է կազմում, Ռուսաստանի բանկերի՝ տնտեսությանը տրամադրած ֆինանսավորման միջոցների հիմնա-

---

[10] Չնավորված այսպիսի միտումների շարունակման դեպքում, տնտեսական զարգացման և առևտրի փոխնախարարի կարծիքով, 2007 թ. կարող է ավարտվել 10.0%-ից բարձր գնաճի ցուցանիշով: Միևնույն ժամանակ, նա նշում է, որ գների աճի բարձր ցուցանիշը պայմանավորված է պարենային ապրանքների գների աճով:

[11] Այնուամենայնիվ, Ռուսաստանի կառավարությունը տիրապետում է գնաճի կարգավորման տարբեր լծակների ոչ միայն կառավարության քաղաքականության ոլորտում, այլև բիզնեսի ներկայացուցիչների հետ համաձայնության հաստատման ոլորտում: Չնայած 2007թ. նպատակային ցուցանիշի ապահովման հավանականությունը փոքր է, 2008թ. 7.0% գնաճի նպատակային ցուցանիշը չի փոփոխվել:

[12] Ռուսաստանի բանկի նախագահի տեղակալի գնահատումներով՝ աշնանը իրացվելի միջոցների նկատմամբ պահանջարկը կարող է հասնել մինչև 400 մլրդ ռուբլու: Միայն օգոստոսի 28-ին, ամենալարված օրերից մեկը, Ռուսաստանի բանկը ռեպո գործառնություններով բանկերին է տրամադրել ռեկորդային՝ 272 մլրդ ռուբլի:

[13] Վերջին անգամ Ռուսաստանի բանկը պարտադիր պահուստավորման միջոցներից հետ է վերադարձրել բանկերին 2004թ. ամռանը: Դա վստահության ճգնաժամի հաղթահարման հիմնական միջոցառումներից մեկն էր:

կան աղբյուրը բնակչության տարբեր տիպի հաշիվներն են (2007 թ. հուլիսի վերջի դրությամբ՝ պարտավորությունների 69.0%-ը): Ճիշտ է, արտաքին ֆինանսավորման ծավալներն աճում են, սակայն դեռևս չափավոր սահմաններում են՝ 2007 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ պարտավորությունների 22.0%-ը: Միևնույն ժամանակ, արտաքին փոխառությունների շուրջ կեսը երկարաժամկետ է, իսկ բանկերի վարկային պորտֆելները՝ կարճաժամկետ: Եվ ինչպես Ֆիթչն է կարծում, ռուսական բանկերի համար արտաքին փոխառությունները դրական ազդեցություն են ունեցել՝ նպաստելով ֆինանսավորման միջոցների երկարացմանն ու բազմազանեցմանը: Արտաքին փոխառությունների մարման հետ կապված ռիսկերը նույնպես չափավոր են: Մինչև տարեվերջ բանկերը պետք է մարեն ընդհանուր արտաքին փոխառությունների ընդամենը 7.0%-ը, իսկ 2008 թ.՝ 26.0%-ը: Այդ մարումների շուրջ 30.0%-ը բաժին է ընկնում իրացվելի խնդիրներ չունեցող երկու պետական բանկերին[14], միևնույն ժամանակ, ռուսական բանկերի մեծ մասը չի բացել արտարժութային դիրքերը, այդ իսկ պատճառով արտարժութային ռիսկի հետ կապված խնդիրներ նույնպես չեն սպառնում:

Հաշվի առնելով, որ բանկերի գերակշռող մասն ունի վարկային պորտֆելների կարճաժամկետ կառուցվածք, նոր վարկերի դադարեցումը հնարավորություն կտա արագորեն կուտակելու միջոցներ՝ նախկինում տրված վարկերի մարման հաշվին (նշվում է ՄԴՄ բանկի զեկույցում):

Նշենք Ֆիթչի եզրահանգումները[15].

- Արտաքին ֆինանսավորումը ռուսական բանկերի համար դրական ազդեցություն է ունեցել:
- Արտաքին փոխառությունների մարման ռիսկերը կառավարելի են:
- Բանկերի իրացվելիությունը մնում է խոցելիության հավանական աղբյուր, սակայն Ռուսական բանկի կողմից վերաֆինանսավորման գործառնությունների ընդլայնումը դրական զարգացում է:
- Մասնավոր բանկերի վարկանիշները սահմանափակված են բանկերին հատուկ ներքին խնդիրներով:
- Իրացվելիության խնդիրների հետագա սրացումը կարող է մեծացնել ճնշումները փոքր բանկերի համար:

Մակրոտնտեսական իրավիճակը հարևան երկրներում [16]

Թուրքիա. 2007 թ. երկրորդ եռամսյակում Թուրքիայի տնտեսական աճի[17] տեմպերը նվազել են մինչև 3.9% (առաջին եռամսյակում՝ 6.9%): Տնտեսական աճի ցածր տեմպերը մասնավոր իրական սպառման տ/տ 0.3%-ով նվազման հետևանք են: Վերջինս պայմանավորվել է տոկոսադրույքների բարձր մակարդակի պահպանմամբ, ինչպես նաև առաջիկա ընտրությունների արդյունքների անորոշություններով: Այնուամենայնիվ, մասնավոր սպառման նվազումը փոխհատուցվել է պետական սպառման բարձր աճով, ինչպես նաև արտաքին պահանջարկի աճով (հիմնականում եվրոպական երկրների կողմից): Ըստ ճյուղերի, երկրորդ եռամսյակում տնտեսական աճն ուղղորդել են արդյունաբերության 3.2% տ/տ աճը և շինարարության ճյուղի բարձր տեմպերի պահպանումը՝ տ/տ 15.7%: Արդյունքում՝ առաջին կիսամյակում Թուրքիայի տնտեսական աճը կազմել է 5.3% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 7.0% աճ):

Երկրորդ եռամսյակից հետո՝ հուլիս-օգոստոսին, առևտրային հաշվեկշռի պակասուրդը հերթական անգամ խորացել է, ինչը պայմանավորվել է նավթի միջազգային գների աճով և մասնավոր սպառման վերականգնմամբ: Հուլիս-օգոստոսին արտահանման տ/տ աճը կազմել է 26.1%, ներմուծման տ/տ աճը՝ 23.6%: Այնուամենայնիվ, առևտրային հաշվեկշռի պակասուրդը ծավալային արտահայտությամբ խորացել է, քանի որ ներմուծման ծավալների աճը գերազանցել է արտահանման ծավալների աճը: Ընթացիկ հաշվի պակասուրդը հուլիս-օգոստոսին ավելացել է տ/տ 360.0 մլն ԱՄՆ դոլարով: Արդյունքում՝ հունվար-օգոստոսին արձանագրվել է ընթացիկ հաշվի պակասուրդի 23.3 մլրդ ԱՄՆ դոլարի ցուցանիշ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 22.9 մլրդ ԱՄՆ դոլար):

Կապիտալի և ֆինանսական հաշվով զուտ ներհոսքը պահպանվել է նաև երրորդ եռամսյակի երկու ամիսների ընթացքում: Արդյունքում՝ հունվար-օգոստոսին կապիտալի զուտ ներհոսքն ավելացել է 1.5 մլրդ ԱՄՆ դոլարով և կազմել 33.3 մլրդ ԱՄՆ դոլար: Ոչ ռեզիդենտների ուղղակի ներդրումների աճը շարունակվել է նաև ընթացիկ եռամսյակում, ինչի արդյունքում հունվար-օգոստոսին վերջինիս ծավալները կազմել են 13.9 մլրդ ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 12.9 մլրդ ԱՄՆ դոլար): Այլ ներդրումներ հոդվածով նույնպես գրանցվել է զուտ ներհոսք՝ 13.87 մլրդ ԱՄՆ դոլարի չափով: Ինչ վերաբերում է «տաք փողերի» շարժերին, ապա

---

[14] *Աղբյուրը՝ ՄԴՄ բանկ:*

[15] *Տես՝ Fitch Ratings, 3 October 2007.*

[16] *Հարևան երկրների տնտեսությունների ուսումնասիրումը կարևորվում է այն առումով, որ Հայաստանի տնտեսության վրա կարող են անուղղակիորեն ազդել վերջիններիս տնտեսությունների զարգացումները: 1990-ական թվականների ճգնաժամերը ցույց տվեցին, որ ազդեցության անուղղակի ուղիները՝ արտահանման միևնույն շուկաները, վարկավորող միևնույն կազմակերպությունները կամ երկրները, միևնույն ներդրողները և այլն, ավելի ու ավելի մեծ դերակատարումներ են ունենում տարածաշրջանային տեսանկյունից երկրների տնտեսությունների զարգացումների վրա: Հետևաբար, երկրները մշտապես ուշադրություն են դարձնում ոչ միայն գործընկեր, այլ նաև տարածաշրջանային հարևան երկրների մակրոտնտեսական զարգացումների վրա: Ավելացնենք նաև, որ Իրանը ներառված չէ այն պատճառով, որ վերջինիս թվային տվյալները թերի են, ինչպես նաև ստացվում են բավականին ուշ, երբ կորցնում են հրատապությունը:*

[17] *Երրորդ եռամսյակի տնտեսական աճի պաշտոնական ցուցանիշները բացակայում են:*

համաշխարհային շուկաներում իրացվելիության ճգնաժամի հետևանքով ինչպես շատ երկրներում, Թուրքիայում նույնպես օգոստոսին արձանագրվել է պորտֆելային ներդրումների 4.4 մլրդ ԱՄՆ դոլարի զուտ արտահոսք: Վերը նշված հոսքերի արդյունքում պաշտոնական պահուստներն աճել են 9.65 մլրդ ԱՄՆ դոլարով:

Սպառողական գների աճը երրորդ եռամսյակում նվազել է՝ նախորդ եռամսյակի 9.5%-ից հասնելով մինչև 7.1%: Նախորդ տարվա կեսերից իրականացված կոշտ դրամավարկային քաղաքականությունն ունեցել է իր լագային ազդեցությունը:

Փոխարժեքի արժևորման միտումը ընթացիկ եռամսյակի ընթացքում նույնպես շարունակվել է: Չնայած օգոստոսին, հուլիսի համեմատ, թուրքական լիրայի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ժամանակավոր արժեզրկմանը՝ 2.45% (վերջինս պայմանավորված էր «տաք փողերի» արտահոսքով), հաջորդ ամսից սկսած՝ նորից ճշգրտվել է արժևորման ուղղությամբ, և սեպտեմբերին փոխարժեքի մակարդակն արդեն ցածր էր հուլիսի մակարդակից: Երրորդ եռամսյակում գրանցվել է լիրայի տ/տ 14.4% արժևորում, իսկ ինը ամիսների արդյունքներով՝ 5.9% արժևորում, ինչը ներմուծվող ապրանքների գների միջոցով զսպել է գնաճը:

Գնաճի տեմպերի նվազումը թույլ է տվել Կենտրոնական բանկին սեպտեմբերի 14-ին մեկօրյա տոկոսադրույքները[18] նվազեցնել 17.5%-ից մինչև 17.25%: Տոկոսադրույքների նման քաղաքականությունը հիմնավորված է այն հանգամանքով, որ համաշխարհային տնտեսության առավել խիստ վարկային պայմանները կսահմանափակեն վարկային միջոցների տրամադրումը Թուրքիային, ինչն էլ կնպաստի գնաճի՝ կառավարելի սահմաններում պահպանմանը: Միևնույն ժամանակ, տոկոսադրույքների ցածր մակարդակը կնպաստի սպառողական ծախսերին և տնտեսական աճին:

Ադրբեջանի տնտեսության աճի տեմպերը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ԱՊՀ երկրների թվում 2007թ. հունվար-սեպտեմբերին շարունակել են մնալ ամենաբարձրը: 2007 թ. առաջին ինը ամիսների ընթացքում իրական ՀՆԱ աճը կազմել է 27.1%, ընդ որում՝ ոչ նավթային հատվածում ՀՆԱ աճը կազմել է 8.9%: Ինչպես 2004-2006 թթ., այնպես էլ 2007 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում տնտեսական աճի այսպիսի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորվել են վառելիքի (նավթ, բնական գազ և այլ ածխաջրեր) արդյունահանմամբ և տրանսպորտի հատվածների աճով: Արտադրության ոլորտին բաժին է ընկել ՀՆԱ 70.5%-ը, իսկ սպասարկման ոլորտին՝ 21.5%-ը: Արտադրանքի և ներմուծման զուտ հարկերը կազմել են ՀՆԱ 8.0%-ը: Ընդ որում, ՀՆԱ-ում արդյունաբերության բաժինը կազմել է 57.9%, շինարարությանը՝ 7.4%, գյուղատնտեսությանը՝ 5.2%: Սպասարկման ոլորտում արտադրված ավելացված արժեքի 25.3%-ը բաժին է ընկել տրանսպորտին, 7.9%-ը՝ կապին, 31.0%-ը՝ առևտրին և ռեստորանային ու հյուրանոցային ծառայություններին, 35.8%-ը՝ սոցիալական և այլ ծառայություններին: 2007 թ. առաջին ինը ամիսների ընթացքում Ադրբեջանի բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1965.9 մանաթ կամ 2282 դոլար: 2007 թ. առաջին ինը ամիսների ընթացքում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող անվանական դրամական եկամուտները կազմել են 1079 մանաթ կամ 1252 դոլար, որը 39.8%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը: Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող միջին ամսական եկամուտը նշված ժամանակահատվածում կազմել է 119.9 մանաթ կամ 139.2 դոլար, որից 62.5%-ը ուղղվել է սպառողական կարիքների բավարարմանը, 11.6%-ը՝ հարկերի, սոցապ և այլ կամավոր վճարումների կատարմանը և 25.9%-ը՝ ավանդների և կապիտալի համալրմանը:

2007 թ. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, Ադրբեջանում գնաճը կազմել է 16.0%, նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ՝ 16.4%, իսկ դեկտեմբերի համեմատ՝ 11.0%: Ընդ որում, սեպտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, պարենային ապրանքների գնաճը կազմել է 7.9%, ոչ պարենային ապրանքներինը՝ 7.4%, ծառայություններինը՝ 23.9%[19]:

2007 թ. առաջին ինը ամիսների ընթացքում իրականացված արտահանման-ներմուծման գործարքների արդյունքում Ադրբեջանում ձևավորվել է ապրանքային հաշվեկշռի դրական մնացորդ՝ 408.5 մլն դոլարի չափով[20]:

Գնաճի տեմպերը զսպելու նպատակով Ազգային բանկը վարել է մանաթի դանդաղ տեմպերով արժևորման քաղաքականություն: Արդյունքում՝ հունվար-սեպտեմբերին մանաթի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 2.37%-ով, իսկ 2007 թ. առաջին ինը ամիսների միջին փոխարժեքը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միջինի համեմատ, արժևորվել է 4.45%-ով: Ադրբեջանի ազգային բանկի արտարժութային պահուստները 2007 թ. առաջին ինը ամիսների ընթացքում ավելացել են 59.4% կամ 1168.3 մլն դոլարով և հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել 3135.6 մլն դոլար:

Վրաստանում տնտեսական աճը 2007 թ. առաջին կիսամյակում կազմել է 12.5%[21]: Ընդ որում, արդյունաբերական արտադրանքի ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, ավելացել է 23.0%-ով,

---

[18] Հոկտեմբերի 17-ին մեկօրյա տոկոսադրույքները հերթական անգամ նվազեցվել են մինչև 16.75%:

[19] Աղբյուրը՝ Ադրբեջանի ազգային բանկի վիճակագրական բյուլետեն, 2007թ. սեպտեմբեր, աղյուսակ 1.2:

[20] Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ապրանքների արտահանման ծավալները կազմել են 4.3 մլրդ դոլար, իսկ ներմուծման ծավալները՝ 3.9 մլրդ դոլար: Աղբյուրը՝ Day.Az, 3 նոյեմբերի, 2007թ.:

[21] Վրաստանում վիճակագրության նոր համակարգի անցնելու կապակցությամբ ՀՆԱ-ի և նրա տարրերի դինամիկային վերաբերող ցուցանիշները հրապարակվում են ուշացումներով:

իսկ գյուղատնտեսական արտադրանքինը՝ 6.6%-ով[22]: Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1708.1 լարի (1012.6 դոլար), որը 21.5%-ով գերազանցում է 2006 թ. առաջին կիսամյակի ցուցանիշը:

2007 թ. հունվար-սեպտեմբերին Վրաստանում պահպանվել են նախորդ տարվա բարձր գնաճային ճնշումները: 2007 թ. առաջին ինը ամիսների ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, Վրաստանում գնաճը կազմել է 8.5%, նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ՝ 9.0%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 6.2%: Ընդ որում, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների գնաճը կազմել է 5.9%, ոչ պարենային ապրանքներինը՝ 3.8%, իսկ ծառայությունների գնաճը՝ 10.0%: Այս ընթացքում ամենից շատ բարձրացել են մրգերի գները՝ 91.2%, բուսական յուղինը՝ 20.6%-ով, հաց և հացամթերքներինը՝ 15%-ով: Կոմունալ ծառայությունները թանկացել են 21.7%-ով, առողջապահության ոլորտում գներն աճել են 6.4%-ով, իսկ տրանսպորտային սպասարկման ոլորտում՝ 10.1%-ով: Միայն սեպտեմբեր ամսվա ընթացքում կաթի, պանրի և ձվի գինը միջին հաշվով աճել է 14.2%-ով, իսկ բուսական յուղինը՝ միջին հաշվով 15.5%-ով[23]:

2007 թ. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, վրացական լարին ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 3.35%-ով, իսկ 2007 թ. առաջին ինը ամիսների միջին փոխարժեքը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միջինի համեմատ, արժևորվել է 6.19%-ով: Վրաստանի ազգային բանկի արտարժութային պահուստները 2007 թ. առաջին ինը ամիսների ընթացքում ավելացել են 57.9%-ով կամ 539 մլն ԱՄՆ դոլարով և սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել 1,470 մլն ԱՄՆ դոլար[24]: Վերջինս ընթացիկ հաշվի պակասուրդի նկատմամբ կապիտալի և ֆինանսական հաշվի հավելուրդի գերազանցման արդյունք է:

2007 թ. հունվար-սեպտեմբերին իրականացված արտահանման-ներմուծման գործարքների արդյունքում Վրաստանում ձևավորվել է ապրանքային հաշվեկշռի բացասական մնացորդ՝ շուրջ 2,666 մլն դոլարի չափով[25]: Ընդ որում, քանի որ ներմուծումն ավելի քան 4 անգամ գերազանցել է արտահանման ծավալները, ֆինանսական միջոցների արտահոսքը շարունակել է մեղմել վրացական լարիի արժևորումը: Լարիի կտրուկ արժևորման մեղմմանը նպաստել են նաև Թբիլիսիի միջբանկային արժութային բորսայում Վրաստանի ազգային բանկի ինտերվենցիաները. 2007 թ. հունվար-սեպտեմբերին զուտ առքը կազմել է 648.8 մլն ԱՄՆ դոլար[26]:

ՎԵՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ [27]

2007 թ. երրորդ եռամսյակը նախանշվեց նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ընթացիկ հաշվի պակասուրդի խորացմամբ, ինչպես նաև կապիտալի զուտ ներհոսքի մեծ ծավալների պահպանմամբ: Ընթացիկ հաշվի պակասուրդի աճը, չնայած տրանսֆերտների բարձր աճին, պայմանավորվել է առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճով: Արտաքին միջավայրի զարգացումները, ինչը մասնակիորեն արտահայտվել է արտահանման շուկաներում միջանկյալ սպառման ապրանքների գների տ/տ 14.6% աճով, արդյունաբերության աճի բարձր տեմպերի պահպանման հետ մեկտեղ (առանց ադամանդի) նպաստել են արտահանման (կրեդիտ) տ/տ 25.6% աճին: Նման աճը պայմանավորվել է նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արտահանման ցածր ծավալներով: Ներմուծման աճի միտումը շարունակվել է նաև երրորդ եռամսյակում, երբ գրանցվել է վերջինիս տ/տ 47.5% աճ: Եկամուտների բարձր աճի պահպանմամբ և փոխարժեքի արժևորմամբ պայմանավորված սպառողական, հումքային և ներդրումային ապրանքների նկատմամբ պահանջարկի աճի արդյունքում արձանագրվել է ներմուծման բարձր աճ: Ներմուծման դոլարային արտահայտությամբ աճին նպաստել է նաև միջանկյալ սպառման ապրանքների ներմուծման գների տ/տ 16.3% աճը:

---

[22] Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2007թ. սեպտեմբեր, աղյուսակ 1.1:

[23] Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2007 թ. սեպտեմբեր, աղյուսակ 1.1, 1.3, 1.4 և News Georgia, 09/10/2007:

[24] Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2007 թ. սեպտեմբեր, աղյուսակ 5.1.

[25] Նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի համեմատ Վրաստանում ապրանքների արտահանման (ՖՕԲ) ծավալներն աճել են 25.4%-ով և կազմել 884.6 մլն դոլար, իսկ ներմուծման (ՍԻՖ) ծավալները՝ 36.9%-ով և կազմել 3550.5 մլն դոլար: Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2007 թ. սեպտեմբեր, աղյուսակ 5.4:

[26] Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2007 թ. սեպտեմբեր, աղյուսակ 4.5:

[27] 2007 թ. երկրորդ եռամսյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ կանխատեսումներն են:

Ֆիզիկական անձանց կողմից արտերկրներից ուղարկված արտարժութային միջոցների զուտ ներհոսքի աճի տեմպերը շարունակում են պահպանվել նաև 2007 թ. երրորդ եռամսյակում: Բանկային համակարգով ստացված ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքն ավելացել է տ/տ 46.3%-ով: Ռուսաստանի տնտեսական բարձր աճի տեմպերի պահպանումը նպաստել է Ռուսաստանից տրանսֆերտների բարձր աճի տեմպերի պահպանմանը[28]:

Երրորդ եռամսյակում կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների զուտ ներհոսքի մեծ ծավալների արդյունքում վճարային հաշվեկշիռը հավելուրդով է եղել, ինչը հանգեցրել է համախառն արտաքին պահուստների կուտակման աճի: Վերջինիս հետ կապված՝ արտարժութային շուկայում դրամի արժևորման ճնշումները շարունակվել են, ինչը զուգակցվել է դրամայնացման գործընթացի պահպանմամբ: Երրորդ եռամսյակում ՀՀ դրամի միջին փոխարժեքի տ/տ արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 19.1%, իսկ հունվար-սեպտեմբերի տ/տ միջին արժևորումը՝ 22.7%:

Արտաքին աշխարհի պահանջարկը ՀՀ տնտեսության իրական և ֆինանսական ակտիվների նկատմամբ արտահայտվել է ֆինանսական և կապիտալի մեծածավալ ներհոսքով: Վերջինս նպաստելով ներքին պահանջարկի լրացուցիչ աճին՝ առաջացրել է ընդլայնող ազդեցություն գնաճի վրա: Այնուամենայնիվ, գնաճային ճնշումները մեղմվել են որոշ գործոնների արդյունքում.

1. Ներմուծման միջոցով ապահովվել է ապրանքների լրացուցիչ առաջարկ, միևնույն ժամանակ ավելացել է ֆինանսական միջոցների արտահոսքը՝ պայմանավորված առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճով:
2. Արտարժութային միջոցների դրամային համարժեքը նվազել է ՀՀ դրամի անվանական փոխարժեքի արժևորման արդյունքում, ինչն այլ հավասար պայմաններում կարող էր առաջացնել գնաճային ճնշումներ:
3. Իրացվելի միջոցների լրացուցիչ աճի բացասական հետևանքները մեղմվել են տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանմամբ:

Ընթացիկ հաշիվ. 2007 թ. երրորդ եռամսյակում ընթացիկ հաշվի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, խորացել է, ինչն առևտրային հաշվեկշռի պակասուրդի խորացման արդյունք էր: Վերջինս պայմանավորվել է արտահանման աճի տեմպերի նկատմամբ ներմուծման աճի տեմպերի գերազանցմամբ: Միևնույն ժամանակ, մասնավոր տրանսֆերտների և սեզոնային աշխատողների եկամուտների բարձր աճի տեմպերի պահպանումը շարունակում է փոխհատուցել առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճը: Ընթացիկ հաշվի պակասուրդն ավելացել է ինչպես բացարձակ արժեքով, այնպես էլ ՀՆԱ-ում տեսակարար կշռով: Ընթացիկ հաշվի պակասուրդը երրորդ եռամսյակում տ/տ ավելացել է 16.6 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 35.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ ինը ամիսների արդյունքներով՝ վերջինիս կշիռը ՀՆԱ-ում կազմել է 4.1% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 2.0%):

2007 թ. երրորդ եռամսյակում առևտրային հաշվեկշռի պակասուրդն ավելացել է 168.9 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 407.3 մլն ԱՄՆ դոլար: Երրորդ եռամսյակում գրանցվել է արտահանման (կրեդիտ) տ/տ 25.6% աճ (արտահանումը կազմել է 318.1 մլն ԱՄՆ դոլար): Արտահանման նման բարձր աճը պայմանավորվել է արտահանման շուկաներում հումքային ապրանքների գների բարձր մակարդակի պահպանմամբ, ինչպես նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արտահանման ցածր ծավալներով: Արդյունաբերության (առանց ադամանդի) զարգացումներն արտահայտվել են հանքահումքային ապրանքների և կոնյակի արտահանման աճով:

Ադամանդագործության ճյուղում էական տեղաշարժեր չեն արձանագրվել, և նվազման միտումները շարունակվել են նաև ընթացիկ եռամսյակում[29]: Արդյունքում՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների տ/տ նվազումը երրորդ եռամսյակում կազմել է 28.1%:

«Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանումը երրորդ եռամսյակում ավելացել է տ/տ 54.4% -ով: Նշված ապրանքախմբի արտահանման աճին շարունակում է նպաստել պղնձի հանքաքարի ու խտանյութի, ինչպես նաև ցեմենտի՝ դեռ տարեսկզբից արձանագրվող արտահանման աճը:

«Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման տ/տ աճը երրորդ եռամսյակում կազմել է 51.6%՝ պայմանավորված երկաթամիահալվածքի (ֆերոմոլիբդեն) և ալյումինե փայլաթիթեղի արտահանման աճով: Միջազգային շուկաներում մոլիբդենի գների բարձր մակարդակի պահպանումը շարունակում է նպաստել նշված ապրանքախմբի արտահանման դոլարային ծավալների աճին:

---

[28] Տարբեր միջազգային կազմակերպությունների՝ Ռուսաստանի տնտեսության գնահատումները լավատեսական են:

[29] «ԱԼՌՈՍԱ» ընկերության հետ արդեն ստորագրվել է համատեղ գործունեություն իրականացնելու համաձայնագիր: Սակայն գործունեության ծավալման ժամկետները դեռևս մնում են անորոշ:

Արտահանման աճին մեծապես նպաստել է նաև «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախումբը, որի արտահանման տ/տ աճը երրորդ եռամսյակում կազմել է 24.7%: Վերջինիս գերակշռող մասը կազմում է կոնյակը:

Նշենք նաև, որ երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են բավականին փոքր կշիռ ունեցող երեք ապրանքախմբերի արտահանման ծավալները:

Ներմուծման աճի բարձր տեմպերը շարունակվել են նաև երրորդ եռամսյակում: Ներմուծման բարձր աճը արտացոլում է տնտեսության պահանջարկի կայուն աճը գրեթե բոլոր ապրանքատեսակների նկատմամբ (սպառողական, հումքային և ներդրումային), ինչպես նաև փոխարժեքի արժևորումը: Ներմուծման դոլարային ծավալների աճը պայմանավորվել է նաև հումքային ապրանքների ներմուծման գների աճով: Երրորդ եռամսյակում ներմուծման (դեբետ) տ/տ աճը կազմել է 47.5% (ներմուծումը կազմել է 725.4 մլն ԱՄՆ դոլար):


Ներմուծման մեջ մեծ կշիռ կազմող ապրանքախմբերի՝ «Պատրաստի սննդի արտադրանք», «Հանքահումքային արտադրանք», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ներմուծման ծավալներում գրանցվել է համապատասխանաբար տ/տ 62.5%, 14.8%, 2.8 անգամ, 45.0% և 2.1 անգամ աճ[30]:

Ոչ մեծ կշիռ ունեցող «Քիմիա և նրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», «Պլաստմասսա և դրանցից իրեր», «Բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի նպաստումը ներմուծման աճին կազմել է համապատասխանաբար 1.8 տոկոսային կետ, 2.0 տոկոսային կետ և 3.2 տոկոսային կետ:

Գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալներն աճել են[31], իսկ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ներմուծման նվազումը երրորդ եռամսյակում կազմել է տ/տ 6.5%: Այս ապրանքախմբի ներմուծման ծավալների կրճատման ցածր տեմպերը, ի տարբերություն նույն ապրանքախմբի արտահանման կրճատման բարձր տեմպերի, պայմանավորվել է այն հանգամանքով, որ նշված ապրանքախմբում ներառված ոսկու ներմուծման ծավալների աճը հնարավորինս փոխհատուցել է ադամանդի ներմուծման կրճատումը:

Արտահանման և ներմուծման տ/տ աճերը երրորդ եռամսյակում, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի, կազմել են համապատասխանաբար 44.2% և 58.2%: Իսկ առևտրային հաշվեկշռի պակասուրդը, առանց այս հոդվածի ցուցանիշը հաշվի առնելու, ավելացել է 155.7 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 378.0 մլն ԱՄՆ դոլար:

2007թ. III եռամսյակում արտահանման հիմնական 4 ապրանքախմբերից միայն մեկի ծավալներն են նվազել




[30] *«Պատրաստի սննդի արտադրանքի» նպաստումը ներմուծման աճին կազմել է 4.5 տոկոսային կետ, «Հանքահումքային արտադրանքի նպաստումը՝ 2.6 տոկոսային կետ, «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի նպաստումը՝ 9.8 տոկոսային կետ, «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբինը՝ 6.4 տոկոսային կետ:*

[31] *Ներմուծման նվազում է գրանցվել նաև շատ փոքր կշիռ ունեցող երկու ապրանքախմբերում:*

Արտաքին առևտրի աշխարհագրական բաշխվածությունը երրորդ եռամսյակում գրեթե էական փոփոխություններ չի կրել: Այսպես՝ ապրանքային հաշվեկշռի պակասուրդի աճը Եվրոմիության, Չինաստանի և Ճապոնիայի հետ կազմել է համապատասխանաբար 1.6 անգամ, 1.7 անգամ և 3.4 անգամ: ԱՊՀ երկրների հետ ապրանքային հաշվեկշռի պակասուրդն ավելացել է 67.0%-ով, իսկ Իրանի հետ գրանցվել է առևտրային հաշվեկշռի պակասուրդի կրճատում 14.2%-ով:

2007թ. III եռ-ում ներմուծման գրեթե բոլոր հոդվածների ցուցանիշների աճը պահպանվել է



Ծառայությունների արտահանման աճի նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճի արդյունքում 2007 թ. ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդն ավելացել է 39.6%-ով և կազմել 33.8 մլն ԱՄՆ դոլար: Երրորդ եռամսյակում ծառայությունների արտահանման տ/տ աճը կազմել է 12.0%, ծառայությունների ներմուծման աճը՝ 15.4%: Ծառայությունների ներմուծման աճը հիմնականում պայմանավորվել է տրանսպորտային ծառայությունների ներմուծման աճով:

Մասնավոր տրանսֆերտների և սեզոնային աշխատողների եկամուտների զուտ ներհոսքի[32] միտումները 2007 թ. երրորդ եռամսյակում նույնպես շարունակվել են՝ պայմանավորված Ռուսաստանի տնտեսական բարձր աճով: «Եկամուտներ» հոդվածով զուտ ներհոսքն ավելացել է 75.9 մլն ԱՄՆ դոլարով (2.4 անգամ): Նշենք, որ «Սեզոնային աշխատուժից եկամուտներ» ենթահոդվածի զուտ ներհոսքի 78.0 մլն ԱՄՆ դոլարով աճը փոխհատուցել է «Եկամուտներ ներդրումներից» ենթահոդվածով զուտ արտահոսքի 2.0 մլն ԱՄՆ դոլարով աճը: Մասնավոր տրանսֆերտների տ/տ աճը երրորդ եռամսյակում կազմել է 44.7%:

Ֆինանսական ներհոսքի ընդլայնող ազդեցությունը գնաճի վրա մեղմվել է ընթացիկ հաշվի պակասուրդի աճի հետևանքով՝ մի կողմից տեղի է ունեցել եկամուտների մի մասի արտահոսք, մյուս կողմից՝ ներմուծման միջոցով ապահովվել է ապրանքների լրացուցիչ առաջարկ:

Ընթացիկ հաշիվը 2004 - 2007 թթ. երրորդ եռամսյակներում

մլն ԱՄՆ դոլար

	III եռ. 04	III եռ. 05	III եռ. 06	III եռ. 07*
Ընթացիկ հաշիվ	-5.7	-4.1	-18.6	-35.3
Առևտրային հաշվեկշիռ	-127.3	-141.1	-238.4	-407.3
Ծառայություններ (զուտ)	-25.7	-17.7	-24.2	-33.8
Եկամուտներ (զուտ)	28.6	32.2	66.2	128.9
Մասնավոր տրանսֆերտներ (զուտ)	100.8	113.0	183.0	264.8
Պաշտոնական տրանսֆերտներ (զուտ)	17.8	9.5	8.0	12.2

** գնահատական*

[32] *Ոչ առևտրային բնույթի փոխանցումների տ/տ աճը 2007թ. երրորդ եռամսյակում կազմել է 46.3%:*

Կապիտալի և ֆինանսական հաշիվ. 2007 թ. երրորդ եռամսյակում կապիտալի և ֆինանսական հաշվով գրանցվել է 109.1 մլն ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք՝ 32.3 մլն ԱՄՆ դոլարով ավելի նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ: Նշված ֆինանսական ներհոսքը գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը, ինչը հանգեցրել է ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստների աճին:


Կապիտալի և ֆինանսական հաշվի ենթահոդվածներով դրսևորվել են հետևյալ զարգացումները.

Կապիտալ տրանսֆերտների զուտ ներհոսքը երրորդ եռամսյակում տ/տ ավելացել է 12.1 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 34.2 մլն ԱՄՆ դոլար: Օտարերկրյա ուղղակի ներդրումները երրորդ եռամսյակում ավելացել են տ/տ 9.3 մլն դոլարով և կազմել 109.5 մլն ԱՄՆ դոլար: Պետական վարկերի գծով զուտ ներհոսքի աճը կազմել է տ/տ 13.0 մլն ԱՄՆ դոլար (կազմել է 28.4 մլն ԱՄՆ դոլար): Այլ ներդրումներ հաշվով, ինչը հիմնականում ներառում է մասնավոր հատվածի կողմից վերցված առևտրային վարկերը և կանխիկ արտարժույթը, գրանցվել է 62.9 մլն ԱՄՆ դոլարի զուտ արտահոսք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 60.7 մլն ԱՄՆ դոլար զուտ արտահոսքի փոխարեն: Մասնավոր հատվածի ՁԱԱ-ի աճը փոխհատուցել է առևտրային բանկերի ՁԱԱ-ի նվազումը: Ընթացիկ հաշվի ֆինանսավորման հիմնական միջոցները շարունակում են մնալ օտարերկրյա ուղղակի ներդրումները:

Երրորդ եռամսյակում վճարային հաշվեկշռի հավելուրդի արդյունքում ԿԲ ՁԱԱ-ն ավելացել է 73.9 մլն ԱՄՆ դոլարով:

Կենտրոնական բանկի քաղաքականությունը նշված ժամանակահատվածում նպատակաուղղված է եղել ֆինանսական ներհոսքի բացասական ազդեցությունների չեզոքացմանը: Այսպես՝ երրորդ եռամսյակում Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի զուտ գնման ծավալը կազմել է 70.5 մլն ԱՄՆ դոլար: Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկը թողարկել է արժեթղթեր՝ ավելցուկային դրամային միջոցների ներքաշման նպատակով:

2007թ. III եռամսյակում պահպանվել են կապիտալի և ֆինանսական հաշվով զուտ ներհոսքի մեծ ծավալները




Վերը նշված հոսքերի պայմաններում փոխարժեքն արժևորվել է, ինչը հանգեցրել է ֆինանսական միջոցների դրամային համարժեքի փոքրացմանը: Դա, միևնույն ժամանակ, մեղմել է ֆինանսական հոսքերի արդյունքում պահանջարկի լրացուցիչ աճի գնաճային ճնշումները:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ, ՓՈԽԱՐԺԵՔ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ. 2007 թ. առաջին կիսամյակում գնաճի զարգացումները բավականին բարենպաստ էին: Մասնավորապես, վերջինիս նպաստել էին և՛ արտաքին միջավայրից գնաճային թույլ ճնշումները, և՛ տնտեսությունում համախառն առաջարկի և պահանջարկի գնահատվող հավասարակշիռ վիճակը: Այս պայմաններում, 2006 թ. ավարտին ձևավորված 5.2% տ/տ գնաճը 2007 թ. մայիսին նվազել էր մինչև 3.8% տ/տ: Սակայն արդեն հունիսին, երբ արձանագրվեց ցորենի միջազգային գների զգալի աճ և նախանշվում էին նաև միջազգային շուկաներում պարենային այլ ապրանքների (կաթնամթերք, մսամթերք, բուսական յուղեր, սուրճ) գների աճի հավանականությունները,


ԿԲ-ն հետամուտ եղավ զսպող դրամավարկային քաղաքականության իրականացմանը. հուլիսի 4-ին բարձրացրեց ռեպո տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով և սահմանեց 4.75%: Միաժամանակ, պահպանելով մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքները ռեպո գործառնության տոկոսադրույքից հավասարաչափ հեռացված լինելու դրույթը, դրանք նույնպես բարձրացվել են 0.25 տոկոսային կետով:

ԿԲ ռեպո և շուկայական ռեպո տոկոսադրույքների շեղումը նվազել է



Երրորդ եռամսյակի ընթացքում ԿԲ-ն շարունակել է յուրաքանչյուր չորեքշաբթի առաջարկել ռեպո համաձայնագրերի կնքում, որի արդյունքում առևտրային բանկերը մշտապես կարողացել են հարթել իրենց իրացվելիության խնդիրները:

Երրորդ եռամսյակի ընթացքում ԿԲ կողմից իրականացված ռեպո գործառնությունների ծավալը




2007 թ. երրորդ եռամսյակի ընթացքում շարունակել են ավելանալ միջբանկային ռեպո շուկայում իրականացված գործառնությունների ծավալները և կազմել 102.5 մլրդ դրամ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են մոտ 2.4 անգամ), իսկ շուկայական ռեպո տոկոսադրույքը սեպտեմբերին կայունացել է 4.8%-ի շրջակայքում (հունիսին՝ 4.3%): Առևտրային բանկերի միջև իրականացված գործառնությունների տեսակարար կշիռն ընդհանուր ծավալում կազմել է մոտ 50%, իսկ երկրորդ եռամսյակում՝ ընդամենը 40%:

Այս եռամսյակի ընթացքում ևս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ԿԲ ներքաշող գործառնությունների ծավալները զգալիորեն աճել են: Մասնավորապես՝ ԿԲ կողմից իրականացվել է պարտատոմսերի 24 թողարկում՝ 37 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, որոնց նկատմամբ ձևավորված ընդհանուր պահանջարկը կազմել է 51.4 մլրդ դրամ: Տեղաբաշխված ԿԲ պարտատոմսերի ծավալը կազմել է 32.3 մլրդ դրամ՝ 6.25% միջին եկամտաբերությամբ (2006 թ. երրորդ եռամսյակի համեմատությամբ ավելացել է 0.88 տոկոսային կետով): Առևտրային բանկերի կողմից Կենտրոնական բանկում ներդրված ավանդի միջին օրական ծավալը կազմել է 1.407 մլրդ դրամ:

2007 թ. երրորդ եռամսյակի ընթացքում պետական (գանձապետական) պարտատոմսերի առաջնային շուկայում նկատվել են տոկոսադրույքների տարբեր վարքագծեր: 2007 թ. սեպտեմբերին պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին եկամտաբերությունը կազմել է 6.4%, միջնաժամկետ պարտատոմսերինը՝ 6.5% նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով համապատասխանաբար 1.4 և 0.5 տոկոսային կետով: Երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունները, նախորդ տարվա համեմատությամբ, զգալիորեն նվազել են՝ մոտ 2.9 տոկոսային կետով և եռամսյակի վերջում կազմել 6.72%:


Ինչպես ցույց է տալիս եկամտաբերության կորերի ուսումնասիրությունը, ՊՊ երկրորդային շուկայում դիտվել է հետևյալ պատկերը՝ կարճաժամկետ հատվածում եկամտաբերությունները բավականին աճել են, իսկ երկարաժամկետ հատվածում՝ նվազել: Եկամտաբերության կորի դիրքի փոփոխության գերակշիռ մասը՝ 75%-ը, պայմանավորվել է կորի գոգվածության փոփոխությամբ՝ 0.19-ից՝ 0.048, ինչը վկայում է կարճաժամկետ և երկարաժամկետ տոկոսադրույքների միջև տարբերության նվազման մասին:

Կարճաժամկետ և երկարաժամկետ տոկոսադրույքների միջև տարբերությունը նվազել է



ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի և ավանդների տոկոսադրույքները տատանվել են տարբեր ուղղություններով: 2007 թվականի սեպտեմբերին ներգրավված ավանդների տոկոսադրույքները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են. ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքներն աճել են 0.33 տոկոսային կետով և կազմել 6.25%, իսկ դոլարային ավանդների տոկոսադրույքները՝ 0.41 տոկոսային կետով և կազմել 4.89%: Արդյունքում՝ ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 1.36 տոկոսային կետ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1.44-ի փոխարեն:


Բանկային համակարգում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքները նվազել են



Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքները ցուցաբերել են հակառակ միտումներ. ՀՀ դրամով վարկերի տոկոսադրույքները 2007 թ. սեպտեմբերին, նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի համեմատ, աճել են 0.86 տոկոսային կետով՝ կազմելով 17.35%, իսկ ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքները նվազել են 4.85 տոկոսային կետով՝ կազմելով 13.2%: ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով վարկերի տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 4.15 տոկոսային կետ:

Բանկային համակարգի կողմից ՀՀ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն աճել են, իսկ ԱՄՆ դոլարով վարկերինը՝ նվազել




ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով վարկերի ու ավանդների տոկոսադրույքների տարբերությունները համապատասխանաբար կազմել են 8.31 և 11.1 տոկոսային կետ:

ՓՈԽԱՐԺԵՔ. Անվանական փոխարժեքը՝ որպես փոխանցման կարևոր ուղի, իր ազդեցությունն է ունենում գների վարքագծի վրա մի կողմից՝ ներմուծվող ապրանքների գների, մյուս կողմից սպասումների ձևավորման միջոցով: Անվանական փոխարժեքն ազդում է նաև տրանսֆերտների դրամային մեծության, հետևաբար նաև՝ պահանջարկի վրա:


2007 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի վերջի համեմատ, ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է ընդամենը 1.54%-տոկոսով՝ 340.95 դրամից՝ 335.79 դրամ, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի վերջի համեմատ արժևորվել և կազմել է 8.25% (363.50 դրամից՝ 335.79 դրամ): Երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ՀՀ դրամի միջին եռամսյակային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 19.10%-ով՝ 402.37 դրամից՝ 337.83 դրամ: Շարունակվել է փոխարժեքի՝ նախորդ ժամանակահատվածներում սկսված արժևորումը, և նման վարքագիծը հիմնականում պայմանավորվել է ինչպես արտարժութային միջոցների ներհոսքով, այնպես էլ տնտեսության դրամայնացման շարունակական գործընթացով:

ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը



Եռամսյակի ընթացքում արժութային շուկայում իրականացված գործառնությունների համախառն ծավալը կազմել է 1,853.87 մլն ԱՄՆ դոլար[33], որը 28.03%-ով ավելի է նախորդ տարվա երրորդ եռամսյակի ցուցանիշից: Վերջինս արտացոլում է արտաքին առևտրաշրջանառության ծավալների, արտաքին ֆինանսական ներհոսքի և ներքին տնտեսության բարձր աճերի միտումները:

ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները




Եվրո/դրամ գործառնությունների շուկայում նույնպես տեղի է ունեցել ծավալների աճ՝ 61.0%-ով: Համախառն ծավալը կազմել է 136.56 մլն եվրո (նախորդ տարվա երրորդ եռամսյակում՝ 84.82 մլն եվրո):

Գնաճի վրա ֆինանսական ներհոսքի բացասական ազդեցությունը մեղմելու, փոխարժեքի տատանումները հարթելու և դրամայնացման գործընթացը խթանելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը 2007 թ. երրորդ եռամսյակում ՀՀ բանկերից գնել է 73.2 մլն, վաճառել՝ 2.66 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքի միջին արժևորումը 2007 թվականի երրորդ եռամսյակում կազմել է տ/տ 13.3 տոկոս, որը նախորդ եռամսյակի ցուցանիշից ցածր է 4.6 տոկոսային կետով: Անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորման դեռևս բարձր տեմպերը գրանցվել են հիմնականում ի հաշիվ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման, որը երրորդ եռամսյակում կազմել է տ/տ 19.1 տոկոս և միայն մասամբ փոխհատուցվել գործընկեր երկրների արժույթների՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ միջին կշռված արժևորմամբ՝ 4.8 տոկոս: Գործընկեր երկրների փոխարժեքների արժևորմանը ամենից ավելի նպաստել է եվրոն (2.4 տոկոսային կետ), իսկ երրորդ եռամսյակում ԱՄՆ դոլարի նկատմամբ տ/տ արժևորումը՝ 7.8 տոկոս:

Երրորդ եռամսյակում իրական արդյունավետ փոխարժեքի արժևորումը պայմանավորվել է անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորմամբ




[33] *Ներառված են նաև բորսայում իրականացված առք ու վաճառքի ծավալները՝ 147.05 մլն ԱՄՆ դոլար: Բորսայում իրականացված գործարքների ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 5.57%-ով:*

Անվանական արդյունավետ փոխարժեքի նման բարձր արժևորումը հանգեցրել է իրական արդյունավետ փոխարժեքի արժևորմանը երրորդ եռամսյակում: Ըստ էության, Հայաստանի գնաճը ցածր է եղել գործընկեր երկրների միջին կշռված գնաճից. Հայաստանի միջին գնաճը երրորդ եռամսյակում կազմել է տ/տ 2.1 տոկոս, իսկ գործընկեր երկրների միջին կշռված գնաճը՝ 6.0 տոկոս: Գործընկեր երկրների միջին կշռված գնաճի վրա հիմնական ազդեցություն են ունեցել Իրանը՝ 2.0 և Ռուսաստանը՝ 1.7 տոկոսային կետ: Արդյունքում՝ իրական փոխարժեքը 2007 թվականի երրորդ եռամսյակում արժևորվել է տ/տ 8.8 տոկոսով (նախորդ եռամսյակում՝ 15.7 տոկոսով):

2007 թվականի երրորդ եռամսյակում ներքին իրական փոխարժեքի արժևորման տեմպերը կազմել են 10.5 տոկոս, որը ոչ արտահանելի հատվածի գների էական աճի հետևանք է՝ արտահանելի հատվածի գների հարաբերական կայունության պարագայում:

Ոչ արտահանելի ապրանքների և ծառայությունների գները երրորդ եռամսյակում տ/տ աճել են 10.7 տոկոսով, մինչդեռ արտահանելի ապրանքների գներն աճել են ընդամենը 0.2 տոկոսով: Ոչ արտահանելի ապրանքների գների բարձր աճը հիմնականում պայմանավորվել է հացամթերքների գների աճով, որը բխել է միջազգային շուկայում հացահատիկի գների աճից: Բացի այդ, ֆինանսական մեծածավալ ներհոսքը նույնիսկ շարունակել է արագանալ երրորդ եռամսյակում, որի հետևանքով ներքին պահանջարկի բարձր մակարդակը նույնպես նպաստել է ոչ արտահանելի հատվածի ապրանքների ընդհանուր գների մակարդակի բարձրացմանը:


Գյուղատնտեսական ապրանքների գների բարձր աճը հանգեցրել է ոչ արտահանելի ապրանքների գների աճին և ներքին իրական փոխարժեքի կտրուկ արժևորմանը



ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ. Ըստ երրորդ եռամսյակի համար ԿԲ կողմից արված կանխատեսումների՝ այդ ժամանակահատվածում ևս պահպանվելու էին տնտեսության դրամայնացման և բանկային համակարգի կողմից վարկավորման աճի բարձր տեմպերը, ինչը, այլ հավասար պայմաններում, ենթադրում էր դրան համապատասխան փողի առաջարկի ապահովում: Սակայն հունիսին դիտված գնաճային դրսևորումները, որոնք հետևանք էին ցորենի միջազգային գների անսպասելի աճի, առաջին կիսամյակի ավարտին, հետագա 12 ամիսների կտրվածքով, մեծացրել են գնաճային ռիսկերը: Հաշվի առնելով այդ հանգամանքը և ցորենի ու այլ պարենային ապրանքների միջազգային գների հետագա աճի հավանականությունը՝ ԿԲ-ն հունիսի վերջին որոշակի ճշգրտումներ է կատարել առաջիկա մեկ տարվա դրամավարկային քաղաքականության սցենարում՝ փողի առաջարկի աճի տեմպերի դանդաղման ուղղությամբ՝ հուլիսի համար բարձրացնելով ռեպո գործիքի տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով:

Դրամավարկային միջավայրը, ինչպես և սպասվում էր, բնութագրվել է դրամայնացման ակտիվ գործընթացով, ինչն արտահայտվել է փողի ագրեգատների դրամային բաղադրատարրերի բարձր աճերով: Այսպես, դրամային զանգվածի տ/տ աճը եռամսյակի վերջին կազմել է 61.3% (շուրջ 170.0 մլրդ դրամ), որը պայմանավորվել է շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամային ավանդների համապատասխանաբար 50.7% (87.5 մլրդ դրամ) և 78.9% (82.1 մլրդ դրամ) աճերով: Համեմատության համար նշենք, որ վերը թվարկված ցուցանիշների աճի տեմպերն անցյալ տարի զիջել են այս տարվա նույն ժամանակահատվածի աճերը. 2006 թ. սեպտեմբերին դրամային զանգվածի տ/տ աճը կազմել է 46.2% կամ 87.5 մլրդ դրամ, դրամային ավանդներինը՝ 40.5% կամ 37.7 մլրդ դրամ, իսկ շրջանառությունում գտնվող կանխիկինը՝ 56.8% կամ 49.8 մլրդ դրամ:


Տնտեսության դրամայնացման արդյունքում շարունակում են արագ տեմպերով աճել բանկային համակարգից դուրս գտնվող կանխիկն ու դրամային ավանդները



Դրամի արժեքավորման պայմաններում արձանագրվել է դրամային արտահայտությամբ արտարժութային ավանդների փոքր աճ՝ տ/տ 5.3%, որը դոլարային արտահայտությամբ կազմել է 19.6%:

Ըստ ժամկետային կառուցվածքի, ինչպես և նախորդ եռամսյակներում, այս եռամսյակում ևս թե՛ դրամով և թե՛ արտարժույթով ավանդներում առավել մեծ աճ է արձանագրվել ժամկետային ավանդների գծով՝ համապատասխանաբար տ/տ 51.6 մլրդ դրամ կամ ավելի քան 2 անգամ և 6.6 մլրդ դրամ կամ 9.8% (դոլարային արտահայտությամբ՝ 29.4%): Դրամով ցպահանջ ավանդներն ավելացել են տ/տ 35.0 մլրդ դրամով կամ 54.9%-ով, իսկ արտարժութային ցպահանջ ավանդները նվազել են 18.6 մլրդ դրամով կամ 24.6%-ով (դոլարային արտահայտությամբ՝ 11.1%):

Դրամային արտահայտությամբ արտարժութային ավանդների համեմատաբար կայուն վարքագծի պարագայում շարունակում են արագ տեմպերով ավելանալ դրամով ավանդները



Փողի զանգվածը բաղադրատարրերի վերոնշյալ շարժերի արդյունքում աճել է տ/տ 43.5%-ով կամ 176.5 մլրդ դրամով:

Եռամսյակային միտումների տեսանկյունից՝ երրորդ եռամսյակում ձևավորվել է փողի ագրեգատների վարքագծի հետևյալ պատկերը. շրջանառության մեջ եղած կանխիկն աճել է 33.3 մլրդ դրամով (14.7%), դրամային ավանդները՝ մոտ 27.9 մլրդ դրամով (17.6%), ինչի արդյունքում դրամային զանգվածն աճել է 61.1 մլրդ դրամով (15.9%): Միևնույն ժամանակ, դա ուղեկցվել է արտարժութային ավանդների 2.3 մլրդ դրամով նվազմամբ (1.7%), որի պարագայում էլ փողի զանգվածի աճը կազմել է 58.8 մլրդ դրամ կամ 11.3%:


2007 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ևս նկատվել է տնտեսության դոլարայնացման աստիճանի (արտարժութային ավանդներ/փողի զանգված) նվազում՝ տ/տ 26.6%, որը գրեթե համընկել է նախորդ տարվա նույն ցուցանիշի հետ՝ վկայելով 2006 և 2007 թվականների ինն ամիսների կտրվածքով դիտված դրամայնացման աճի նույն տեմպերի մասին:

Ըստ առաջարկի գործոնների՝ փողի ագրեգատների տ/տ աճին երրորդ եռամսյակի արդյունքներով հավասարապես նպաստել են բանկային համակարգի և՛ ՋԱԱ-ի և՛ ՋՆԱ-ի աճերը՝ համապատասխանաբար տ/տ 32.9% կամ 93.4 մլրդ դրամ և 68.5% կամ 83.1 մլրդ դրամ: Բանկային համակարգի ՋԱԱ-ի համալրման հիմնական աղբյուրը, ինչպես և նախորդ տարի, ԿԲ կողմից արտարժույթի մեծածավալ առքի գործառնություններն են, ինչն առավելապես նպատակաուղղվել է ֆինանսական մեծ ծավալի ներհոսքի ազդեցությունը արժութային շուկայում մեղմելուն: Մյուս կողմից, անցած մեկ տարվա կտրվածքով ավելի քան 41.0 մլրդ դրամով նվազել են առևտրային բանկերի ՋԱԱ-ը, որոնք բանկերի համար ծառայել են որպես տնտեսության վարկավորման աղբյուր:

Բանկային համակարգի ՋՆԱ-ի տ/տ աճը երրորդ եռամսյակում բացառապես պայմանավորվել է տնտեսության վարկավորման ցուցանիշի աննախադեպ մեծածավալ աճով, ինչը մասամբ փոխհատուցվել է Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշի նվազմամբ՝ միջոցների խնայողության հետևանքով:


Երրորդ եռամսյակում ևս շարունակվել են տնտեսության վարկավորման (վարկեր և դեբիտորական պարտքեր) աճի՝ տարեսկզբից արձանագրված բարձր տեմպերը: Այսպես, 2006 թ. տարեկան աճի համեմատ (52.9 մլրդ դրամ կամ 28.1%) վարկավորման ծավալները երրորդ եռամսյակում ավելացել են տ/տ 145.7 մլրդ դրամով կամ 64.6%-ով: Ընդ որում, դրամով վարկերն ավելացել են ավելի քան 2 անգամ կամ 108.2 մլրդ դրամով, իսկ դրամային արտահայտությամբ արտարժույթով վարկերն այդ ժամանակահատվածում ավելացել են ընդամենը 11.6%-ով կամ 19.4 մլրդ դրամով (դոլարային արտահայտությամբ աճը կազմել է ընդամենը 36.7%):

2007թ. երրորդ եռամսյակում թեև ավելացել են թե՛ դրամով, թե՛ արտարժույթով վարկավորման ծավալները, այդուհանդերձ դրամով վարկերի աճի տեմպերը զգալիորեն գերազանցել են արտարժույթով վարկերի աճի տեմպերը



Եռամսյակային միտումներով՝ տնտեսությանը տրված վարկերն ու դեբիտորական պարտքերը երրորդ եռամսյակում ավելացել են շուրջ 65.0 մլրդ դրամով կամ 21.2%-ով, որի կառուցվածքում դրամային վարկերն աճել են 20.6%-ով, իսկ արտարժութայինը՝ 11.5%-ով:


Տնտեսությունում շարունակում են աճել փողայնացման և դրամայնացման մակարդակները



Դրամայնացման գործընթացով պայմանավորված՝ այս եռամսյակում ևս պահպանվել են տնտեսության փողայնացման գործակցի համեմատ դրամայնացման գործակցի առաջանցիկ աճի միտումները: Այսպես, երրորդ եռամսյակում դրամայնացման գործակցի տ/տ աճը կազմել է 35.7%, իսկ փողայնացման գործակիցն աճել է 21%-ով:

Դրամային ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացման մասին է վկայում նաև միջին եռամսյակային դրամային բազմարկչի տ/տ 11.9% աճը, որի ազդեցության հիմնական գործոնը կրկին դրամային ավանդների բարձր աճն է: Վերջինս էլ ամբողջությամբ չեզոքացվել է շրջանառությունում եղած կանխիկի մեծածավալ աճով և արտարժութային ավանդների նվազմամբ՝ հանգեցնելով փողի բազմարկչի տ/տ 0.4%-ով նվազման:


Ի տարբերություն դրամային բազմարկչի, փողի բազմարկիչը նվազել է՝ արտարժութային ավանդների նվազմամբ պայմանավորված



Վարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշն անցած ինն ամիսների արդյունքներով ևս զգալիորեն աճել է՝ նախորդ տարվա սեպտեմբերի վերջի 8.5%-ից այս տարվա նույն ժամանակահատվածում հասնելով 11.8%-ի:


Փողի բազա. Երրորդ եռամսյակում ևս, շարունակվող դրամայնացման ակտիվ գործընթացին համահունչ, ԿԲ-ն ապահովել է դրամի նկատմամբ տնտեսության ներկայացրած բարձր պահանջարկը, որի արդյունքում սեպտեմբերի վերջի դրությամբ փողի բազայի տ/տ աճը կազմել է 44.1%: Դա, որպես կանոն, առավելապես արտացոլվել է ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի վարքագծում, որի տ/տ աճը կազմել է 52.3%: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարի այս ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 32.9% և 38.4%:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, 2007թ. անցած ինն ամիսներին ԿԲ-ից դուրս կանխիկի և փողի բազայի աճի տեմպերն ավելի բարձր են



Եռամսյակային միտումներով նույնպես արձանագրվել են փողի բազայի և ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի մեծ աճեր. առաջինն ավելացել է 45.7 մլրդ դրամով կամ 15.9%-ով, իսկ երկրորդը՝ 36.7 մլրդ դրամով կամ 15.2%-ով: Ընդ որում, ԿԲ-ից դուրս եղած կանխիկի վարքագծերը վերջին տարիներին առավելագույնս համընկել են, ինչը պայմանավորվել է հիմնականում դրամայնացման գործընթացով:


ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի վերջին 3 տարվա վարքագծերը առավելագույնս համընկել են



Եռամսյակի ընթացքում փողի բազան 35.4 մլրդ դրամով կամ 9.5%-ով աճել է ԿԲ ՁԱԱ-ի և 10.3 մլրդ դրամով կամ 11.9%-ով՝ ԿԲ ՁՆԱ-ի աճերի հաշվին: Առաջինի դեպքում աճի հիմնական գործոն են հանդիսացել արժութային շուկայից արտարժույթի զուտ գնման և ԿԲ կողմից իրականացված այլ փոխարկման գործառնությունները (շուրջ 38.8 մլրդ դրամ ընդհանուր գումար): Երկրորդ ցուցանիշի աճը պայմանավորվել է և՛ ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների աճով՝ մոտ 6.0 մլրդ դրամ, և՛ ԿԲ հանդեպ բանկերի զուտ պարտավորությունների աճով՝ 10.5 մլրդ դրամ:

ԿԲ ՁԱԱ-ի և ՁՆԱ-ի տ/տ փոփոխությունները սեպտեմբերի վերջի դրությամբ հանգեցրել են այդ ցուցանիշների՝ համապատասխանաբար 49% աճի և 75.3% նվազման:

Փողի բազայի վարքագիծն ըստ ԿԲ ՁԱԱ-ի և ԿԲ ՁՆԱ-ի



ՀԱՄԱԽՍՈՒՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ ԵՎ ԱՌԱՋԱՐԿ

ՀԱՄԱԽՍՈՒՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Ներքին պահանջարկ

***Մասնավոր սպառում և ներդրումներ*[34].** 2007 թվականի երրորդ եռամսյակում գրանցված տնտեսական աճի բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորվել է ներքին պահանջարկի իրական աճի բարձր՝ 13.3% տ/տ ցուցանիշով:

[34] *Մասնավոր սպառման և ներդրումների իրական աճերը ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված երկրորդ եռամսյակի փաստացի տվյալների վրա: Իրական աճի բոլոր ցուցանիշները երրորդ եռամսյակը՝ նախորդ տարվա երրորդ եռամսյակի նկատմամբ են: Նշենք նաև, որ սկսած 2007թ. երրորդ եռամսյակից՝ մասնավոր սպառման կանխատեսումները կատարվել են նոր մեթոդաբանությամբ, որի հիմքում ընկած է եկամուտ-սպառում երկարաժամկետ կապի առկայությունը, ըստ որի գնահատվել է երկարաժամկետ կոինտեգրացիոն կապ, այնուհետև, սխալների ճշգրտման մեթոդի միջոցով, կանխատեսվել է մասնավոր սպառման դինամիկան:*

Ներքին պահանջարկի ավելի քան 80%-ը կազմող մասնավոր հատվածի ծախսումները իրական արտահայտությամբ աճել են 12.6%-ով՝ պայմանավորված բնակչության եկամուտների, մասնավորապես՝ տրանսֆերտների և աշխատավարձերի շարունակական աճով:


Մասնավոր ծախսումների կառուցվածքում սպառումը իրական արտահայտությամբ աճել է 11%-ով՝ հիմնականում պայմանավորված բնակչության եկամուտների ավելի քան 20% աճով: Արձանագրվել է մասնավոր ներդրումների 17.2% աճ, որը մեծամասամբ տարվա ինն ամիսների ընթացքում բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների մոտ 19 տոկոս իրական աճի հաշվին է:

Ըստ մասնավոր հատվածի ծախսումների ճեղքվածքների վերաբերյալ ՀՀ ԿԲ կողմից կատարված գնահատումների՝ երրորդ եռամսյակի ընթացքում նկատվել են գնաճի վրա մասնավոր ծախսումների խթանող ազդեցության դրսևորումներ, որոնք ավելի վառ կարտահայտվեն չորրորդ եռամսյակում՝ ուղեկցվելով պոտենցիալ մակարդակի գերազանցմամբ[35]:

Պետական սպառում և ներդրումներ [36]. 2007 թվականի երրորդ եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է փոքր-ինչ՝ 0.6 տոկոս ընդլայնող ազդեցություն՝ կանխատեսված 1.3 ընդլայնողի փոխարեն: Շեղումը հիմնականում արձանագրվել է եկամուտների մասով՝ պայմանավորված հարկային եկամուտների գերակատարումներով: Հարկերը երրորդ եռամսյակում գերազանցել են կանխատեսված[37] ցուցանիշը մոտ 8.0 մլրդ դրամով, որի արդյունքում եկամուտները կանխատեսվածի համեմատ ունեցել են ավելի մեծ զսպող ազդեցություն (զսպողական ազդեցությունը որոշ չափով մեղմվել է, քանի որ արձանագրվել է նաև ՀՆԱ-ի ավելի բարձր աճի տեմպ): Ծախսերը կատարվել են կանխատեսվածի շրջանակներում և ունեցել ընդլայնողական ազդեցություն, ինչպես և սպասվում էր:

Ինն ամիսների արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը ունեցել է 0.3 տոկոս ընդլայնող ազդեցություն: Հարկային և ոչ հարկային եկամուտների՝ տարեսկզբից արձանագրված գերակատարումներով պայմանավորված՝ եկամուտները ունեցել են 1.3 տոկոս զսպող ազդեցություն, իսկ ծախսերը՝ 1.6 տոկոս ընդլայնող ազդեցություն:

Հարկաբյուջետային ազդակի փոքր-ինչ ընդլայնող ազդեցությունը



Ինն ամիսներին[38] ապահովվել է 2007 թվականի պետական բյուջեի մասին օրենքի ճշտված ծրագրով նախատեսված տարեկան հարկային եկամուտների 71 տոկոսը, իսկ ոչ հարկային[39] և կապիտալ եկամուտների՝ 102 տոկոսը: Չորրորդ եռամսյակում նույնպես ակնկալվում է հարկային եկամուտների բարձր կատարողական:

Ինն ամիսներին ծախսերը կազմել են տարեկան ճշտված ծրագրի ցուցանիշի 66 տոկոսը: Ծախսերի մեջ ներառված են նաև Լինսի հիմնադրամի հաշվին իրականացված ծախսերը՝ մոտ 9.2 մլրդ դրամ, որը ներառված չէր 2007 թ. պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում:

---

[35] Պոտենցիալ մակարդակը ստացվել է մասնավոր հատվածի ծախսումների՝ X12 ARIMA սեզոնային հարթեցման եղանակով հարթեցված թվային շարքի նկատմամբ Հոդրիկ-Պրեսկոտի ֆիլտրի կիրառմամբ:

[36] Հարկաբյուջետային հատվածի վերլուծությունը կատարվել է 2007թ. երրորդ եռամսյակի համախմբված բյուջեի նախնական փաստացի ցուցանիշների հիման վրա: Ազդակների հաշվարկներում նույնպես օգտագործվել են 2007թ. համախմբված բյուջեի նախնական ցուցանիշները, իսկ հաշվարկները կատարվել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

[37] Պետական բյուջեի ճշտված եռամսյակային համամասնությունների բացակայության պայմաններում պետական հատվածի եռամսյակային կանխատեսումներն իրականացվել են նախորդ տարիներին դրսևորված սեզոնային միտումների և ԿԲ փորձագիտական գնահատումների հիման վրա:

[38] 2007 թվականի ինն ամիսների պետական բյուջեի բոլոր ցուցանիշները նախնական են:


[39] Ոչ հարկային եկամուտների մեջ ներառված են նաև Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատից երկրորդ եռամսյակում ստացված մոտ 7.0 մլրդ դրամ մուտքերը, որոնք նախատեսված չէին նաև ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին օրենքում:

Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության գնահատման տեսանկյունից նշենք, որ այս տարվա սկզբից հարկային և ոչ հարկային եկամուտների գերակատարումները չեն ուղեկցվել համապատասխան ծախսերի կատարմամբ, և արդյունքում ծախսերի ճշտված ծրագրի նկատմամբ ձևավորվել են խնայողություններ: Հետևաբար, տարեկան ճշտված ծրագրով նախատեսված ծախսերի 34 տոկոս կատարումը բաժին է ընկնում չորրորդ եռամսյակին:

2007 թվականի երրորդ եռամսյակում արձանագրվել է ծախսերի տ/տ 24.3 տոկոս աճ: Ծախսերի մեջ ընթացիկ ծախսերն աճել են 18.4 տոկոսով, ընդ որում՝ պետական սպառումն աճել է 32.1 տոկոսով, սուբսիդիաները՝ 6.5 տոկոսով, իսկ տոկոսավճարները՝ 57 տոկոսով: Նվազում արձանագրվել է միայն տրանսֆերտների մասով՝ կազմելով 2.9 տոկոս: Պետական սպառումը կազմել է ընթացիկ ծախսերի 62.4 տոկոսը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 6.5 տոկոսային կետով: Պետական սպառում/ՀՆԱ ցուցանիշը աճել է 0.7 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 7.5 տոկոսը:

2007 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կապիտալ ծախսերն ավելացել են 39 տոկոսով: Պահպանվել է ներքին ֆինանսավորման հաշվին իրականացված ծախսերի՝ նախորդ տարիներին արձանագրված աճի միտումը: Երրորդ եռամսյակում կապիտալ ծախսերի 81 տոկոսն իրականացվել է ներքին աղբյուրների հաշվին, իսկ 19 տոկոսը՝ արտաքին աղբյուրների: Կապիտալ ծախսերի մեջ ներառված են նաև Լինսի հիմնադրամի միջոցների հաշվին իրականացված ծախսերը, որոնք կազմել են կապիտալ ծախսերի 7.2 տոկոսը: Կապիտալ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը տ/տ աճել է 0.7 տոկոսային կետով և կազմել 4.8 տոկոս:

Համախմբված բյուջեի ծախսերի կառուցվածքը




2007 թվականի երրորդ եռամսյակում եկամուտները տ/տ աճել են 25 տոկոսով: Ընդ որում, հարկային եկամուտների աճը կազմել է 27.5 տոկոս, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտների նվազումը՝ 7.6 տոկոս: ՀՆԱ-ում պետական բյուջեի եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 0.7, իսկ հարկերը՝ 1.0 տոկոսային կետով: Կարելի է եզրակացնել, որ եկամուտների ավել հավաքագրման՝ տարվա առաջին ինը ամիսներին դրսևորված միտումը կպահպանվի նաև չորրորդ եռամսյակում, և տարվա արդյունքում եկամուտները հավանաբար կունենան ավելի մեծ զսպող ազդեցություն:

Հարկային եկամուտների կառուցվածքում անուղղակի հարկերի կշիռն ավելացել է 4.3 տոկոսային կետով և կազմել հարկային եկամուտների 53.2 տոկոսը, իսկ ուղղակի հարկերի կշիռը նվազել է 0.2 տոկոսային կետով և կազմել հարկերի 21.3 տոկոսը: Անուղղակի և ուղղակի հարկերի եռ./եռ. աճը համապատասխանաբար կազմել է 38.6 տոկոս և 28.8 տոկոս:

Զուտ անուղղակի հարկերը աճել են տ/տ 42.8 տոկոսով, իսկ ՀՆԱ-ում՝ 1.2 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 7.1 տոկոսը:


Եկամուտների և ծախսերի վերը նշված ցուցանիշների արդյունքում երրորդ եռամսյակում բյուջեի պակասուրդը կազմել է 17.3 մլրդ դրամ: Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը հետևյալն է՝ արտաքին աղբյուրներից զուտ ֆինանսավորումը կազմել է 5.7 մլրդ դրամ, իսկ ներքին աղբյուրներից ֆինանսավորումը՝ 11.6 մլրդ դրամ: Վերջինիս մեջ պետական արժեթղթերից զուտ ֆինանսավորումը կազմել է 3.2 մլրդ դրամ:

Բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում ինն ամիսներին ներքին աղբյուրների գծով խնայողությունները աճել են



Ինը ամիսների արդյունքում բյուջեի պակասուրդը կազմել է 15.7 մլրդ դրամ: Ընդ որում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է 26.2 մլրդ դրամ, պետական արժեթղթերից զուտ ֆինանսավորումը՝ 4.7 մլրդ դրամ, իսկ ներքին այլ աղբյուրների գծով խնայողությունները՝ 15.2 մլրդ դրամ: Վերջինս պայմանավորված է Կենտրոնական բանկում (պետական բյուջեի եկամուտների գերակատարման, ծախսերի տնտեսումների արդյունքում առաջացած խնայողություններ) և բանկային համակարգում Կառավարության միջոցների աճով: Հարկ է նշել, որ առաջին կիսամյակում փողի բազայի փոփոխությունները մասամբ են կրել Կառավարության միջոցների փոփոխության ազդեցությունը:

Փողի բազայի փոփոխությունները 2007 թ. ինն ամիսներին մասամբ են կրել ՀՀ կենտրոնական բանկում Կառավարության միջոցների փոփոխությունների ազդեցությունները



Զուտ արտաքին պահանջարկ

Ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների աճը 2007 թ. երրորդ եռամսյակում կազմել է տ/տ 11.6%, ինչը պայմանավորվել է արդյունաբերության աճի բարձր տեմպերի պահպանմամբ: Ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական ծավալների աճը կազմել է 27.5%: Բարձր աճը արտացոլում է տնտեսության պահանջարկի կայուն աճը գրեթե բոլոր ապրանքատեսակների նկատմամբ (սպառողական, հումքային և ներդրումային), ինչպես նաև փոխարժեքի արժևորումը:

Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների իրական աճը 2005-2007 թվականների երրորդ եռամսյակներում

Ցուցանիշներ	2005	2006	2007
Իրական ՀՆԱ	12.6	13.1	15.4
Ներքին պահանջարկ	10.8	11.7	13.3
Սպառում	8.6	7.6	11.3
Պետական	15.2	10.8	14.7
Մասնավոր	7.9	7.2	11.0
Կապիտալ ներդրումներ	18.9	24.2	18.7
Պետական	40.8	6.4	29.4
Մասնավոր	15.6	27.5	17.2
Արտահանում	26.3	-8.9	11.6
Ներմուծում	23.4	2.3	27.5

ՀԱՄԱԽՍՈՒՆ ԱՌԱՋԱՐԿ. 2007 թվականի երրորդ եռամսյակում տնտեսական աճի տեմպերը արագացել են, որի պարագայում տ/տ տնտեսական աճը կազմել է 15.4%, իսկ հունվար-սեպտեմբերին՝ տ/տ 13.2%: Ընդ որում, տնտեսական աճի տեմպի արագացումը պայմանավորվել է գյուղատնտեսության և շինարարության ճյուղերում ավելացված արժեքի աճի բարձր տեմպերով:

Արդյունաբերության ավելացված արժեքի աճը տարվա երրորդ եռամսյակում կազմել է տ/տ 3%, որի արդյունքում հունվար-սեպտեմբերին տ/տ աճը կազմել է 2.6%: Ընդ որում, երրորդ եռամսյակում արդյունաբերության աճի տեմպի ավելացումը պայմանավորվել է հիմնականում *ադամանդագործության* ճյուղում արձանագրված անկմամբ[40], որը հունվար-սեպտեմբերին տ/տ նվազել է շուրջ 34.8%-ով:

Արդյունաբերության մյուս ճյուղերում շարունակվել են տարվա սկզբից դրսևորվող աճի միտումները: Սննդի արդյունաբերության ենթաճյուղում թողարկման ծավալի իրական աճը հունվար-սեպտեմբերին տ/տ կազմել է 8.5%: Ընդ որում, այստեղ շարունակել են ավելանալ *հացամթերքի, ոգելից խմիչքների*[41]*, պահածոների և բնական հյութերի արտադրության* ծավալները: Գունավոր մետաղագործության ենթաճյուղում շարունակվել է բարձր աճը *այլումինի, ֆերոմոլիբդենի և ցինկի արտադրության գծով*, մինչդեռ *կոնվերտորային պղնձի* արտադրության ծավալները նվազել են՝ պայմանավորված խոշոր պղնձաձուլական գործարանի կողմից պղնձի ավելի պակաս պարունակությամբ հումքի օգտագործմամբ: Շինարարության ծավալների շարունակվող բարձր աճի պարագայում թողարկման ծավալների աճ է արձանագրվել *ցեմենտի, գաջի և կրի արտադրության* ենթաճյուղերում:

Գյուղատնտեսության ավելացված արժեքի աճը տարվա երրորդ եռամսյակում տ/տ կազմել է 13.8%, իսկ հունվար-սեպտեմբերին՝ 8.3% աճ, որը հիմնականում պայմանավորվել է *բուսաբուծության* թողարկման ծավալների մոտ 10% ավելացմամբ: Բարենպաստ բնակլիմայական պայմանների շնորհիվ արձանագրվել է մրգի և բանջարեղենի թողարկման ծավալների աճ՝ հիմնականում ի հաշիվ *խաղողի, խնձորի, դեղձի, լոլիկի, վարունգի և կաղամբի* հարուստ բերքի ստացման: *Անասնապահության* ենթաճյուղում հունվար-սեպտեմբերին արձանագրվել է 5.2% իրական աճ՝ հիմնականում ի հաշիվ մսի և ձվի արտադրության ծավալների ավելացման:

Շինարարության ծավալների աճը տարվա երրորդ եռամսյակում կազմել է 18%, իսկ հունվար-սեպտեմբերին՝ տ/տ 18.7%: Ընդ որում, նշված աճի մեծ մասը ապահովվել է *տրանսպորտի և կապի* ոլորտում իրականացվող ներդրումների արդյունքում[42], մասնավորապես՝ բջջային հեռախոսակապի օպերատորների կողմից կատարված մեծածավալ ներդրումների, ինչպես նաև Լինսի հիմնադրամի միջոցների հաշվին ընթացող ճանապարհաշինարարության: Շինարարության ծավալներն ավելացել են նաև *էներգետիկայի* ոլորտում՝ պայմանավորված ինչպես փոքր ՀԷԿ-երի կառուցման գործընթացի ակտիվացմամբ, այնպես էլ Հայաստան-Իրան գազամուղի երկրորդ մասի կառուցմամբ:

Ծառայությունների ոլորտում աճի տեմպերը արագացել են, որի արդյունքում ծառայությունների ավելացված արժեքի իրական աճը երրորդ եռամսյակում կազմել է տ/տ 16.6%, իսկ հունվար-սեպտեմ-

[40] *Հունվար-սեպտեմբերին ադամանդագործության ճյուղի թողարկման ծավալների նվազման հետևանքով արդյունաբերության թողարկման ծավալների իրական աճը նվազել է շուրջ 6 տոկոսային կետով:*
[41] *Հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի համեմատ, կոնյակի արտադրության ծավալներն ավելացել են շուրջ 76.5%-ով:*
[42] *Տրանսպորտի և կապի ոլորտներում իրականացված շինմոնտաժային աշխատանքների ծավալները հունվար-օգոստոսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել են շուրջ 65%-ով:*

բերին՝ տ/տ 14%: Վերջինիս առավելապես նպաստել է տրանսպորտի և կապի ծառայությունների զգալի ավելացումը, ինչպես նաև առևտրի (առաջին հերթին՝ մեծածախ և ավտոմեքենաների առևտրի) շրջանառության ծավալների աճը: Ընդ որում, ավելացել են տրանսպորտի բոլոր տեսակների ծառայությունները, մինչդեռ կապի ծառայությունների աճը պայմանավորվել է առաջին հերթին բջջային հեռախոսակապի ծառայությունների ծավալի ավելացմամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ [43]

2007 թվականի երրորդ եռամսյակում տնտեսության միջին անվանական և իրական աշխատավարձերի տ/տ աճը կազմել է 20.3% և 23.1%՝ նախորդ տարվա 23.0% և 17.4%-ի փոխարեն:

Առաջին կիսամյակում աշխատավարձը բարձրացել է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, սակայն տնտեսության միջին աշխատավարձի աճի ցուցանիշը զգալիորեն գերազանցում են միայն կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցման և պետական կառավարման ոլորտների աշխատավարձերը: Շարունակվում է տնտեսության ճյուղերի աշխատավարձերի մակարդակների զուգամիտումը, որը վկայում է աշխատուժի ներճյուղային շարժի ակտիվացման մասին:

2007 թվականի ինն ամիսների ընթացքում գործազրկության մակարդակը նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել 7.2%: Ընդ որում՝ նկատվել է թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածության նվազման միտում: Սակայն առաջին կիսամյակում գործազրկության միջին տևողությունը դեռևս բարձր է՝ մոտ 15 ամիս:

Աշխատանքի շուկայում շարունակվում է արտադրողականության աճի տեմպերի արագացումը: Առաջին կիսամյակում արձանագրվել է աշխատանքի արտադրողականության 12.8% աճ (նախորդ տարի՝ 12.1%), իսկ երրորդ եռամսյակի ընթացքում արտադրողականության տ/տ աճը կազմել է ավելի քան 15% (նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը 12%-ի շրջանակներում էր):

Գնաճի տեսանկյունից՝ արտադրողականության նման բարձր աճի տեմպերի արձանագրումը որոշակիորեն մեղմում է աշխատանքի շուկայից բխող գնաճային ճնշումները, սակայն գնաճի վրա աշխատանքի շուկայի ազդեցությունը դեռևս շարունակում է խթանող լինել, քանի որ արտադրողականության աճի ցուցանիշը ցածր է աշխատավարձի աճի ցուցանիշից:

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների[44] 12-ամսյա գնաճի 0.08 տոկոսային կետը ձևավորել են աշխատանքի շուկայի ցուցանիշները:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԳՆԵՐ

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳՆԵՐ. 2007 թվականի երրորդ եռամսյակում ներմուծման դոլարային գների տ/տ աճի տեմպերը կրկին արագացել են, քանի որ վարկային ճգնաժամից հետո արագացել է հումքային ապրանքների գների աճը: Ընդհանուր տ/տ աճը հիմնականում տեղի է ունեցել հումքային և սպառողական ապրանքների թանկացման հետևանքով, որի պատճառը հումքային ապրանքների թանկացումն էր և գործընկեր երկրների գնաճի և փոխարժեքների արժևորման տեմպերի արագացումը:

Ըստ Կենտրոնական բանկի գնահատումների՝ 2007 թվականի երրորդ եռամսյակում ներմուծման դոլարային գները տ/տ աճել են 8.7 տոկոսով՝ որոշակիորեն արագանալով նախորդ եռամսյակում գրանցված 3.5 տոկոսի համեմատ:

Այդ արագացումը առավելապես պայմանավորվել է հումքային, սապռողական ապրանքների և նավթամթերքների գների աճի արագացմամբ:

Հումքային ապրանքների գների 16.3 տոկոս աճի հիմնական պատճառը հացահատիկի գների 38.5 տոկոս բարձրացումն էր, որի ազդեցությունը ընդհանուր ներմուծման գների վրա կազմել է 4.4 տոկոսային կետ: Ոսկու գների աճը՝ տ/տ 9.6 տոկոս, կամ ազդեցությունը ընդհանուր ներմուծման գների վրա՝ 1.3 տոկոսային կետ, գրեթե ամբողջովին փոխհատուցվել է շաքարավազի գների 27.2 տոկոսով կամ 0.9 տոկոսային կետով նվազմամբ:

---

[43] Աշխատանքի շուկայի ինն ամիսների ցուցանիշները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ են, բացառությամբ տնտեսության միջին անվանական և իրական աշխատավարձի աճերի, որոնք նախորդ տարվա երրորդ եռամսյակի նկատմամբ են:

[44] Գնահատումները կատարվել են գին-աշխատավարձ միաժամանակյա որոշող մոդելի միջոցով՝ չսահմանափակված վեկտոր սխալների ճշգրտման մեթոդի օգնությամբ:


Ներմուծվող ապրանքների գների փոփոխությունը

Ցուցանիշներ	III եռ. 06	IV եռ. 06	I եռ. 07	II եռ. 07	III եռ. 07
Ներմուծում (ընդհանուր)	17.7	14.7	10.1	3.5	8.7
Ներմուծում (ծառայություններ)	5.7	8.0	8.5	7.7	8.3
Ներմուծում (ապրանքներ)	20.8	16.4	10.4	2.5	8.7
Կապիտալ ապրանքներ[45]	0.0	0.0	0.0	0.0	0.0
Սպառողական ապրանքներ	5.7	8.0	8.5	7.7	8.3
Հումքային ապրանքներ	37.0	23.5	9.0	0.6	16.3
Ադամանդ[45]	0.0	0.0	0.0	0.0	0.0
Նավթամթերք	13.9	4.9	-6.2	-1.6	7.0
Բնական գազ	100.0	100.0	100.0	0.0	0.0

Հացահատիկի միջազգային գների շարունակվող աճը կտրուկ արագացել է երրորդ եռամսյակում՝ կապված համաշխարհային բերքի ցածր մակարդակի հետ, որի հետևանքով հացահատիկի պաշարները հասել են վերջին տասնամյակներում գրանցված նվազագույն մակարդակին:

Երրորդ եռամսյակում նավթամթերքների գները նույնպես կտրուկ՝ տ/տ 7.0 տոկոսով բարձրացել են: Ջևավորված միջին գինը՝ 1 բարել՝ Brent տեսակի նավթի դիմաց, երրորդ եռամսյակում կազմել է մոտ 75 ԱՄՆ դոլար՝ եռամսյակի վերջում հասնելով 79.4 ԱՄՆ դոլարի: Նման աճի պատճառը նավթի շուկայի պահպանվող լարվածությունն է՝ աճող պահանջարկի և սահմանափակ առաջարկի համընդհանուր անհամապատասխանության հետևանքով: Այս պարագայում, ցանկացած վատ լուր հանգեցնում է գների սպեկուլյատիվ մեծ աճի:

Ներմուծված ապրանքների գների աճը երրորդ եռամսյակում կրկին արագացել է



Սպառողական ապրանքների գների աճը երրորդ եռամսյակում կազմել է տ/տ 8.3 տոկոս, որը ընդհանուր ներմուծման գների վրա ունեցել է 1.8 տոկոսային կետ ազդեցություն: Այդ ազդեցությունը գրեթե հավասարապես պայմանավորվել է գործընկեր երկրների բարձր գնաճով և փոխարժեքների արժևորումով: Եվրոպական արժույթների արժևորման հետևանքով Եվրոգոտու ազդեցությունը ընդհանուր ներմուծման գների վրա կազմել է 0.5 տոկոսային կետ, Միացյալ Թագավորությանը՝ 0.4 տոկոսային կետ և Շվեյցարիայինը՝ 0.2 տոկոսային կետ: Բացի դրանից, զգալի է եղել նաև Թուրքիայի, Իրանի և Ռուսաստանի ազդեցությունը՝ 0.2-0.3 տոկոսային կետերով:

Սպառողական զամբյուղում ներառված ներմուծված ապրանքների դրամային գները երրորդ եռամսյակում նվազել են տ/տ 1.4 տոկոսով՝ պայմանավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար անվանական փոխարժեքի արժևորմամբ, որը երրորդ եռամսյակում կազմել է տ/տ 19.1 տոկոս[46]:

[45] *Կապիտալ ապրանքների և ադամանդի գների գնահատումների բացակայությունը պայմանավորված է դրանց փաստացի խիստ մեծ տատանողականությամբ, և այդ պատճառով նշված ապրանքների գների փոփոխությունը գնահատվում է զրոյական:*

[46] *Քանի որ երկրում առկա են գների կոշտություններ և փոխանցման գործակցի ցածր մակարդակ, ապա փոխարժեքի 1 տոկոս արժևորումը չի հանգեցնում ներմուծվող ապրանքների գների նույնչափ նվազմանը:*

ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԳՆԵՐ[47]. 2007 թվականի երրորդ եռամսյակում ՀՆԱ դեֆլյատորը կազմել է 103.1% (նախորդ տարվա նույն եռամսյակում՝ 108.2%):


Գների առավել բարձր՝ 12.5% աճ է արձանագրվել **բեռնափոխադրումների** ոլորտում՝ պայմանավորված խողովակաշարային, ինչպես նաև երկաթուղային տրանսպորտի սակագների ավելացմամբ: Ընդ որում, խողովակաշարային տրանսպորտի սակագների աճը պայմանավորվել է 2007 թվականի հունվարից գազի սակագների փոփոխմամբ[48]:

Նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ նվազել է **գյուղատնտեսական** մթերքների իրացման գների ինդեքսը՝ կազմելով 100.5%՝ նախորդ տարվա 116.1%-ի փոխարեն: Գյուղատնտեսության հարուստ բերքի ստացման արդյունքում նվազել են մրգի և բանջարեղենի արտադրողների իրացման գների ինդեքսները:

Արդյունաբերության ճյուղում տարվա երրորդ եռամսյակում գների մակարդակը չի փոխվել, թեև արտադրողների գների որոշ աճ է արձանագրվել սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերում:

Շինարարությունում գների աճը շարունակվել է (4.3% աճ) ՝ պայմանավորված ինչպես կապիտալ շինարարության ծավալների ավելացմամբ, այնպես էլ ճյուղում աշխատուժի նկատմամբ կայուն բարձր պահանջարկի արդյունքում աշխատավարձերի շարունակվող աճով:

2007թ. երրորդ եռամսյակում տնտեսության ճյուղային գների ինդեքսների գծով արձանագրվել է փոքր աճ, որն առավելագույնն էր բեռնափոխադրումների ճյուղում



Մակրոտնտեսական կանխատեսումներ

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Արտաքին միջավայրի զարգացումների վերաբերյալ սպասումները տնտեսության ապագա իրավիճակի գնահատումից բխող կարևորագույն ենթադրություններ են: Ըստ ԱՄՀ World Economic Outlook պարբերականի հոկտեմբեր ամսվա տվյալների՝ համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, նախորդ կանխատեսումների համեմատ, վերանայվել են աճի ուղղությամբ՝ 0.3 տոկոսային կետով: Վերջինս հիմնականում պայմանավորվել է զարգացող երկրների, մասնավորապես՝ Չինաստանի և Հնդկաստանի տնտեսական աճերի՝

[47] Սույն հատվածում ներկայացված գների ինդեքսները և դրանց փոփոխությունը տ/տ ցուցանիշներն են, եթե այլ բան նշված չէ: 2007 թվականի երրորդ եռամսյակի բոլոր գների ինդեքսները գնահատականներ են՝ հիմնված հունվար-օգոստոսի փաստացի տվյալների վրա:

[48] Համաձայն ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի 29.11.06թ. որոշման՝ 2007 թվականի հունվարի 1-ից բնակչության համար գազի սակագները նվազեցվել են, իսկ խոշոր սպառողների համար՝ ավելացվել (153.26 ԱՄՆ դոլար՝ նախկին 146,51 ԱՄՆ դոլարի փոխարեն):

բարձրացման ուղղությամբ վերանայմամբ[49]: Միևնույն ժամանակ, ակնկալվում է, որ համաշխարհային տնտեսությունում՝ և՛ զարգացած, և՛ զարգացող երկրներում, գնաճը ավելի բարձր կլինի նախորդ կանխատեսումների համեմատ, թեև մեր գործընկեր երկրների գնաճի ցուցանիշները չեն ավելացվել:

Համաշխարհային տնտեսության զարգացումները

Ցուցանիշներ	2006	2007 հունիսի կանխատեսում	2007 սեպտեմբերի կանխատեսում[50]	2008 հունիսի կանխատեսում	2008 սեպտեմբերի կանխատեսում[50]
Համաշխարհային տնտեսություն					
Տնտեսական աճ	5.4	5.2	5.2	5.2	4.8
Գնաճ (զարգացած երկրներ)	2.3	2.0	2.1	2.1	2.0
Գնաճ (զարգացող երկրներ)	5.1	5.4	5.9	4.7	5.3
ԱՄՆ					
Տնտեսական աճ	2.9	2.0	1.9	2.8	1.9
Գնաճ	3.2	1.9	2.7	2.5	2.3
Եվրոգոտի					
Տնտեսական աճ	2.8	2.6	2.5	2.5	2.1
Գնաճ	2.2	2.0	2.0	2.0	2.0
ԱՊՀ երկրներ					
Տնտեսական աճ	7.7	7.6	7.8	7.1	7.0
Գնաճ	9.5	9.0	8.9	8.3	8.3
Ռուսաստանի Դաշնություն					
Տնտեսական աճ	6.7	7.0	7.0	6.8	6.5
Գնաճ	9.6	8.1	8.1	7.5	7.5

2007 թվականի առաջին կիսամյակում համաշխարհային տնտեսական աճը մնաց 5 տոկոսից բարձր մակարդակի վրա: Չինաստանի տնտեսության աճը արագացավ մինչև 11.5 տոկոս՝ առաջին անգամ ունենալով ամենամեծ ազդեցությունը համաշխարհային տնտեսական աճի վրա: Հնդկաստանի աճը գերազանցեց 9 տոկոսը, իսկ Ռուսաստանինը՝ հասավ գրեթե 8 տոկոսի: Այս երեք երկրները ապահովեցին վերջին մեկ տարվա տնտեսական աճի մոտ կեսը, չնայած մյուս զարգացող երկրները նույնպես դրսևորեցին բարձր աճի տեմպեր: Այդ ամենը հակակշռեց ԱՄՆ տնտեսության աճի դանդաղումը, որը առաջին կիսամյակում աճեց մոտ 2.3 տոկոսով՝ իր վրա կրելով անշարժ գույքի շուկայի թուլացման հետևանքները: Ինչ վերաբերում է երրորդ եռամսյակին, ապա չնայած ֆինանսական ճգնաժամի սրմանը, բոլոր հիմնական զարգացած երկրներում տնտեսական աճի տեմպերը ավելացան, սակայն տնտեսագետները զգուշացնում են, որ դրանք հետագայում կնվազեն:

Ըստ ԱՄՀ փորձագետների կանխատեսումների՝ 2007 թվականի ԱՄՆ տնտեսական աճը 2007 թվականի հունիս ամսվա կանխատեսումների համեմատ նվազեցվել է 0.1 տոկոսային կետով, և ակնկալվում է որ այն ցածր կմնա նաև 2008 թվականին (նվազելով 0.9 տոկոսային կետով): Նվազեցման հիմնական պատճառներն են՝ անշարժ գույքի շուկայի անկումը և վարկային ճգնաժամի հետևանքները: Նվազեցման ուղղությամբ է վերանայվել նաև Եվրոգոտու տնտեսական աճը՝ 0.1 և 0.4 տոկոսային կետով՝ մինչև 2.5 և 2.1 տոկոս, որը անդրադարձել է բոլոր խոշոր երկրների վրա: Նվազեցմանը նպաստել են վարկային ճգնաժամը, տոկոսադրույքների աճը և եվրոյի ուժեղացող փոխարժեքը: Ի տարբերություն զարգացած երկրների, ԱՊՀ տնտեսական աճը շատ փոքր փոփոխությունների է ենթարկվել՝ 0.2 տոկոսային կետով ավելացում 2007 թվականին և 0.1 տոկոսային կետով նվազում՝ 2008 թվականին (7.8 և 7.0 տոկոս համապատասխանաբար):

Կապված 2007 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում համաշխարհային շուկաներում հումքային ապրանքների գների աննախադեպ աճի հետ, համաշխարհային տնտեսության գնաճի ցուցանիշները վերանայվել են աճի ուղղությամբ: Ե՛վ զարգացած, և՛ զարգացող երկրների գնաճերի 2007 թվականի կանխատեսվող ցուցանիշները ավելացվել են 0.1 և 0.5 տոկոսային կետով՝ մինչև 2.1 և 5.9 տոկոս: Պահ-

[49] Չինաստանի 2007թ.տնտեսական աճի ցուցանիշը վերանայվել է 1.2 տոկոսային կետով և կանխատեսվում է, որ կլինի 11.2% , իսկ 2008թ. համար՝ 1 տոկոսային կետով՝ 10.5%: Հնդկաստանի 2007 -2008 թթ. տնտեսական աճի ցուցանիշը ավելացվել է 0.6-ական տոկոսային կետերով, և կանխատեսվում է համապատասխանաբար 9.0% և 8.4 %:

[50] Հոկտեմբերի զարգացումների արդյունքում ակնկալվում է, որ Ռուսաստանի տնտեսական աճը կարող է վերանայվել աճի ուղղությամբ, իսկ ԱՄՆ, Եվրոմիության և Ռուսաստանի գնաճը կգերազանցի նախանշված մակարդակը:

պանվել է Եվրոմիության գնաճի կանխատեսվող նպատակային 2.0 տոկոս ցուցանիշը, սակայն ԱՄՆ գնաճը, նախորդ կանխատեսման համեմատ, կլինի էապես ավելի բարձր՝ կազմելով 2.7 տոկոս՝ 1.9 տոկոսի փոխարեն: Չնայած Ռուսաստանի կանխատեսված գնաճը չի փոփոխվել՝ 8.1 տոկոս, սակայն, ամենայն հավանականությամբ, տարեկան կտրվածքով այն կլինի 9-10 տոկոսի սահմաններում:

2007 թվականի երրորդ եռամսյակում հումքային ապրանքների գները դրսևորել են աննախադեպ աճի միտումներ: Մասնավորապես դա վերաբերում է վառելիքի, ոսկու և հացահատիկի շուկաներին: Ակնկալվում է, որ այդ ապրանքատեսակների գների աճը կշարունակվի տարվա կտրվածքով, մինչդեռ պղնձի և շաքարավազի գները կմնան նույն մակարդակի վրա, կամ փոքր-ինչ կնվազեն[51]: Դա հիմնականում պայմանավորված է ԱՄՆ դոլարի հետագա արժեզրկման սպասումներով, որի պարագայում սպեկուլյատիվ ապրանքների, ինչպիսիք են նավթը և ոսկին, դոլարային գները աճում են: Հացահատիկի գների աճը կապված է այն հանգամանքի հետ, որ համաշխարհային պաշարները հասել են վերջին տասնամյակներում գրանցված նվազագույն մակարդակին: Ակնկալվում է, որ գների աճը կշարունակվի նաև ապագայում, քանի դեռ շուկայի մասնակիցների ուշադրությունը չի կենտրոնացել ապագա բերքի սպասումների վրա, որը կծնավորի գների հետագա միտումները:

Միջազգային ֆինանսական և ապրանքահումքային շուկաների զարգացումները

	III-06	IV-06	I-07	II-07	III-07	IV-07[52]	I-08[52]	II-08[52]	III-08[52]
LIBOR 3-ամսյա տոկոսադրույք	5.4	5.4	5.4	5.4	5.5	5.5	5.2	5.0	5.0
USD/EUR փոխարժեք	1.27	1.29	1.31	1.35	1.37	1.43	1.42	1.38	1.34
RUR/USD փոխարժեք	26.8	26.6	26.3	25.9	25.5	25.1	24.8	24.6	24.3
Brent տեսակի նավթի գին (ԱՄՆ դոլար/բարել)	70.1	59.7	58.1	68.7	75.0	81.7	84.4	80.5	76.8
Ոսկու գին (ԱՄՆ դոլար/տրոյական ունցիա)	621.5	614.5	650.3	667.5	680.6	764.8	805.6	786.9	763.5
Պղնձի գին (ԱՄՆ դոլար/տոննա)	7679.9	7069.2	5946.0	7648.5	7626.0	7928.2	7716.1	7509.6	7441.8

Պայմանավորված համաշխարհային վարկային ճգնաժամով՝ զարգացած երկրների զսպող դրամավարկային քաղաքականության ժամանակավոր դադար արձանագրվեց, իսկ Ֆեդերալ պահուստային համակարգը կայուն տոկոսադրույքներից անցում կատարեց տոկոսադրույքների նվազմանը՝ սեպտեմբերի 18-ին իջեցնելով միանգամից 50 բազիսային կետով: Եվրոպական կենտրոնական բանկը և Անգլիայի բանկը չբարձրացրեցին տոկոսադրույքները, չնայած ԵԿԲ-ն այդ բարձրացման մասին ակնարկել էր իր նախորդ նիստում:

Ակնկալվում է, որ 2007 թվականի չորրորդ եռամսյակում և 2008 թվականի առաջին երեք եռամսյակներում Ֆեդերալ պահուստային համակարգը կշարունակի նվազեցնել տոկոսադրույքները, որը կարող է անել նաև Անգլիայի բանկը, մինչդեռ ԵԿԲ-ն դեռևս կպահպանի տոկոսադրույքների մակարդակը մինչև գնաճի և տնտեսական աճի ցուցանիշների փոփոխությունը: Այդ ամենով պայմանավորված՝ ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացումը կշարունակվի, քանի որ ԱՄՆ և Եվրոպայի տոկոսադրույքների մոտենալուն զուգահեռ չնայած ԱՄՆ ընթացիկ հաշվի պակասուրդը որոշակի նվազում է, սակայն դեռևս պահպանվում է վերջինիս մեծ մակարդակը:

Ամեն դեպքում, տոկոսադրույքների նվազեցման մյուս փուլը կարող է ավելացնել իրացվելիությունը միջազգային ֆինանսական շուկաներում, որը կհանգեցնի ինչպես հումքային ապրանքների գների աճի նոր փուլի, այնպես էլ կապիտալի նոր, ուժեղ ներհոսքի զարգացող երկրներ: Ընդհանուր առմամբ, իրավիճակի նման զարգացումները հիմքեր են տալիս ենթադրելու, որ արտաքին հատվածից բխող գնաճային ճնշումները էապես և կտրուկ կավելանան 2007 թվականի չորրորդ և 2008 թվականի առաջին եռամսյակներում՝ լավագույն դեպքում նվազելով 2008 թվականի երկրորդ եռամսյակից հետո:

[51] Հումքային ապրանքների գները, հատկապես պարենային ապրանքներինը, հոկտեմբեր ամսվա ընթացքում արդեն էապես գերազանցել են ՀՀ ԿԲ սպասելիքները: Այդ մասին ավելի մանրամասն ներկայացված է տոկոսադրույքների վերաբերյալ նոյեմբերի 2-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստի արձանագրությունում:

[52] Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների:

ՀԱՄԱԽՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ. Հաշվի առնելով տարվա երրորդ եռամսյակի զարգացումները՝ 2007 թվականի չորրորդ եռամսյակի ճյուղային կանխատեսումները ճշգրտվել են աճի ուղղությամբ, որի արդյունքում ՀՆԱ իրական աճը ակնկալվում է 13-14% միջակայքում:

2008 թվականի առաջին երեք եռամսյակներում ակնկալվում է 9.5-11.5% իրական աճ: Ընդ որում, համաձայն ճյուղային զարգացումների գնահատումների՝ ՀՆԱ ընդհանուր ցուցանիշի հետ կապված ռիսկերը նշված ցուցանիշների գերազանցման ուղղությամբ են՝ կախված հիմնականում արդյունաբերության և շինարարության ոլորտներում առկա ռիսկերի իրագործումից:

Այսպես, բարձրացվել է **գյուղատնտեսության** իրական աճի 2007 թվականի չորրորդ եռամսյակի ցուցանիշը՝ պայմանավորված ինչպես երրորդ եռամսյակում բուսաբուծության արտադրանքի փաստացի բարձր մակարդակով, այնպես էլ բանջարեղենի որոշ տեսակների հարուստ բերքի ակնկալիքներով: Արդյունքում, գյուղատնտեսության ավելացված արժեքի իրական աճը տարվա չորրորդ եռամսյակում կանխատեսվում է 8%-ի շրջանակներում:

2008 թվականի առաջին երեք եռամսյակներում սպասվում է գյուղատնտեսության, միջին առմամբ, շուրջ 3% իրական աճ՝ ճշգրտված 2007 թվականին դրսևորված սեզոնայնությամբ:

Շինարարության իրական աճի ցուցանիշները 2007 թվականի չորրորդ եռամսյակի և 2008 թվականի երեք եռամսյակների համար նույնպես վերանայվել են աճի ուղղությամբ (մասնավորապես, 2007 թվականի չորրորդ եռամսյակում ակնկալվում է 18%-ի շուրջ): Դա պայմանավորված է տարվա երրորդ եռամսյակում փաստացի բարձր աճով, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից հաշվարկվող բաղադրյալ ինդեքսների համաձայն՝ տարվա չորրորդ եռամսյակի շինարարությունում տնտեսական ակտիվության ինդեքսի աճով:

2008 թվականի երեք եռամսյակներում շինարարության ծավալների իրական աճը կլինի 11-18%-ի շրջանակներում: Հաջորդ տարվա համար կանխատեսվող աճի նման բարձր ցուցանիշները պայմանավորված են տրանսպորտի, կապի, էներգետիկայի և մետաղագործության ճյուղերում ակնկալվող ներդրումներով:

Տարվա չորրորդ եռամսյակում **արդյունաբերության ճյուղում** կանխատեսվող 3.7% իրական աճը կապահովվի հիմնականում մշակող արդյունաբերության, առաջին հերթին՝ սննդի արդյունաբերության արտադրության ծավալների ավելացման հաշվին:

2008 թվականին արդյունաբերության ավելացված արժեքի աճի կանխատեսումները նույնպես վերանայվել են աճի ուղղությամբ՝ պայմանավորված *քիմիական արդյունաբերությունում*[53]*, մետաղագործությունում և շինանյութերի արտադրությունում* սպասվող թողարկման ծավալների աճով: Արդյունքում՝ արդյունաբերության ավելացված արժեքի իրական աճը 2008 թվականի երեք եռամսյակներում կկազմի շուրջ 6-8%:

Ծառայությունների ոլորտում սպասվում է բարձր աճի տեմպերի պահպանում, որը հիմնականում կապահովվի տրանսպորտի և կապի ծառայությունների, ինչպես նաև զբոսաշրջության հետ կապված ծառայությունների հաշվին: Արդյունքում, 2007 թվականի չորրորդ և 2008 թվականի առաջին երեք եռամսյակներում ծառայությունների ավելացված արժեքի իրական աճը կկազմի 12.5-14%՝ պայմանավորված տրանսպորտի և կապի ոլորտում նախկինում արված ներդրումների արդյունքում այդ ծառայությունների ծավալի ակնկալվող ավելացմամբ:

ՀԱՄԱԽՄԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ. Ինչպես 2007 թվականի ընթացքում, այնպես էլ 2008 թվականի առաջին երեք եռամսյակներում տնտեսական աճը հիմնականում կպայմանավորվի ներքին պահանջարկի աճով: 2007 թվականի չորրորդ եռամսյակի աճը կկազմի ավելի քան 13%, իսկ 2008 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում իրական աճի միջին տեմպի ցուցանիշը կլինի 11%-ի շրջանակներում:

Ներքին պահանջարկի կառուցվածքում կգրանցվի ինչպես մասնավոր սպառման, այնպես էլ մասնավոր ներդրումների աճ: Ընդ որում՝ կշարունակվի մասնավոր սպառման նկատմամբ մասնավոր ներդրումների առաջանցիկ աճի արձանագրումը. 2007 թվականի չորրորդ եռամսյակում մասնավոր սպառման իրական աճը կկազմի մոտ 10%, իսկ 2008 թվականի երեք եռամսյակների իրական աճի միջին ցուցանիշը՝ շուրջ 9.5%:

Կշարունակվի արձանագրվել մասնավոր ներդրումների երկնիշ իրական աճ: Ինչպես 2007 թվականի վերջին եռամսյակի, այնպես էլ 2008 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում այն կկազմի մոտ 18%:

---

[53] *Համաձայն նախնական գնահատումների՝ սիլիքետիկ կաուչուկի արտադրության նոր հոսքագծերի տեղակայման և օգտագործման արդյունքում արտադրության ծավալների ավելացումը մոտ 3 տոկոսային կետով կապահովի ողջ արդյունաբերության աճին:*

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ. 2007 թվականի ինն ամիսների արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է փոքր-ինչ՝ 0.3 տոկոս ընդլայնող ազդեցություն, որը դրսևորվել է ծախսերի ընդլայնող ազդեցության և եկամուտների ավելի մեծ զսպողական ազդեցության արդյունքում՝ պայմանավորված եկամուտների գերակատարմամբ: Հաշվի առնելով պետական բյուջեի տարեկան ճշտված ծախսերի ծրագրի ապահովման խնդիրը՝ չորրորդ եռամսյակի համար ևս կանխատեսվել է ծախսերի 2.3 տոկոս ընդլայնող ազդեցություն: Իսկ եկամուտների ազդեցությունը գնահատվել է չեզոք, քանի որ սպասվող բարձր կատարողականին զուգահեռ, ակնկալվում է նաև ՀՆԱ-ի ավելի բարձր աճ: Պակասուրդի՝ օրենքով նախատեսված ցուցանիշի 76.5 տոկոսը կապահովվի չորրորդ եռամսյակում: Այսպիսով, տարվա արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը, 2007 թվականի պետական բյուջեի ճշտված ցուցանիշների ապահովման պարագայում, համախառն պահանջարկի վրա կունենա 1.1 տոկոս ընդլայնող ազդեցություն: Սակայն ծախսերի ծրագրից շեղման և խնայողությունների ձևավորման դեպքում ծախսերը կունենան փոքր ընդլայնող ազդեցություն ինչպես չորրորդ եռամսյակում, այնպես էլ տարվա արդյունքում:

Ինչ վերաբերում է 2008 թվականին, ապա «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին օրենքի» նախագծի ցուցանիշների հիման վրա կատարված եռամսյակային բաշխվածության արդյունքում տարվա առաջին երեք եռամսյակներում ակնկալվում են ընդլայնող ազդեցություններ: Դա պայմանավորված է տնտեսության վրա պետական հատվածի դերի ակտիվացմամբ՝ մասնավորապես կենսաթոշակների և սոցիալական ծախսերի կտրուկ ավելացմամբ: Նշենք, որ ըստ ազդակների՝ առաջին եռամսյակում սպասվում է 2.5 տոկոս, երկրորդ եռամսյակում՝ 1.7 տոկոս, իսկ երրորդ եռամսյակում՝ 0.9 տոկոս ընդլայնող ազդեցություն:

ԳՆԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ. Գնաճի կանխատեսումների հիմքում արտաքին հատվածի հետևյալ ենթադրություններն են.

- Նավթամթերքների գները շարունակելու են աճել, սակայն աճի տեմպերը բավականին անկանխատեսելի են:
- Հացահատիկի գները կշարունակեն աճել՝ այս տարվա բերքի ցածր մակարդակի հետ կապված:
- Նոր ռիսկեր են առաջացել այլ սննդամթերքների, մասնավորապես՝ կաթնամթերքների և բուսական յուղերի գների աճի աճի հետ կապված:
- Հիմնական արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարը կշարունակի արժեզրկվել մինչև մյուս տարվա առաջին եռամսյակ, որից հետո փոխարժեքը կկայունանա: Վերը նշվածի հետ կապված՝ ներմուծման դոլարային գները կշարունակեն աճել:
- Ռուսաստանից ստացվող ոչ առևտրային բնույթի փոխանցումների բարձր աճի տեմպերը կպահպանվեն հետագա եռամսյակներում՝ պայմանավորված Ռուսաստանի տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանմամբ:

Ընդհանուր առմամբ, արտաքին հատվածից բխող գնաճային ճնշումները ավելացման ուղղությամբ են. դրանք կկայունանան լավագույն դեպքում մյուս տարվա երկրորդ եռամսյակից հետո:

ՆԵՐՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ. Ներքին տնտեսությանն առնչվող հիմնական ենթադրությունները հետևյալն են.

- Հաշվի առնելով տնտեսության՝ 2007 թ. սեպտեմբերին հաջորդող ժամանակահատվածի համար կանխատեսված ճյուղային զարգացումները, միջակայքային գնահատման արդյունքներով, տարեվերջին սպասվում է 13-14%, իսկ 2008-ի սեպտեմբերին՝ 9.5-11.5% տ/տ իրական տնտեսական աճ:
- Ծառայությունների և շինարարության ճյուղերում, ելնելով արձանագրված բարձր աճի տեմպերից, առաջիկա մեկ տարվա համար արված կանխատեսումները վերանայվել են աճի ուղղությամբ: Երկու ճյուղում էլ բարձր աճի ակնկալիքները պայմանավորված են տրանսպորտի և կապի ոլորտներում նախատեսվող նոր ներդրումների իրականացմամբ և նախկին ներդրումների արդյունքում ծառայությունների ծավալների ավելացմամբ:
- Արդյունաբերության ճյուղում մինչև տարեվերջ կանխատեսվում է 3.7% իրական աճ՝ հիմնականում մշակող արդյունաբերության ծավալների ավելացման հաշվին, իսկ 2008 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում աճի ցուցանիշը կլինի 6.5-8% միջակայքում՝ պայմանավորված քիմիական արդյունաբերությունում, մետաղագործությունում և շինանյութերի արտադրությունում սպասվող թողարկման ծավալների աճով:
- Գյուղատնտեսության ճյուղում 2007 թ. չորրորդ եռամսյակում կանխատեսվում է մինչև 8% իրական աճ՝ պայմանավորված բանջարեղենի որոշ տեսակների (կարտոֆիլ և սոխ) առատ բերքի սպասումներով: 2008 թ. երեք եռամսյակների համար կանխատեսվել է միջին հաշվով 3% իրական աճ:

- Ըստ ԿԲ գնահատումների՝ 2007 թ. չորրորդ եռամսյակում և 2008 թ. առաջին երեք եռամսյակներում մասնավոր ներդրումները շարունակելու են մնալ հավասարակշիռ մակարդակից էականորեն բարձր: Եթե 2007 թ. անցած ժամանակահատվածում մասնավոր սպառումը մոտ էր հավասարակշիռ մակարդակին, ապա կանխատեսվող 12-ամսյա ժամանակահատվածում գերազանցելու է այն՝ ավելացնելով գնաճային ճնշումները:
- Արտաքին միջավայրի զարգացումները, որոնք մասնակիորեն արտահայտվել են արտահանման շուկաներում միջանկյալ սպառման ապրանքների գների տ/տ 14.6% աճով, արդյունաբերության աճի բարձր տեմպերի պահպանման հետ մեկտեղ (առանց ադամանդի) նպաստել են երրորդ եռամսյակում ապրանքների և ծառայությունների արտահանման դոլարային ծավալների 20.2% աճին: Միջազգային շուկաներում հումքային ապրանքների ակնկալվող աճի, ինչպես նաև արդյունաբերության ակնկալվող բարձր աճի պահպանման պարագայում տարվա արդյունքներով սպասվում է ապրանքների և ծառայությունների արտահանման 25-28% աճ, իսկ 2008 թ. առաջին ինը ամիսների արդյունքում նշված ցուցանիշը կգտնվի 23-26% միջակայքում: Ներմուծման աճի միտումը շարունակվել է նաև երրորդ եռամսյակում, երբ գրանցվել է ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային ծավալների բարձր՝ տ/տ 38.6% աճ: Սպառողական, հումքային և ներդրումային ապրանքների նկատմամբ պահանջարկի շարունակվող աճի և փոխարժեքի արժևորման պարագայում մինչև տարեվերջ ակնկալվում է ապրանքների ներմուծման 42-45% աճ, իսկ 2008 թ. առաջին ինը ամիսներին՝ 26-29% աճ:
- Չնայած դեռևս պահպանվում է արտադրողականության համեմատ աշխատավարձերի առաջանցիկ աճը, այնուամենայնիվ, հետագա մեկ տարվա հորիզոնում աշխատանքի շուկայի կողմից գնաճային ճնշումները զգալիորեն կմեղմվեն՝ ի հաշիվ արտադրողականության աճի բարձր ցուցանիշի արձանագրման, ինչպես նաև տնտեսությունում աշխատավարձերի աճի տեմպերի փոքր-ինչ նվազման:
- 2007 թվականի չորրորդ եռամսյակում բյուջեի ծախսերի ազդեցությունը կլինի ավելի ընդլայնող՝ 2.3%, քանի որ տարեկան ճշգրտված ծրագրի ապահովումը ընկնելու է հատկապես չորրորդ եռամսյակի վրա: 2008 թվականին, հաշվի առնելով սոցիալական ծախսերի կտրուկ ավելացումը, ակնկալվում են ընդլայնող ազդեցություններ, որոնք, ըստ հարկաբյուջետային ազդակների հաշվարկի, 2008 թ. առաջին երեք եռամսյակներում կազմելու են համապատասխանաբար 2.5%, 1.7% և 0.9%:
- 2007 թվականի հոկտեմբերից 2008 թվականի սեպտեմբերն ընկած 12-ամսյա ժամանակահատվածում, պայմանավորված տնտեսության դրամայնացման ակտիվ գործընթացով, կպահպանվեն փողի ագրեգատների և հատկապես դրա դրամային տարրերի աճի տարեկան բարձր տեմպերը: Սակայն, պահպանելով բացարձակ աճի նույն եռամսյակային համամասնությունները, տ/տ աճի տեմպերը աստիճանաբար դանդաղելու են: Առաջիկա մեկ տարվա կտրվածքով տնտեսության վարկավորման տ/տ աճի միջին եռամսյակային ցուցանիշը կպահպանվի շուրջ 40%-ի սահմաններում:

Ներքին և արտաքին միջավայրերի ներկայացված սցենարի պայմաններում 2008 թ. երրորդ եռամսյակի գնաճը կանխատեսվել է 5.6% (մեկ այլ մեթոդով կանխատեսումը տե՛ս Հավելված 1-ում), որը փոքր-ինչ գերազանցում է տարեկան ծրագրային 4% $\pm$ 1.5% միջակայքի վերին սահմանը: Ընդ որում, ինչպես ցույց է տալիս կանխատեսված գնաճից շեղման հավանականությունների գրաֆիկը, առաջիկա 12-ամսյա ժամանակահատվածում գնաճային ռիսկերը գերակշռելու են: Դրանք հիմնականում կապված կլինեն կանխատեսված մակարդակից հացահատիկի, պարենային այլ ապրանքների և նավթի միջազգային գների ավելի բարձրացման, ինչպես նաև ամբողջական պահանջարկի կառուցվածքում սպառման՝ կանխատեսվածից ավելի բարձր աճի հետ:

Պայմանավորված բազային մետաղների գների հնարավոր բարձրացմամբ, գնաճի փաստացի ցուցանիշի՝ նվազման ուղղությամբ հիմնական ռիսկը կպահպանվի ողջ տարվա ընթացքում, որի պարագայում արտահանման արտարժութային ծավալների ավելի մեծ աճը, դրամի փոխարժեքի արժևորման միջոցով, կարող է նվազեցնել ներմուծվող ապրանքների գները և զսպողական ազդեցություն ունենալ գնաճի վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ ռիսկերը և պահպանելով արդեն իսկ հուլիսից իրականացվող զսպողական դրամավարկային քաղաքականության ուղղվածությունը՝ 2007 թ. հոկտեմբերի 2-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշում կայացրեց բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը ևս 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 5%:

Առաջիկա 12-ամսյա ժամանակահատվածի կանխատեսումներն առավել մանրամասն ներկայացված են ստորև՝ «2007 թվականի չորրորդ եռամսյակի ու 2008 թ. առաջին կիսամյակի ճշգրտված և 2008 թվականի երրորդ եռամսյակի կանխատեսումների վերաբերյալ» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի հոկտեմբերի 2-ի նիստի արձանագրությունում:

ՀՀ ԿԲ-ն գնաճի սպասումների վերաբերյալ հարցումներ է իրականացրել երկու հատվածում՝ ֆինանսական հատվածի կազմակերպությունների և տնային տնտեսությունների շրջանում՝ համապատասխանաբար կիսամյակային և հետագա մեկ տարվա հորիզոնով: Ուստի, հարցումները կատարվում և ամփոփվում են կիսամյակների վերջում, իսկ գնաճի և շուկայական տոկոսադրույքների վերաբերյալ երկու հատվածների սպասումների արդյունքները տրվում են երկրորդ և չորրորդ եռամսյակների հաշվետվություններում:

Հավելված 1

2008 թվականի գնաճի կանխատեսումները ՀՀ պետական բյուջեի պակասուրդ/գնաճ հավասարման միջոցով

Պակասուրդ/գնաճ կապի գնահատման համար հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ երկարաժամկետ հատվածում դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները համատեղ որոշվում են կառավարության բյուջետային սահմանափակմամբ, որն ունի հետևյալ տեսքը.

$$b^{g}_{t+1}/R_{t} = pd + b^{g}_{t} + \frac{(M_{t+1} - m_{t})}{P_{t}},$$

որտեղ՝

b^{g}_{t}-ն Կառավարության զուտ ֆինանսական ակտիվների իրական արժեքն է t ժամանակահատվածի համար,

pd-ն առաջնային պակասուրդն է,

R=1+r, որտեղ՝ r-ը իրական տոկոսադրույքն է,

m_{t}-ն դրամային զանգվածն է:

M_{t+1}-ը t ժամանակահատվածի դրամային զանգվածի մնացորդի և t+1 ժամանակահատվածում Կառավարության կողմից, Կենտրոնական բանկի միջոցով, դրամի առաջարկի փոփոխության հանրագումարն է:

Հավասարման վերջին անդամը սենյորաժն է:

Կառավարության բյուջետային սահմանափակումը ենթարկելով որոշակի մաթեմատիկական ձևափոխությունների՝ գնաճի համար ստանում ենք հետևյալ հավասարումը.

$$\pi = \frac{D - Int}{m} - \Delta rGDP,$$

որտեղ՝

π-ն գնաճն է,

m-ը՝ դրամային զանգվածը,

D-ն՝ Կենտրոնական բանկի միջոցով Կառավարության կողմից դրամի առաջարկի փոփոխությունը, որը որոշվում է բյուջեի պակասուրդին ավելացնելով պետական պաշտոնական տրանսֆերտները և պակասեցնելով տոկոսավճարներն ու ՇԻԳ-երի այն մասը, որը դրամային տեսք չունի,

Int-ն՝ Կենտրոնական բանկի կողմից իրականացված ինտերվենցիաների ծավալը,

ΔrGDP-ն՝ իրական ՀՆԱ-ի աճի տեմպը:

Աղյուսակ 11.1. Գնաճի և պետական բյուջեի պակասուրդի միջև կապի ռեգրեսիոն հավասարման արդյունքները

Անկախ փոփոխական / Կախյալ փոփոխական	C ազատ անդամ	Պակասուրդ՝ հանած հնգերկրորդ կարգի հետադարձ կապով, ընթացիկ եռամսյակի համար	Իրական ՀՆԱ փոփոխություն՝ ընթացիկ եռամսյակին զուգահեռ	Գնաճը՝ երկու եռամսյակ առաջ	Կեղծ փոփոխական**	Դետերմինացիայի գործակից (R^2)	Սկիտոդաստիկության վիճակագրություն
Գնաճ	0.2 (0.4)*	4.54 (2.11)*	-1.19 (-4.7)*	-0.3 (-2.1)*	8.2 (4.7)*	0.79	2.3

** Փակագծերում նշվածը T- վիճակագրի արժեքն է:*

*** Կեղծ փոփոխականը կիրառվել է 1997թ. հարկային օրենսդրության փոփոխությունը չեզոքացնելու համար:*

Աղյուսակ 11. 2. Հավասարման միջոցով կանխատեսված 12-ամսյա գնաճը 2007 թվականի IV եռամսյակի և 2008 առաջին երեք եռամսյակների համար

	2007 IV եռ.	2008 I եռ.	2008 II եռ.	2008 III եռ.
12-ամսյա գնաճ*	1.5	0.6	-0.3	-0.7
12-ամսյա գնաճ**	4.7	5.8	6.1	5.2

** Գնաճ՝ առանց ցնցումների ազդեցության:*

*** Գնաճ՝ ներառյալ գնահատված ցնցումների ազդեցությունը:*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(02.08.2007)

2007 թվականի օգոստոս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2007 թվականի օգոստոսի 2-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝
ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Վ. Մովսեսյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից օգոստոս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ցուցանիշների, ինչպես նաև ապագա ժամանակահատվածի հավանական ռիսկերի ներկայացումը:

Գնաճ. 2007 թվականի երկրորդ եռամսյակում գնաճի 12-ամսյա ցուցանիշը կազմել է 4.8%: Ընդ որում, պարենային ապրանքների գներն ավելացել են 6.2%-ով, ծառայությունների սակագները՝ 5.3%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.9%-ով:

2007 թվականի հուլիսին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 3.2% գնանկում, որի պայմաններում 12-ամսյա գնաճը կազմել է 2.3%:

Արտաքին միջավայր. 2007 թվականի երկրորդ եռամսյակում արտաքին հատվածի ցուցանիշները համահունչ էին նախորդ ամսվա գնահատումներին:

Երրորդ եռամսյակի սկիզբը նշանավորվել է ԱՄՆ դոլարի՝ սպասվածից բարձր արժեզրկմամբ, ինչը նաև պայմանավորված էր անշարժ գույքի շուկայի հիմնախնդիրներով, մասնավորապես՝ երկրորդ կարգի վարկերի (subprime loans) վերադարձելիության խնդրով: Եվրոյի փոխարժեքը հուլիսին հասել է իր առավելագույն մակարդակին՝ գերազանցելով 1.38 ԱՄՆ դոլար 1 եվրոյի դիմաց մակարդակը, իսկ անգլիական ֆունտ ստեռլինգը 26 տարվա առավելագույն մակարդակին՝ 2.05 ԱՄՆ դոլար 1 ֆունտ ստեռլինգի դիմաց:

Մյուս կողմից՝ արձանագրվել է հումքային ապրանքների գների՝ սպասվածից բարձր մակարդակ: Նավթի գինը ձևավորել է կայուն աճի միտում և գրեթե հասել իր առավելագույն գրանցված մակարդակին՝ մոտ 78 ԱՄՆ դոլար 1 բարելի դիմաց: Մետաղներից ոսկու գինը գտնվում է կանխատեսվածի շրջանակում՝ չարձանագրելով էական տատանումներ, մինչդեռ պղնձի գինը շարունակում է աճել:

Առաջին կիսամյակի վերջից հացահատիկի գների կտրուկ աճը, որոշակիորեն դանդաղելով, շարունակվել է նաև հուլիսին[54]: Հացահատիկի շուկայում, բերքահավաքի հետ կապված, սկսվում է նոր մարքետինգային տարվա հացահատիկի գների միտումների ձևավորումը, որի մասին ավելի մանրամասն տեղեկություններ կունենանք օգոստոս-սեպտեմբեր ամիսներին:

Այսպիսով, արտաքին միջավայրի զարգացումները հիմնականում համընկել են Կենտրոնական բանկի գնահատումներին, իսկ արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումների չափավոր աճի կանխատեսումները, առանց հաշվի առնելու հացահատիկի միջազգային գների ազդեցությունը, արդեն իրականանում են:

Համախառն առաջարկ. Տարվա երկրորդ եռամսյակում տնտեսական աճը մոտ 2 տոկոսային կետով գերազանցել է կանխատեսված ցուցանիշը՝ կազմելով 11.2%: Ընդ որում, տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, բացի գյուղատնտեսությունից, արձանագրվել է կանխատեսված ցուցանիշների գերազանցում:

Տնտեսական աճին առավելապես նպաստել են ծառայությունների և շինարարության ճյուղերը, որոնցում շարունակվել են տարվա առաջին եռամսյակից արձանագրվող միտումները: 2007 թվականի առաջին կիսամյակում արձանագրված շինարարության ծավալի 20.1% աճն առավելապես պայմանավոր-

[54] *Հացահատիկի միջազգային գների աճի պատճառները մանրամասն ներկայացված են 3.07.2007 թ. «2007 թվականի երրորդ եռամսյակի կանխատեսումների և դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ» ՀՀ ԿԲ խորհրդի նիստի արձանագրությունում:*

վել է տրանսպորտի և կապի ճյուղերում, ինչպես նաև էներգետիկայի ոլորտում կատարվող մեծածավալ ներդրումներով: Ծառայությունների ոլորտում առաջանցիկ տեմպերով շարունակել է ավելանալ տրանսպորտի և կապի ծառայությունների ծավալը, որի պարագայում ծառայությունների իրական աճը տարվա առաջին կիսամյակում կազմել է 13.6%:

Արդյունաբերության ճյուղում նույնպես շարունակվել են տարվա սկզբից արձանագրված միտումները: Մասնավորապես, ադամանդագործության ենթաճյուղում շարունակվող զգալի անկման հետ մեկտեղ, աճի բարձր տեմպեր են արձանագրվել սննդի (առաջին հերթին՝ կոնյակի, պահածոների և հրուշակեղենի արտադրություն), մետաղագործական և քիմիական արդյունաբերության ճյուղերում: Արդյունքում՝ արդյունաբերական թողարկման ծավալների իրական աճն առաջին կիսամյակում ավելացել է 2.3%-ով. առանց ադամանդագործության՝ այդ ցուցանիշը կազմել է շուրջ 9%:

Գյուղատնտեսության թողարկման ծավալների գծով առաջին կիսամյակում արձանագրվել է 1.8% իրական նվազում՝ պայմանավորված բուսաբուծության արտադրանքի նվազմամբ, որն արդյունք է հիմնականում անբարենպաստ եղանակի պարագայում ցանքի և բերքահավաքի որոշակի հետաձգման:

Համախառն պահանջարկ. 2007 թվականի առաջին եռամսյակի սպառման և ներդրումների փաստացի ցուցանիշների[55] հիման վրա երկրորդ եռամսյակի գնահատումները վերանայվել են փոքր-ինչ աճի ուղղությամբ: Ներքին պահանջարկի իրական աճը նախկինում գնահատված 10.4%-ի փոխարեն կկազմի 12.0%՝ հիմնականում պայմանավորված պետական հատվածի ցուցանիշների շեղումներով: Մասնավոր ներդրումների աճը գնահատված 18.8%-ի փոխարեն կկազմի 19.1%, իսկ մասնավոր սպառումը՝ գնահատված 9.4%-ի փոխարեն՝ 9.8%:

2007 թ. երկրորդ եռամսյակում ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների տ/տ աճը[56] (դոլարային արտահայտությամբ) կազմել է 18.1%, ինչը գրեթե համընկել է վերջին գնահատումներին: Դա պայմանավորված է հումք արդյունահանող որոշ ձեռնարկություններում արտադրական կարողությունների գործարկման աստիճանական աճով, կատարվող ներդրումների արագ գործարկմամբ, ինչպես նաև հումքային ապրանքների գների բարձր մակարդակի պահպանմամբ: Ապրանքների և ծառայությունների իրական ծավալների աճը կազմել է 8.3%:

Ապրանքների և ծառայությունների ներմուծման՝ տարեսկզբից գրանցվող բարձր աճը[57] շարունակվել է նաև երկրորդ եռամսյակում, երբ գրանցվել է վերջինիս տ/տ 34.8% աճ՝ փոքր-ինչ շեղվելով վերջին գնահատումներից: Դա պայմանավորված է վճարային հաշվեկշռի գրանցման մեթոդների բարելավմամբ, մասնավորապես՝ ծառայությունների ներմուծման տողում գրանցվում են նաև սեզոնային աշխատողների՝ արտերկրում իրականացրած սպառման ծավալները, ինչի արդյունքում ծառայությունների ներմուծման ծավալների ցուցանիշը նույնքանով ավելանում է: Անվանական ծավալների նման բարձր աճով է պայմանավորված ապրանքների և ծառայությունների իրական ծավալների 30.9% աճը:

Աշխատանքի շուկա. 2007 թվականի երկրորդ եռամսյակում աշխատանքի շուկայի ցուցանիշները շարունակել են գնաճային ճնշումներ ստեղծել սպառողական շուկայում: Սակայն աշխատավարձի աճի տեմպերը փոքր-ինչ նվազման միտում են ցուցաբերել: Մասնավորապես, արձանագրվել է տնտեսության միջին անվանական աշխատավարձի 17.3% աճ՝ գնահատված 18.8%-ի փոխարեն: Այնուհանդերձ, արտադրողականության աճը շարունակում է զիջել աշխատավարձի աճին՝ կազմելով 11%:

2007 թ. երկրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատ, արձանագրվել է ոչ առևտրային բնույթի փոխանցումների տարեկան աճի տեմպերի արագացում, ինչի հետևանքով վերջինիս աճը կազմել է տ/տ 38.6% (ըստ հունվար-հունիս ամիսների ցուցանիշների՝ ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքն ավելացել է 35.8%-ով): Նշված գնահատումը գրեթե չի շեղվել նախկին գնահատումից:

Համախմբված բյուջե. 2007 թվականի երկրորդ եռամսյակում հարկաբյուջետային հատվածը գնաճի վրա կանխատեսված չեզոք ազդեցության փոխարեն ունեցել է փոքր-ինչ ընդլայնող ազդեցություն (0.4%):

---

[55] Մասնավոր սպառման և ներդրումների առաջին եռամսյակի փաստացի ցուցանիշները փոքր-ինչ գերազանցել են կանխատեսված մակարդակները: Մասնավոր ներդրումների իրական աճը կանխատեսված 20%-ի փոխարեն կազմել է 27%, իսկ մասնավոր սպառումը կանխատեսված 11%-ի փոխարեն կազմել է 12%: Զգալի շեղում է արձանագրվել պետական հատվածի սպառման ցուցանիշում. կանխատեսված 0.3% նվազման փոխարեն արձանագրվել է 21.9% աճ, որի պայմաններում ընդհանուր սպառումը կանխատեսված 8.9%-ի փոխարեն կազմել է 13.2%:

[56] Հունվար-հունիս ամիսների ցուցանիշներով՝ ապրանքային արտահանման (ՖՕԲ) ծավալների աճը կազմել է 20.5%, իսկ առանց ադամանդի՝ 37.1%: Արտահանման ՖՕԲ գների հիման վրա գնահատվել է արտահանման կրեդիտ ցուցանիշը, իսկ ծառայությունների ցուցանիշները կանխատեսումներ են:

[57] Ապրանքային ներմուծման (ՍԻՖ) ծավալների աճը հունվար-հունիս ամիսների ցուցանիշներով կազմել է 43.9%, իսկ առանց ադամանդի՝ 53.9%: Ներմուծման ՍԻՖ ցուցանիշի հիման վրա գնահատվել է ներմուծման դեբետ ցուցանիշը, իսկ ծառայությունների ներմուծման ցուցանիշները կանխատեսումներ են:

Որոշ չափով շեղվել են եկամուտների և ծախսերի փաստացի ազդեցության ցուցանիշները՝ պայմանավորված եկամուտների մոտ 7.0 մլրդ դրամ գերակատարմամբ և դրան համապատասխան՝ ծախսերի իրականացմամբ: Եկամուտների ազդակը սպասվածի համեմատ ունեցել է փոքր-ինչ մեծ զսպող ազդեցություն (1.3%), իսկ ծախսերի ազդակը՝ ավելի մեծ ընդլայնող ազդեցություն (1.7%): Եկամուտների նշված գերակատարման պայմաններում ազդակի ոչ մեծ զսպող ազդեցությունը բացատրվում է կանխատեսվածի համեմատությամբ փաստացի ՀՆԱ-ի ավելի բարձր ցուցանիշի արձանագրմամբ:

Հուլիս ամսվա զարգացումները համահունչ են երրորդ եռամսյակի կանխատեսումներին, և, ինչպես սպասվում է, եռամսյակի արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը կունենա 1.3% ընդլայնող ազդեցություն:

Իրական և հարկաբյուջետային հատվածներում արձանագրված միտումները հիմնականում համընկել են սույն թվականի հուլիսի 3-ի կանխատեսումների հիմքում ընկած գնահատումների հետ, իսկ ապագա 12-ամսյա ժամանակահատվածի ակնկալիքների համաձայն՝ արդեն տարեվերջին ամբողջական պահանջարկի աճի տեմպերը որոշակիորեն կգերազանցեն ամբողջական առաջարկի աճի տեմպերը՝ հանգեցնելով լրացուցիչ գնաճային ճնշումների:

Փող և վարկ. 2007 թվականի երկրորդ եռամսյակի դրամավարկային ցուցանիշների 12-ամսյա փաստացի արդյունքները հիմնականում համընկել են ակնկալիքներին, ինչը վկայում է տնտեսության դրամայնացման գործընթացի ակտիվության պահպանման մասին: Վերջինս հուլիսին ևս շարունակվել է բարձր տեմպերով, որին համապատասխան՝ Կենտրոնական բանկը փողի բազան ավելացրել է տ/տ 47.7%-ով: Դրամայնացումն արտահայտվել է նաև դրամային զանգվածի տ/տ 74.9% աճով, որի կառուցվածքում հատկապես մեծ աճ է արձանագրվել դրամային ավանդների գծով՝ 97.7%, իսկ շրջանառությունում գտնվող կանխիկ դրամն ավելացել է 61.8%-ով: Արտարժութային ավանդները դրամային արտահայտությամբ կրկին նվազել են 5.2%-ով, ինչը հիմնականում դրամի արժևորման արդյունք է, իսկ դրանց դոլարային արտահայտությամբ աճը կազմել է տ/տ 16.8%: Փողի զանգվածի բաղադրատարրերի վերոնշյալ փոփոխությունների արդյունքում այն ավելացել է տ/տ 45.6%-ով:

Չնայած հուլիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի 0.25 տոկոսային կետով բարձրացմանն ու մինչև տարեվերջ ավելի զսպողական դրամավարկային քաղաքականության սցենարի նախանշմանը, փողի ագրեգատների և փողի բազայի աճի տեմպերը հուլիսի համեմատ չեն դանդաղել:

Հուլիսին պահպանվել են նաև տնտեսության վարկավորման աճի բարձր տեմպերը, որոնք գերազանցում են երրորդ եռամսյակի համար կանխատեսված ցուցանիշը՝ տ/տ 40.9%-ի փոխարեն 47.2%: Վարկերի ընդհանուր ծավալում շարունակել է ավելանալ դրամով վարկավորման տեսակարար կշիռը՝ կազմելով 59.5%:

Արծանագրեցին. Արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումների չափավոր աճը շարունակվել է նաև հուլիսին: Թեև հացահատիկի միջազգային գների՝ վերջին ամիսներին դրսևորված կտրուկ աճը հուլիսին որոշակիորեն դանդաղել է, բերքի մասին նոր տեղեկատվության բացակայության պայմաններում հացահատիկի գների հետագա փոփոխության ակնկալիքները դեռևս անորոշ են: Միաժամանակ, առաջին կիսամյակում ներքին միջավայրի ազդեցությունը գնաճի վրա մեղմ է արտահայտվել: Չնայած գյուղատնտեսության ճյուղի զարգացմամբ պայմանավորված գյուղմթերքների գների սեզոնային նվազմանը՝ հարկաբյուջետային հատվածի ակնկալվող ընդլայնողական ազդեցության և պահանջարկի բարձր աճի դրսևորման արդյունքում դեռևս առկա է կանխատեսվող ժամանակահատվածում գնաճային ճնշումների ուժգնացման մտավախություն:

Որոշեցին. Անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 4.75%, ներգրավված դրամային միջոցների և լոմբարդային վարկերի տոկոսադրույքները՝ համապատասխանաբար 1.75% և 7.75%:

Առաջիկայում տնտեսության զարգացման միտումների վերաբերյալ նոր տեղեկատվության պարագայում ԿԲ խորհուրդը չի բացառում տոկոսադրույքների ճշգրտումը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(04.09.2007)

2007 թվականի սեպտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2007 թվականի սեպտեմբերի 4-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Ա. Նորեկյանը, Վ. Գաբրիելյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից սեպտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ցուցանիշների զարգացումների և երրորդ եռամսյակի համար կանխատեսված ուղղությունների համեմատական քննարկումը:

Գնաճ. 2007 թվականի օգոստոսին, հուլիսի համեմատությամբ, արձանագրվել է 1.5% գնանկում. ընդ որում, պարենային ապրանքների գները նվազել են 2.7%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.5%-ով, իսկ ծառայությունների սակագներն աճել են 0.2%-ով: Այս պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 1.6%՝ 2007 թ. նպատակային 4%-ի (±1.5%) պայմաններում:

Հուլիս-օգոստոսի գնաճի զարգացումները հիմնականում պայմանավորվել են պարենային ապրանքների գների, մասնավորապես՝ «Միրգ», «Բանջարեղեն» և «Կարտոֆիլ» ապրանքախմբերի՝ կանխատեսվածից ավելի սեզոնային անկմամբ, որի արդյունքում օգոստոսին 12-ամսյա գնաճը էականորեն ցածր է եղել 2007 թ. տարեվերջի համար կանխատեսված 5% ցուցանիշից[58]:

Արտաքին միջավայր. Օգոստոս ամիսը նշանավորվել է ԱՄՆ-ում ստորակարգ հիփոթեկային վարկերի վերադարձելիության խնդրով պայմանավորված միջազգային ֆինանսական շուկաներում իրացվելիության ճգնաժամով: Վերջինս հանգեցրել է նաև հումքային ապրանքների նկատմամբ պահանջարկի նվազման և միջազգային շուկաներում դրանց գների անկման: Նավթի միջազգային գները օգոստոսին նվազել են՝ 1 բարելի դիմաց 78 ԱՄՆ դոլարից հասնելով մոտ 68 ԱՄՆ դոլարի, որը սպասվածից որոշակիորեն ցածր էր: Նմանապես նվազել են նաև արտահանվող հիմնական մետաղների և թանկարժեք մետաղների գները: Պղնձի գինը 1 տոննայի դիմաց մոտ 8000 ԱՄՆ դոլարից նվազել է մինչև մոտ 7000 ԱՄՆ դոլար, իսկ ոսկու գինը՝ 1 ունցիայի դիմաց մոտ 680 ԱՄՆ դոլարից մինչև մոտ 660 ԱՄՆ դոլար: Միաժամանակ, ըստ վերլուծաբանների մեծամասնության կարծիքի, հումքային ապրանքների գները երկարաժամկետ հատվածում կվերադառնան իրենց նախկին մակարդակին և նույնիսկ որոշակիորեն կաճեն:

Միջազգային շուկաներում շարունակվել է սննդամթերքի, մասնավորապես՝ հացահատիկի գների աճը: Օգոստոսին եվրոպական և ամերիկյան բորսաներում արձանագրվել է հացահատիկի գների ռեկորդային աճ (ԱՄՆ-ում՝ 15-16%): Ռուսաստանում, չնայած բերքի ստացմանը, հացահատիկի գների էական նվազում չի արձանագրվել (նվազումը՝ 3-4%), ինչը ենթադրում է, որ գների աճի միտումներն այս շուկայում ևս պահպանվելու են: Հայաստանի շուկայում «Հացամթերք» ապրանքախմբի գների էական փոփոխություններ դեռևս չեն արձանագրվել:

Արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումների աճի կանխատեսումները, չնայած որոշակի գնանկումային միջավայրի ձևավորմանը, գնահատվում են իրատեսական:

Իրական հատված. 2007 թվականի հունվար-հուլիսին տնտեսական աճը պահպանվել է բարձր մակարդակի վրա՝ կազմելով 12.1%, որին առավել նպաստել են շինարարության և ծառայությունների ճյուղերը: Ընդ որում, ինչպես երևում է ճյուղային զարգացումներից, տարվա երրորդ եռամսյակի ցուցանիշը հնարավոր է գերազանցի կանխատեսված մակարդակը՝ հիմնականում ի հաշիվ գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերում ակնկալվող բարձր աճի:

---

[58] Կանխատեսված 5% գնաճից 2.5%-ը «Հացամթերք» ապրանքախմբի գների աճի ակնկալվող նպաստումն է (հունիսին այս ապրանքախմբի գների աճը հանգեցրել է լրացուցիչ 1.1% գնաճի):

Արդյունաբերության թողարկման ծավալների աճը կազմել է 1.3%՝ կրկին պայմանավորված ադամանդագործության ենթաճյուղի՝ դեռևս տարեսկզբից արձանագրվող անկմամբ: Առանց ադամանդագործության՝ արդյունաբերության թողարկման ծավալներն ավելացել են 8.7%-ով: Առավել բարձր աճ է արձանագրվել սննդի արդյունաբերության, շինանյութերի արտադրության, մետաղագործության և էներգետիկայի (ի հաշիվ գազի բաշխման) ենթաճյուղերում: Ընդ որում, պայմանավորված գյուղատնտեսության ճյուղում բանջարեղենի և խաղողի հարուստ բերքի ստացման ակնկալիքներով, սննդի արդյունաբերության աճի բարձր տեմպերը կնպաստեն ամբողջ ճյուղի աճի տեմպերի ավելացմանը:

Շինարարության ծավալների աճի տեմպի արագացման շարունակվող միտումների արդյունքում շինարարության ծավալների աճը կազմել է 19.2%՝ պայմանավորված տրանսպորտի և կապի, ինչպես նաև էներգետիկայի ոլորտներում իրականացվող մեծածավալ ներդրումներով:

Ծառայությունների ոլորտում նույնպես արձանագրվել է ծավալների 17.9% իրական աճ: Ընդ որում, աճի տեմպի արագացում է արձանագրվել ինչպես կապի և տրանսպորտի (համապատասխանաբար 41% և 25% իրական աճ), այնպես էլ առևտրի (10.8% իրական աճ) ոլորտներում: Արձանագրված բարձր աճն էապես պայմանավորվել է կապի և տրանսպորտի ոլորտում կատարված մեծածավալ ներդրումներով, ինչպես նաև զբոսաշրջության զարգացմամբ:

Գյուղատնտեսության ճյուղում համախառն արտադրանքի իրական աճը կազմել է 2.2%՝ ի հաշիվ ինչպես անասնապահության, այնպես էլ բուսաբուծության արտադրանքի ավելացման: Ընդ որում, բուսաբուծության ճյուղում, չնայած ծիրանի բերքի զգալի նվազմանը, արձանագրվել է մնացած մշակաբույսերի բերքի աճ: Ակնկալվում է, որ օգոստոսին և սեպտեմբերին բանջարեղենի և խաղողի լավ բերքի ստացման արդյունքում տարվա երրորդ եռամսյակի ցուցանիշը գերազանցելու է կանխատեսված մակարդակը:

2007 թ. հունվար-հուլիսին պահպանվել են արտաքին առևտրաշրջանառության աճի բարձր տեմպերը: Մասնավորապես՝ գրանցվել է ապրանքների արտահանման[59] 20.8% աճ, իսկ առանց ադամանդի՝ 39.4% (2007 թ. հուլիսին տ/տ աճը կազմել է 22.5%): Վերջինս պայմանավորվել է արտաքին և ներքին միջավայրի բարենպաստ զարգացումներով (արդյունաբերության աճը, առանց ադամանդագործության, հունվար-հուլիսին կազմել է 8.7%): Բարենպաստ զարգացումների պահպանման պարագայում երրորդ եռամսյակի արտահանման աճի ցուցանիշը կարող է բարձր լինել կանխատեսվածից: Նույն եզրակացության կարելի է հանգել նաև ներմուծման վերաբերյալ, քանի որ ներմուծման աճի բարձր ներուժը պահպանվել է նաև հուլիսին, ինչի արդյունքում հունվար-հուլիսին գրանցվել է 44.5% աճ (հուլիսին տ/տ աճը կազմել է 47.7%): Առանց ադամանդի՝ ապրանքների ներմուծման ծավալներն[60] ավելացել են 54.2%-ով:

Միաժամանակ, հուլիսին գրանցվել է ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքի աճի տեմպերի արագացում, որի պարագայում վերջինիս տ/տ աճը կազմել է 35.6%: Հունվար-հուլիսին ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքն ավելացել է 35.8%-ով: Վերջինս կրում է Ռուսաստանի տնտեսության աճի տեմպերի արագացման ազդեցությունը, և նման զարգացումների պարագայում կարող է արձանագրվել ոչ առևտրային բնույթի փոխանցումների՝ կանխատեսվածից բարձր ցուցանիշ:

Հարկաբյուջետային հատված. 2007 թվականի երրորդ եռամսյակում համախառն պահանջարկի վրա ակնկալվում է հարկաբյուջետային հատվածի ընդլայնող ազդեցություն, որը փոքր-ինչ է շեղվում կանխատեսված մակարդակից: Ըստ հարկաբյուջետային ազդակի նախնական փաստացի ցուցանիշի (հաշվարկված պետական հատվածի հուլիս, օգոստոս ամիսների նախնական փաստացի ցուցանիշների և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված՝ սեպտեմբերի նախնական ծրագրի հիման վրա)՝ այն կկազմի 0.9 ընդլայնող՝ կանխատեսված 1.3 ընդլայնողի փոխարեն: Ծախսերի մասով սպասվում է ընդլայնող ազդեցություն, որը կանխատեսվածի շրջանակում է: Սակայն եկամուտների մասով եռամսյակի արդյունքում կանխատեսվածի համեմատությամբ կարծանագրվի ավելի մեծ զսպող ազդեցություն՝ պայմանավորված հիմնականում հարկային եկամուտների գերակատարմամբ: Համախառն պահանջարկի և հետևաբար գնաճի վրա ազդեցության տեսանկյունից չորրորդ եռամսյակում ակնկալվում է հարկաբյուջետային հատվածի բավականին ընդլայնող ազդեցություն (մոտ 2.0 տոկոս):

Ամփոփենք. իրական հատվածում ՀՆԱ իրական աճի տեմպերը որոշակիորեն գերազանցել են կանխատեսված մակարդակը, իսկ հարկաբյուջետային հատվածը պակաս ընդլայնող ազդեցություն է ունեցել համախառն պահանջարկի վրա, որի պարագայում ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի զարգացումներն էական գնաճային ճնշումներ չեն առաջացրել: Ինչ վերաբերում է հետագա 12-ամսյա ժամանակահատվածի ակնկալիքներին, ապա, հաշվի առնելով մասնավոր սպառման և ներդրումների

---

[59] Արտաքին հատվածի նախնական ցուցանիշների համաձայն՝ արտահանման աճին շարունակում է նպաստել մեծ կշիռ կազմող կոնյակի, երկաթամիահալվածքի, պղնձի հանքաքարի արտահանման ծավալների աճը:

[60] Նախնական ցուցանիշների համաձայն՝ հունվար-հուլիսին ներմուծման աճին հիմնականում նպաստել է գազի, մարդատար ավտոմեքենաների, անմշակ ոսկու ներմուծման ծավալների աճը:

աճի կանխատեսումները և հարկաբյուջետային հատվածի առավել ընդլայնող ազդեցության գնահատումները, արդեն իսկ չորրորդ եռամսյակից գնաճային ճնշումներն ուժգնացման միտում կունենան:

Փող և վարկ. 2007 թվականի օգոստոսին ևս պահպանվել են տնտեսության դրամայնացման աճի բարձր տեմպերը, որն արտահայտվել է դրամային փաստացի ցուցանիշների՝ երրորդ եռամսյակի կանխատեսված մակարդակների որոշակի գերազանցմամբ: Արձանագրվել են հատկապես դրամային զանգվածի և դրամային ավանդների աճի բարձր տեմպեր՝ համապատասխանաբար տ/տ 71.9% և 97.8%, ինչն ուղեկցվել է նաև շրջանառությունում եղած կանխիկի տ/տ աճի բարձր տեմպերով՝ 57.6%: Ի տարբերություն դրա՝ արտարժութային ավանդները (դրամային արտահայտությամբ) սպասված աճի փոխարեն նվազել են 3.6%-ով, ինչի արդյունքում դիտվել է դոլարայնացման գործակցի նվազում՝ տ/տ 33.5%, իսկ փողի զանգվածի՝ կանխատեսվածին մոտ աճ՝ տ/տ 45%:

Ակնկալիքները գերազանցել են նաև տնտեսության վարկավորման աճի ցուցանիշը՝ օգոստոսին կազմելով տ/տ 53.7%՝ պայմանավորված առավելապես դրամով վարկավորման տարեկան ավելի քան 2 անգամ աճով:

Արծանագրեցին. 2007 թ. գնաճի նպատակային 4±1.5% թիրախը հասանելի է: Սակայն, պայմանավորված հիմնականում սննդամթերքի, մասնավորապես՝ հացահատիկի միջազգային գների շարունակվող աճով, արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումներն ավելանալու են: Միաժամանակ, խորհուրդն իրատեսական է համարում տարեվերջին գնաճային ճնշումների ուժգնացումը՝ պայմանավորված համախառն մասնավոր սպառման ու ներդրումների բարձր աճի և բյուջետային մեծածավալ ծախսերի ազդեցությամբ:

Որոշեցին. Անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 4.75%, ներգրավված դրամային միջոցների և լոմբարդային վարկերի տոկոսադրույքները՝ համապատասխանաբար 1.75% և 7.75%: Գնաճի, արտաքին և ներքին միջավայրի զարգացումներին համահունչ՝ խորհուրդը չի բացառում առաջիկա ամիսներին տոկոսադրույքների հետագա ճշգրտումների իրականացումը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(02.10.2007)

2007 թվականի չորրորդ եռամսյակի կանխատեսումների և դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ

2007 թվականի հոկտեմբերի 2-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝
ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը,
խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը, Ա. Նորեկյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թվականի չորրորդ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց երրորդ եռամսյակի տնտեսական իրավիճակի, փաստացի գնաճի վերլուծության և 2007 թվականի հոկտեմբերից 2008 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածի կանխատեսումների ներկայացումը: Փաստացի տվյալները և կանխատեսումները ներառում են տնտեսության իրական, արտաքին, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները, ինչպես նաև ապագա ժամանակահատվածի հավանական ռիսկերը:

Ըստ ՀՀ ԿԲ կանխատեսումների՝ 2007 թվականի սեպտեմբերին հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածում, շուկայի սպասումների ներքո ձևավորվող տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի վարկածի պայմաններում, գնաճը կկազմի 5.6%: Կանխատեսումների ենթատեքստում գնահատվել է տնտեսության առանձին հատվածների ազդեցությունը գնաճի կանխատեսված ցուցանիշի վրա:

2007 թվականի երրորդ եռամսյակի փաստացի ցուցանիշները

2007 թվականի սեպտեմբերին, օգոստոսի համեմատությամբ, արձանագրվել է 0.7% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 2.7%՝ տարեկան նպատակային 4%-ի պարագայում:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի 2006 թ. սեպտեմբերի կանխատեսումների՝ 2007 թ. երրորդ եռամսյակում ակնկալվում էր 3.3% գնաճ[61], իսկ 2007 թ. հունիսի կանխատեսումներով՝ շուրջ 4.6% էր[62] (ներառյալ հացամթերքի գների նպաստումը 1.1%-ով): Մի կողմից՝ 2006 թ. օգոստոսից հոկտեմբեր ժամանակահատվածում դրամավարկային զսպողական քաղաքականության իրականացումը (ռեպո տոկոսադրույքների 0.75 տոկոսային կետով աճ), և մյուս կողմից՝ «Միրգ», «Բանջարեղեն ու կարտոֆիլ» ապրանքախմբերի սեզոնային ավելի խոր գնանկումը (պակաս նպաստումը՝ շուրջ 1.2%) ու «Հացամթերք» ապրանքախմբի ներքին գների ավելի քիչ աճը (պակաս նպաստումը՝ 0.3%) հանգեցրել են կանխատեսվածի համեմատ գնաճի ցածր մակարդակի ձևավորմանը:

2007 թ. երրորդ եռամսյակի գնաճը պայմանավորվել է տնտեսության տարբեր հատվածների հետևյալ զարգացումներով.

- Չնայած երրորդ եռամսյակում որոշակի գնանկումային միջավայրի ձևավորմանը՝ սեպտեմբերի վերջից սկսած՝ արտաքին հատվածի գնաճային ճնշումներն էականորեն ավելացել են՝ պայմանավորված հիմնականում միջազգային վարկային ճգնաժամի խորացման հետևանքներով: Նավթի միջազգային գները սեպտեմբերի վերջին գերազանցել են 1 բարելի դիմաց 83 ԱՄՆ դոլարը, հացահատիկի գները Չիկագոյի ապրանքահումքային բորսայում՝ բուշելի դիմաց 9 ԱՄՆ դոլարը, պղնձի գինը Լոնդոնի մետաղների բորսայում՝ տոննայի դիմաց ավելի քան 8000 ԱՄՆ դոլարը: Վարկային ճգնաժամը և ԱՄՆ Ֆեդերալ պահուստային համակարգի կողմից տոկոսադրույքների կտրուկ նվազեցումը 50 բազիսային կետով հանգեցրին ԱՄՆ դոլարի դիրքերի կտրուկ թուլացմանը, որի հետևանքով եվրոն հասավ իր պատմական առավելագույն արժեքին՝ ավելի քան 1.41 ԱՄՆ դոլար եվրոյի դիմաց: Այս զարգացումները եռամսյակի վերջին էապես ավելացրին արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումները, ինչն արտահայտվեց սեպտեմբերի գնաճի ցուցանիշում:

---

[61] Կանխատեսման ժամանակ հացահատիկի միջազգային գների բարձրացման ռիսկեր չկային, և ենթադրվել է, որ գյուղատնտեսության ճյուղն աճելու է բնականոն տեմպերով:

[62] Տե՛ս 2006 թ. հոկտեմբերի 3-ի և 2007 թ. հուլիսի 3-ի՝ տոկոսադրույքների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստերի արձանագրությունները:

- 2007 թվականի հունվար-օգոստոսին տ/տ տնտեսական աճը, գերազանցելով կանխատեսված ցուցանիշը, կազմել է 13.6%, որին նպաստել են հիմնականում գյուղատնտեսության և շինարարության ճյուղերը: Գյուղատնտեսության ավելացված արժեքի աճը կազմել է 7.7%՝ շնորհիվ բուսաբուծության, մասնավորապես՝ մրգի, բանջարեղենի և ցորենի հարուստ բերքի ստացման: Նշված ապրանքատեսակները հիմնականում ուղղվում են ներքին սպառմանը, այդ թվում՝ նաև հումք հանդիսանալով սննդի արդյունաբերության համար: Հետևաբար, սպառողական շուկայում, չնայած բնակչության եկամուտների շարունակական ավելացմանը, մրգի և բանջարեղենի առաջարկի աճի հետևանքով գների սեզոնային անկումն էական էր: Շինարարության ճյուղում շարունակում է արձանագրվել աճի տեմպերի արագացման միտում, որի արդյունքում ճյուղի ավելացված արժեքի աճը կազմել է շուրջ 22%՝ պայմանավորված հիմնականում տրանսպորտի և կապի ոլորտներում իրականացվող մեծածավալ կապիտալ շինարարությամբ, ինչպես նաև էներգետիկայի ոլորտում փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման ծրագրի շրջանակներում կատարված ներդրումներով: Արդյունաբերության ավելացված արժեքի իրական աճը հունվար-օգոստոսին կազմել է 2.3%[63], որին նպաստել է սննդի արդյունաբերության, մետաղագործության և շինանյութերի արտադրության ծավալների աճը: Ծառայությունների ոլորտում ավելացված արժեքի աճը կազմել է 12.6%: Ընդ որում, առավել բարձր աճ է արձանագրվել հիմնականում տրանսպորտի և կապի, ինչպես նաև զբոսաշրջության հետ կապված ծառայությունների մասով:
- Ըստ Կենտրոնական բանկի գնահատումների՝ ներքին պահանջարկի ազդեցությունը գնաճի վրա ընդլայնող է՝ պայմանավորված հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնող ազդեցությամբ, մասնավոր ներդրումների աճի բարձր տեմպերի արձանագրման արդյունքում վերջինիս հավասարակշիռ մակարդակի գերազանցմամբ և մասնավոր սպառման աճի տեմպերի արագացմամբ: Ընդ որում, ներդրումների աճը մի կողմից արտադրողականության և ՀՆԱ ներուժի աճի միջոցով առաջացրել է գնանկումային ճնշումներ, որոնք կարտահայտվեն ավելի երկար ժամանակահատվածից հետո, իսկ մյուս կողմից՝ հիմնականում շինարարության ճյուղի աշխատավարձի ավելացման միջոցով որոշակիորեն խթանել է գնաճը: Միաժամանակ, հարկաբյուջետային քաղաքականությունը, գնաճի վրա ազդեցության տեսանկյունից, 2007 թ. երրորդ եռամսյակում, ինչպես և կանխատեսվում էր, եղել է ընդլայնող 0.4%-ի չափով՝ պայմանավորվելով առավելապես ծախսերի գծով ընդլայնող ազդակով:

Հաշվի առնելով իրական և հարկաբյուջետային հատվածների զարգացումների վերոնշյալ միտումները՝ կարելի է փաստել, որ ամբողջական պահանջարկի զարգացումները համահունչ էին ամբողջական առաջարկի զարգացումներին, ուստի էական գնաճային ճնշումներ դեռևս չեն առաջացրել:

- 2007 թվականի երրորդ եռամսյակում ևս պահպանվել են տնտեսության դրամայնացման աճի բարձր տեմպերը, ինչի արդյունքում դրամավարկային բոլոր ցուցանիշները, մասնավորապես՝ դրամային ագրեգատները, գերազանցել են եռամսյակում ակնկալվող 12-ամսյա աճի տեմպերը: Դրամային զանգվածն ավելացել է տ/տ 68.3%-ով, այդ թվում՝ դրամային ավանդները՝ 88.5%-ով, շրջանառությունում գտնվող կանխիկ դրամը՝ 56.5%-ով, իսկ փողի բազան՝ 46.4%-ով: Արդյունքում, դրամային բազմարկիչն աճել է տ/տ 15%-ով, իսկ տնտեսության դրամայնացումը՝ 38.9%-ով, հետևաբար դիտվել է նաև տնտեսության դոլարայնացման նվազում 30.1%-ով: Տարեսկզբին արձանագրված նույն բարձր տեմպերով շարունակել է աճել տնտեսության վարկավորումը՝ երրորդ եռամսյակում հասնելով տ/տ 63.4%-ի:

2007 թվականի չորրորդ եռամսյակի ու 2008 թվականի առաջին երեք եռամսյակների կանխատեսումները

Արտաքին միջավայր. Օգոստոսին միջազգային վարկային ճգնաժամի հետևանքով միջազգային շուկայում ձևավորվել են ԱՄՆ դոլարի արժեզրկման և գնաճային միտումներ, որոնք, ըստ ԿԲ գնահատումների, կշարունակվեն առնվազն մոտակա կես տարվա ընթացքում:

Եվրոյի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2007 թվականի վերջին կհասնի իր առավելագույն մակարդակին՝ 1.45 ԱՄՆ դոլար եվրոյի դիմաց, որի հիմնական պատճառը ԱՄՆ-ում տնտեսական ակտիվության նվազման սպասումները և Ֆեդերալ պահուստային համակարգի ու Եվրոպական կենտրոնական բանկի տոկոսադրույքների սպրեդի հետագա ակնկալվող նվազումն է: 2008 թվականին սպասվում է, որ

[63] *Առանց առամանդի թողարկման՝ արդյունաբերության թողարկման ծավալներն ավելացել են 8.2%-ով:*

ԱՄՆ դոլարը որոշակիորեն կվերականգնի իր դիրքերը՝ պայմանավորված տոկոսադրույքների հակառակ փոփոխության սպասումների ձևավորմամբ: Սակայն հիմնական գործոնը, որը դեռևս անորոշ է, ԱՄՆ տնտեսության ապագա զարգացումն է՝ որքանո՞վ կազդի անշարժ գույքի շուկայի և հիփոթեքային վարկավորման ճգնաժամն իրական հատվածի և ձեռնարկությունների շահութաբերության վրա:

Նավթի գների աճը կշարունակվի ձմռան սեզոնին՝ հասնելով 85 ԱՄՆ դոլար բարելի դիմաց, սակայն հետագայում ակնկալվում է, որ միտումը կփոխվի, և որոշ ժամանակ գների ավելացում չի լինի: Դա պայմանավորված կլինի, տնտեսագետների կարծիքով, սպեկուլյացիոն ֆոնի թուլացմամբ, ինչի արդյունքում գները կամրապնդվեն 75-80 ԱՄՆ դոլար/բարել սահմանում: Նման պատկեր է ակնկալվում նաև թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղների շուկաներում. ոսկու գները կաճեն մինչև 825 ԱՄՆ դոլար ունցիայի դիմաց, իսկ պղնձի գները՝ մինչև 8500 ԱՄՆ դոլար տոննայի դիմաց:

Հացահատիկի միջազգային գների աճի բարձր տեմպերը կպահպանվեն այնքան ժամանակ, մինչև ձևավորվեն 2008/2009 տարեթվերի բերքի սպասումները, այսինքն՝ մինչև 2008 թվականի ապրիլ-մայիս ամիսները: Ընդ որում, աճը կդադարի միայն այն դեպքում, եթե այդ սպասումները լինեն բարենպաստ, հակառակ դեպքում հացահատիկի գների աճը կարող է շարունակվել:

Պետք է նշել, որ հացահատիկի գների աճի հետևանքով արդեն աճում են նաև այլ պարենային ապրանքների գները՝ միս, կաթնամթերք, կենդանական և բուսական յուղեր և այլն: Սակայն այս ապրանքների գծով ակնկալվում է, որ աճի տեմպերը չեն լինի այնքան բարձր, որքան հացահատիկի շուկայում՝ ինքնարժեքի և շահույթի ճշգրտման հաշվին:

Ընդհանուր առմամբ, արտաքին միջավայրից գնաճի ճնշումները էապես ավելացել են և լավագույն դեպքում կսկսեն թուլանալ միայն 2008 թվականի երկրորդ եռամսյակից սկսած, ընդ որում՝ միայն իրադարձությունների բավականին բարենպաստ զարգանալու դեպքում: Բնականաբար բոլոր ռիսկերը գնաճային ճնշումների ավելացման ուղղությամբ են:

Համախառն առաջարկ. Հաշվի առնելով տարվա երրորդ եռամսյակի զարգացումները՝ 2007 թվականի չորրորդ եռամսյակի ճյուղային կանխատեսումները ճշգրտվել են աճի ուղղությամբ:

Գյուղատնտեսության իրական աճի 2007 թվականի չորրորդ եռամսյակի ցուցանիշը վերանայվել է աճի ուղղությամբ՝ պայմանավորված ինչպես երրորդ եռամսյակում բուսաբուծության արտադրանքի փաստացի բարձր մակարդակով, այնպես էլ բանջարեղենի որոշ տեսակների (մասնավորապես՝ կարտոֆիլ և սոխ) հարուստ բերքի ակնկալիքներով: Միևնույն ժամանակ, անասնապահությունում ակնկալվում է աճի տեմպի որոշակի նվազում՝ պայմանավորված տարվա երկրորդ կեսից սկսված խոզերի հարկադրված սպանդով: Արդյունքում, գյուղատնտեսության ավելացված արժեքի իրական աճը չորրորդ եռամսյակում ակնկալվում է 8%-ի շրջանակում՝ շուրջ 6 տոկոսային կետով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը: Ինչպես երրորդ եռամսյակում, դա գնանկումային որոշ ճնշումներ է ձևավորելու սպառողական շուկայում, որը, սակայն, կարող է չեզոքացվել բնակչության եկամուտների ավելացման հաշվին:

Այնուհանդերձ, դեռևս կան ռիսկեր՝ կապված անասնապահությունում հնարավոր նվազման արձանագրման հետ, որի հետևանքով դեկտեմբերին, որը մսամթերքի իրացման հիմնական ամիսն է, մսամթերքի շուկայում կարող են գնաճային ճնշումներ ձևավորվել:

2008 թվականի առաջին երեք եռամսյակներում ակնկալվում է գյուղատնտեսության, միջին հաշվարկով, շուրջ 3% իրական աճ՝ ճշգրտված 2007 թվականին դրսևորված սեզոնայնությամբ:

Շինարարության իրական աճի ցուցանիշները 2007 թվականի չորրորդ եռամսյակի և 2008 թվականի երեք եռամսյակների համար նույնպես վերանայվել են աճի ուղղությամբ: Մասնավորապես, 2007 թվականի չորրորդ եռամսյակում ակնկալվող աճը 18%-ի շուրջ է՝ նախկինում կանխատեսված 17.5%-ի փոխարեն: Ցուցանիշների վերանայումը պայմանավորված է ինչպես երրորդ եռամսյակում փաստացի բարձր աճով, այնպես էլ ՀՀ ԿԲ կողմից հաշվարկվող բաղադրյալ ինդեքսներին համահունչ՝ չորրորդ եռամսյակում շինարարությունում սպասվող տնտեսական ակտիվության աճով:

2008 թվականի երեք եռամսյակներում շինարարության ճյուղի իրական աճը ակնկալվում է համապատասխանաբար 11%, 13% և 18%-ի շրջանակներում: Հաջորդ տարվա համար կանխատեսվող աճի նման բարձր ցուցանիշները պայմանավորված են տրանսպորտի, կապի, էներգետիկայի, մետաղագործության ճյուղերում շարունակվող ներդրումներով: Ակնկալվում է նաև, որ 2007 թվականին արձանագրված բնակարանային շինարարության ծավալների նվազումը հաջորդ տարի չի շարունակվի: Այնուամենայնիվ, շինարարության ճյուղից եկող ռիսկերը կանխատեսված աճի ցուցանիշի գերազանցման ուղղությամբ են՝ կապված մի քանի խոշոր նախագծերի հնարավոր իրականացման հետ:

Ինչ վերաբերում է ***արդյունաբերությանը***, չորրորդ եռամսյակի կանխատեսված ցուցանիշը չի վերանայվել՝ հաշվի առնելով երրորդ եռամսյակում արձանագրված փաստացի զարգացումները և ճյուղում գործող ընկերությունների սպասումների հիման վրա ՀՀ կենտրոնական բանկի կողմից կառուցված

տնտեսական ակտիվության ինդեքսի անփոփոխ մակարդակը: Կանխատեսվող 3.7% իրական աճն ապահովվելու է հիմնականում մշակող արդյունաբերության, առաջին հերթին՝ սննդի արդյունաբերության արտադրության ծավալների ավելացման հաշվին:

Արդյունաբերության ավելացված արժեքների կանխատեսված ցուցանիշները նույնպես վերանայվել են աճի ուղղությամբ՝ պայմանավորված քիմիական արդյունաբերությունում, մետաղագործությունում և շինանյութերի արտադրությունում սպասվող արտադրության ծավալների աճով: Արդյունքում, 2008 թվականի երեք եռամսյակներում արդյունաբերության ավելացված արժեքի իրական աճը ակնկալվում է 6.5-8% միջակայքում:

Արդյունաբերության ճյուղից եկող ռիսկերը կանխատեսված ցուցանիշների գերազանցման ուղղությամբ են և պայմանավորված են ադամանդագործության ենթաճյուղում հնարավոր զարգացումներով, մասնավորապես՝ ՌԴ ադամանդագործական ընկերության հետ կնքված պայմանագրի իրագործման ժամկետներով և ծավալներով:

Ծառայությունների ոլորտում ակնկալվում է աճի բարձր տեմպերի արձանագրում, որը հիմնականում ապահովվելու է տրանսպորտի և կապի, ինչպես նաև զբոսաշրջության հետ կապված ծառայությունների հաշվին: Արդյունքում, 2007 թվականի չորրորդ և 2008 թվականի առաջին երեք եռամսյակներում ծառայությունների ավելացված արժեքի իրական աճն ակնկալվում է 12.5-14% միջակայքում՝ պայմանավորված տրանսպորտի և կապի ոլորտներում նախկինում արված ներդրումների արդյունքում այդ ծառայությունների ծավալի ակնկալվող ավելացմամբ:

Տնտեսության ճյուղային զարգացումների նման ընթացքի պարագայում 2007 թվականին ՀՆԱ իրական աճն ակնկալվում է 13-14% միջակայքում:

2008 թվականի առաջին երեք եռամսյակներում ակնկալվում է 9.5-11.5% իրական ՀՆԱ աճ: Ընդորում, համաձայն ճյուղային զարգացումների գնահատումների՝ ՀՆԱ ընդհանուր ցուցանիշի հետ առնչվող ռիսկերը նշված ցուցանիշների գերազանցման ուղղությամբ են՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության և շինարարության ոլորտներում առկա ռիսկերի իրագործմամբ:

Համախառն պահանջարկ. Ըստ ԿԲ գնահատումների՝ 2007 թ. չորրորդ եռամսյակում և 2008 թ. առաջին երեք եռամսյակներում մասնավոր ներդրումները շարունակելու են մնալ հավասարակշռից էականորեն բարձր մակարդակի վրա: Մասնավոր սպառումը, եթե 2007 թ. անցած ժամանակահատվածում մոտ էր հավասարակշիռ մակարդակին, ապա կանխատեսվող 12-ամսյա ժամանակահատվածում գերազանցելու է այն՝ ավելացնելով գնաճային ճնշումները:

2007 թ. երրորդ եռամսյակում ապրանքների և ծառայությունների արտահանման ցուցանիշի գնահատումների հիման վրա կատարված կանխատեսումների համաձայն՝ հաջորդ եռամսյակների ցուցանիշները ճշգրտվել են աճի ուղղությամբ: Արտահանման աճը կպայմանավորվի ինչպես միջազգային շուկաներում հումքային ապրանքների գների բարձր մակարդակի պահպանմամբ, այնպես էլ արդյունաբերության բարենպաստ զարգացումներով: Տարեվերջին ապրանքների և ծառայությունների արտահանման դոլարային ծավալների աճի ճշգրտված ցուցանիշը կկազմի 25-28%, իսկ 2008 թ. երրորդ եռամսյակում՝ 21-24%: Նշված զարգացումները համահունչ են արդյունաբերության ենթաճյուղերի, մասնավորապես՝ սննդի և քիմիական արդյունաբերության, գունավոր մետաղագործության, շինանյութերի արտադրության և էներգետիկայի ենթաճյուղերում բարձր աճի սպասումներին:

2007 թ. երրորդ եռամսյակի գնահատումների համաձայն՝ հաջորդ եռամսյակների ներմուծման ցուցանիշները ճշգրտվել են աճի ուղղությամբ: Ակնկալվում է, որ կշարունակվեն հումքային, ներդրումային և սպառողական ապրանքների ներմուծման աճի բարձր տեմպերը: Արդյունքում, տարեվերջին ակնկալվում է ապրանքների և ծառայությունների դոլարային ծավալների մոտ 42-45%, իսկ 2008 թ. երրորդ եռամսյակում՝ 25-27% աճ:

Աշխատանքի շուկա. 2007 թվականի չորրորդից 2008 թվականի առաջին երեք եռամսյակներում սպասվում է, որ աշխատանքի շուկայի ազդեցությունը գնաճի վրա կլինի խթանող, քանի որ աշխատավարձի աճը դեռևս կշարունակի գերազանցել արտադրողականության աճի ցուցանիշը: Սակայն արդեն 2007 թվականի երկրորդ կիսամյակի սկզբից աշխատանքի շուկայի կողմից գնաճային ճնշումները սկսել են զգալիորեն մեղմվել՝ ի հաշիվ արտադրողականության աճի բարձր ցուցանիշի արձանագրման, ինչպես նաև տնտեսությունում աշխատավարձի աճի տեմպերի փոքր-ինչ նվազման:

Նախնական գնահատումների համաձայն՝ ոչ առևտրային բնույթի փոխանցումների աճի բարձր տեմպերը պահպանվել են նաև երրորդ եռամսյակում: Գրանցվել է վերջիններիս տ/տ 38% աճի ցուցանիշ (հունվար-օգոստոսի տվյալներով՝ ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքն ավելացել է

36.6%-ով): Նշված աճի իներցիայի և Ռուսաստանում ակնկալվող տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանման պարագայում, որի մասին են վկայում նաև միջազգային կազմակերպությունների կողմից տրված գնահատումները, տրանսֆերտները շարունակելու են պահպանել աճի տեմպերը՝ կազմելով 27-32%:

Համախմբված բյուջե. 2007 թվականի չորրորդ եռամսյակում բյուջեի ծախսերի ընդլայնող ազդեցությունն ավելի մեծ է լինելու՝ կազմելով 2.1%, քանի որ տարեկան ճշգրտված ծրագրի ապահովումն ընկնում է տարվա երկրորդ կեսի, մասնավորապես՝ չորրորդ եռամսյակի վրա: Այսպիսով, տարվա արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը, պետական բյուջեի ճշգրտված ծրագրի կատարման պարագայում, ամբողջական պահանջարկի վրա կունենա 1.2 տոկոս ընդլայնող ազդեցություն: Ինչ վերաբերում է 2008 թվականին, ապա «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին օրենքի» նախագծի ցուցանիշների և դրանց հիման վրա կատարված եռամսյակային բաշխվածության համաձայն՝ տարվա առաջին երեք եռամսյակներում ակնկալվում է ընդլայնող ազդեցություն, այդ թվում՝ հատկապես սոցիալական ծախսերի կտրուկ ավելացման հետևանքով: Նշենք, որ ըստ ազդակների՝ 2008 թ. առաջին եռամսյակում սպասվում է 2.5 տոկոս, երկրորդ եռամսյակում՝ 1.7 տոկոս, իսկ երրորդ եռամսյակում՝ 0.9 տոկոս ընդլայնող ազդեցություն:

Հաշվի առնելով իրական և հարկաբյուջետային հատվածներում ակնկալվող միտումները՝ կարելի է եզրակացնել, որ 2007 թ. չորրորդ եռամսյակից սկսած՝ ամբողջական պահանջարկի զարգացումներով պայմանավորված ներքին գնաճային ճնշումները կտրուկ ավելանալու են:

Փող և վարկ. Փողի պահանջարկը գնահատվել է դրամային զանգվածի կանխատեսումների հիման վրա, որտեղ որպես անկախ փոփոխականներ հանդես են եկել դրամային զանգվածի նախորդ միտումները և իրական ՀՆԱ-ն:

Ըստ Կենտրոնական բանկի ակնկալիքների՝ 2007 թվականի հոկտեմբերից 2008 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում կշարունակվի տնտեսության դրամայնացման ակտիվ գործընթացը, ինչով պայմանավորված՝ կպահպանվեն փողի ագրեգատների և մասնավորապես դրա դրամային տարրերի աճի տարեկան բարձր տեմպերը: Սակայն դրանց աճի տեմպերը աստիճանաբար կդանդաղեն՝ պայմանավորված 2007-ին արձանագրված մեծածավալ աճի արդյունքում դրամավարկային ցուցանիշների ձևավորված բարձր մակարդակով: Այսինքն, պահպանելով բացարձակ աճի նույն եռամսյակային համամասնությունները՝ տ/տ աճի տեմպերը աստիճանաբար դանդաղելու են:

2007 թվականի անցած ինն ամիսներին արձանագրված անհամեմատ բարձր աճի տեմպերից հետո սեպտեմբերին հաջորդող մեկ տարվա ընթացքում ակնկալվում է նաև տնտեսության վարկավորման աճի տեմպերի աստիճանական դանդաղում, սակայն այդ ժամանակահատվածում կպահպանվի վարկավորման ծավալների մեծ աճը բացարձակ արտահայտությամբ՝ պայմանավորված հիփոթեքային և սպառողական վարկերի շուկաներում բանկերի ակտիվ գործունեության ծավալման ծրագրերով: Այսինքն, առաջիկա մեկ տարվա կտրվածքով տնտեսության վարկավորման տ/տ աճի միջին եռամսյակային ցուցանիշը կպահպանվի շուրջ 40%-ի սահմաններում:

Գնաճի կանխատեսումներ. Տնտեսության առանձին հատվածների կանխատեսումների պայմաններում կանխատեսվել է նաև առաջիկա 12-ամսյա ժամանակահատվածի գնաճը: Ըստ ապրանքատեսակների մոդելի արդյունքների՝ շուկայի սպասումների ներքո ձևավորվող տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի վարկածի պայմաններում 2007 թ. սեպտեմբերին հաջորդող 12-ամսյա գնաճը կկազմի 5.6%, 2008 թ. երկրորդ եռամսյակում՝ 6.3%, իսկ 2007 թ. դեկտեմբերին՝ 4.9%: Ընդ որում, մինչև 2008 թ. երկրորդ եռամսյակի ավարտը բազային սցենարում ներառված են ցորենի և հացամթերքի ներքին գների աճի 2.8 և գազի լրահատկացման ենթադրվող ավարտով պայմանավորված՝ 1.2 տոկոսային կետով նպաստումները ընդհանուր գնաճին:


Հավանական են հետևյալ զարգացումները, որոնք կարող են գնաճի փաստացի ցուցանիշը կանխատեսվածից շեղել աճի ուղղությամբ.

- նավթի և պարենային ապրանքների (այդ թվում՝ հացահատիկի) միջազգային գների՝ կանխատեսված մակարդակից բարձր աճ. ընդ որում, նավթի գների աճը պայմանավորված է ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ արտաքին տնտեսական զարգացումներով,
- ամբողջական պահանջարկի կազմում սպառման բաղադրիչի՝ կանխատեսվածից բարձր աճ և սպառման դրական ճեղքվածքի խորացում:

Հավանական են նաև ստորև նշված զարգացումները, որոնք կարող են գնաճի փաստացի ցուցանիշը շեղել կանխատեսվածից՝ նվազման ուղղությամբ.

- արտահանման արտարժութային ծավալների աճի ավելացման (հիմնական մետաղների գների՝ կանխատեսվածից ավելի բարձրացման արդյունքում), ինչպես նաև սպասվածից ավելի կապիտալ ներհոսքի պայմաններում դրամի փոխարժեքի արժևորման պարագայում ներմուծվող ապրանքների գների նվազում:

Գների տարեկան տոկոսային փոփոխություններ




2007 թվականի սեպտեմբերին կանխատեսված գնաճը IV եռամսյակի համար (4.9%)

Միջակայք	*4%-ից պակաս*	*4.0-4.5%*	*4.5-5.0%*	*5.0-5.5%*	*5.5-6.0%*	6.0%-ից ավելի
Հավանականություն	*<1*	*15.9*	*57.5*	23.2	2.0	<1

2007 թվականի սեպտեմբերին կանխատեսված գնաճը 2008 թվականի III եռամսյակի համար (5.6%)

Միջակայք	*3%-ից պակաս*	*3-4%*	*4-4.5%*	*4.5-5.0%*	*5-5.5%*	*5.5-6%*	*6-6.5%*	*6.5-ից 7.0%*	7.0%-ից ավելի
Հավանականություն	*<1*	*3.6*	*7.3*	*15.2*	*20.2*	*28.0*	*15.0*	9.8	<1



2007 թվականի հունիսին կանխատեսված գնաճը IV եռամսյակի համար (5.0%)

Միջակայք	4%-ից պակաս	4.0%-4.5%	4.5%-5.0%	5.0%-5.5%	5.5%-6.0%	6.0-6.5%	6.5%-ից ավելի
Հավանականություն	<1	6.4	30.7	36.3	19.6	5.7	<1

2007 թվականի հունիսին կանխատեսված գնաճը 2008 թվականի II եռամսյակի համար (4.6%)

Միջակայք	3%-ից պակաս	3%-4%	4%-4.5%	4.5%-5%	5%-5.5%	5.5-6%	6-6.5	6.5%-ից ավելի
Հավանականություն	<1	6.2	16.5	28.5	23.1	15.9	8.3	<1

Այսպիսով, 2007 թ. դեկտեմբերի համար գնաճի կանխատեսվող ցուցանիշը նախորդ կանխատեսման համեմատությամբ չի փոխվել՝ կազմելով մոտ 4.9%, իսկ 2007 թ. սեպտեմբերին 2008 թ. երկրորդ եռամսյակի համար կանխատեսված գնաճը նախորդ կանխատեսման համեմատ ավելացել է 1.7 տոկոսային կետով (6.3%՝ 4.6%-ի համեմատ)՝ պայմանավորված նավթի և պարենային ապրանքների միջազգային գների աճով, ինչպես նաև գազի գների լրահատկացման ենթադրվող ավարտով:

Դրամավարկային քաղաքականության ուղղությունները կանխատեսվող 12-ամսյա ժամանակահատվածում

Հաշվի առնելով 2007 թ. երրորդ եռամսյակի զարգացումները և հետագա 12-ամսյա ժամանակահատվածի համար Կենտրոնական բանկի կանխատեսումները՝ ԿԲ խորհուրդը քննարկեց դրամավարկային քաղաքականության ուղղությունները:

ԿԲ խորհուրդն արձանագրեց, որ չնայած երրորդ եռամսյակում փաստացի գնաճի՝ նպատակային միջակայքում ձևավորմանը՝ արտաքին հատվածի գնաճային ճնշումները 2007 թ. երրորդ եռամսյակի վերջում էականորեն աճել են և պահպանվելու են կանխատեսվող ժամանակահատվածում: Միաժամանակ, խորհուրդը համակարծիք է նաև, որ ներքին միջավայրի ճնշումները ևս տարեվերջին էականորեն ուժգնանալու են: Այս պայմաններում խորհուրդը նշանակալի ռիսկեր է տեսնում հատկապես 2008 թվականի նպատակային թիրախի ապահովման ուղղությամբ: Միջազգային շուկայում պարենային ապրանքների և նավթի գների բարձրացման հետևանքով լրացուցիչ ներքին գնաճային ճնշումների առկայության պայմաններում ԿԲ-ն հետևողական է լինելու ամբողջական պահանջարկի զարգացումներով պայմանավորված՝ գնաճային ճնշումները զսպելու և գնաճը նպատակային մակարդակում պահպանելու ուղղությամբ:

Հացահատիկի, պարենային այլ ապրանքների և նավթի միջազգային գների աճի, ինչպես նաև 2007 թ. բյուջետային ծախսերի հնարավոր տնտեսումների և 2008 թ. իրական հատվածի տարաբնույթ զարգացումների վերաբերյալ գնահատումներից ելնելով՝ խորհրդի նիստում քննարկվեցին ԿԲ ռեպո տոկոսադրույքը 0.25 կամ 0.5 տոկոսային կետով բարձրացնելու տարբերակները:

Արդյունքում, ԿԲ խորհուրդը որոշեց բարձրացնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 5.0%: Լոմբարդային վարկի և ավանդի տոկոսադրույքները սահմանվեցին համապատասխանաբար 8.0% և 2.0%:

Տնտեսության զարգացման գնահատված հեռանկարների պահպանման պարագայում խորհուրդը հավանական է համարում տոկոսադրույքների հետագա ճշգրտումը:

2. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ

ՀՀ տարածքում գործող բանկերը

30.09.2007 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր: 2007 թ. երրորդ եռամսյակի ընթացքում բանկերի մասնաճյուղերի քանակն ավելացել է 12-ով և կազմել 318:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

2007 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն աճել է 5.8%-ով (8.2 մլրդ դրամով) և 30.09.2007 թ. դրությամբ կազմել 148.4 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է եռամսյակի ընթացքում բանկային համակարգի կողմից 6.7 մլրդ դրամ շահույթի ապահովմամբ և երեք բանկի կողմից կանոնադրական հիմնադրամի ընդհանուր 6.2 մլրդ դրամ համալրմամբ: Եռամսյակի ընթացքում 3 բանկեր բաշխել են ընդհանուր 4.8 մլրդ դրամ շահաբաժիններ (4.1 մլրդ դրամը բաժին է ընկել մեկ բանկի, որի բաշխված շահաբաժիններն ուղղվել են կանոնադրական հիմնադրամի համալրմանը):

Հաշվետու եռամսյակում շարունակվել են վարկային ներդրումների արագատեմպ աճի միտումները, ինչի արդյունքում ռիսկով կշռված ակտիվների աճի տեմպը գերազանցել է նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալների աճի տեմպերը: Նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալներն ավելացել են համապատասխանաբար 11.7%-ով և 12.0%-ով, իսկ ռիսկով կշռված ակտիվները՝ 16.4%-ով: Վերջինս հանգեցրել է կապիտալի համարժեքության ցուցանիշների փոքր-ինչ նվազման. ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը նվազել է 1.3 տոկոսային կետով, հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 1.2 տոկոսային կետով և կազմել են համապատասխանաբար 31.4% և 30.2%:

Եռամսյակի ընթացքում ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 1.6 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 22.3%:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 15.6%-ով (69.5 մլրդ դրամով) և 30.09.2007 թ. դրությամբ կազմել 515.6 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 20 բանկերում և նվազում՝ 1 բանկում:

Պարտավորությունների աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ ընդհանուր ավանդների (ցպահանջ և ժամկետային) և բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ) այլ պարտավորությունների աճերի:

Եռամսյակի ընթացքում ՀՀ դրամով պարտավորություններն աճել են 21.1%-ով, իսկ արտարժույթով պարտավորությունները՝ 10.3%-ով: Արդյունքում՝ նախորդ եռամսյակի համեմատ, ընդհանուր պարտավորությունների կազմում ՀՀ դրամով պարտավորությունների տեսակարար կշիռը աճել է 2.3 տոկոսային կետով և կազմել 51.3%:


Եռամսյակի ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանց համընդհանուր ավանդները (ցպահանջ և ժամկետային միջոցների) ավելացել են 13.6%-ով (43.1 մլրդ դրամով) և կազմել 359.1 մլրդ դրամ:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ցպահանջ պարտավորություններն աճել են 12.9%-ով (22.0 մլրդ դրամով), իսկ ժամկետային ավանդները՝ 14.5%-ով (21.1 մլրդ դրամով):

Իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդներում (ցպահանջ և ժամկետային միջոցներ) դրամային միջոցները աճել են 19.9%-ով (30.4 մլրդ դրամով), իսկ արտարժութային միջոցները՝ 7.7%-ով (12.6 մլրդ դրամով):

Իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդների մեծության 51.1%-ը կազմել են դրամային ավանդները (եռամսյակի սկզբին՝ 48.4%): Իրավաբանական անձանց համընդհանուր ավանդներում ՀՀ դրամով ներգրաված միջոցների կշիռը եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 63.6%, իսկ ֆիզիկական անձանց համընդհանուր ավանդներում՝ 39.6% (նախորդ եռամսյակի վերջի դրությամբ վերոնշյալ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 61.4% և 36.6%):

Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Ոչ ավանդային պարտավորություններում եռամսյակի ընթացում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. աճել են բանկերի լորո թղթակցային հաշիվները՝ 37.0%-ով (1.5 մլրդ դրամով), բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ) այլ պարտավորությունները՝ 51.1%-ով (19.7 մլրդ դրամով) և ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները՝ 20.7%-ով (4.1 մլրդ դրամով): Նվազել են այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները՝ 2.9%-ով (813 մլն դրամով):

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԸ

2007 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ակտիվներն ավելացել են 13.2%-ով (77.6 մլրդ դրամով) և 30.09.07 թ. դրությամբ կազմել 664.0 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 19 բանկերում, իսկ նվազում՝ 2 բանկերում:

ՀՀ դրամով ակտիվներն ավելացել են 14.3%-ով (51.4 մլրդ դրամով), իսկ արտարժույթով ակտիվները՝ 11.6%-ով (26.2 մլրդ դրամով), որի արդյունքում ընդհանուր ակտիվների կազմում ՀՀ դրամով ակտիվների տեսակարար կշիռը, նախորդ եռամսյակի համեմատ, աճել է 0.6 տոկոսային կետով և կազմել 61.9%:

Բանկային համակարգի ակտիվների աճը հիմնականում ապահովվել է տնտեսության վարկավորման հաշվին. ակտիվների աճի 80%-ը բաժին է ընկել տնտեսության վարկերի աճին:


Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերը դիտարկվող ժամանակահատվածում ավելացել են 21.4%-ով (62.3 մլրդ դրամով):

Ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 19.7%-ով (28.5 մլրդ դրամով), իրավաբանական անձանց վարկերը՝ 22.7%-ով (31.4 մլրդ դրամով), իսկ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 29.6%-ով (2.4 մլրդ դրամով): 30.09.2007 թ. դրությամբ բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը կազմել է 353.3 մլրդ դրամ, որի 48.9%-ը բաժին է ընկել ֆիզիկական անձանց, 48.1%-ը՝ իրավաբանական անձանց 3.0%-ը՝ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին:

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) ընդհանուր աճել են 19.4%-ով (63.1 մլրդ դրամով) և կազմել 388.2 մլրդ դրամ: Դրամով վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 19.8%-ով (ի հաշիվ ռեզիդենտների դրամային վարկային ներդրումների աճի) և կազմել 224.0 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկային ներդրումները՝ 18.9%-ով (ի հաշիվ ռեզիդենտ-

ների արտարժութային վարկային ներդրումների աճի) և կազմել 164.2 մլրդ դրամ: Ընդհանուր վարկային ներդրումներում և դեբիտորական պարտքերում դրամով ներդրումների տեսակարար կշիռն ավելացել է 0.2 տոկոսային կետով և կազմել 57.7%:

Բանկային համակարգի ակտիվների ծավալները




1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր (ներառյալ ռեպո համաձ-գրեր)
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխ.
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկ.)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը նվազել են 4.8%-ով (0.7 մլրդ դրամով), իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 20.6%-ով (63.8 մլրդ դրամով):

Դարձյալ խոշոր աճ են ապահովել սպառողական, առևտրի և հիփոթեքային վարկերը՝ որոնք ավելացել են համապատասխանաբար 17.8%-ով (15.5 մլրդ դրամով), 25.3%-ով (15.2 մլրդ դրամով) և 30.8%-ով (10.8 մլրդ դրամով): Վարկային ներդրումների կառուցվածքում ավելացել են առևտրի ճյուղի և հիփոթեքային վարկավորման տեսակարար կշիռները:

Բանկային համակարգի վարկային ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ,
5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված,
8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Բանկային համակարգի ստանդարտ ակտիվների տեսակարար կշիռը եռամսյակի ընթացքում նվազել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 97.3%-ը: 30.09.2007 թ. դրությամբ բանկային համակարգի «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 1.8%-ը՝ «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.6%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.3%-ը:

Բանկային համակարգի Ն2[1] ընդհանուր իրացվելիության գործակիցը եռամսյակի ընթացքում նվազել է 2.0 տոկոսային կետով, իսկ Ն2[2] ընթացիկ իրացվելիության գործակիցը՝ 4.9 տոկոսային կետով և կազմել են համապատասխանաբար 34.7% և 93.8%:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2007 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում բանկային համակարգն ապահովել է 16.7 մլրդ դրամ զուտ շահույթ, ինչը գերազանցել է 2006 թվականի նույն ժամանակաշրջանի զուտ շահույթը 25.6%-ով: Հաշվետու ժամանակահատվածում 20 բանկեր աշխատել են շահույթով և մեկ բանկ՝ վնասով:

Ինն ամիսների ընթացքում բանկային համակարգն ապահովել է 79.7 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 59.2 մլրդ դրամի համախառն ծախսեր: Բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 20.5 մլրդ դրամ:

Համախառն եկամուտների կազմում տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռները փոքր-ինչ ավելացել են, իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը՝ նվազել: 30.09.2007 թ. տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 52.7%, ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 23.7% և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը՝ 23.6%: Տոկոսային եկամուտների 81.2%-ը բաժին է ընկել տնտեսության վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտներում ստացված միջնորդավճարները կազմել են 51.4%-ը, իսկ արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտները՝ 28.8%-ը:

Համախառն ծախսերում մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ոչ տոկոսային ծախսերին, որը կազմել է 44.5%, իսկ տոկոսային ծախսերին և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին բաժին են ընկել համապատասխանաբար 21.0% և 34.5% տեսակարար կշիռներ: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 43.5%-ը, բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին, իսկ տոկոսային ծախսերում 55.7% տեսակարար կշիռը բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին:

Վարկային կազմակերպություններ[1]

Հաշվետու եռամսյակի ընթացքում ունիվերսալ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա է ստացել «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» առևտրային կոոպերատիվը: 30.09.2007 թ. դրությամբ ՀՀ տարածքում վարկային կազմակերպության լիցենզիա են ունեցել 20 ընկերություններ, որոնց մասնաճյուղերի քանակը կազմել է երեսունհինգ (մասնաճյուղերի քանակն ավելացել է երկուսով):

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը 2007 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում աճել է 19.7%-ով (6.3 մլրդ դրամով) և կազմել 38.6 մլրդ դրամ, որը բանկային համակարգի ակտիվների ծավալի 5.8%-ն է:

Վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն աճել է 24.4%-ով (6.3 մլրդ դրամով), ընդ որում՝ դրամային վարկերը աճել են 3.3 մլրդ դրամով, արտարժութային վարկերը՝ 3.0 մլրդ դրամով: Ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 15.8%-ով և կազմել 21.1 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց վարկերն ավելացել են 42.6%-ով և կազմել 10.8 մլրդ դրամ: Լիզինգի ու ֆակտորինգի ընդհանուր ծավալը եռամսյակի ընթացքում աճել է 8.8%-ով՝ կազմելով 2.5 մլրդ դրամ:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալն ավելացել է 20.1%-ով և կազմել 35.1 մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներում համեմատաբար խոշոր աճեր են

[1] 30/09/2007 թ. դրությամբ ներկայացված են 19 վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշները, քանի որ լիցենզավորված «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» վարկային կազմակերպությունը դեռևս հաշվետվություններ չի ներկայացրել Կենտրոնական բանկ:

արձանագրվել առևտրի ճյուղի, հիփոթեքային և սպառողական վարկերում՝ համապատասխանաբար 1.1 մլրդ դրամով, 951 մլն դրամով և 778 մլն դրամով: 30.09.2007 թ. դրությամբ վարկային ներդրումներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել առևտրի ոլորտի վարկավորմանը՝ 23.3%: Արդյունաբերության վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է 12.3%, սպառողական վարկերինը՝ 16.8%, հիփոթեքային վարկերինը՝ 11.5%, գյուղատնտեսության վարկերինը՝ 8.9%, իսկ այլ ճյուղերինը՝ մնացյալ 27.2%-ը:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ավելացել է 0.6 տոկոսային կետով և կազմել 97.4%:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 15.4%-ով (1.5 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 11.0 մլրդ դրամ: Աճը հիմնականում պայմանավորվել է երկու վարկային կազմակերպությունների կողմից ընդհանուր 926 մլն դրամի չափով կանոնադրական հիմնադրամի համալրմամբ և եռամսյակի ընթացքում ապահոված 561 մլն դրամ շահույթով:

Ինն ամիսների շահույթը կազմել է 1.3 մլրդ դրամ: Տարեսկզբից առ 30.09.2007 թ. տասներեք վարկային կազմակերպություններ աշխատել են շահույթով, վեցը՝ վնասով:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր պարտավորությունների մեծությունը աճել է 21.5%-ով (4.9 մլրդ դրամով)՝ հիմնականում ի հաշիվ բանկերի նկատմամբ պարտավորությունների 3.3 մլրդ դրամ և իրավաբանական անձանց ժամկետային փոխառությունների 777 մլն դրամ աճերի:

2007 թվականի երրորդ եռամսյակի վերջին ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքի վերաբերյալ


Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները 2007 թվականի երրորդ եռամսյակի վերջին կազմել են 185 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 139 մլն դոլարի փոխարեն: 2007 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 78 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ծեռք բերված վարկերի դիմաց կատարել են 32 մլն դոլար հիմնական գումարի մարումներ:*

2007 թվականի երրորդ եռամսյակի վերջի դրությամբ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են՝ Լատվիան, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 16.8% (նախորդ եռամսյակում՝ 16.8 %), ԱՄՆ-ը՝ 10.0 % (նախորդ եռամսյակում՝ 13.7%), Ղազախստանը՝ 9.3 % (նախորդ եռամսյակում՝ 12.7%), Գերմանիան՝ 8.2 % (նախորդ եռամսյակում՝ 10.2 %): Վարկերի մոտ 24 %-ը տրվել է միջազգային կազմակերպությունների կողմից:

Արտաքին աշխարհից ներգրավված վարկերը բանկերը հիմնականում տեղաբաշխել են տնտեսության հետևյալ հատվածներում՝ 78 մլն դոլարը՝ առևտրի, 43 մլն դոլարը՝ սպառողական և հիփոթեկային վարկերի, 24 մլն դոլարը՝ ֆինանսական և 15 մլն դոլարը՝ արդյունաբերության հատվածներում:

2007 թվականի երրորդ եռամսյակի վերջի դրությամբ ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի համեմատ աճել է և կազմել 8.0 %: Արտաքին վարկերի մոտ 36.0 %-ը լողացող (LIBOR, EURIBOR, ԿԲ ՊՊ) տոկոսադրույքով են: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 3.5 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը նվազել է և կազմել ներգրավված վարկերի 14.2 %-ը՝ նախորդ եռամսյակի վերջի 30.5 %-ի փոխարեն:

ՀՀ առևտրային բանկերի մասնավոր պարտքը 1999-2007 թթ.



** Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:*

Ապահովագրական ընկերություններ

2007 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ տարածքում գործում են 11 ապահովագրական ընկերություններ:

Հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովագրական ընկերությունների ակտիվներն աճել են 13.7%-ով՝ կազմելով 8.4 մլրդ դրամ, սեփական կապիտալը՝ 11.1%-ով՝ կազմելով 5.4 մլրդ դրամ, պարտավորությունները՝ 18.9%-ով և կազմել 3.0 մլրդ դրամ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների կառուցվածքը փոփոխությունների գրեթե չի ենթարկվել: Ընդհանուր ակտիվներում կրկին մեծ տեսակարար կշիռ ունեն ընթացիկ ավանդները և այլ ներդրումները (33% տեսակարար կշիռ), արժեթղթերում ներդրումները (15% տեսակարար կշիռ), ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարները (13% տեսակարար կշիռ) և բանկային հաշիվները (11% տեսակարար կշիռ):

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր պարտավորությունների 81%-ը բաժին է ընկնում չվաստակած ապահովագրավճարների պահուստին (48% տեսակարար կշիռ) և համապահովագրողներին, վերապահովագրողներին փոխանցվելիք գումարներին (33% տեսակարար կշիռ):

Ապահովագրական ընկերությունների շահույթի մեծությունը 2007 թվականի ինն ամիսներին (հաշվետու ժամանակաշրջանի շահույթ՝ նվազեցված շահութահարկի գծով ծախսի գումարի չափով) կազմել է 585 մլն դրամ: Շահույթով են աշխատել 9, իսկ վնասով՝ 2 ընկերություն:

Տարեսկզբից մինչև հաշվետու եռամսյակի վերջը հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը կազմել է 4.4 մլրդ դրամ, ինչը 14.0%-ով պակաս է 2006 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունից:

Վերապահովագրողներին փոխանցած ռիսկերի գծով ապահովագրավճարների մեծությունը 2.1 մլրդ դրամ է:

Առաջին երեք եռամսյակների ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 651.2 մլն դրամ (2006 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում՝ 162.6[2] մլն դրամ:)

2007 թվականի առաջին երեք եռամսյակների տվյալներով՝ վնասաբերության ցուցանիշը (ապահովագրական հատուցումներ/ապահովագրավճարներ) կազմել է 14.9%:

Երրորդ եռամսյակի վերջի դրությամբ ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերի քանակը կազմել է 38.1 հազար հատ (նախորդ եռամսյակի վերջի դրությամբ՝ 34.3 հազար հատ): Գործող պայմանագրերի ապահովագրական գումարների մեծությունը 30.09.2007 թվականի դրությամբ կազմել է 1.64 տրլն դրամ (նախորդ եռամսյակի վերջի դրությամբ՝ 2.44 տրլն դրամ):

Արժեթղթերի շուկա

30.09.2007 թ. դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն են իրականացրել 15 ընկերություններ: Դրանցից 6-ը, բացի բրոքերային գործունեության լիցենզիայից, ունեն նաև հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիա, իսկ 3-ը՝ նաև պահառուի լիցենզիա:

Հաշվետու եռամսյակի ընթացքում դադարեցվել են «Գլոբալ Բոնդ» ՍՊԸ-ի, «Ակրոբրոք» ՍՊԸ-ի և «Այտի Բրոկ Դիլ Տրաստ» ՍՊԸ-ի բրոքերային գործունեության լիցենզիաները: Բրոքերային (դիլերային) գործունեության, արժեթղթերի հավատարմագրային կառավարման և պահառության գործունեության լիցենզիաներ են տրամադրվել «Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ-ին:

ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված (բրոքերային և դիլերային) գործունեության շրջանակներում իրականացվել է 20.8 մլրդ դրամի առք ու վաճառքի գործառնություն (նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 29.2%-ով), ընդ որում, դիլերային գործառնությունների ծավալը կազմել է մասնագիտացված գործունեության 84.3%-ը: Պարտատոմսերով գործառնությունների ծավալը կազմել է արժեթղթերով գործառնությունների 96.8%-ը կամ 20.1 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ ավելանալով 29.9%-ով: Հաշվետու եռամսյակի ընթացքում կորպորատիվ արժեթղթերով առք ու վաճառքի գործառնությունների ծավալը աճել է 2.6 անգամ՝ կազմելով 2.0 մլրդ դրամ: Բաժնետոմսերով առք ու վաճառքի գործառնությունների ծավալը կազմել է 596 մլն դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ նվազելով 4.9%-ով:

---

[2] Նշված ցուցանիշում ներառված չեն ավիացիոն ռիսկերի գծով ապահովագրական հատուցումները՝ 26.1 մլրդ դրամ գումարի չափով:

Պետական պարտատոմսերով առք ու վաճառքի գործառնությունները կազմել են 18.1 մլրդ դրամ, ընդ որում՝ շրջանառության մեջ ամենամեծ մասնաբաժինն ունեն պետական միջին ժամկետայնության պարտատոմսերը՝ 43.1%: Երկարաժամկետ և կարճաժամկետ պարտատոմսերով առք ու վաճառքի գործառնությունների մասնաբաժինները պետական պարտատոմսերով գործառնությունների ընդհանուր ծավալում կազմել են համապատասխանաբար 36.2% և 20.7%:

2007 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում մասնագիտացված անձանց կողմից իրականացված ռեպո գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 14.9%-ով և կազմել է 79.2 մլրդ դրամ, որից 24.9 մլրդ դրամը բաժին է ընկնում երկարաձգված գործարքներին:

Հավատարմագրային կառավարման շրջանակներում հաշվետու եռամսյակի ընթացքում կնքվել են 2.3 մլրդ դրամի գործարքներ:

2007 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվել է 713 մլն դրամ ծավալով գործարք, որից 78.4%-ը կազմել են բաժնետոմսերով գործարքները: Եռամսյակի ընթացքում բորսայական առևտրին մասնակցել է 6 մասնագիտացված ընկերություն:

30.09.2007 թ. դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 718 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը կազմել է 129.5 հազար մարդ:

2007 թվականի երրորդ եռամսյակի վերջի դրությամբ ֆոնդային բորսայում ցուցակված են եղել թվով 34 հաշվետու թողարկողների արժեթղթեր: Հաշվետու թողարկող ընկերություններից 2-ը բանկ են: Ընկերություններից 4-ը վարկանշվում են ՀՀ ԿԲ կողմից: Բորսայական առևտրի առարկա է հանդիսացել 6 հաշվետու թողարկողի արժեթուղթ:

Հաշվետու եռամսյակի ընթացքում կորպորատիվ պարտատոմսեր են տեղաբաշխել «Շեն Կոնցեռն» ՓԲԸ-ն, ACP «Արմենիան Քափըր Փրոգրամ»-ը և «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն: Տեղաբաշխման ընդհանուր ծավալը կազմել է 1.4 մլրդ դրամ:

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացրել «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նախագծով սահմանվում է ոչ ռեզիդենտների և ռեզիդենտների միջև կնքված՝ արտարժույթով վճարում նախատեսող գործարքներում գնանշումները արտարժույթով իրականացնելու դրույթ:

Այդ փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով՝

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ընթացիկ արժութային գործարքների դիմաց անկանխիկ վճարումները և կապիտալի շարժի ու ֆինանսական արժութային անկանխիկ գործարքները կարող են իրականացվել նաև արտարժույթով իրավաբանական անձանց միջև, անհատ ձեռնարկատերերի միջև, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի միջև, սակայն այդպիսի գործարքներում, նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, գնանշումները պետք է կատարվեն Հայաստանի Հանրապետության դրամով: Ստեղծվում է հակասական իրավիճակ. անձը իրավունք է ունենում վճարումներ կատարելու արտարժույթով, սակայն այդպիսի գործարքի գնանշումները պետք է կատարվեն ՀՀ դրամով:

Գործնականում անելանելի իրավիճակից դուրս գալու համար այդպիսի գործարքներում կողմերը հաստատագրում են ՀՀ դրամի նկատմամբ արտարժույթի փոխարժեք, որպեսզի գործարքը կնքելու և վճարում իրականացնելու պահին վճարի չափը համապատասխանի կողմերի իրական կամքին: Որոշակի դժվարություններ են առաջանում, երբ կողմերը գործարքներում չեն սահմանում ՀՀ դրամի նկատմամբ արտարժույթի փոխարժեք: Օրենսդրորեն բացակայում է այն դրույթը, թե ինչպես կարելի է արտարժույթով վճարում կատարել, եթե տվյալ գործարքում գործարքի գինը գնանշված է ՀՀ դրամով, և կողմերը չեն պայմանավորվել արտարժույթի փոխարժեքի վերաբերյալ: Գործնականում խոչընդոտներ են ստեղծվում այդ

գործարքների իրականացման համար: Անհնար է դառնում արտարժույթ վճարելը, եթե այդ գործարքում գինը նշված է ՀՀ դրամով:

Այդ խնդիրների լուծմանն են ուղղված առաջարկվող փոփոխությունները:

2. ՀՀ կենտրոնական բանկը մշակել է նաև ««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և ««Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Նշված օրենքների փոփոխությունը պայմանավորված է գործող օրենսդրության հստակեցմամբ: ««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նպատակը օրենքի որոշ դրույթների հստակեցումն է, կիրառման արդյունքում առաջացած մի շարք տեխնիկական խնդիրների լուծման հնարավոր տարբերակների նախատեսումն է, ինչպես նաև օրենքի համապատասխանեցումը ԵՄ օրենսդրության որոշ պահանջներին: ««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներառում է հիմնականում տեխնիկական, խմբագրական, ինչպես նաև մի շարք բովանդակային լրացումներ և փոփոխություններ, մասնավորապես՝ հստակեցվում են մի շարք հասկացություններ, այդ թվում՝ «ավանդ» հասկացությունը, սահմանվում է «համատեղ բանկային ավանդ» հասկացությունը:

Նախագծով սահմանում է, որ եթե հաշիվների դրամական մնացորդը պակաս է *1000 հայկական դրամից*, ապա դրանք չեն երաշխավորվում, նախատեսվում է բանկերի՝ երաշխավորված ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգ ստեղծելու պարտականությունը, հստակեցվում են ավանդների հատուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ հոդվածները, Հիմնադրամի համար սահմանվում է պարտավորություն՝ ավանդատուների հաստատված պահանջներով հատուցումները վճարել պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, նախատեսվում է Հիմնադրամի ծախսերի վերադասակարգում: Նախագծում ներառվել է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում ներդրված ավանդների երաշխավորումը:

Ընդհանուր առմամբ, նախագծերի ընդունումը կնպաստի հատուցման գործընթացի կազմակերպման և ավանդատուների շահերի պաշտպանության արդյունավետության բարձրացմանը:

3. ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և վարկային կազմակերպությունների կողմից բանկային գործունեության լիցենզիա ստանալու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նշված նախագծի մշակումը պայմանավորված է.

- Վարկային կազմակերպությունների կողմից գործունեության տեսակի փոփոխման՝ բանկային գործունեության լիցենզիա ստանալու, ինչպես նաև վարկային կազմակերպությունների տիպերի փոփոխման հնարավորության ընձեռմամբ, դրա իրագործման առանձնահատկությունների սահմանմամբ և դրա համար անհրաժեշտ մեխանիզմների ներդրմամբ:
- Վարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանցից պարտատոմսեր տեղաբաշխելու միջոցով փոխառությունների ներգրավման հնարավորության նախատեսմամբ:
- Օրենքի որոշ դրույթների հստակեցմամբ և օրենքի տեքստում առկա թերությունների և վրիպումների ուղղման անհրաժեշտությամբ:

ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2007 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել և փոփոխվել են բանկային գործունեությանն առնչվող հետևյալ իրավական ակտերը.

- ՀՀ ԿԲ խորհրդի 10.07.2007 թ. թիվ 217 Ն և 218 Ն որոշումներով, համապատասխանաբար, փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿԲ խորհրդի 12.04.2004 թ. թիվ 145 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում և 25.12.2006 թ. թիվ 278 Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակեր-

պությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ում: Մասնավորապես.

ա) Բանկերին հնարավորություն է տրվել իրականացնելու վարկավորման շրջիկ գործունեություն, եթե բանկերի կողմից պահպանվում են Կանոնակարգ 1-ով սահմանված անվտանգության ապահովման նվազագույն պայմանները:

բ) Սահմանվել է, որ բանկերի մասնաճյուղերի և վերջիններիս ղեկավարների գրանցման ընթացքում որակավորման վկայականի առկայության պահանջը պարտադիր չէ, եթե բանկի մասնաճյուղը բանկի գլխամասի հետ աշխատում է իրական ժամանակի ռեժիմով, և բանկը ունի կադրերի ընտրության, աշխատակիցների մասնագիտական որակի բարձրացման և ղեկավարների նոր սերնդի պատրաստման, ինչպես նաև ներքին հսկողության արդյունավետ գործող համակարգ:

գ) ՀՀ ոստիկանությանը միացված շուրջօրյա անվտանգության գործող համակարգեր ունեցող բանկերի և վարկային կազմակերպությունների մասնաճյուղերը կարող են չիրականացնել օրվա մնացորդի ինկասացում, եթե տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը, և բանկի/վարկային կազմակերպության մասնաճյուղի տարածքներում տեղադրված է չհրկիզվող պահարան:

- Փոփոխություններ են կատարվել ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 20.09.2004 թ. թիվ 237 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում և 09.02.2007 թ. թիվ 39 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (նոր խմբագրությամբ): Մասնավորապես, սահմանվել է.

ա) Ընդհանուր իրացվելիության նորմատիվի ($Ն2^1$) սահմանաչափը 20 տոկոսից իջեցվել է և սահմանվել է 15 %:

բ) Սահմանվել է, որ հիմնական կապիտալից նյութական ակտիվների նվազեցման ժամանակ նյութական ակտիվների արժեքի մեջ չի ընդգրկվում դրանց դրական վերագնահատումը՝ կապիտալից կատարվող նվազեցումների ժամանակ կրկնահաշվարկի բացառման նպատակով: Միևնույն ժամանակ սահմանվել է, որ լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվում են նյութական ակտիվների վերագնահատման պահուստները, բայց ոչ ավելի, քան բանկի հիմնական կապիտալի հաշվեկշռային արժեքի 25 տոկոսի և նյութական ակտիվների արժեքի տարբերության չափը:

գ) Սահմանվել է, որ հիմնական կապիտալի հաշվարկից նվազեցվում են նաև ապահովագրական ընկերություններում ներդրումները:

դ) Սահմանվել է, որ ֆինանսական կազմակերպություններում ներդրումները նվազեցվում են հիմնական կապիտալից.

  - եթե կանոնադրական կապիտալում ներդրումը կազմում է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 4.99 %-ը կամ ավելին, կամ
  - եթե կանոնադրական կապիտալում ներդրումը փոքր է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 4.99 %-ից, սակայն գերազանցում է բանկի հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 15 %-ը, կամ
  - եթե բոլոր անձանց կանոնադրական կապիտալում ներդրումները գերազանցում են բանկի հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 35 %-ը:

- Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները, դրանց լրացման պայմանները Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին, ինչպես նաև միջազգային լավագույն փորձին, մասնավորապես՝ Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների դրույթներին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 10.07.2007 թ. թիվ 205 Ն որոշմամբ հաստատվել է «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները»:
- Փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿԲ խորհրդի 08.06.2005 թ. թիվ 293 Ն որոշմամբ հաստատված «Մասնագիտացված անձանց կողմից հաճախորդներին արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշման մեջ, համաձայն որի՝ արտարժույթի առք ու վաճառքի անդորրագրի երկրորդ օրինակը պահպանվում է լիցենզավորված անձի մոտ՝ թղթային և/կամ էլեկտրոնային տարբերակով՝ լազերային կրիչի վրա՝ 3 տարի ժամկետով՝ բացառությամբ փոխանակման կետերի և արժութային դիլերների: Փոխանակման

կետերի և արժութային դիլերների մոտ անդորրագրերի երկրորդ օրինակը պահպանվում է թղթային և/կամ էլեկտրոնային տարբերակով՝ լազերային կրիչի վրա՝ 1 տարի ժամկետով:

Ապահովագրական շուկայի կարգավորման դաշտի բարեփոխումների նպատակով Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաշվետու եռամսյակում ընդունվել և ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցման փուլում են գտնվում.

- «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը, որի նպատակն է տեխնիկական պահուստների հաշվապահական հաշվառման հետ կապված մի շարք խնդիրների լուծումը:
- «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը, որի նպատակն է ընդհանուր կապիտալի հաշվարկման կարգի ճշգրտումը՝ հաշվի առնելով վերահսկողության ընթացքում առաջացած խնդիրները, և համապատասխանեցումը բանկային կանոնակարգման մոտեցմանը, բացի այդ՝ «կանոնադրական կապիտալ» և «նորմատիվային ընդհանուր կապիտալ» հասկացությունների տարանջատումը:
- «Ապահովագրական ընկերությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը, որի նպատակն է ապահովագրական շուկայի մասին պատկերացում կազմելու համար վիճակագրության հավաքագրում, վերլուծում, վերահսկողության ընթացքում ապահովագրական ընկերությունների վիճակի մոնիտորինգի ապահովում, վատթարացման վիճակի վաղ բացահայտում և միջամտում:

Վերանայվել է և իրավական դաշտի փոփոխություններին է համապատասխանեցվել ապահովագրական ընկերությունների ղեկավարների, ապահովագրական բրոքերային ընկերությունների պատասխանատու անձանց մասնագիտական որակավորման գնահատման հարցաշարը:

2007 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում մշակվել է և առաջիկայում ԿԲ խորհրդի հաստատմանը կներկայացվի «Ապահովագրական բրոքերային կազմակերպությունների և նրանց պատասխանատու անձանց վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը, ձևերը և պարբերականությունը» որոշման նախագիծը, որի նպատակն է ապահովագրական բրոքերների գործունեության վերաբերյալ սպառողներին (ապահովադիրներին) ճշգրիտ և ամբողջական տեղեկատվությամբ ապահովումը:

Արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտում.

- 16.08.07 թ. ուժի մեջ է մտել ՀՀ ԿԲ խորհրդի 15.05.2007 թ. թիվ 144 Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց գործունեության հատուկ տնտեսական նորմատիվները», որի հիմնական նպատակը մասնագիտացված գործունեության հետ կապված գործառնական, վարկային և շուկայական ռիսկերի ծածկման համար կապիտալի նվազագույն չափի սահմանումն է:
- 02.09.07 թ. ուժի մեջ է մտել ՀՀ ԿԲ խորհրդի 12.06.07. թ. թիվ 179 Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի գրանցման հայտարարագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 40-ը, որի նպատակը Եվրոմիության չափանիշները բավարարող ազդագրի կանոնների մշակումն է՝ բացառելով թողարկողի կողմից անհարկի տեղեկատվության բացահայտումը և ապահովելով ներդրողի որոշումների կայացման համար առավել էական համարվող տեղեկատվություն:

3. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային ծրագրի՝ ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման խնդիրների շրջանակներում 2007 թ. III եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվել են վճարային համակարգերի հսկման, արժեթղթերի շուկայի, ինչպես նաև անկանխիկ վճարումների զարգացման և կարգավորման աշխատանքներ:

Մասնավորապես, Հայաստանի ֆոնդային բորսայում պետական արժեթղթերով իրականացվող բորսայական գործառնությունները խթանելու և վերջնահաշվարկի իրականացման գործընթացի ապահովման նպատակով շարունակվել են այս բնագավառի իրավական դաշտի կարգավորման աշխատանքները:

Հետամուտ լինելով արժեթղթերի շուկայի զարգացմանը, այդ թվում նաև գործարքների կնքման արդյունավետության բարձրացմանը՝ մշակվել է ՀՀ պետական արժեթղթերով ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների կնքման ավտոմատացված համակարգը, որը թույլ է տալիս իրականացնել ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի միջև ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների ավտոմատ կնքումը: Մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների իրականացման աշխատակարգը», որը սահմանում է համակարգով գործառնությունների իրականացման ընթացակարգերը:

Հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պետական պարտատոմսերի պահառուի գործառույթների իրականացման աշխատակարգը», որը կարգավորում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող պահառուական գործունեությունը, այդ թվում նաև՝ Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերի համար:

Հաշվի առնելով «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի զարգացումները և քարտային գործառնությունների աճի տեմպերը՝ համակարգում կատարված գործառնությունների վերջնահաշվարկի իրականացմանն ուղղված գործընթացի անընդհատությունը և հաշվարկների իրականացումը ժամանակին ապահովելու, գործառնական ռիսկերը նվազեցնելու նպատակով մշակվել է նաև ««Արմենիան Քարդ» միասնական վճարային համակարգում իրականացված գործառնությունների վերջնահաշվարկի կատարման» նոր եռակողմ պայմանագրի նախագծի օրինակելի ձևը:

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի օրենսդրական ակտերի՝ Կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող մի շարք առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների տրամադրել է տարբեր միջազգային վճարային համակարգերին անդամակցելու թույլտվություններ:

Մի շարք կազմակերպություններ իրականացրել են նաև ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների միջոցով հանրային նշանակություն ունեցող ծառայությունների դիմաց կանխիկ միջոցներով վճարումների ընդունման նոր ծառայության մատուցման աշխատանքներ: Որպես այդպիսի կազմակերպություն՝ լիցենզավորվել է «Թել-Սել» ՓԲԸ-ն:

Դիտարկելով 2007 թ. III եռամսյակի ցուցանիշները, որոնք բնութագրում են վճարահաշվարկային բնագավառը, կարելի է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, վճարահաշվարկային բնագավառում շարունակվել է արձանագրվել բնականոն աճ:


Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 1997 մլրդ ՀՀ դրամ (քանակը՝ 933583), ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 1875 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 369753: 2007 թ. III եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը, նախորդ տարվա III եռամսյակի համեմատ, աճել է 1.5 անգամ (650 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.3 անգամ (89230-ով): ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված փոխանցումների ծավալը 2007 թ. II եռամսյակի համեմատ պահպանվել է նույն մակարդակի վրա, իսկ քանակը աճել է 45673-ով (1.1 անգամ):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 29 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 5777: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը 2006 թ. III եռամսյակի համեմատ ավելացել է 10.1 մլրդ ՀՀ դրամով (քանակը՝

1394-ով) այդ թվում՝ 1.4 մլրդ ՀՀ դրամով աճը պայմանավորվել է բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումներով:

2007 թ. III եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախածեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 47.7%-ը, քանակի 48.37%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ տարվա III եռամսյակի համեմատ ավելացել է 2.2 անգամ (376 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 51302-ով:

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը



2007 թ. III եռամսյակի ընթացքում ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 55936 մլն ՀՀ դրամի 1136674 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 5049 մլն ՀՀ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 198 մլն ՀՀ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 98 մլն ՀՀ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 100 մլն ՀՀ դրամ): Եռամսյակի վերջի դրությամբ շրջառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 281729, որը 2007 թ. II եռամսյակի վերջի համեմատությամբ ավելացել է 1.12 անգամ (30963 քարտով): Հաշվետու եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է քարտային գործառնությունների մոտ 9%-ը: Ընդհանուր առմամբ, քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը ավելացել է 32%-ով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ


2007 թ. III եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 256, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 21 առևտրային բանկեր՝ 184 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք.Մոսկվա):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 70.29%-ը և քանակի 96.56%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ էլեկտրոնային վճարումների ծավալն ավելացել է 36.5%-ով (353 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 32.3%-ով (87292-ով): Այդ թվում՝ բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումները կազմել են 93 մլրդ ՀՀ դրամ: Առևտրային բանկերի կողմից էլեկտրոնային վճարումների համակարգով (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի մոտ 65%-ը (որը ավելացել է 112 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակային կառուցվածքում՝ մոտ 99%-ը:


Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2006 թ. III եռամսյակի համեմատ ավելացել է 1364-ով՝ կազմելով 5579, իսկ ծավալը՝ 5518 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 20597 մլն ՀՀ դրամ: Այդ թվում՝ բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված միջին օրական փոխանցումները կազմել են 6822 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների, նախորդ տարվա III եռամսյակի համեմատ աճել է մոտ 0.16 մլն ՀՀ դրամով և կազմել է 2.48 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգով առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը կազմել է 219 մլն ՀՀ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են վճարումների քանակի 0.04%-ը և ծավալի 0.2%-ը (132 փոխանցում՝ 2645 մլն ՀՀ դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.029%-ը և ծավալի 0.1%-ը (104 փոխանցում՝ 1402 մլն ՀՀ դրամ ծավալով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները



Բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված փոխանցումները միջին օրական վճարումներում



ՀԱՄԱԽՍՈՒՆ ԹՂԹԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Առևտրային բանկերի կողմից 2007 թ. III եռամսյակի ընթացքում թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 13.6%-ը և քանակի 0.37%-ը (նախորդ տարվա III եռամսյակի համեմատ ծավալը ավելացել է 1.3 անգամ, քանակը գրեթե պահպանել է նույն մակարդակը):

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 170 փոխանցում՝ 5.3 մլրդ ՀՀ դրամ ծավալով (2006 թ. III եռամսյակի համեմատ փոխանցումների միջին օրական ծավալը աճել է 3 մլրդ ՀՀ դրամով), իսկ մեկ թղթային փոխանցման

	449,072,336	**411,575,008**	**367,610,043**
Ընդամենը պարտավորություններ	**542,021,906**	**499,502,112**	**461,187,438**
Կուտակված վնաս			
Թողարկված կապիտալ	100,000	100,000	100,000
Գլխավոր պահուստ	9,870,486	9,870,486	9,870,486
Լրացուցիչ կանոնադրական կապիտալ	42,009,598	42,009,598	12,734,237
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	126,132	(77,587)	(249,275)
Կուտակված վնաս	(62,905,943)	(64,845,222)	(51,630,809)
Ընդհանուր կուտակված պակասուրդ	**(10,799,727)**	**(12,942,725)**	**(29,175,361)**
Ընդամենը պարտավորություններ և կուտակված պակասուրդ	**531,222,179**	**486,559,387**	**432,012,077**

Հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2007 թվականի նոյեմբերի 27-ին և ստորագրվել:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագահ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ

ՀՀ ԵՎ ԼՂՀ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

(30.06.2007 Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ֆինանսական համակարգի քաղաքականության ու վերլուծությունների վարչություն

Նյութում վերլուծված են միայն ՀՀ և ԼՂՀ[1] տարածքներում ներգրավված և տեղաբաշխված միջոցները, ուստի ներկայացված տվյալները կարող են տարբերվել ՀՀ կենտրոնական բանկի այլ տեղեկատվական նյութերում հրապարակված տվյալներից, քանի որ վերջիններում ներառված են նաև ՀՀ տարածքից դուրս ներգրավված և տեղաբաշխված միջոցների մեծությունները:

Վերլուծությունում դիտարկվել են յոթ ժամանակաշրջաններում.

1) *ՀՀ-ում գործող բոլոր բանկերի[2] (30.09.00թ.՝ 31 բանկ, 31.12.01թ.՝ 30 բանկ, 30.06.03թ,՝ 22 բանկ. 30.06.04թ.՝ 20 բանկ, 30.06.05թ, 30.06.06թ. և 30.06.07թ.՝ 21 բանկ) վարկային ներդրումների և ավանդների ծավալներն ու աճի միտումները:*
2) *30.06.07թ. դրությամբ գործող 21 առևտրային բանկերի վարկային ներդրումների և ավանդների ծավալներն ու աճի միտումները:*

Վարկային ներդրումների և ներգրավված միջոցների աճի միտումները առավել իրատեսական և ամբողջական ներկայացնելու համար համադրվում են յուրաքանչյուր ժամանակահատվածում ՀՀ-ում գործող բոլոր բանկերի և ներկայումս գործող 21 բանկերի համընդհանուր ցուցանիշները: Դիտարկվող ժամանակաշրջաններում գործող բանկերի քանակը համադրելի չէ, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկային համակարգը «լքած» բանկերի ավանդների և վարկերի մի մասը, տեղափոխվելով այլ բանկեր, մնացել է համակարգի ներսում, անհրաժեշտ է դիտարկվող բոլոր ժամանակաշրջաններում համեմատել ՀՀ-ում առկա բոլոր բանկերի համընդհանուր ցուցանիշները: Միաժամանակ, լուծարվող բանկերում զգալի ծավալով վատորակ վարկեր դուրս են գրվել և չեն մնացել համակարգի ներսում, և միայն բոլոր բանկերի ցուցանիշների համեմատությունը չի կարող լիովին արտահայտել ներկայումս ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերի համընդհանուր վարկային ներդրումների և ավանդների կայուն աճի միտումները: Այս առումով, համեմատվում են նաև ներկայումս ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 21 բանկերի համընդհանուր ցուցանիշները յոթ ժամանակաշրջաններում:

1. ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

30.09.00-30.06.07թթ. ժամանակահատվածում ներկայիս գործող բանկերի՝ ՀՀ և ԼՂՀ տարածքներում տեղաբաշխած ընդհանուր վարկերն ավելացել են 357%-ով, իսկ եթե ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումները համեմատվում են 30.09.2000թ. գործող բոլոր բանկերի ընդհանուր վարկային ներդրումների հետ, ապա աճը կազմում է 217% (*տե՛ս աղյուսակ 1 և գծապատկեր 1*): Ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումները դիտարկվող բոլոր ժամանակաշրջաններում դրսևորել են կայուն աճի միտումներ:

Հաշվետու տարվա ընթացքում (30.06.06-30.06.07թթ.) բանկային համակարգի վարկային ներդրումների ծավալն ավելացել է 36%-ով և կազմել 307.1 մլրդ դրամ:

** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*


[1] ԼՂՀ-ին վերաբերող տվյալները տարանջատված չեն ՀՀ մարզային տվյալներից, և ԼՂՀ ու ՀՀ տարածքների տվյալները դիտարկված են համընդհանուր համատեքստում:

[2] «Բոլոր բանկեր» արտահայտությունը վերաբերում է դիտարկվող յուրաքանչյուր ժամանակահատվածում ՀՀ-ում գործող բոլոր առևտրային բանկերին:

Աղյուսակ 1 . Բանկերի տրամադրած վարկերի ծավալները


	30.09.00 *(մլն դրամ)*	31.12.01 *(մլն դրամ)*	30.06.03 *(մլն դրամ)*	30.06.04 *(մլն դրամ)*	30.06.05 *(մլն դրամ)*	30.06.06 *(մլն դրամ)*	30.06.07 *(մլն դրամ)*	30.09.00-30.06.07 *(%)*	30.06.06-30.06.07 *(%)*
Բոլոր բանկերը	96933	87004	91163	124386	159043	225327	307123	217	36
30.06.07թ. դրությամբ գործող բանկերը	67144	74703	90146	124386	159043	225327	307123	357	36

Գծապատկեր 1



30.09.00-30.06.07թթ. ժամանակահատվածում բոլոր մարզերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ, ընդ որում՝ առավել արտահայտված աճ է արձանագրվել վերջին չորս տարիներին (*տե՛ս գծապատկեր 2*):

Գծապատկեր 2




** Պատկերի հստակության նպատակով Երևանի ցուցանիշները չեն ներառվել:*

Հաշվետու տարում (30.06.06-30.06.07թթ.) գրեթե բոլոր մարզերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ. Երևանում՝ 37% աճ (56.6 մլրդ դրամով), իսկ ՀՀ մնացյալ 10 մարզերում և ԼՂՀ-ում վարկային ներդրումներն համընդհանուր ավելացել են 35%-ով (25.1 մլրդ դրամով): Այսպես, Երևանում տեղաբաշխված վարկերը, ՀՀ մնացյալ 10 մարզերում ու ԼՂՀ-ում համընդհանուր տեղաբաշխված վարկերի համեմատությամբ, ապահովել են փոքր-ինչ արագատեմպ աճ, ինչի արդյունքում ընդհանուր վարկային ներդրումներում Երևանին հատկացված վարկերի տեսակարար կշիռը ավելացել է 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 68.2% (*տե՛ս գծապատկեր 3, հավելված 1.2*):


30.06.06-30.06.07թթ. ժամանակահատվածում վարկային ներդրումների միջին աճի տեմպը զիջել է Շիրակի մարզը (33% աճ), Սյունիքի մարզը (14% նվազում) և ԼՂՀ-ն (3.2% նվազում), ընդ որում՝ Սյունիքի մարզում վարկերի նվազումը պայմանավորված է էներգետիկայի ճյուղի վարկերի կտրուկ նվազմամբ, իսկ ԼՂՀ-ում՝ գյուղատնտեսության ճյուղի վարկերի նվազմամբ (*տե՛ս հավելված 1.7):*

Գծապատկեր 3



Ընդհանուր առմամբ, դիտարկվող ժամանակահատվածներում կատարված վարկային ներդրումներում Երևանի մասնաբաժինը հիմնականում տատանվել է 70%-ի շրջանակներում: Բացառություն է 31.12.01 թ., երբ Երևանում վարկային ներդրումների մասնաբաժինը զգալի նվազել է՝ պայմանավորված այդ ժամանակաշրջանում Լոռու մարզում քիմիական արդյունաբերության վարկավորման ծավալների 4.8 մլրդ դրամ աճով (որը հետագայում դարձյալ նվազել է) և Երևանում էներգետիկայի վարկավորման ծավալների 5.5 մլրդ դրամ նվազմամբ (*տե՛ս գծապատկեր 4*):

Գծապատկեր 4



Հաշվետու տարվա ընթացքում ակտիվների քանակն ավելացել է 22%-ով և կազմել 366.3 հազար: Հատկանշական է, որ Երևանին բաժին է ընկնում վարկերի ծավալի 68%-ը, իսկ քանակի՝ 33%-ը (30.06.06թ. Երևանին բաժին է ընկել ակտիվների քանակի 28%-ը)՝ վկայելով որ մարզերում, Երևանի համեմատությամբ, տրամադրված վարկերն ավելի մանրածավալ են:

Երևանում 30.09.00-30.06.07թթ. ժամանակահատվածում վարկային ներդրումներն ավելացել են 211%-ով, ընդ որում՝ վարկերի աճը հիմնականում ապահովվել է վերջին չորս տարիներին: Ըստ ներկայումս գործող բանկերի՝ նշված աճը նույն ժամանակաշրջանում կազմել է 375%, ընդ որում՝ 30.06.03-30.06.04թթ. Երևանում վարկային ներդրումներն ավելացել են 37%-ով, 30.06.04-30.06.05թթ.՝ 24%-ով, 30.06.05-30.06.06թթ.՝ 42%-ով, 30.06.06-30.06.07 թթ.՝ 37%-ով:

Հաշվետու տարում Երևանում վարկերի աճը հիմնականում պայմանավորված է սպառողական (ներառյալ հիփոթեքային), արդյունաբերության, առևտրի և շինարարության վարկավորման աճով: ՀՀ մյուս 10 մարզերում և ԼՂՀ-ում վարկերի աճը հիմնականում պայմանավորված է սպառողական (ներառյալ հիփոթեքային), գյուղատնտեսության և առևտրի վարկավորման աճերով: Արդյունաբերության ճյուղի վարկավորման համեմատաբար խոշոր աճ է արձանագրվել Արարատի (սննդի արդյունաբերության աճ) և Արագածոտնի (սննդի և հանքագործական արդյունաբերությունների աճ) մարզերում: Մյուս ճյուղերի և սպառողական վարկերի աճը գրեթե հավասարաչափ բաշխվել է մարզերի միջև:

30.09.00-30.06.07թթ. ժամանակահատվածում տնտեսության բոլոր ճյուղերում (արդյունաբերության ճյուղերը դիտարկվում են որպես համընդհանուր մեկ ճյուղ) արձանագրվել է վարկային ներդրումների ծավալների աճ *(տե՛ս հավելվածներ 1.5 և 1.6)*: Հատկանշական է, որ նշված ժամանակահատվածում բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է գյուղատնտեսության, տրանսպորտի և կապի, առևտրի ճյուղերի և սպառողական վարկերի աճ:

Հաշվետու տարվա (30.06.06-30.06.07թթ.) ընթացքում.

- արդյունաբերության վարկերը ավելացել են Երևանում, Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում,
- գյուղատնտեսության վարկերը նվազել են Արագածոտնի մարզում և ԼՂՀ-ում, իսկ մյուս մարզերում արձանագրվել է աճ,
- շինարարության վարկերը աճել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, բացառությամբ Երևանի, Արարատի, Արմավիրի և Լոռու մարզերի,
- տրանսպորտի և կապի վարկերը աճել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, բացառությամբ Վայոց ձորի և Տավուշի մարզերի,
- առևտրի և սպառողական (ներառյալ հիփոթեքային) վարկերն աճել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում:

Ըստ տնտեսության ճյուղային բաշխվածության՝ 30.09.00-30.06.2007 թթ. ժամանակաշրջանում ընդհանուր վարկային ներդրումներում արդյունաբերության ճյուղի տեսակարար կշիռը զգալի նվազել է, իսկ առևտրի և սպառողական ոլորտի վարկերինը՝ էապես աճել *(տե՛ս աղյուսակ 2)*:

Աղյուսակ 2. Վարկային ներդրումների տեսակարար կշիռներն ըստ ճյուղերի (բոլոր բանկերը)

%

	30.09.00	31.12.01	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.07
Արդյունաբերություն	34	38	31	26	22	20	16
Գյուղատնտեսություն	8	11	10	7	8	6	6
Շինարարություն	2	3	4	4	4	4	5
Տրանսպորտ և կապ	2	2	1	1	2	2	1
Առևտուր	11	17	20	21	22	22	20
Ֆինանսական հատված	7	6	7	7	5	6	5
Սպառողական վարկեր	18	14	21	27	31	34	40
այդ թվում՝ հիփոթեքային					4	8	11
Այլ ճյուղեր	18	9	6	7	6	6	7

30.06.2007 թ. դրությամբ ընդհանուր վարկերի բաշխվածությունը տնտեսության ճյուղերում ըստ մարզերի հիմնականում բևեռացված բնույթ ունի և կենտրոնացված է Երևանում (բացառությամբ գյուղատնտեսության ճյուղի, Երևանին բաժին է ընկնում ընդհանուր վարկերի 6%-ը) *(տե՛ս հավելված 1.2)*: Գյուղատնտեսության ճյուղին տրամադրված վարկերը մարզերի միջև համեմատաբար հավասարաչափ են

բաշխված. ամենամեծ տեսակարար կշիռն ունի Արմավիրի մարզը (18%), իսկ ամենափոքր տեսակարար կշիռը՝ Վայոց ձորի մարզը (4%):

Հատկանշական է, որ Երևանում, գյուղատնտեսության վարկերից հետո, ցածր կենտրոնացվածություն ունեն սպառողական վարկերը (ներառյալ հիփոթեքայինը)՝ 64%՝ 30.06.06թ. 65%-ի համեմատ:

Չնայած հիփոթեքային վարկերի կենտրոնացվածությունը Երևանում նվազել է, այնուամենայնիվ այդ վարկավորման ցուցանիշը մնում է ամենաբարձրը՝ 88% (30.06.06թ.՝ 93%): Հիփոթեքային վարկերի ընդհանուր ծավալը կազմում է 34.5 մլրդ դրամ:

Հաշվետու տարում Երևանի վարկավորման տեսակարար կշիռը փոքր-ինչ նվազել է սպառողական և առևտրի ոլորտներում:

Վարկային ներդրումների ժամկետայնության առումով՝ հաշվետու տարում երկարաժամկետ վարկերի (1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ) տեսակարար կշիռը ավելացել է 3 տոկոսային կետով և կազմել 68%: Եթե 30.06.06թ. Վայոց ձորի, Տավուշի, Շիրակի և Արմավիրի մարզերում երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռները զիջում էին կարճաժամկետ վարկերի տեսակարար կշռին, ապա 30.06.07թ. ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում երկարաժամկետ վարկերի ծավալները գերազանցել են կարճաժամկետ վարկերի ծավալները (*տե՛ս հավելված 1.3*): Երկարաժամկետ վարկերի տեսակարար կշռի ավելացմանը էապես նպաստել է նաև հիփոթեքային վարկերի աճը:

Հարկ է նշել, որ 30.09.00թ. դրությամբ ընդհանուր վարկային ներդրումներում կարճաժամկետ (մինչև 1 տարի) վարկերը կազմել են 53%, 31.12.01թ. դրությամբ՝ 41 %, 30.06.03թ. դրությամբ՝ 50%, 30.06.04թ. դրությամբ՝ 53%, 30.06.05թ. դրությամբ՝ 52% և 30.06.06թ. դրությամբ՝ 35%:

30.06.06-30.06.07թթ. ժամանակահատվածում վարկային ներդրումների կառուցվածքում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը նվազել է 18 տոկոսային կետով և 30.06.07թ. դրությամբ կազմել ընդհանուր վարկերի 41%-ը (*տե՛ս հավելված 1.4*): Բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է արտարժութային վարկերի տեսակարար կշռի նվազում, ընդ որում՝ 30.06.07թ. բոլոր մարզերում և ԼՂՀ-ում դրամային վարկերի ծավալները գերազանցել են արտարժութային վարկերի ծավալները: Վարկային ներդրումների համեմատաբար մեծ մասնաբաժին ունեցող Երևան քաղաքում, ԼՂՀ-ում և Կոտայքի մարզերում ըստ արժույթի տեսակի վարկային ներդրումների կառուցվածքը հետևյալն է.

Աղյուսակ 3. Արժութային վարկերի տեսակարար կշիռները՝ ըստ ժամանակահատվածների

%

Վարկեր	Երևան	ԼՂՀ	Կոտայքի մարզ	Ընդամենը
Արտարժույթով 30.09.00թ.	88	46	85	84
Արտարժույթով 31.12.01թ.	82	83	75	82
Արտարժույթով 30.06.03թ.	65	92	90	71
Արտարժույթով 30.06.04թ.	65	67	72	68
Արտարժույթով 30.06.05թ.	67	55	74	67
Արտարժույթով 30.06.06թ.	59	39	64	59
Արտարժույթով 30.06.07թ.	47	20	41	41

Վերջին տարիներին ընդհանուր վարկային ներդրումներում ՀՀ դրամով տրամադրված վարկերի տեսակարար կշիռը կայուն աճի միտում ունի (ընդ որում, բացի Երևանից, բոլոր մարզերում և ԼՂՀ-ում ՀՀ դրամով տրամադրված վարկերի տեսակարար կշիռը գերազանցում է ընդհանուր միջինին), որը վկայում է ներկայումս ՀՀ դրամի նկատմամբ վարկառուների և վարկատուների վստահության բարձրացման մասին:

Հաշվետու տարում ընդհանուր վարկային ներդրումների կազմում փոքր և միջին բիզնեսին[3] տրամադրված վարկերի տեսակարար կշիռը նվազել է 5 տոկոսային կետով և 30.06.07 թ. դրությամբ կազմել 29% (*տե՛ս հավելված 1.1*): Փոքր և միջին բիզնեսին համակարգի կողմից տրամադրված ընդհանուր վարկերի 71%-ը բաշխվել է Երևանում (*տե՛ս հավելված 1.2*): Հաշվետու տարում փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի ծավալներն ավելացել են 18%-ով, իսկ 30.09.00-30.06.07թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը)՝ 320%-ով (*տե՛ս հավելվածներ 1.5 և 1.7*):

Միջազգային ծրագրերով տրամադրված վարկերն աճել են 10%-ով՝ հիմնականում Երևանին և Շիրակի մարզին հատկացված վարկերի ծավալների աճի հաշվին: Մարզերին տրամադրված ընդհանուր վարկերի մեջ միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի տեսակարար կշիռը հաշվետու տարում


[3] Փոքր և միջին բիզնեսը ներառում է այն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, որոնց աշխատողների թվաքանակը կազմում է մինչև 100 աշխատող:

նվազել է, սակայն դեռևս բավականին բարձր է՝ 30.06.07թ. ըստ մարզերի տատանվել է 10%-22%-ի սահմաններում (30.06.06թ.՝ 10%-32%)՝ վկայելով ՀՀ մարզերի համար միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվող վարկավորման կարևորությունը (*տե՛ս հավելված 1.1*):

Միջազգային ծրագրերով ստացված վարկերի 57%-ը հատկացվել է Երևանին (*տե՛ս գծապատկեր 5*):

Գծապատկեր 5

Միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի կառուցվածքն ըստ մարզերի




1.Երևան, 2.Արարատի մարզ, 3.Կոտայքի մարզ, 4.Արմավիրի մարզ, 5.Արագածոտնի մարզ, 6.Շիրակի մարզ, 7. Լոռու մարզ, 8.Գեղարքունիքի մարզ, 9.Տավուշի մարզ, 10.Վայոց ձորի մարզ, 11. Սյունիքի մարզ, 12. ԼՂՀ

Ըստ վարկային ներդրումների վերադարձելիության՝ հաշվետու տարում ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը նվազել է 0.5 տոկոսային կետով՝ 30.06.07թ. դրությամբ կազմելով ընդհանուր վարկերի 1.0%-ը (*տե՛ս հավելված 1.1 և գծապատկեր 6*):

30.09.00թ. դրությամբ 31 բանկերի ընդհանուր վարկերի մեջ ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը կազմել է 14%, 31.12.01թ. դրությամբ՝ 9%, 30.06.03թ. դրությամբ՝ 2.7%, 30.06.04թ. դրությամբ՝ 1.6%, 30.06.05թ. դրությամբ՝ 1.0%, 30.06.06թ. դրությամբ՝ 1.5%, ինչը վկայում է վերջին տարիներին վարկերի որակի կտրուկ բարձրացման մասին:

Գծապատկեր 6

Ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը մարզի ընդհանուր վարկերում



Ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում համեմատաբար բարձր է Լոռու և Տավուշի մարզերում (*տե՛ս գծապատկեր 6*):

Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումները

30.06.07թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 19 վարկային կազմակերպություններ, որոնց տրամադրած ընդհանուր վարկերի ծավալը կազմել է բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի ծավալի 9.3%-ը (30.06.06թ.՝ 3.8%-ը):

30.06.06-30.06.07թթ. ժամանակահատվածում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերն ավելացել են 235%-ով (20.0 մլրդ դրամով), ընդ որում՝ խոշոր աճ է արձանագրվել սպառողական և առևտրի վարկերում:

Դիտարկվող ժամանակաշրջաններում վարկային կազմակերպությունների վարկերն ըստ ճյուղերի ունեցել են հետևյալ կառուցվածքը.

Աղյուսակ 4. Վարկերն ըստ տնտեսության ճյուղերի

Տնտեսության ճյուղեր	Վարկերի ծավալ					Տեսակարար կշիռ (%)				
	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.07	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.07
Արդյունաբերություն	717895	497017	1371292	2203405	3544133	23	36	29	26	13
այդ թվում՝ սննդի	591431	313166	741669	1152500	1195737	14	30	16	14	4
Գյուղատնտեսություն	268669	312495	536673	1045803	2481502	14	14	11	12	9
Առևտուր	53991	110849	270017	1235345	6969051	5	3	6	15	24
Շինարարություն	120900	88759	112000	192884	1253183	4	6	2	2	4
Սպառողական (ներառյալ հիփոթեք)	492011	864447	1584248	2396334	8455264	40	25	34	28	30
Այլ ճյուղեր	324007	314835	831509	1434126	5821629	14	16	18	17	20
Ընդամենը	1977473	2184827	4705739	8507896	28524763	100	100	100	100	100

Հաշվետու տարում (30.06.06-30.06.07թթ.) ՀՀ գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ Սյունիքի մարզի) և ԼՂՀ-ում ավելացել են վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի ծավալները, ընդ որում՝ զգալի մեծացել են Արմավիրի, Լոռու, Արարատի և Շիրակի մարզերում տեղաբաշխված միջոցների ծավալները (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Վարկերն ըստ մարզերի

	Երևան	Արարատ	Կոտայք	Արմավիր	Արագածոտն	Շիրակ	Լոռի	Գեղարքունիք	Տավուշ	Վայոց ձոր	Սյունիք	ԼՂՀ
30.06.03												
վարկերի ծավալները	732523	140711	347977	328411	24715	10955	18282	5198	31693	8359	328640	
տեսակարար կշիռները (%)	37.0	7.1	17.6	16.6	1.2	0.6	0.9	0.3	1.6	0.4	16.6	
30.06.04												
վարկերի ծավալները	1464134	76409	28056	41233	75318	18110	26532	12726	70551	30724	341034	
տեսակարար կշիռները (%)	67.0	3.5	1.3	1.9	3.4	0.8	1.2	0.6	3.2	1.4	15.6	
30.06.05												
վարկերի ծավալները	3054690	38852	216496	127993	142609	165228	199822	40155	165667	55467	498759	
տեսակարար կշիռները (%)	64.9	0.8	4.6	2.7	3.0	3.5	4.3	0.9	3.5	1.2	10.6	
30.06.06												
վարկերի ծավալները	5133064	223093	481738	238415	183164	403482	443152	183109	117965	71290	910830	118594
տեսակարար կշիռները (%)	60.3	2.6	5.7	2.8	2.2	4.7	5.2	2.2	1.4	0.8	10.7	1.4
30.06.07												
վարկերի ծավալները	18824712	1033694	941069	1499227	534782	1062152	1300085	573330	512376	210739	434469	598130
տեսակարար կշիռները (%)	66.0	3.6	3.3	5.3	1.9	3.7	4.6	2.0	1.8	0.7	5.0	2.1


2. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ[4]

30.09.00-30.06.07թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ՀՀ և ԼՂՀ տարածքներում ներգրավված միջոցները ավելացել են 218%-ով և կազմել 325.1 մլրդ դրամ: Ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները աճել են 276%-ով, իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները՝ 175%-ով և կազմել են համապատասխանաբար 163.1 մլրդ դրամ և 162.0 մլրդ դրամ (*տե՛ս հավելված 1.5*):

Ներկայիս գործող բանկերի կողմից ներգրավված միջոցները նշված ժամանակահատվածում աճել են 371%-ով, ընդ որում՝ ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները աճել են 400%-ով, իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները՝ 345%-ով (*տե՛ս հավելված 1.6*):

Հաշվետու տարում ներգրավված միջոցների կենտրոնացվածությունը Երևանում ավելացել է 1 տոկոսային կետով և կազմել 84% (30.06.06թ. Երևանին բաժին էր ընկնում ներգրավված միջոցների 83%-ը, իսկ 30.09.00թ.՝ 84%-ը): Ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցների կենտրոնացվածությունը Երևանում նվազել է 2 տոկոսային կետով և կազմել 87%, իրավաբանական անձանցից ներգրավված միջոցների կենտրոնացվածությունը ավելացել է 4 տոկոսային կետով և կազմել 81% (*տե՛ս հավելված 2.2*):

Գծապատկեր 7




** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.07 թ. դրությամբ ավանդների ծավալը կազմել է 273.7 մլրդ դրամ:*

30.09.00-30.06.07 թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ավանդների աճ: Հաշվետու տարում, բացառությամբ Սյունիքի մարզի, մյուս բոլոր մարզերում և ԼՂՀ-ում ավանդների ծավալներն ավելացել են (*տե՛ս գծապատկեր 7*):

Հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր ներգրավված միջոցների կազմում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռը ավելացել է 3 տոկոսային կետով՝ կազմելով 50% (*տե՛ս հավելված 2.1 և գծապատկեր 8*): 30.06.07թ. ֆիզիկական անձանց ավանդները գերակշռում են 8 մարզերում (30.06.06թ.՝ 6 մարզերում):


[4] Ներգրավված միջոցները ներառում են միայն ՀՀ և ԼՂՀ տարածքներում ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ (ներառյալ բանկային հաշիվները) և ժամկետային ավանդները:

Գծապատկեր 8



Ըստ ներգրավված միջոցների ժամկետայնության՝ հաշվետու տարում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը աճել է 6 տոկոսային կետով և կազմել 47% (30.09.00թ. դրությամբ ժամկետային ավանդներին բաժին է ընկել ընդհանուր ներգրավված միջոցների 63%-ը, ցպահանջ ավանդներին՝ 37%-ը): Բացառությամբ ԼՂՀ-ի, ինչպես նաև Լոռու, Վայոց ձորի և Շիրակի մարզերի, մյուս բոլոր մարզերում ցպահանջ ավանդների ծավալները գերազանցում են ժամկետային ավանդների ծավալները (*տե՛ս հավելված 2.3 և գծապատկեր 9*):

Գծապատկեր 9




30.06.07թ. Երևանին բաժին է ընկել ընդհանուր ցպահանջ ավանդների 85%-ը և ընդհանուր ժամկետային ավանդների 83%-ը, ընդ որում՝ 30.06.06թ. Երևանին բաժին էր ընկնում համապատասխանաբար 85%-ը և 80%-ը, իսկ 30.09.00թ.՝ 82%-ը և 85%-ը:

Ցպահանջ միջոցների գերակշիռ մասը (64 %) կազմում են իրավաբանական անձանց միջոցները, ինչը արտահայտված է բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, իսկ ժամկետային միջոցների գերակշիռ մասը (66 %) կազմում են ֆիզիկական անձանց ավանդները, ինչը արտահայտված է ՀՀ բոլոր մարզերում, իսկ ԼՂՀ-ում՝ հակառակը (*տե՛ս հավելվածներ 2.5 և 2.7*):

Հաշվետու տարում ներգրավված միջոցների կազմում ՀՀ դրամով ավանդների տեսակարար կշիռը աճել է 16 տոկոսային կետով՝ 30.06.07թ. դրությամբ կազմելով ընդհանուր ներգրավված միջոցների 50%-ը. 30.09.00թ. դրությամբ ՀՀ դրամով ավանդները կազմել են ներգրավված միջոցների 24%-ը, իսկ 30.06.06թ. դրությամբ՝ 34%-ը: Դրամով ավանդների տեսակարար կշիռը զիջում է արտարժույթով ներգրավված ավանդների տեսակարար կշռին միայն Արմավիրի մարզում և Երևանում (*տե՛ս հավելված 2.4 և գծապատկեր 10*):

Գծապատկեր 10




Հատկանշական է, որ 30.09.00թ. միայն ԼՂՀ-ում, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում ներգրավված միջոցների կազմում մեծ տեսակարար կշիռը բաժին էր ընկնում դրամով ներգրավված միջոցներին, 30.06.03թ.՝ միայն Տավուշի մարզում, 30.06.04թ.՝ Արարատի, Կոտայքի, Տավուշի մարզերում, 30.06.05թ.՝ հինգ մարզերում, իսկ 30.06.06թ՝ յոթ մարզերում (*տե՛ս գծապատկեր 10)*:

Ըստ ներգրավման աղբյուրների՝ 30.06.07թ. դրությամբ արտարժույթով ներգրավված միջոցների 34%-ը, իսկ դրամով ներգրավված միջոցների 63%-ը հավաքագրվել է իրավաբանական անձանցից (*տե՛ս հավելվածներ 2.9 և 2.11*):

3. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

30.06.07թ. դրությամբ բանկային համակարգի կողմից ՀՀ և ԼՂՀ տարածքներում ներգրավված միջոցների ծավալները 6%-ով գերազանցել են վարկային ներդրումների ծավալները (30.06.06թ.՝ 19%-ով): Սակայն ավանդների ծավալները գերազանցել են վարկերի ծավալները միայն Սյունիքի մարզում, ԼՂՀ-ում և Երևանում: Այս առումով մարզերի համար վարկավորման հիմնական աղբյուր է հանդիսանում Երևանը: Միաժամանակ, հարկ է նշել, որ մարզերում ընդհանուր վարկերում էական դերն ունեն նաև միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերը (*տե՛ս գծապատկեր 11*):


Գծապատկեր 11



** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.07թ. ներգրավված միջոցները կազմել են 273.7 մլրդ դրամ, վարկերը, առանց միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի՝ 191.7 մլրդ դրամ, ընդհանուր վարկերը՝ 209.5 մլրդ դրամ:*

Տարածքային ստորաբաժանումների բաշխվածության առումով կարելի է նշել, որ հաշվետու տարում մեկ մասնաճյուղին[5] բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները ավելացել են և 30.06.07թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 994 մլն դրամ և 939 մլն դրամ *(տե՛ս հավելված 3 և գծապատկեր 12)*:


Գծապատկեր 12



Համեմատության համար նշենք, որ 30.09.00թ. դրությամբ մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները կազմել են համապատասխանաբար 485 մլն դրամ և 459 մլն դրամ, իսկ 30.06.06թ.՝ համապատասխանաբար 888 մլն դրամ և 744 մլն դրամ:

Մեկ շնչին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները դարձյալ ցուցաբերել են աճի միտումներ՝ 30.06.07թ. դրությամբ կազմելով համապատասխանաբար 96.7 հազար դրամ և 91.4 հազար դրամ (*տե՛ս հավելված 3 և գծապատկեր 13*):

Գծապատկեր 13



Համեմատության համար նշենք, որ 30.09.00թ. դրությամբ մեկ շնչին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները կազմել են համապատասխանաբար 26.9 հազար դրամ և 25.5 հազար դրամ, իսկ 30.06.06թ. դրությամբ՝ 80.1 հազար դրամ և 67.1 հազար դրամ:

[5] *Գլխամասային գրասենյակները դիտվել են որպես մասնաճյուղ:*

4. ԱՄՓՈՓՈՒՄ

30.09.00-30.06.07թթ. ժամանակահատվածում

1. ՀՀ, ինչպես նաև ԼՂՀ տարածքներում գործող բոլոր առևտրային բանկերի կողմից տրամադրված ընդհանուր վարկային ներդրումների ծավալն ավելացել է 217%-ով (ներկայիս բանկերի կտրվածքով՝ 357% աճ) և կազմել 307.1 մլրդ դրամ, ընդ որում՝ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Վարկային ներդրումների տարածքային կենտրոնացվածությունը բարձր է. Երևանին բաժին է ընկնում վարկերի 68.2%-ը, ընդ որում՝ 2000 թվականից առ այսօր տատանվում է այդ մակարդակի շրջանակներում (30.06.00-30.06.07թթ. ժամանակահատվածում Երևանում վարկերի կենտրոնացվածությունը նվազել է 1.2 տոկոսային կետով):

2. Ավանդները (բոլոր բանկերով) ավելացել են 218%-ով (ըստ ներկայումս գործող բանկերի ցուցանիշների՝ 371% աճ) և կազմել 325.1 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ավանդների աճ: Ավանդների տարածքային կենտրոնացվածությունը նույնպես բարձր է. Երևանին բաժին է ընկնում ավանդների 84%-ը, ընդ որում՝ 2000 թվականից առ այսօր տատանվում է այդ մակարդակի շրջանակներում:

3. Նշված ժամանակահատվածում հատկանշական փոփոխություններն են.

- Վարկերի աճն ուղեկցվել է վարկերի որակի կտրուկ բարելավմամբ. 30.09.00թ. ժամկետանց վարկերը կազմում էին ընդհանուր վարկերի 14%-ը (ամենամեծ տեսակարար կշիռն ունեին Շիրակի մարզը (30%) և Երևանը՝ (17%)), իսկ 30.06.07թ. դրությամբ՝ ընդհանուր վարկերի ընդամենը 1.0%-ը (ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Տավուշի մարզը (1.9%) և Լոռու մարզը՝ (1.8%)):
- Վարկերի և ավանդների դրամայնացումը. 30.09.00թ. դրամային վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում կազմում էր 16%, դրամային ավանդների տեսակարար կշիռը՝ 24%, իսկ 30.06.07թ. դրամային վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում կազմում է 59%, դրամային ավանդների տեսակարար կշիռը՝ 50%: Եթե 30.09.00թ. դրամային վարկերի ծավալը գերազանցել է արտարժութային վարկերի ծավալը միայն ԼՂՀ-ում, և դրամային ավանդների ծավալը գերազանցել է արտարժութային ավանդների ծավալը միայն ԼՂՀ-ում, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում, ապա 30.06.07թ. դրամային վարկերի ծավալը գերազանցել է արտարժութային վարկերի ծավալը ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, դրամային ավանդների ծավալը գերազանցել է արտարժութային ավանդների ծավալը ՀՀ գրեթե բոլոր մարզերում և ԼՂՀ-ում, բացառությամբ Երևանի և Արմավիրի մարզի:
- Երկարաժամկետ վարկերի (1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ) տեսակարար կշիռը ավելացել է 21 տոկոսային կետով և կազմել 68%: 30.09.00թ. երկարաժամկետ վարկերի ծավալը գերազանցել է կարճաժամկետ վարկերի ծավալը 6 մարզերում (Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Արմավիրի, Լոռու և Արագածոտնի մարզերում), իսկ 30.06.07թ.՝ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում:
- Ըստ տնտեսության ճյուղերի՝ ընդհանուր վարկային ներդրումներում զգալի նվազել է արդյունաբերության ճյուղի վարկավորման տեսակարար կշիռը, և աճել են առևտրի և սպառողական վարկերի տեսակարար կշիռները (ընդ որում՝ վերոնշյալ միտումները դրսևորվել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում):

30.06.06-30.06.07թթ. ժամանակահատվածում

1. Ավանդների նվազում է արձանագրվել միայն Սյունիքի մարզում, վարկերի նվազում՝ Սյունիքի մարզում և ԼՂՀ-ում, իսկ ՀՀ մյուս բոլոր մարզերում աճել են և՛ վարկային ներդրումների, և՛ ավանդների մեծությունները: Վարկային ներդրումների աճի տեմպը (36% աճ) գերազանցել է ավանդների աճի տեմպը (21% աճ), ընդ որում՝ բացառությամբ Արագածոտնի, Շիրակի, Սյունիքի մարզերի և ԼՂՀ-ի, մյուս բոլոր մարզերում արձանագրվել է վերոնշված պատկերը:

2. Նշված ժամանակահատվածում հատկանշական փոփոխություններն են.

- վարկերի աճի 56%-ը ապահովվել է սպառողական վարկերի (ներառյալ հիփոթեքը) աճի հաշվին: ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում ամենամեծ աճը արձանագրվել է սպառողական վարկերի գծով:
- Երկարաժամկետ վարկերը (1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ) ավելացել են 42%-ով, կարճաժամկետ վարկերը՝ 25%-ով, ինչի արդյունքում ընդհանուր վարկերում երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 3 տոկոսային կետով և կազմել 68%: Բացի ԼՂՀ-ից և Սյունիքի մարզից, մյուս բոլոր մարզերում երկարաժամկետ վարկերը ապահովել են առաջանցիկ աճի տեմպ:

- ՀՀ դրամով տրամադրված վարկերը ավելացել են 95%-ով, արտարժույթով տրամադրված վարկերը նվազել են 4%-ով, ինչի արդյունքում դրամով վարկերի տեսակարար կշիռն աճել է 18 տոկոսային կետով և կազմել 59%: Բացառությամբ Երևանի (որտեղ դրամով վարկերն աճել են 77%-ով, արտարժութային վարկերը՝ 10%-ով), ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է դրամային վարկերի աճ և արտարժութային վարկերի նվազում:
- ՀՀ դրամով ավանդներն ավելացել են 74%-ով, արտարժույթով ավանդները նվազել են 7%-ով, որի արդյունքում դրամով ավանդների տեսակարար կշիռն ավելացել է 16 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ավանդների 50%-ը: Բացառությամբ Վայոց ձորի, Արագածոտնի և Արարատի մարզերի, ՀՀ մյուս բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է դրամային ավանդների առաջանցիկ աճի տեմպ:
- Ավանդների աճը հիմնականում ապահովվել է ֆիզիկական անձանց ավանդների աճի հաշվին, որի արդյունքում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռն ավելացել է 3 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ավանդների 50%-ը: Բացառությամբ Շիրակի և Վայոց ձորի մարզերի, ՀՀ մյուս բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշռի աճ:

30.06.07թ. դրությամբ

Ըստ վարկային ներդրումների ներմարզային կառուցվածքի՝ կենտրոնացվածությունը բավականին ցածր է: Ներմարզային կենտրոնացվածությունը համեմատաբար բարձր է սպառողական վարկերում և գյուղատնտեսության ճյուղի վարկերում (*տե՛ս հավելված 1.1*).

Սպառողական վարկեր (ներառյալ հիփոթեքը). բոլոր մարզերում բավականին բարձրացել է սպառողական վարկերի տեսակարար կշիռը (տատանվում է 16-61%-ի միջակայքում), իսկ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Շիրակի, Գեղարքունիքի և Լոռու մարզերը (53 - 61%):

Գյուղատնտեսության ճյուղ. մարզերի ընդհանուր վարկերում գյուղատնտեսության վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 8-25%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Արագածոտնի և Տավուշի մարզերը (այս մարզերում տրամադրված ընդհանուր վարկերի 25%-ը հատկացված է գյուղատնտեսության ճյուղին):

Արդյունաբերության ճյուղ. մարզերի ընդհանուր վարկերում արդյունաբերության վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 3-26%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Կոտայքի և Արարատի մարզերը, որտեղ տրամադրված ընդհանուր վարկերի համապատասխանաբար 26%-ը և 18%-ը հատկացված է արդյունաբերության ճյուղին:

Առևտրի ճյուղ. առևտրի վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 5-23%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, ԼՂՀ-ն և Սյունիքի մարզերը, որտեղ տրամադրված ընդհանուր վարկերի համապատասխանաբար 23%-ը, 21%-ը և 18%-ը հատկացված է առևտրի ճյուղին:

Հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներ. այս ոլորտի վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1-13%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Վայոց ձորի և Կոտայքի մարզերը, որտեղ տրամադրված ընդհանուր վարկերի համապատասխանաբար 13%-ը և 9%-ը հատկացված է այս ոլորտին:

Շինարարության ճյուղ. համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն ԼՂՀ-ն, Երևանը և Արարատի մարզը, որտեղ տրամադրված վարկերի համապատասխանաբար 11%-ը, 6%-ը և 4%-ը հատկացված է այս ճյուղին:

Տրանսպորտի և կապի ճյուղ. բոլոր մարզերում այս ճյուղին տրամադրված վարկերն ունեն շատ փոքր տեսակարար կշիռ: Ամենամեծ տեսակարար կշիռն ունի Սյունիքի մարզը, որտեղ տրամադրված վարկերի ընդամենը 4%-ն է հատկացված այս ճյուղին:

Հավելված 1.1

Ընդհանուր վարկային ներդրումների ներմարզային կառուցվածքը (30.06.07թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են մարզի ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Սյունիքի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ													
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	17.2	18.4	26.5	9.4	17.7	6.3	11.6	12.4	3.2	7.5	9.2	15.6	16.3
հանքագործական	6.1	5.8	0.2	15.9	17.6	3.3	25.3	0.0	2.0	0.0	1.4	16.1	6.6
էներգետիկա	16.2	4.3	0.3	0.0	2.0	0.0	5.4	0.2	0.0	5.0	57.2	0.0	12.7
սննդամթերք	38.2	72.3	55.4	60.8	77.8	13.0	22.2	89.3	16.3	44.8	6.4	57.3	42.9
թեթև	6.4	1.4	3.1	1.8	0.5	25.2	1.1	10.1	35.4	2.9	5.3	4.1	5.8
քիմիական	2.9	3.7	0.0	0.0	0.0	0.8	0.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	2.2
շինանյութերի	8.3	8.2	6.7	11.1	0.5	51.6	4.1	0.1	24.2	23.3	0.6	12.9	8.6
թանկարժեք իրեր	2.5	0.1	0.9	0.1	0.0	0.0	0.5	0.0	12.6	0.0	0.0	2.1	2.0
մետալուրգիա	0.1	0.0	4.0	0.0	0.0	5.4	28.7	0.0	0.0	0.0	0.0	0.0	1.2
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	7.8	0.0	4.7	0.9	1.6	0.2	5.6	0.0	7.8	16.3	4.6	0.0	6.4
արդյունաբերության այլ ճյուղեր	11.5	4.4	24.7	9.5	0.0	0.5	6.8	0.4	1.8	7.7	24.6	7.5	11.5
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում՝	0.5	22.1	11.7	23.5	25.3	10.6	13.8	18.6	25.3	19.8	19.3	7.8	5.6
անասնապահություն	74.3	61.2	47.9	18.7	88.7	70.0	94.6	88.4	98.3	68.3	89.4	36.3	63.7
բուսաբուծություն	25.7	38.8	52.1	81.3	11.3	30.0	5.4	11.6	1.7	31.7	10.6	63.7	36.3
1.3. շինարարություն	5.8	3.7	1.0	0.4	0.9	2.1	1.7	0.1	1.7	1.7	2.1	11.2	4.7
1.4. տրանսպորտ և կապ	1.6	0.2	1.4	0.4	0.4	2.3	0.4	2.9	0.3	0.2	4.2	0.2	1.4
1.5. առևտուր, այդ թվում՝	23.4	12.3	7.8	12.4	7.2	14.7	13.8	5.3	9.6	12.1	17.7	20.8	19.9
մեծածախ առևտուր	65.1	39.9	44.4	52.3	27.3	27.7	53.1	27.6	29.6	30.1	36.6	28.7	59.8
մանրածախ առևտուր	34.9	60.1	55.6	47.7	72.7	72.3	46.9	72.4	70.4	69.9	63.4	71.3	40.2
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	4.2	1.9	9.1	2.9	1.3	1.1	2.4	1.9	9.3	12.7	1.3	5.3	4.2
1.7. ֆինանսական հատված	6.5	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	22.6	5.2
1.8. սպառողական վարկեր, այդ թվում՝	37.5	39.2	41.4	49.7	44.8	61.0	52.8	55.6	48.9	39.9	44.9	16.4	39.8
հիփոթեքային (բնակարանային) վարկեր	38.6	5.2	21.4	9.3	8.1	8.4	10.1	4.0	4.3	3.3	7.5	12.2	28.3
1.9. տնտեսության այլ ճյուղեր	3.2	2.2	1.3	1.4	2.5	1.9	3.4	3.2	1.7	6.1	1.2	0.1	2.8
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
2.1. ժամկետանց	0.9	0.6	1.3	0.9	0.9	1.1	1.8	1.0	1.9	0.3	0.9	1.5	1.0
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	8.5	14.3	10.0	17.6	14.9	22.3	16.4	16.1	17.0	17.8	13.1	0.0	10.2
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	30.5	22.4	34.7	16.3	16.6	30.0	25.3	17.5	33.2	41.4	31.6	26.7	29.1
3. Ակտիվների քանակը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
3.1. մինչև 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	85.8	97.6	96.5	96.6	97.3	95.7	97.4	97.7	97.5	96.6	95.2	90.6	93.1
3.2. 5001-10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	5.9	1.3	1.8	2.2	1.4	3.0	1.4	1.5	1.3	2.3	2.9	3.1	3.3
3.3. 10 001-25 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	4.1	0.6	1.0	0.8	0.8	0.8	0.8	0.6	0.8	0.5	1.3	3.6	1.9
3.4. 25 001-50 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	1.9	0.3	0.4	0.2	0.3	0.3	0.2	0.2	0.2	0.2	0.3	1.3	0.8
3.5. 50 001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	2.3	0.2	0.4	0.2	0.2	0.2	0.3	0.1	0.1	0.3	0.2	1.4	0.9

Հավելված 1.2

Ընդհանուր վարկային ներդրումների միջմարզային ճյուղային կառուցվածքը (30.06.07թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են համակարգի տվյալ ճյուղին տրամադրված ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ													
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	72.2	4.2	8.5	2.4	2.1	1.3	2.5	1.7	0.2	0.5	1.1	3.3	100.0
հանքագործական	66.3	3.6	0.3	5.8	5.5	0.7	9.5	0.0	0.1	0.0	0.2	8.0	100.0
էներգետիկա	92.1	1.4	0.2	0.0	0.3	0.0	1.1	0.0	0.0	0.2	4.8	0.0	100.0
սննդամթերք	64.3	7.0	11.0	3.5	3.8	0.4	1.3	3.6	0.1	0.5	0.2	4.4	100.0
թեթև	79.6	1.0	4.5	0.7	0.2	5.6	0.5	2.9	1.5	0.2	1.0	2.3	100.0
քիմիական	92.2	6.9	0.0	0.0	0.0	0.5	0.5	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0
շինանյութերի	70.0	4.0	6.7	3.2	0.1	7.8	1.2	0.0	0.7	1.3	0.1	5.0	100.0
թանկարժեք իրեր	90.4	0.2	3.7	0.1	0.0	0.0	0.6	0.0	1.5	0.0	0.0	3.5	100.0
մետալուրգիա	8.0	0.0	27.9	0.0	0.0	5.7	58.3	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	88.3	0.0	6.3	0.3	0.5	0.0	2.2	0.0	0.3	1.2	0.8	0.0	100.0
արդյունաբերության այլ ճյուղեր	71.8	1.6	18.3	2.0	0.0	0.1	1.5	0.1	0.0	0.3	2.3	2.1	100.0
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում՝	5.6	14.5	10.9	17.7	8.6	6.4	8.6	7.4	5.5	3.6	6.4	4.8	100.0
անասնապահություն	6.6	13.9	8.2	5.2	12.0	7.0	12.7	10.3	8.4	3.9	9.0	2.7	100.0
բուսաբուծություն	4.0	15.4	15.6	39.6	2.7	5.3	1.3	2.4	0.3	3.2	1.9	8.4	100.0
1.3. շինարարություն	82.7	2.9	1.1	0.3	0.3	1.5	1.3	0.0	0.4	0.4	0.8	8.1	100.0
1.4. տրանսպորտ և կապ	75.6	0.5	5.0	1.2	0.6	5.3	1.0	4.5	0.2	0.1	5.5	0.5	100.0
1.5. առևտուր, այդ թվում՝	80.3	2.3	2.1	2.6	0.7	2.5	2.4	0.6	0.6	0.6	1.7	3.6	100.0
մեծածախ առևտուր	87.4	1.5	1.5	2.3	0.3	1.2	2.2	0.3	0.3	0.3	1.0	1.7	100.0
մանրածախ առևտուր	69.8	3.4	2.9	3.1	1.2	4.5	2.8	1.1	1.0	1.1	2.6	6.4	100.0
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	68.7	1.7	11.4	2.9	0.6	0.9	2.0	1.0	2.7	3.1	0.6	4.4	100.0
1.7. ֆինանսական հատված	85.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	14.9	100.0
1.8. սպառողական վարկեր, այդ թվում՝	64.4	3.6	5.5	5.3	2.2	5.2	4.6	3.1	1.5	1.0	2.1	1.4	100.0
հիփոթեքային (բնակարանային) վարկեր	87.7	0.7	4.1	1.7	0.6	1.5	1.7	0.4	0.2	0.1	0.6	0.6	100.0
1.9. տնտեսության այլ ճյուղեր	78.1	2.9	2.3	2.1	1.7	2.3	4.2	2.5	0.7	2.2	0.8	0.2	100.0
2. Մարզի ընդհանուր վարկային ներդրումների տեսակարար կշիռը բանկային համակարգի վարկային ներդրումներում, այդ թվում՝	68.2	3.7	5.3	4.2	1.9	3.4	3.5	2.2	1.2	1.0	1.9	3.4	100.0
2.1. ժամկետանց	62.3	2.1	7.3	3.8	1.8	3.8	6.6	2.4	2.4	0.3	1.7	5.5	100.0
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	56.8	5.2	5.2	7.3	2.8	7.4	5.6	3.5	2.0	1.8	2.4	0.0	100.0
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	71.5	2.8	6.3	2.4	1.1	3.5	3.0	1.3	1.4	1.5	2.0	3.2	100.0
3. Ակտիվների քանակը	32.8	8.0	8.1	9.6	4.8	10.3	8.9	6.0	3.4	2.3	3.8	1.9	100.0
3.1. մինչև 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	30.2	8.4	8.4	10.0	5.0	10.6	9.3	6.3	3.6	2.4	3.9	1.9	100.0
3.2. 5001-10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	59.5	3.3	4.4	6.5	2.1	9.5	3.7	2.7	1.4	1.6	3.5	1.9	100.0
3.3. 10 001-25 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	69.0	2.6	4.2	4.2	2.0	4.5	3.5	1.8	1.4	0.6	2.6	3.6	100.0
3.4. 25 001-50 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	75.7	2.5	3.8	2.7	1.8	3.4	2.6	1.2	0.9	0.7	1.6	3.2	100.0
3.5. 50 001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	81.7	1.8	3.5	1.8	1.0	2.1	2.5	0.6	0.5	0.8	0.9	2.8	100.0

Հավելված 1.3

Ընդհանուր վարկային ներդրումների ներմարզային ճյուղային կառուցվածքն ըստ ժամկետների (30.06.07թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են մարզի ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

	Երևան		Արարատի մարզ		Կոտայքի մարզ		Արմավիրի մարզ		Արագածոտնի մարզ		Գեղարքունիքի մարզ		Լոռու մարզ		Տավուշի մարզ		Վայոց ձորի մարզ		Սյունիքի մարզ		ԼՂՀ		Ընդամենը	
	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր	մինչև 1 տարի	1 տարուց վեր
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ	4.5	12.8	2.4	16.0	3.3	23.1	0.5	8.9	1.6	16.0	0.6	5.7	6.0	5.6	2.5	9.9	1.2	2.1	0.8	6.7	2.6	6.6	3.5	12.0	3.8	12.4
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝																										
հանքագործական	0.0	6.1	0.0	5.8	0.0	0.2	0.0	15.9	0.1	17.5	0.3	3.1	13.9	11.4	0.0	0.0	0.6	1.4	0.0	0.0	0.5	0.9	14.9	1.2	0.9	5.8
էներգետիկա	10.6	5.6	0.0	4.3	0.0	0.3	0.0	0.0	0.0	2.0	0.0	0.0	3.2	2.1	0.0	0.2	0.0	0.0	0.0	5.0	24.9	32.3	0.0	0.0	8.0	4.7
սննդամթերք	6.6	31.6	7.5	64.8	5.1	50.3	2.1	58.8	8.9	68.9	5.1	7.9	6.3	15.9	18.2	71.1	1.2	15.1	3.4	41.3	1.9	4.5	5.8	51.5	6.5	36.4
թեթև	0.9	5.6	0.2	1.2	0.4	2.7	0.9	0.9	0.0	0.5	1.4	23.8	0.2	0.9	1.9	8.1	25.2	10.2	0.0	2.9	1.0	4.3	0.5	3.6	0.8	5.0
քիմիական	1.1	1.7	1.7	2.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.2	0.6	0.0	0.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.9	1.3
շինանյութերի	1.8	6.5	3.5	4.7	4.4	2.3	0.5	10.6	0.2	0.3	2.1	49.5	0.3	3.8	0.0	0.1	4.8	19.4	3.8	19.5	0.2	0.4	0.1	12.8	1.9	6.7
թանկարժեք իրեր	0.3	2.2	0.1	0.0	0.3	0.6	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.4	0.0	0.0	2.1	10.4	0.0	0.0	0.0	0.0	0.1	2.0	0.2	1.8
մետալուրգիա	0.0	0.1	0.0	0.0	0.4	3.7	0.0	0.0	0.0	0.0	0.0	5.4	25.4	3.3	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.7	0.6
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	1.9	5.9	0.0	0.0	0.4	4.3	0.2	0.7	0.0	1.5	0.0	0.2	2.6	3.0	0.0	0.0	1.5	6.3	2.1	14.2	0.0	4.6	0.0	0.0	1.5	4.9
արդյունաբերության այլ ճյուղեր	2.6	8.9	0.0	4.3	1.6	23.1	1.3	8.1	0.0	0.0	0.2	0.3	0.0	6.8	0.0	0.4	1.0	0.8	1.0	6.7	0.2	24.4	1.4	6.2	2.1	9.4
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում	0.0	0.4	10.3	11.8	2.6	9.1	16.5	7.0	7.6	17.7	3.0	7.6	1.7	12.1	3.3	15.3	2.4	22.9	4.5	15.3	3.5	15.8	0.7	7.1	1.8	3.8
անասնապահություն	3.6	70.7	25.8	35.5	7.2	40.7	7.4	11.3	28.8	59.9	17.3	52.8	12.0	82.6	15.7	72.7	9.1	89.1	22.2	46.1	15.7	73.7	3.2	33.1	14.3	49.4
բուսաբուծություն	5.5	20.2	20.8	17.9	15.0	37.1	62.6	18.6	1.3	10.0	10.8	19.2	0.4	5.0	1.9	9.7	0.3	1.4	0.5	31.2	2.6	8.0	5.7	58.0	17.5	18.8
1.3. շինարարություն	1.2	4.5	0.3	3.4	0.3	0.7	0.1	0.3	0.3	0.6	1.0	1.1	0.8	0.9	0.0	0.0	0.0	1.7	0.4	1.3	0.2	1.9	2.0	9.2	1.0	3.7
1.4. տրանսպորտ և կապ	0.6	1.0	0.0	0.2	0.1	1.3	0.3	0.1	0.1	0.4	0.1	2.1	0.1	0.4	0.5	2.4	0.0	0.3	0.0	0.2	0.1	4.2	0.0	0.2	0.5	1.0
1.5. առևտուր, այդ թվում	7.1	16.3	3.0	9.3	3.3	4.5	2.9	9.4	1.3	5.9	2.7	12.0	3.1	10.7	1.0	4.3	2.3	7.3	1.6	10.5	3.9	13.8	4.4	16.4	5.8	14.1
մեծածախ առևտուր	24.8	40.3	14.9	24.9	30.6	13.8	10.2	42.1	2.6	24.6	5.5	22.2	9.2	43.9	4.9	22.7	9.7	19.9	3.5	26.7	9.1	27.6	14.6	14.1	22.3	37.5
մանրածախ առևտուր	5.6	29.4	9.7	50.5	12.1	43.5	13.4	34.3	15.2	57.5	13.0	59.3	13.3	33.6	14.7	57.7	14.6	55.8	9.5	60.3	13.0	50.4	6.5	64.8	6.7	33.5
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	0.5	3.8	0.4	1.4	1.1	7.9	0.5	2.4	0.2	1.0	0.1	1.0	0.4	2.0	0.4	1.5	0.3	9.0	0.3	12.5	0.1	1.2	0.5	4.9	0.5	3.7
1.7. ֆինանսական հատված	5.9	0.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	22.1	0.5	4.8	0.4
1.8. սպասողական վարկեր, այդ թվում՝	8.8	28.8	20.3	18.9	16.9	24.5	23.8	25.9	22.3	22.5	35.4	25.6	29.6	23.3	31.6	24.0	28.4	20.5	18.8	21.0	20.4	24.5	8.5	7.9	13.2	26.6
հիփոթեքային (բնակարանային) վարկեր	2.4	36.2	0.3	4.9	0.6	20.8	0.8	8.5	0.5	7.6	0.4	8.0	0.6	9.5	0.2	3.7	0.2	4.1	0.2	3.1	0.5	7.0	1.0	11.1	1.7	26.6
1.9. տնտեսության այլ ճյուղեր	1.2	2.1	0.2	2.0	0.1	1.1	0.0	1.4	0.1	2.4	0.2	1.7	0.3	3.1	0.1	3.1	0.1	1.6	0.0	6.1	0.6	0.6	0.0	0.1	0.8	2.0
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	29.8	70.2	37.0	63.0	27.8	72.2	44.6	55.4	33.5	66.5	43.2	56.8	41.9	58.1	39.4	60.6	34.7	65.3	26.3	73.7	31.4	68.6	41.8	58.2	32.2	67.8
2.1. ժամկետանց	0.9	0.0	0.6	0.0	1.3	0.0	0.9	0.0	0.9	0.0	1.1	0.0	1.8	0.0	1.0	0.0	1.9	0.0	0.3	0.0	0.9	0.0	1.5	0.0	1.0	0.0
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	1.0	7.5	6.0	8.3	2.3	7.7	9.1	8.4	4.4	10.5	4.7	17.6	3.7	12.7	2.7	13.4	2.8	14.2	3.1	14.7	3.1	10.0	0.0	0.0	2.0	8.2
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	6.1	24.4	5.3	17.1	7.6	27.1	4.3	11.9	3.4	13.2	4.2	25.9	4.5	20.7	3.0	14.5	8.4	24.8	3.8	37.6	8.3	23.3	2.8	23.9	5.8	23.4
3. Ակտիվների քանակը	65.5	34.5	77.6	22.4	70.3	29.7	81.5	18.5	66.9	33.1	81.7	18.3	80.4	19.6	79.6	20.4	73.6	26.4	81.0	19.0	79.0	21.0	67.1	32.9	73.5	26.5
3.1. մինչև 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	62.5	23.3	77.4	20.1	70.2	26.3	81.1	15.5	66.7	30.6	81.4	14.3	80.1	17.3	79.5	18.2	73.5	24.0	81.0	15.6	78.7	16.5	60.0	30.6	72.2	20.8
3.2. 5001-10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	1.0	4.9	0.1	1.3	0.1	1.7	0.3	1.9	0.1	1.3	0.2	2.8	0.1	1.2	0.0	1.4	0.0	1.3	0.0	2.3	0.1	2.8	1.9	1.3	0.5	2.8
3.3. 10 001-25 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.8	3.2	0.0	0.6	0.0	1.0	0.1	0.8	0.0	0.8	0.0	0.8	0.1	0.7	0.0	0.5	0.0	0.8	0.0	0.5	0.1	1.2	2.8	0.8	0.4	1.6
3.4. 25 001-50 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.3	1.6	0.0	0.2	0.0	0.4	0.0	0.2	0.0	0.3	0.0	0.3	0.0	0.2	0.0	0.2	0.0	0.2	0.0	0.2	0.0	0.3	1.2	0.1	0.1	0.7
3.5. 50 001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.8	1.5	0.0	0.2	0.0	0.4	0.0	0.1	0.0	0.2	0.0	0.2	0.0	0.2	0.0	0.1	0.0	0.1	0.0	0.3	0.0	0.2	1.2	0.2	0.3	0.6

Հավելված 1.4

Ընդհանուր վարկային ներդրումների ներմարզային ճյուղային կառուցվածքն ըստ արժույթների (30.06.07թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են մարզի ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

	Ընդամենը		ԱՄՆ դոլար		ԵՎՐՈ		Ռուսական ռուբլի		Ճապոնական իեն		Շվեյցարական ֆրանկ		Անգլիական ֆունտ ստերլինգ		Կանադական դոլար		Ավստրալական դոլար		Դանիական կրոն		Նորվեգական կրոն		Շվեդական կրոն		Այլ արժույթներ	
	հոդված	հատվածում	հոդված	հատվածում	հոդված	հատվածում	հոդված	հատվածում	հոդված	հատվածում	հոդված	հատվածում	հոդված	հատվածում	հոդված	հատվածում	հոդված	հատվածում	հոդված	հատվածում	հոդված	հատվածում	հոդված	հատվածում	հոդված	հատվածում
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ	8.2	9.1	11.7	6.7	9.0	17.5	3.6	5.8	7.7	10.0	4.8	1.5	5.5	6.1	5.9	6.5	3.0	0.2	4.5	3.0	8.1	1.0	11.7	3.9	7.9	8.4
1.1. արդյունաբերություն, այդ թվում																										
հանքագործական	2.4	3.7	5.8	0.0	0.2	0.0	14.5	1.4	17.6	0.0	3.3	0.0	10.7	14.6	0.0	0.0	2.0	0.0	0.0	0.0	1.4	0.0	1.6	14.5	3.1	3.5
էներգետիկա	7.4	8.8	4.3	0.0	0.3	0.0	0.0	0.0	2.0	0.0	0.0	0.0	4.4	1.0	0.2	0.0	0.0	0.0	5.0	0.0	46.2	11.0	0.0	0.0	6.2	6.5
սննդամթերք	19.3	18.9	45.9	26.4	17.7	37.7	15.6	45.2	22.9	54.9	9.8	3.2	15.0	7.1	44.2	45.0	15.6	0.8	21.4	23.4	6.4	0.0	52.2	5.1	21.4	21.5
թեթև	2.6	3.8	1.0	0.4	2.7	0.4	1.4	0.4	0.5	0.0	4.9	20.2	0.5	0.6	2.9	7.1	35.4	0.0	2.9	0.0	4.9	0.4	2.0	2.1	2.6	3.3
քիմիական	0.1	2.8	0.1	3.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.8	0.0	0.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	2.1
շինանյութերի	4.4	3.9	4.3	3.9	2.6	4.1	2.7	8.4	0.5	0.0	51.6	0.0	3.2	0.9	0.1	0.0	24.2	0.0	22.9	0.4	0.6	0.0	9.7	3.2	4.9	3.6
թանկարժեք իրեր	1.3	1.2	0.1	0.0	0.1	0.7	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.5	0.0	0.0	0.0	8.7	3.8	0.0	0.0	0.0	0.0	2.1	0.0	1.1	0.9
մետալուրգիա	0.1	0.0	0.0	0.0	4.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	5.4	0.0	4.1	24.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.6	0.6
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	4.2	3.6	0.0	0.0	3.9	0.8	0.9	0.0	0.1	1.5	0.2	0.0	5.6	0.0	0.0	0.0	7.8	0.0	0.0	16.3	4.6	0.0	0.0	0.0	3.6	2.8
արդյունաբերության այլ ճյուղեր	5.6	5.9	2.0	2.4	2.4	22.4	3.3	6.2	0.0	0.0	0.5	0.0	3.2	3.6	0.4	0.0	0.6	1.2	7.7	0.0	24.6	0.0	7.5	0.0	5.0	6.5
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում	0.2	0.2	10.6	11.4	3.5	8.1	13.3	10.3	10.1	15.2	5.6	5.0	4.5	9.3	11.0	7.7	13.8	11.5	7.4	12.5	10.7	8.6	7.6	0.3	2.8	2.8
անասնապահություն	47.1	27.2	25.4	35.8	19.9	27.9	9.4	9.4	35.7	52.9	35.6	34.4	30.7	63.9	50.6	37.8	53.3	44.9	35.4	32.9	47.7	41.7	36.2	0.0	30.9	32.8
բուսաբուծություն	5.9	19.9	22.8	16.0	10.4	41.7	47.0	34.3	4.4	7.0	17.5	12.5	1.6	3.8	8.2	3.4	1.2	0.5	1.7	30.0	7.7	2.9	60.4	3.3	18.9	17.5
1.3. շինարարություն	3.5	2.3	2.5	1.2	0.9	0.1	0.2	0.2	0.4	0.5	1.7	0.4	1.6	0.2	0.1	0.0	1.7	0.0	1.5	0.1	2.1	0.0	4.8	6.4	2.9	1.8
1.4. տրանսպորտ և կապ	1.0	0.6	0.2	0.0	1.2	0.2	0.4	0.0	0.4	0.0	1.5	0.8	0.4	0.0	2.9	0.0	0.0	0.3	0.2	0.0	1.2	3.0	0.2	0.0	0.9	0.5
1.5. առևտուր, այդ թվում	7.7	15.7	8.3	4.1	4.1	3.8	9.4	3.0	4.9	2.3	11.9	2.8	10.8	3.0	3.7	1.6	9.2	0.4	7.6	4.5	13.1	4.6	16.8	4.0	8.2	11.7
մեծածախ առևտուր	18.4	46.7	27.2	12.7	6.3	38.0	34.2	18.1	7.5	19.8	21.1	6.6	34.2	19.0	21.8	5.9	28.0	1.6	0.9	29.3	12.1	24.5	28.7	0.0	19.4	40.5
մանրածախ առևտուր	14.7	20.3	39.9	20.2	45.7	9.9	41.4	6.3	61.1	11.7	60.1	12.2	44.0	2.8	48.0	24.4	68.0	2.3	62.0	7.9	61.9	1.5	52.2	19.2	21.7	18.5
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	2.0	2.2	0.9	1.0	6.5	2.6	1.9	1.0	0.7	0.6	1.1	0.0	2.1	0.4	1.2	0.7	4.7	4.6	10.6	2.1	1.2	0.2	5.2	0.2	2.3	1.9
1.7. ֆինանսական հատված	4.5	2.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	20.9	1.7	3.8	1.5
1.8. սպառողական վարկեր, այդ թվում	23.9	13.6	35.5	3.7	33.5	7.8	40.1	9.5	39.2	5.6	52.2	8.7	45.1	7.8	49.8	5.9	43.4	5.5	35.7	4.2	38.2	6.7	12.8	3.6	28.4	11.4
հիփոթեքային (բնակարանային) վարկեր	13.7	24.9	4.4	0.9	9.9	11.5	4.2	5.1	3.8	4.2	5.3	3.2	4.1	6.0	1.7	2.3	2.3	2.0	1.7	1.6	5.2	2.3	6.5	5.6	10.6	17.7
1.9. տնտեսության այլ ճյուղեր	1.6	1.6	1.0	1.2	0.7	0.6	0.8	0.6	0.2	2.3	1.4	0.5	1.2	2.2	1.8	1.3	0.3	1.4	1.1	5.0	1.1	0.1	0.1	0.0	1.4	1.4
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	52.6	47.4	70.7	29.3	59.4	40.6	69.7	30.3	63.6	36.4	80.3	19.7	71.1	28.9	76.4	23.6	76.2	23.8	68.6	31.4	75.7	24.3	80.0	20.0	58.5	41.5
2.1. ժամկետանց	0.7	0.2	0.4	0.2	1.2	0.2	0.7	0.2	0.6	0.3	0.9	0.2	1.6	0.3	0.8	0.3	1.6	0.2	0.3	0.0	0.7	0.2	1.2	0.3	0.8	0.2
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	5.4	3.1	8.7	5.6	7.6	2.4	11.6	6.0	7.4	7.5	16.3	5.9	10.6	5.8	11.9	4.2	11.5	5.5	6.4	11.5	8.5	4.5	0.0	0.0	6.6	3.6
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ միջազգային ծրագրերով)	16.5	14.0	12.6	9.9	19.9	14.7	11.4	4.9	12.8	3.7	25.2	4.8	17.6	7.7	9.7	7.8	24.1	9.0	26.2	15.2	24.5	7.2	20.1	6.6	16.9	12.2
3. Ակտիվների քանակը	88.2	11.8	84.5	15.5	84.4	15.6	85.0	15.0	87.3	12.7	88.7	11.3	86.8	13.2	89.0	11.0	85.8	14.2	86.9	13.1	85.8	14.2	77.2	22.8	86.8	13.2
3.1. մինչև 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	78.7	7.1	82.7	14.8	81.9	14.6	82.5	14.1	85.6	11.7	85.2	10.5	84.8	12.5	87.3	10.5	84.0	13.5	84.2	12.4	81.9	13.3	69.2	21.4	81.9	11.1
3.2. 5001-10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	4.4	1.5	1.0	0.3	1.4	0.3	1.6	0.6	0.9	0.5	2.5	0.5	1.1	0.3	1.2	0.3	0.9	0.4	1.9	0.4	2.5	0.4	2.5	0.6	2.5	0.8
3.3. 10 001-25 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	2.8	1.3	0.5	0.2	0.7	0.3	0.6	0.2	0.5	0.3	0.6	0.2	0.6	0.1	0.4	0.2	0.7	0.1	0.4	0.1	1.0	0.3	3.2	0.4	1.4	0.6
3.4. 25 001-50 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	1.2	0.7	0.2	0.1	0.2	0.2	0.1	0.1	0.2	0.1	0.2	0.1	0.2	0.1	0.1	0.1	0.2	0.0	0.2	0.0	0.2	0.1	1.1	0.2	0.5	0.3
3.5. 50 001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	1.1	1.2	0.1	0.1	0.2	0.2	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.0	0.1	0.0	0.1	0.2	0.2	0.0	1.2	0.2	0.5	0.5

Հավելված 1.5

Ընդհանուր վարկային ներդրումների և ավանդների ծավալների փոփոխությունը 30.09.2000-30.06.2007թթ. ժամանակահատվածում

%

	Երևան	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԿՈՂ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ												
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	91.0	-50.9	92.7	87.5	393.1	-37.6	-66.9	23.5	-63.5	89.3	46.2	221.9	51.3
հանքագործական	100.0	585.1	100.0	100.0	100.0	100.0	58426.8	0.0	100.0	0.0	-97.2	100.0	1081.5
էներգետիկա	-53.2	-85.6	-98.9	-100.0	100.0	-100.0	100.0	100.0	0.0	100.0	100.0	0.0	-58.1
սննդամթերք	709.6	-54.2	205.8	38.9	347.7	-42.1	128.0	1580.3	-93.2	-15.2	-35.7	161.8	181.3
թեթև	114.6	-90.1	5223.9	322.6	-80.5	615.8	-39.8	100.0	2.0	100.0	31.0	-33.0	81.0
քիմիական	-31.7	187.8	0.0	0.0	0.0	100.0	-99.8	-100.0	0.0	0.0	0.0	-100.0	-78.0
շինանյութերի	1275.5	100.0	26610.8	100.0	52.5	100.0	3102.8	100.0	100.0	100.0	-8.6	1832.0	1696.8
թանկարժեք իրեր	175.9	-64.8	100.0	100.0	0.0	100.0	100.0	0.0	100.0	0.0	0.0	100.0	200.2
մետալուրգիա	-84.8	0.0	2030.9	0.0	0.0	100.0	100.0	0.0	0.0	0.0	-100.0	0.0	42.0
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	317.8	0.0	-15.3	100.0	100.0	38.2	100.0	-100.0	100.0	100.0	100.0	0.0	119.3
արդյունաբերության այլ ճյուղեր	641.5	100.0	1030.8	618.3	0.0	-92.7	554.6	-95.6	1329.2	100.0	12049.3	244.8	582.4
1.2. գյուղատնտեսություն	-41.7	257.9	139.6	35.8	140.3	168.4	161.2	953.0	1129.0	347.2	454.6	95.9	117.0
1.3. շինարարություն	1233.5	782.8	-51.0	-56.4	107.1	21.1	77.2	2217.1	100.0	22.7	33.7	212.6	559.7
1.4. տրանսպորտ և կապ	118.3	735.3	8214.5	73.0	100.0	12439.1	100.0	100.0	100.0	100.0	100.0	624.5	181.4
1.5. առևտուր	431.5	560.8	269.7	859.5	10016.6	645.6	298.7	454.6	6189.2	6594.0	27167.4	1584.3	468.6
1.6. ֆինանսական հատված	91.8	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	125.2
1.7. սպառողական վարկեր, այդ թվում	405.1	2557.9	1163.0	3866.4	1664.2	2424.2	1381.0	1151.5	5077.5	1953.7	1844.1	1060.3	582.2
1.8. տնտեսության այլ ճյուղեր	26.6	3.7	142.5	-28.5	102.5	-57.3	168.7	-28.9	153.9	939.7	-28.5	317.4	31.6
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	211.5	94.9	230.7	213.0	426.4	266.4	97.9	311.1	513.3	630.4	480.0	509.6	216.8
2.1. ժամկետանց	-83.9	-54.6	-59.0	-73.4	87.6	-86.7	-10.7	303.4	58.0	-68.4	10.5	-1.2	-78.8
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	195.9	-49.9	59.4	-16.9	56.2	314.6	75.5	40.9	262.3	345.1	245.2	-100.0	90.6
Ընդամենը ներգրավված միջոցներ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Հավելված 2.4

Ընդհանուր ներգրավված միջոցների ներմարզային կառուցվածքը ըստ դրամային և արտարժութային բացվածքի (30.06.07թ.)

%

	Երևան	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Վայոց ձորի մարզ	Տավուշի մարզ	Գեղարքունիքի մարզ	Սյունիքի մարզ	ՀՀ	Ընդամենը
Դրամով ներգրավված միջոցներ	48	60	59	33	63	58	69	69	72	63	68	59	50
Արտարժույթով ներգրավված միջոցներ	52	40	41	67	37	42	31	31	28	37	32	41	50
Ընդամենը ներգրավված միջոցներ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Հավելված 2.5

Ցպահանջ ներգրավված միջոցների ներմարզային կառուցվածքը (30.06.07թ.)

%

	Երևան	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Վայոց ձորի մարզ	Տավուշի մարզ	Գեղարքունիքի մարզ	Սյունիքի մարզ	ՀՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	39	31	22	12	29	32	28	19	36	24	9	11	36
Իրավաբանական անձանցից	61	69	78	88	71	68	72	81	64	76	91	89	64
Ընդամենը ներգրավված ցպահանջ միջոցներ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Հավելված 2.6

Ցպահանջ ներգրավված միջոցների միջմարզային կառուցվածքը (30.06.07թ.)

%

	Երևան	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ՀՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	93	1	1	1	0	1	1	0	0	0	1	1	100
Իրավաբանական անձանցից	81	1	2	3	1	1	1	1	0	0	3	5	100
Ընդամենը մարզի ներգրավված ցպահանջ միջոցներ/ընդհանուր ներգրավված ցպահանջ միջոցներ	85	1	1	2	0	1	1	1	0	0	2	4	100

Հավելված 2.7

Ժամկետային ներգրավված միջոցների ներմարզային կառուցվածքը (30.06.07թ.)

%

	Երևան	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	67	94	99	78	97	83	87	95	88	94	92	23	66
Իրավաբանական անձանցից	33	6	1	22	3	17	13	5	12	6	8	77	34
Ընդամենը ներգրավված ցպահանջ միջոցներ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Հավելված 2.8

Ժամկետային ներգրավված միջոցների միջմարզային կառուցվածքը (30.06.07թ.)

%

	Երևան	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	84	1	1	1	1	3	2	1	0	1	2	2	100
Իրավաբանական անձանցից	81	0	0	1	0	1	1	0	0	0	0	16	100
Ընդամենը մարզի ներգրավված ժամկետային միջոցներ/ընդհանուր ներգրավված ժամկետային միջոցներ	83	1	1	1	0	2	2	1	0	1	2	7	100

Հավելված 2.9

ՀՀ դրամով ներգրավված միջոցների ներմարզային կառուցվածքը (30.06.07թ.)

%

	Երևան	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	37	41	33	33	36	40	58	37	45	61	52	19	37
Իրավաբանական անձանցից	63	59	67	67	64	60	42	63	55	39	48	81	63
Ընդամենը ՀՀ դրամով ներգրավված ցպահանջ միջոցներ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Հավելված 2.10

ՀՀ դրամով ներգրավված միջոցների միջմարզային կառուցվածքը (30.06.07թ.)

%

	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	82	1	1	1	1	2	3	1	1	1	4	3	100
Իրավաբանական անձանցից	81	1	1	1	1	2	1	1	0	0	2	8	100
Ընդամենը մարզի ՀՀ դրամով ներգրավված ժամկետային միջոցներ/ընդհ. ՀՀ դրամով ներգրավված ժամկետային միջոցներ	81	1	1	1	1	2	2	1	1	1	3	6	100

Հավելված 2.11

Արտարժույթով ներգրավված միջոցների ներմարզային կառուցվածքը (30.06.06թ.)

%

	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	66	88	75	32	97	93	83	93	100	80	27	17	63
Իրավաբանական անձանցից	34	12	25	68	3	7	17	7	0	20	73	83	37
Ընդամենը արտարժույթով ներգրավված ցպահանջ միջոցներ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Հավելված 2.12

Արտարժույթով ներգրավված միջոցների միջմարզային կառուցվածքը (30.06.06թ.)

%

	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Ֆիզիկական անձանցից	90	1	1	1	0	2	1	1	0	0	1	1	100
Իրավաբանական անձանցից	81	0	1	5	0	0	0	0	0	0	3	10	100
Ընդամենը մարզի ներգր. ժամկետային արտարժութային միջոցներ/ընդհանուր ներգր. ժամկետային արտարժ. միջոցներ	87	1	1	3	0	1	1	0	0	0	1	4	100

Հավելված 3

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.06.07 թ.)

	Երևան	Արարատի մարզ	Արագածոտնի մարզ	Արմավիրի մարզ	Կոտայքի մարզ	Գեղարքունիքի մարզ	Լոռու մարզ	Սյունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Վանաձոր	ՀՀ	Ընդամենը
Բնակչությունը (2007 թ. հուլիսի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1105.3	275.6	276.8	280.6	140.0	280.8	282.1	239.6	134.1	55.8	152.8	137.7	3361.2
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	8%	8%	4%	8%	8%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալ	247623	8222	13509	21811	9932	18693	15138	7956	8871	24556	42083	127211	96735
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալ	189529	41127	58349	46351	42047	36901	38035	28768	27856	56985	37775	76884	91373
Մասնաճյուղերի քանակը*	136	15	24	17	12	28	29	16	11	7	14	18	327
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	2012481	151072	155808	360015	115877	187469	147260	119148	108141	195743	459302	973165	994332
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	1540342	755640	672958	765069	490548	370060	369991	430806	339588	454253	412288	588162	939215

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.06.06 թ.)

	Երևան	Արարատի մարզ	Արագածոտնի մարզ	Արմավիրի մարզ	Կոտայքի մարզ	Գեղարքունիքի մարզ	Լոռու մարզ	Սյունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Վանաձոր	ՀՀ	Ընդամենը
Բնակչությունը (2006 թ. հուլիսի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1103.8	274.5	275.5	279.4	139.7	281.2	282.9	239.4	134.3	55.8	152.9	137.2	3356.6
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	8%	8%	4%	8%	8%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	201849	6872	10427	20371	6058	13209	11474	7383	7006	20847	45294	124751	80132
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	138464	25607	40168	32410	27401	27783	26491	18481	18581	29936	43698	79685	67129
Մասնաճյուղերի քանակը*	128	15	20	15	9	28	24	16	10	7	14	17	303
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	1740631	125749	143635	379444	94028	132657	135244	110465	94090	166180	494672	1006810	887692
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	1194037	468616	553319	603682	425318	279019	312267	276517	249539	238630	477242	643104	743652

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.06.05 թ.)

	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Բնակչությունը (2005 թ. հուլիսի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1102.8	273.7	274.6	278.4	139.3	281.3	283.4	239.2	134.4	55.8	153.0	137.0	3352.9
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	8%	8%	4%	8%	8%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	174265	5057	5919	14319	5107	10824	8200	5596	6332	5982	111152	45491	68901
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	97639	21884	27458	21632	23310	20045	23091	14081	11806	22785	23686	47703	47435
Մասնաճյուղերի քանակը*	115	13	22	13	8	20	21	15	9	7	12	16	271
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	1671123	106461	73881	306651	88918	152237	110659	89239	94565	47685	1417182	389514	852460
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	936315	460736	342721	463268	405877	281929	311617	224551	176297	181629	301994	408458	586876

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.06.04թ.)

	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
Բնակչությունը (2004 թ. հուլիսի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1101.9	272.8	273.4	277.7	138.9	281.8	284.1	238.8	134.2	55.8	153.0	136.6	3362.4
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	8%	8%	4%	8%	8%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	145329	3955	5181	11776	4078	10777	6886	4993	6914	8019	22301	73976	56073
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	79071	14076	23889	18144	18285	14023	15904	7665	5556	11937	12805	37583	36993
Մասնաճյուղերի քանակը*	99	12	16	13	9	20	21	13	8	5	11	14	241
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	1617553	89902	88529	251548	62933	151853	93163	91715	115984	89487	310190	792602	782320
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	880085	319986	408200	387583	282202	197578	215163	140807	93202	133214	178102	402672	516127

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.06.03 թ.)

	Երևան	Արարատի մարզ	Արագածոտնի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ՀՀ	Ընդամենը
Բնակչությունը (2003 թ. հուլիսի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1101.5	272.4	272.7	277.0	138.6	282.1	284.5	238.2	134.3	55.8	153.0	135.7	3210.1
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	34%	8%	8%	9%	4%	9%	9%	7%	4%	2%	5%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	132238	4151	6552	11208	5593	9124	5155	3867	4258	7204	9163	35370	51354
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	58397	13248	15232	12395	8818	9370	11802	4730	3907	10395	7726	35011	28399
Մասնաճյուղերի քանակը*	97	10	17	15	9	22	22	13	9	6	12	14	246
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	1501656	113066	105104	206965	86134	116992	66660	70864	63532	66995	116827	361282	670134
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	663140	360885	244339	228893	135800	120152	152618	86659	58303	96674	98505	357617	370584

Մարզերի հարաբերական ցուցանիշներ (30.09.00թ.)

	Երևան	Արարատի մարզ	Արագածոտնի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ՀՀ	Ընդամենը
Բնակչությունը (2000 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ, հազար մարդ)	1248	311	329	323	168	362	394	279	157	69	164	134	3803
Բնակչության կառուցվածքն ըստ մարզերի	33%	8%	9%	8%	4%	10%	10%	7%	4%	2%	4%	4%	100%
Մեկ շնչին բաժին ընկնող ավանդի ծավալը	68799	3208	5740	9956	2650	7671	3679	3213	2597	7111	4523	22380	26888
Մեկ շնչին բաժին ընկնող վարկի ծավալը	53910	18691	14828	12872	6664	7807	13773	6014	3892	6273	6064	12459	25486
Մասնաճյուղերի քանակը*	78	11	16	11	8	14	20	14	7	6	14	12	211
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների ծավալը (հազար ՀՀ դրամ)	1100437	90723	118168	292159	55590	198459	72426	63991	58058	82245	53016	259985	484673
Մեկ մասնաճյուղին բաժին ընկնող վարկերի ծավալը (հազար ՀՀ դրամ)	862278	528606	305281	377731	139781	201980	271117	119764	87012	72561	71081	144735	459400

** Գլխամասերը ներառված են:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ 2006 ԹՎԱԿԱՆԻՆ [1,2,3]

Վիճակագրության վարչություն

Կարինե Կարապետյան, Անուշ Դավթյան, Անիկ Ալեքսանյան

Վերջին տարիներին դեպի Հայաստան ֆինանսական ներհոսքի աճը հաշվի առնելով՝ ընդլայնվել են այդ ներհոսքի վերաբերյալ ավելի ընդգրկուն ու համապարփակ տեղեկատվության ստացման աշխատանքները: Քանի որ ստացվող ֆինանսական հոսքերի ծավալների, դրանց բնույթի ու ժամկետայնության վերաբերյալ տեղեկատվությունը շատ կարևոր է ինչպես արժանահավատ վիճակագրություն ունենալու, այնպես էլ, առավել ևս, այդ վիճակագրության վրա կառուցվող տնտեսական քաղաքականության իրականացման համար, հետևաբար այս ոլորտում կատարվեցին մի շարք հետազոտություններ: Մասնավորապես, խնդիրներ կային մասնավոր տրանսֆերտների ու արտերկրներում աշխատող սեզոնային աշխատողների կողմից Հայաստան ուղարկվող փոխանցումների վիճակագրության հետ կապված, քանի որ նշված տեղեկատվության գրեթե հիմնական աղբյուրը բանկային համակարգն էր, իսկ կանխիկ տեսքով ստացվող կամ այլ կազմակերպությունների կողմից փոխանցվող միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը պարզապես բացակայում էր: Թերհաշվառման խնդիր կար նաև այլ ֆինանսական հոսքերի գնահատման մեջ, օրինակ՝ զբոսաշրջության միջոցով ֆինանսական հոսքերի շարժի, անշարժ գույքի մեջ ոչ ռեզիդենտների կողմից կատարվող ներդրումների և այլ հոդվածների գծով:

Վերջին տարիներին այս ոլորտում իրականացվեցին հետևյալ մեծածավալ հետազոտությունները. ՀՀ ԱՎԾ՝ «ՀՀ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն»[4], ՀՀ ԱՎԾ Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության (ՋՋՀԳ) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (ՄՄՀՀ) ծրագրի համագործակցությամբ 2006 թվականի սեպտեմբերից 2007 թվականի օգոստոս ժամանակահատվածում հանրապետության բոլոր սահմանային անցման կետերում իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտություն», ՀՀ կենտրոնական բանկ՝ «2005 թվականի ՀՀ տնային տնտեսությունների կողմից արտերկրներից ստացված դրամական փոխանցումների գնահատմանն ուղղված հարցում»[5], «Դոլարայնացման մակարդակի բացահայտմանն ուղղված հարցում»[6], ինչպես նաև այլ միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացված նմանատիպ հարցումներ, որոնց նույնաբնույթ հարցերի պատասխանները համեմատվել են: Հարցումների արդյունքների վերլուծությունը հիմնախնդիրները վեր հանելու հնարավորություն տվեց, ու ՀՀ վճարային հաշվեկշռի պաշտոնական տվյալների վերանայման խնդիր առաջադրվեց: Այդ նպատակով ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 18.05.2007 թ. 11 Ա որոշմամբ ստեղծվեց «Արտաքին հատվածի վիճակագրության կատարելագործման հարցերի միջգերատեսչական հանձնաժողով», որի աշխատանքների հիմնական նպատակը արտաքին հատվածի վիճակագրության արժանահավատության բարձրացումն է, վիճակագրության ընդլայնումն ու կատարելագործումը: Հետազոտությունների միջոցով ստացված արդյունքների հիման վրա վերանայվեցին 2004-2006 թվականների ՀՀ վճարային հաշվեկշիռները, մասնավորապես մեծացվեցին ընթացիկ տրանսֆերտների և սեզոնային աշխատողների կողմից ուղարկվող միջոցների ծավալները՝ կանխիկ տեսքով ստացվող միջոցները, ինչպես նաև անշարժ գույքի մեջ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների ներդրումները, վերանայվեցին նաև զբոսաշրջության հետ կապված որոշ ցուցանիշներ: Նշված փոփոխությունները արտացոլվեցին «Ճանապարհորդություն», «Աշխատուժից եկամուտ-

---

[1] Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:

[2] Նյութը հրապարակվում է պարբերաբար, «ՀՀ կենտրոնական բանկի բանբեր» եռամսյա պարբերականում, յուրաքանչյուր տարի (սկսած 2000 թվականից, հիմնականում 2-րդ եռամսյակի թողարկման մեջ): Սակայն 2007 թվականին, կապված 2004-2006 թվականների վճարային հաշվեկշռի որոշ հոդվածների վերանայումների հետ, նշված տարիների վերջնական ցուցանիշները հրապարակվեցին բավականին ուշ՝ 2007 թվականի հոկտեմբերի վերջին:

[3] Տվյալները վերցվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թվականի հունվար-սեպտեմբերին», «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թվականի հունվար-մայիսին», «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թվականի հունվար-փետրվարին» պարբերական տեղեկագրերից և ԱՎԾ այլ հրապարակումներից, ինչպես նաև ԿԲ տվյալների բազայից:

[4] Հարցումը անցկացվում է սկսած 1996 թվականից, 1998 թվականից հարցման մեջ ընդգրկվել են նաև արտաքին փոխանցումների վերաբերյալ հարցեր, իսկ 2006 թվականից այդ հարցերին ավելի մեծ ուշադրություն է դարձվել:

[5] Անցկացվել է 2006 թվականին՝ Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ, «Ալֆապլաս» խորհրդատվական կազմակերպության կողմից: Տվյալների բազան ամփոփվել է կենտրոնական բանկի կողմից: Հարցման արժանահավատությունն ու արդյունքների դինամիկան պարզելու համար 2007 թվականին ևս անցկացվել է նմանատիպ հարցում՝ «2006 թվականի ՀՀ տնային տնտեսությունների կողմից արտերկրներից ստացված դրամական փոխանցումների գնահատում»: Արդյունքները ամփոփման փուլում են:

[6] Հարցումն իրականացվում է սկսած 2003 թվականից՝ տարեկան կտրվածքով:

ներ», «Մասնավոր ընթացիկ տրանսֆերտներ», «Մասնավոր կապիտալ տրանսֆերտներ», «Օտարերկրյա ուղղակի ներդրումներ» և այլ ներդրումների «Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ» հոդվածներում:

Թեև ներկայիս վճարային հաշվեկշիռը ևս ունի կատարելագործման կարիք, մասնավորապես՝ գնահատվող հոդվածների մասով, սակայն որակական առումով այն առավել մոտ է միջազգային չափանիշներին, որոնց հնարավորինս մոտեցման ուղղությամբ էլ կշարունակվեն վերը նշված հանձնաժողովի հետագա աշխատանքները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2006 թվականին ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ՝ 2005 թվականի համեմատ աճել է 65.4 մլն դոլարով կամ 126.5%-ով: Ընդ որում, մոտ 52.4%-ով աճել է «Ապրանքներ» հոդվածի բացասական հաշվեկշիռը, ինչը, չնայած աշխատուժից եկամուտների ու մասնավոր տրանսֆերտների զուտ ներհոսքի շուրջ 40.7% աճին, այնուամենայնիվ հանգեցրել է ընթացիկ հաշվի պակասուրդի խորացմանը: Ընդ որում, աշխատուժից եկամուտների ու մասնավոր տրանսֆերտների ներհոսքի աճը մի կողմից ուղղակիորեն նպաստել է ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը, մյուս կողմից՝ եկամուտների աճի միջոցով հանգեցրել ներմուծման ծավալների աճի՝ տնտեսությունում տնօրինվող եկամուտների աճի հետևանքով: Ներմուծման ծավալների աճին նպաստել են նաև տարվա ընթացքում գրանցված բարձր տնտեսական աճի արդյունքում եկամուտների, ինչպես նաև մեքենասարքավորումների տեսքով ներկրվող ներդրումների աճը:

2006 թվականին զգալիորեն ավելացել են նաև ուղղակի ներդրումով ձեռնարկությունների եկամուտները, որոնք նորից վերաներդրվել են տվյալ ձեռնարկությունում: Արդյունքում՝ աճել է ընթացիկ հաշվի պակասուրդը՝ շուրջ 194 մլն դոլարով: Կապիտալի և ֆինանսական հաշվում զգալի են եղել օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները՝ շուրջ 450 մլն դոլար, մասնավոր հատվածի կողմից ներկրված կանխիկ արտարժույթի ծավալները՝ շուրջ 221 մլն դոլար: Տարվա ընթացքում ֆինանսական հաշվով գրանցված ներհոսքի արդյունքում զգալիորեն աճել են նաև ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պահուստները՝ 366 մլն դոլարով, ինչը հիմնականում պայմանավորված էր ՀՀ տնտեսությունից ավելի քան 246 մլն արտարժութային միջոցների առքով: Կապիտալի հաշվում կտրուկ փոփոխություններ չեն գրանցվել:

Աղյուսակ 1. ՀՀ վճարային հաշվեկշիռը 2005-2006 թվականներին (մլն դոլար, վերլուծական ներկայացում)

Ցուցանիշներ	2005					2006				
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	2005	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	2006
Ընթացիկ հաշիվ	**-15**	**-19**	**-4**	**-14**	**-52**	**-60**	**1**	**-19**	**-39**	**-117**
Ընթացիկ հաշիվ (առանց վերաներդրված եկամտի)	**14**	**20**	**31**	**39**	**104**	**-17**	**27**	**42**	**25**	**77**
Ապրանքներ	-125	-130	-141	-192	-588	-176	-199	-238	-282	-896
Արտահանում	207	246	276	276	1,005	195	263	253	314	1,025
Ներմուծում	-331	-376	-417	-469	-1,593	-371	-462	-492	-596	-1,921
Ծառայություններ	-30	-45	-18	-28	-120	-30	-39	-24	-37	-130
Արտահանում	69	99	130	113	411	72	106	164	142	485
Ներմուծում	-98	-144	-148	-141	-531	-103	-145	-188	-179	-615
Եկամուտներ	31	50	32	20	133	64	65	53	33	215
Եկամուտ աշխատուժից	60	90	69	78	296	107	114	126	100	446
Եկամուտ ներդրումներից	-29	-40	-36	-58	-163	-43	-49	-73	-66	-231
այդ թվում՝ վերաներդրված եկամուտ	-29	-39	-35	-52	-155	-43	-26	-60	-64	-193
Ընթացիկ տրանսֆերտներ	108	106	122	187	524	82	174	191	246	694
Պետական	16	11	9	29	66	9	25	8	37	80
Մասնավոր	92	95	113	158	458	73	149	183	209	614
Կապիտալի և ֆինանսական հաշիվ *(առանց ԿԲ ՁԱՄ փոփոխության)*	**64**	**77**	**56**	**39**	**236**	**60**	**85**	**77**	**298**	**521**
Կապիտալի հաշիվ	17	16	18	23	73	16	21	22	28	86
Ֆինանսական հաշիվ	2	-2	-18	-7	-25	45	-19	3	18	47
Ուղղակի ներդրումներ	46	60	49	78	233	47	53	100	250	450
Պորտֆելային ներդրումներ	-1	-1	-1	1	-2	-1	9	0	1	9


Այլ ներդրումներ	2	2	-10	-63	-68	-2	3	-45	19	-25
Ակտիվներ	-22	-13	-35	-101	-171	-48	-1	-120	-7	-176
Կառավարություն	16	0	-18	-57	-59	0	43	-44	85	84
Բանկեր	5	12	3	22	42	-9	27	-14	-11	-8
Այլ հատվածներ	-43	-25	-21	-66	-154	-39	-71	-62	-80	-252
Պարտավորություններ	24	15	25	39	102	46	4	75	26	150
Կառավարություն	9	8	16	3	36	7	29	15	17	69
Բանկեր	-8	17	6	9	24	29	-28	15	19	34
Այլ հատվածներ	23	-10	3	26	42	10	3	45	-10	48
ԿԲ ՁԱԱ փոփոխություն	**-45**	**-64**	**-56**	**-23**	**-188**	**0**	**-83**	**-52**	**-252**	**-388**
Սխալներ և բացթողումներ	**-3**	**5**	**4**	**-3**	**4**	**-1**	**-2**	**-6**	**-6**	**-16**

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ

Ապրանքների արտահանում


Ապրանքների արտահանումը (կրեդիտ) 2006 թվականին կազմել է 1025.4 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 2%-ով (FOB գներով արտահանումը կազմել է մոտ 992 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով ընդամենը 1.9%-ով): Ընդ որում, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածի, արտահանումն ավելացել է 8.4%-ով՝ նախորդ տարվա 50.5% աճի փոխարեն:

Գրաֆիկ 1. Արտահանման դինամիկան



2006 թվականին «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ նվազել են 35.4 մլն ԱՄՆ դոլարով կամ 10.5%-ով: Նման նվազումը հիմնականում պայմանավորված է ադամանդի միջազգային շուկայում դեռևս 2005 թվականից սկսված կառուցվածքային որոշ փոփոխություններով: Շուրջ 41.1 մլն դոլարով նվազել են նաև «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները՝ պայմանավորված միջազգային շուկայում մոլիբդենի գների նվազմամբ (նվազել է տարեկան մոտ 25%-ով), իսկ «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբի մոտ 43.1 մլն դոլար աճը պայմանավորված է պղնձի համաշխարհային գների աճով (աճել է տարեկան մոտ 83%-ով): Զգալիորեն՝ մոտ 18 մլն դոլարով ավելացել են «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբի արտահանման ծավալները:

Գրաֆիկ 2. Արտահանման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի



Արտահանվող ապրանքների գները նվազել են 0.4%-ով (2005 թվականին աճել էին 15.5%-ով), ինչը ևս հանգեցրել է արտահանման աճի տեմպերի նվազմանը:

Աղյուսակ 2. Արտահանման գնի և ծավալի փոփոխություն (%)

Ապրանքախումբ	2005			2006		
	Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված		Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված	
		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ
Ընդամենը	**+34.7**	**+19.2**	**+15.5**	**+1.1**	**+1.5**	**-0.4**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն [7]	-14.4	-11.1	-3.3	-1.1	-9.1	+8.0
Թանկարժեք քարեր և մետաղներ	+12.4	-5.4	+17.8	-10.5	-9.1	-1.4
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ [8]	-3.5	-23.8	+20.3	+61.3	+26.9	+34.4
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	+133.9	+87.8	+46.1	-12.8	-0.7	-12.1
Գյուղատնտեսական մթերքներ [9]	+37.7	+32.3	+5.4	+6.8	+6.5	+0.3
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ [10]	+14.7	+14.0	+0.7	+31.3	+26.9	+4.4
Այլ ապրանքներ [11]	+72.3	+47.5	+24.8	-17.3	-47.9	+30.6

2006 թվականին նվազել է արտահանվող ապրանքների ապրանքային բևեռացման[12] ցուցանիշը՝ կազմելով 45.5% (նախորդ տարի՝ 50.0%), հիմնականում արտահանման մեջ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի տեսակարար կշռի նվազման հաշվին: Սակայն, չնայած բևեռացման

[7] *Ներառում է «Մանածագործական իրեր», «Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ», «Կաշվե հումք, մորթի, կաշի և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերը:*
[8] *Ներառում է «Հանքահումքային մթերքներ», «Քիմիական արտադրության ապրանքներ», «Պլաստմասսա, կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից» ապրանքախմբերը:*
[9] *Ներառում է «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք», «Բուսական ծագման արտադրանք», «Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր», «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերը:*
[10] *Ներառում է «Մեքենաներ և սարքավորումներ», «Տրանսպորտային միջոցներ», «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբերը:*
[11] *Ներառում է «Փայտ և փայտյա իրեր», «Թուղթ և թղթյա իրեր», «Կահույք և խաղալիքներ», «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերը:*
[12] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*

$$K = \frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100, \text{ որտեղ՝}$$

K-ն բևեռացման գործակիցն է, x_i-ը՝ i ապրանքի արտահանման (ներմուծման) ծավալը, X–ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը: Մեկ ապրանքի արտահանման (ներմուծման) դեպքում ցուցանիշը հավասար կլինի 100%-ի. որքան ապրանքախմբերի թվաքանակը մեծ է, այնքան բևեռացման ցուցանիշը փոքր է:


ցուցանիշի նվազմանը, այն դեռևս մնում է բարձր, ինչի մասին է վկայում այն, որ 2006 թվականին 3 հիմնական ապրանքախմբեր կազմել են ամբողջ արտահանման մոտ 73%-ը:

Աղյուսակ 3. Արտահանման ապրանքային բևեռացում (%)[12]

	2001	2002	2003	2004	2005	2006
Ապրանքային բևեռացում	43.8	54.4	54.9	49.1	50.0	45.5

2006 թվականին, ԱՊՀ անդամ երկրներից, ավելացել են Ուկրաինա՝ 8.8 մլն դոլարով (հիմնականում արտահանվում են ոգելից խմիչքներ և ոչ թանկարժեք մետաղներ), Վրաստան՝ 7.8 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է ցեմենտ, սուրճ և էլեկտրաէներգիա) արտահանվող ապրանքների ծավալները: Այլ երկրներից, կտրուկ աճել են արտահանման ծավալները Շվեյցարիա՝ 37.4 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է պղնձի հանքանյութ, կիսամշակ և անմշակ ոսկի, ժամացույցի թափք և այլ մասեր, ադամանդե քար և երկաթամիահալվածք), Իսպանիա՝ 23.7 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է պղնձի հանքաքար), Մեծ Բրիտանիա՝ 7.2 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է երկաթամիահալվածք և պղնձի հանքաքար) և Լեհաստան՝ 7.1 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է արհեստական կաուչուկ): Մյուս կողմից՝ կտրուկ նվազել են արտահանման ծավալները Իսրայել՝ 24.8 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է ադամանդ), Բելգիա՝ 15.7 մլն դոլարով՝ (հիմնականում արտահանվում է ադամանդ), Չինաստան՝ 8.8 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է մոլիբդենի հանքաքար և խտանյութ), Նիդեռլանդներ՝ 6.1 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է երկաթամիահալվածք):

Գրաֆիկ 3. Արտահանման կառուցվածքը ըստ հիմնական երկրների (2006 թվական)



2006 թվականին արտահանման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը[13] նվազել է և կազմել 30.2%՝ նախորդ տարվա 31.8%-ի փոխարեն:

Աղյուսակ 4. Արտահանման աշխարհագրական բևեռացում (%)[13]

	2001	2002	2003	2004	2005	2006
Աշխարհագրական բևեռացում	31.6	33.0	34.1	30.3	31.8	30.2

[13] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*

$$K=\frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100, \text{ որտեղ՝}$$

K-ն բևեռացման գործակիցն է,
X_i-ը՝ արտահանման (ներմուծման) ծավալն է i երկիր,
X –ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը:

Նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ևս արտահանման ինչպես ապրանքային, այնպես էլ աշխարհագրական բևեռացման ցուցանիշները կտրուկ փոփոխություններ չեն կրել, թեև ընդհանուր առմամբ, միջինում, դրսևորել են նվազման միտումներ[14]:

Աղյուսակ 5. Արտահանման ապրանքային բևեռացման ցուցանիշը (%)

Երկիր	2005	2006
Ադրբեջան	77.3	84.8
Լատվիա	34.5	33.6
Լիտվա	35.5	33.4
Հայաստան	50.0	45.5
Ղրղզստան	41.6	39.0
Մոլդովա	44.2	39.8
Ռուսաստան	66.1	67.2
Վրաստան	39.3	36.5
Ուկրաինա	45.9	46.8
Միջին	***48.3***	***47.4***

Աղյուսակ 6. Արտահանման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը (%)

Երկիր	2005	2006
Ադրբեջան	36.1	47.6
Լատվիա	36.5	38.6
Լիտվա	26.9	27.4
Հայաստան	31.8	30.2
Ղրղզստան	40.1	44.1
Մոլդովա	42.9	35.6
Ռուսաստան	22.3	23.3
Վրաստան	30.4	25.9
Ուկրաինա	34.5	26.8
Միջին	***33.5***	***33.3***


Հայաստանի ապրանքային և աշխարհագրական բևեռացման ցուցանիշները թեև ցածր են նախկին ԽՍՀՄ հանրապետությունների համարժեք ցուցանիշի միջին արժեքից, սակայն դրանք դեռևս մնում են բարձր: Ներկայացված երկրներից ամենաբարձրը, սակայն, Ադրբեջանի և Ռուսաստանի՝ ըստ ապրանքների բևեռացման ցուցանիշն է, ինչը պայմանավորված է տվյալ երկրների առանձնահատկությամբ. երկուսն էլ վառելիք արտահանող երկրներ են: Ադրբեջանում, օրինակ, «Հանքահումքային մթերքներ» ապրանքախումբը (հիմնականում՝ նավթ, նավթամթերքներ) կազմում է ամբողջ արտահանման 85%-ը, իսկ արտահանվող ապրանքների 45%-ը արտահանվում է Իտալիա՝ հանգեցնելով արտահանման աշխարհագրական բևեռացման համեմատաբար բարձր մակարդակի: Բարձր է նաև Ռուսաստանի արտահանման ապրանքային կենտրոնացվածությունը, ինչը նույնպես հետևանք է «Հանքահումքային ապրանքներ» ապրանքախմբի արտահանման մեծ ծավալների (հիմնականում՝ գազ): Նշված ապրանքախումբը կազմում է արտահանման մոտ 66%-ը: Մյուս երկրներից, օրինակ Ուկրաինայում, արտահանման մեջ մեծ կշիռ ունի «Ոչ թանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախումբը, որը 2006 թվականին կազմել է արտահանման 43%-ը: Ղրղզստանում մեծ կշիռ ունեն «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները (հիմնականում՝ ոսկի)՝ ընդհանուր արտահանման մոտ 27 %-ը, ինչպես նաև վառելիքի արտահանումը՝ 22%: Ընդ որում՝ 2006 թվականին թանկարժեք մետաղների արտահանման ծավալների կտրուկ աճ է գրանցվել՝ 84%-ով: Ղրղզստանի հիմնական գործընկեր երկիրը Շվեյցարիան է, որին բաժին է ընկնում արտահանման մոտ 26 %-ը, մեծ են նաև Ղազախստան և Ռուսաստան արտահանման ծավալները (համապատասխանաբար՝ 20% և 19%): Նշված գործոնների հետևանքով Ղրղզստանում համեմատաբար մեծ է ըստ աշխարհագրական բաշխվածության բևեռացումը: Մոլդովայում 2005 թվականի համեմատությամբ նվազել է ըստ ապրանքախմբերի արտահանման բևեռացման ցուցանիշը՝ երկրի արտահանման մեջ պատրաստի սննդամթերքի, այդ թվում՝ խմիչքների արտահանման ծավալների կրճատման հետևանքով (2005 թվականին նշված ապրանքախմբի կշիռը եղել է 36.3%, իսկ 2006-ին՝ 26.3%): Միաժամանակ նվազել է դեպի Ռուսաստան արտահանման կշիռը, ինչը կապված է Ռուսաստանի կողմից մոլդովական գինիների ներմուծման արգելման հետ: Չնայած դրան, Մոլդովայում դեռևս արտահանման ծավալների մոտ 61%-ը կազմում են 3 ապրանքախմբեր՝ պատրաստի սննդամթերք, այդ թվում՝ խմիչքներ, մանածագործական արտադրանք և բուսական ծագման արտադրանք: Ապրանքների շուրջ 55.5%-ը արտահանվում է 4 երկիր՝ Ռուսաստան (17%), Ռումինիա (15%), Ուկրաինա (12) և Իտալիա (11%):

[14] Նշված երկրների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ԱՄՀ-ի IFS ամսական պարբերականից և համապատասխան երկրների կենտրոնական բանկերի և ազգային վիճակագրական ծառայությունների՝ INTERNET-ում տեղադրված տնային էջերից:

Ապրանքների ներմուծում

2006 թվականին ներմուծումը (դեբետ) կազմել է 1921.3 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 20.6%-ով (CIF գներով ներմուծումը՝ 2191.6 մլն դոլար. նախորդ տարվա համեմատ աճել է 21.6%-ով): Տարվա ընթացքում ավելացել են հիմնականում «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ 71.9 մլն դոլարով[15], «Ոչ թանկարժեք մետաղներ, դրանցից պատրաստված իրեր»՝ 69.7 մլն դոլարով, «Հանքահումքային մթերքներ»՝ 68.6 մլն դոլարով, «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ»՝ 44.9 մլն դոլարով, «Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք»՝ 32 մլն դոլարով, «Պլաստմասսա և դրանցից իրեր»՝ 30.3 մլն դոլարով, ապրանքախմբերի ներմուծման ծավալները: Զգալի նվազել են «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալները՝ համապատասխանաբար 35.1 մլն դոլարով և 5 մլն դոլարով:

Գրաֆիկ 4. Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի



Ներմուծվող ապրանքատեսակների գները բարձրացել են մոտ 14 %-ով (2005 թվականին աճը կազմել էր 11.8%), ընդ որում՝ բարձրացել են ներմուծվող բոլոր ապրանքախմբերի գները:

Աղյուսակ 7. Ներմուծման գնի և ծավալի փոփոխություն (%) [16]

Ապրանքախումբ	2005			2006		
	Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված		Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում փոփոխություններ՝ կապված	
		Ֆիզիկական ծավալների հետ	գների հետ		Ֆիզիկական ծավալների հետ	գների հետ
Ընդամենը	**+33.4**	**+21.6**	**+11.8**	**+21.6**	**+7.6**	**+14.0**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն [7]	+12.1	-4.0	+16.1	+31.6	+6.6	+25.0
Թանկարժեք քարեր և մետաղներ	+19.2	+0.4	+18.8	-10.1	-16.0	+5.9
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ [8]	+41.3	+25.0	+16.3	+29.4	+1.1	+28.3
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	+54.7	+35.3	+19.4	+74.1	+67.9	+6.2
Գյուղատնտեսական մթերքներ [9]	+11.8	+6.7	+5.1	+8.7	-1.0	+9.7
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ [10]	+61.4	+62.4	-1.0	+31.7	+27.2	+4.5
Այլ ապրանքներ [11]	+35.8	+25.1	+10.7	+43.7	+32.1	+11.6


Ի տարբերություն արտահանման, ներմուծվող ապրանքախմբերի ցրվածությունն ավելի բարձր է: Այդ է վկայում նաև արտահանման նկատմամբ ներմուծման համեմատաբար ցածր բևեռացման ցուցանիշը, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ևս մի փոքր նվազել է՝ կազմելով 31.3%: Բևեռացման ցածր ցուցանիշը հետևանք է այն բանի, որ տարիների ընթացքում ավելանում է Հայաստան ապրանքներ ներմուծող գործընկեր երկրների թիվը՝ նվազեցնելով երկրի կախվածությունը այս կամ այն երկրի անբարենպաստ տնտեսական միջավայրի հնարավոր ազդեցություններից:

[15] Այս հոդվածի 71.9 մլն դոլար աճի 44.6 մլն դոլարը բաժին է ընկնում «Ավտոմատ հաշվիչ մեքենաներ, բլոկեր» և «Ռադիո, հեռուստատեսության հաղորդման սարքավորումներ» ապրանքախմբերին՝ համապատասխանաբար 16.8 մլն դոլար և 27.8 մլն դոլար:
[16] Ներմուծման գները հաշվարկված են ըստ ապրանքի ծագման երկրի հայտանիշի կազմված տվյալների հիման վրա:

Աղյուսակ 8. Ներմուծման ապրանքային բևեռացում (%) [12]

	2001	2002	2003	2004	2005	2006
Ապրանքային բևեռացում	32.0	33.6	35.0	33.0	32.9	31.3

Գրաֆիկ 5. Ներմուծման կառուցվածքը ըստ հիմնական երկրների (2006 թ.)



Ըստ ներմուծվող ապրանքների ծագման երկրի՝ ԱՊՀ անդամ երկրներից ներմուծումը զգալի ավելացել է Ղազախստանից (հիմնականում ներմուծվում է բնական և հեղուկ գազ)՝ 158.4 մլն դոլարով: Այս աճի պատճառն այն է, որ մինչև 2006 թվականը բնական գազի ներմուծման երկիր էր հանդիսանում Թուրքմենստանը: Աճել է նաև ներմուծումը Ռուսաստանից՝ 61.5 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում է ցորեն, մարդատար ավտոմեքենա, անմշակ ոսկի և նավթամթերք): Եվրոմիության անդամ երկրներից ներմուծումն աճել է Ավստրիայից (հիմնականում ներմուծվում է անմշակ կամ կիսամշակ ոսկի)՝ 39.7 մլն դոլարով, Իտալիայից (հիմնականում ներմուծվում է ներքնազգեստ, անմշակ ոսկի և էլեկտրական սարքեր)՝ 26.7 մլն դոլարով, Հունաստանից (հիմնականում ներմուծվում են սարքեր և ապարատներ, մետաղե դռներ և պատուհաններ, սիգար ու սիգարետներ)՝ 26 մլն դոլարով, իսկ այլ երկրներից զգալի աճել է ներմուծումը Թուրքիայից (հիմնականում ներմուծվում են շինարարական ապրանքներ)՝ 68.1 մլն ԱՄՆ դոլարով[17] և Չինաստանից (հիմնականում ներմուծվում են սպառողական ապրանքներ և սարքավորումներ)՝ 35.8 մլն դոլարով:

2006 թվականին, նախորդ տարվա համեմատ, չնչին չափով աճել է ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը և կազմել 24.9%:

Աղյուսակ 9. Ներմուծման աշխարհագրական բևեռացում (%)[13]

	2001	2002	2003	2004	2005	2006
Աշխարհագրական բևեռացում	28.2	27.5	26.5	24.4	24.8	24.9

Աղյուսակ 10. Ըստ ապրանքների ներմուծման բևեռացման ցուցանիշը (%)

Երկիր	2005	2006
Ադրբեջան	40.9	39.8
Լատվիա	32.6	32.5
Լիտվա	36.3	35.7
Հայաստան	32.9	31.3
Ղրղզստան	38.4	38.7
Մոլդովա	33.0	35.3
Ռուսաստան	51.0	53.2
Վրաստան	33.7	33.1
Ուկրաինա	40.4	39.4
Միջին	***37.7***	***37.7***

[17] *Թվարկված երկրներից ապրանքների ներմուծումը հաշվարկված է ըստ ծագման երկրի հայտանիշի կազմված տվյալների հիման վրա:*

Աղյուսակներում ներկայացված ցուցանիշները ցույց են տալիս, որ, ի տարբերություն արտահանման, ներմուծման ապրանքային բևեռացումը ներկայացված երկրներում բավականին ցածր է: Բացառություն են կազմում Ռուսաստանը, Ուկրաինան և Ադրբեջանը: Ռուսաստանում ներմուծման ծավալների մոտ 79.1%-ը կազմում են մեքենասարքավորումները, պարենային ապրանքները և քիմիական ու հարակից ճյուղերի արտադրանքը, Ուկրաինայում 58.9%-ը կազմում է հանքահումքային մթերքների, մեքենասարքավորումների և տրանսպորտային միջոցների ներմուծումը, Ադրբեջանում նույն ապրանքախմբերը կազմում են ներմուծման 60.8%-ը:

Աղյուսակ 11. Ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը (%)

Երկիր	2005	2006
Ադրբեջան	24.6	29.0
Լատվիա	38.0	38.6
Լիտվա	35.3	33.4
Հայաստան	25.2	24.9
Ղրղզստան	43.4	46.2
Մոլդովա	38.2	39.1
Ռուսաստան	23.9	23.8
Վրաստան	27.7	28.5
Ուկրաինա	45.6	34.3
Միջին	***33.5***	***33.1***

Ուկրաինայում ներմուծման աշխարհագրական բևեռացումը նվազել է՝ կապված ներմուծման կազմում Ռուսաստանի կշռի մի փոքր նվազման հետ (2005-ին՝ 35.5%-ը, իսկ 2006-ին՝ 30.6%-ը), իսկ Ղրղզստանում այս ցուցանիշը շարունակում է մնալ բարձր, քանի որ ներմուծման շուրջ 50%-ը կատարվում է Ռուսաստանից և Ղազախստանից:

Հայաստանում ներմուծման միջին հակվածության ցուցանիշը՝ ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությունը 2006 թվականին նվազել է ապրանքների ու ծառայությունների ներմուծման աճի տեմպերի նկատմամբ դոլարային արտահայտությամբ համախառն ներքին արդյունքի առաջանցիկ աճի տեմպերի հետևանքով: Ընդ որում, դոլարային արտահայտությամբ համախառն ներքին արդյունքի աճը զգալիորեն գերազանցել է դրամային արտահայտությամբ համախառն ներքին արդյունքի աճը՝ պայմանավորված դրամի մոտ 10%-ով միջին տարեկան արժևորմամբ: Ուսումնասիրված գրեթե բոլոր երկրներում (բացառությամբ Մոլդովայի) ևս գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ազգային արժույթի արժևորում, ինչի հետևանքով դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ն գերազանցել է ազգային արժույթով ՀՆԱ-ի աճի տեմպերը, սակայն որոշ երկրներում, այնուամենայնիվ, ապրանքների ու ծառայությունների աճի տեմպերը գերազանցել են դոլարային արտահայտությամբ ՀՆԱ աճի տեմպերը, ինչի արդյունքում ավելացել է այդ երկրների ներմուծման նկատմամբ միջին հակվածությունը: Այդպիսի երկրներից է Ղրղզստանը, որտեղ ընդամենը 2.1% արժևորման պայմաններում նավթամթերքների, մեքենասարքավորումների և տրանսպորտային միջոցների ներմուծման կտրուկ աճի հետևանքով ներմուծման աճը զգալիորեն գերազանցել է դոլարային արտահայտությամբ ՀՆԱ աճի տեմպերը, ինչը հանգեցրել է ցուցանիշի զգալի աճի:

Աղյուսակ 12. Ներմուծման միջին հակվածության ցուցանիշը (%)

Երկիր	2001	2002	2003	2004	2005	2006
Ադրբեջան	37.3	51.3	65.6	72.7	56.0	41.0
Էստոնիա	87.5	81.3	81.9	83.8	84.9	91.1
Լատվիա	51.7	51.3	55.1	59.4	61.4	64.5
Լիտվա	55.4	58.4	57.7	59.2	65.2	70.1
Հայաստան	46.3	46.6	49.8	42.3	43.3	39.7
Ղազախստան	49.6	47.9	44.4	43.9	44.6	40.5
Ղրղզստան	37.6	44.6	45.2	51.0	57.2	78.8
Մոլդովա	73.5	77.9	87.3	81.3	90.9	93.2
Ռուսաստան	24.3	24.5	23.9	22.2	21.5	21.3
Վրաստան	40.0	42.4	46.5	48.2	51.6	56.7
Ուկրաինա	53.8	50.7	55.2	56.0	50.7	50.1
Միջին	***50.6***	***52.5***	***55.7***	***56.4***	***57.0***	***58.8***

Աղյուսակ 13. Արտահանման ու ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի օգտագործման ուղղությունների[18]

Ապրանքախումբ	Ծավալ, մլն դոլար				Տեսակարար կշիռը, %			
	Արտահանում		Ներմուծում		Արտահանում		Ներմուծում	
	2005	2006	2005	2006	2005	2006	2005	2006
Սպառողական ապրանքներ	75.6	76.1	224.7	283.2	7.9	7.9	13.0	13.5
Մթերք և խմիչքներ	109.1	115.8	246.9	269.0	11.4	12.0	14.3	12.9
Արդյունաբերական պաշարներ	716.0	728.1	659.4	765.3	74.5	75.4	38.2	36.6
Վառելիք և վառելանյութ	27.0	19.6	260.4	344.8	2.8	2.0	15.1	16.5
Կապիտալ ապրանքներ	29.0	23.2	226.6	298.9	3.0	2.4	13.1	14.3
Տրանսպորտային սարքավորումներ, սարքեր և դրանց մասեր	3.8	2.2	107.3	130.9	0.4	0.2	6.2	6.3
Այլ ապրանքներ	0.0	0.1	0.1	0.1	0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը	**960.6**	**965.2**	**1725.4**	**2092.1**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**

Ապրանքների հաշվեկշիռ

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2006 թվականին կազմել է մոտ 2946.8 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 13.4%-ով: Ապրանքների հաշվեկշռի պակասուրդը կազմել է 895.9 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 52.4%-ով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ ապրանքաշրջանառությունը կազմել է 2333.3 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 21.9 %-ով, իսկ ապրանքների հաշվեկշռի պակասուրդը կազմել է 884.3 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 53.4%-ով:

2006 թվականին զգալիորեն նվազել է տնտեսության բացվածության ցուցանիշը[19] և կազմել մոտ 63%: Ցուցանիշի նման նվազումը հիմնականում պայմանավորված էր ապրանքների ու ծառայությունների արտաքին շրջանառության համեմատ դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի առաջանցիկ աճի տեմպերով: Նշված ցուցանիշի դինամիկան նախկին ԽՍՀՄ երկրներում հիմնականում ունեցել է նվազման միտում: Ընդ որում, ցուցանիշը զգալիորեն նվազել է Ադրբեջանում, Հայաստանում և Ղազախստանում, որտեղ ազգային արժույթները ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել են 5%-ից ավելի չափով (այսինքն՝ դոլարային արտահայտությամբ ՀՆԱ աճի տեմպը բավականին մեծ է ազգային արժույթով արտահայտված ՀՆԱ աճի տեմպից):

Աղյուսակ 14. Բացվածության ցուցանիշ (%)


Երկիր	2001	2002	2003	2004	2005	2006
Ադրբեջան	78.9	95.2	107.6	121.5	122.7	111.3
Էստոնիա	171.2	155.5	156.2	159.5	163.5	170.4
Լատվիա	93.3	92.3	97.4	103.0	108.0	107.9
Լիտվա	105.4	111.4	109.4	111.4	123.0	129.7
Հայաստան	71.8	76.0	81.8	69.9	72.2	63.4
Ղազախստան	97.4	95.8	94.2	96.3	98.0	91.9
Ղրղզստան	74.2	84.3	83.6	93.6	95.8	120.3
Մոլդովա	123.4	130.7	140.8	132.5	141.2	139.2
Ռուսաստան	61.3	59.5	59.0	56.6	56.6	55.2
Վրաստան	65.3	71.7	78.4	79.8	85.5	89.5
Ուկրաինա	109.2	105.8	112.9	119.6	102.3	97.3
Միջին	***95.6***	***98.0***	***101.9***	***104.0***	***106.3***	***106.9***

Բացվածության ցուցանիշի առանձին բաղադրատարրերի՝ արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները հնարավորություն են տալիս հասկանալու, թե բացվածության ցուցանիշի դինամիկան կոնկրետ որ բաղադրատարրով է պայմանավորված: Հայաստանում, օրինակ, փոքր են ինչպես արտահանում/ՀՆԱ, այնպես էլ ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները:

[18] Ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ցուցանիշներում քաղաքացիների կողմից իրականացված առևտուրը ընդգրկված չէ: Նշենք, որ քաղաքացիների կողմից կատարված առևտրում հատկապես մեծ տեսակարար կշիռ ունի մարդատար ավտոմեքենաների ներմուծումը:

*[19] Բացվածության ցուցանիշ = (ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման գումար ((արտաքին առևտրի շրջանառություն)*100/ՀՆԱ):*


Գրաֆիկ 6. Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները (միջին 2002-2006 թթ. համար) նախկին ԽՍՀՄ երկրներում (%)




Ծառայությունների հաշվեկշիռ

Տարվա ընթացքում «Ծառայություններ» հոդվածի պակասուրդը աճել է 8.7%-ով՝ կազմելով 130.4 մլն դոլար (նախորդ տարի՝ 120 մլն դոլար): «Ծառայություններ» հոդվածի բացասական հաշվեկշռի աճը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային ծառայությունների բացասական հաշվեկշռի մոտ 10 մլն դոլար աճով (8.5%): Ընդ որում, բեռնատար տրանսպորտային ծառայությունների հաշվեկշռի բացասական ճեղքվածքը նախորդ տարվա համեմատ ավելացել է 35.6 մլն դոլարով (40%), իսկ օդային տրանսպորտինը՝ նվազել 17.8 մլն դոլարով (83%): «Ծառայություններ» հոդվածում 9.5 մլն դոլարով (ավելի քան 45%-ով) աճել է համակարգչային ծառայությունների դրական հաշվեկշիռը:

Գրաֆիկ 7. Արտահանվող ծառայությունների դինամիկան



Գրաֆիկ 8. Ներմուծվող ծառայությունների դինամիկան




Եկամուտների հաշվեկշիռ

Գրանցվել է «Եկամուտներ» հոդվածի դրական ցուցանիշ՝ 215.2 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 82.6 մլն դոլարով: Զգալիորեն ավելացել են աշխատուժից եկամուտները՝ հիմնականում սեզոնային աշխատողների եկամուտների զուտ ներհոսքի 150.6 մլն դոլար աճի արդյունքում: 2006 թվականին պաշտոնական պահուստների աճի շնորհիվ ավելացել են նաև պահուստների կառավարումից ստացված եկամուտները՝ կազմելով 29.6 մլն դոլար՝ նախորդ տարվա 14.2 մլն դոլարի փոխարեն:

«Եկամուտներ» հոդվածի դեպի դուրս փոխանցումների մեջ զգալի են եղել ուղղակի ներդրմամբ ձեռնարկություններում ոչ ռեզիդենտների կողմից ստացված և վերաներդրված եկամուտները՝ կազմելով 193.9 մլն դոլար՝ նախորդ տարվա 155.2 մլն դոլարի փոխարեն: Ընդ որում, թեև ուղղակի ներդրմամբ ձեռնարկություններում ոչ ռեզիդենտների կողմից ստացված և վերաներդրված եկամուտը փաստացի հոսք չի ենթադրում, քանի որ այն երկրից չուրս չի գալիս, այլ ուղղակի ավելացնում է ոչ ռեզիդենտի ներդրումը տվյալ ձեռնարկությունում, սակայն արտացոլվում է ընթացիկ հաշվի համապատասխան հոդվածում և ի վերջո ազդում ընթացիկ հաշվի մեծության վրա (մեծացնելով ընթացիկ հաշվի պակասուրդը)[20] (աղյուսակներ 17, 18):

Գրաֆիկ 9. Եկամուտների հաշվեկշռի դինամիկան



Աղյուսակ 15. Վերաներդրված եկամուտների դինամիկան (մլն դոլար)

Երկիր	2002	2003	2004	2005	2006
Էստոնիա	205.4	485.6	643.8	652.7	1147.4
Լատվիա	28.4	95.0	318.5	350.0	706.3
Լիտվա	69.5	222.1	409.0	299.3	678.2
Հայաստան	7.5	27.2	107.6	155.2	193.9
Ղազախստան	498.3	769.5	515.6	206.4	728.9
Մոլդովա	27.4	15.3	38.1	27.4	41.6
Ռուսաստան	658.0	7065.0	5330.0	9361.0	12868.0
Վրաստան	42.0	48.4	43.4	36.5	65.6

Ընթացիկ տրանսֆերտներ

Ընթացիկ տրանսֆերտները կազմել են 694 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելացել են 170.3 մլն դոլարով: Ընդ որում, ընթացիկ տրանսֆերտների նման ավելացումը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է մասնավոր հատվածի տրանսֆերտների աճով: Պետական ընթացիկ տրանսֆերտ-

[20] Ընթացիկ հաշվի «Եկամուտներ» հոդվածում գրանցվող «Եկամուտներ ուղղակի ներդրումներից» ենթահոդվածում արտացոլվող վերաներդրված եկամուտն իրականում միջոցների հոսք չի ենթադրում, այլ պարզապես, ըստ վճարային հաշվեկշռի մեթոդաբանության, գրանցվում է նշված հոդվածում, որի հակառակ գրանցումը արտացոլվում է ֆինանսական հաշվի «Ուղղակի ներդրումներ» բաժնում: Այսինքն՝ քանի որ նշված միջոցները իրականում դուրս չեն գալիս երկրից, կարելի է ընթացիկ հաշվի պակասուրդը դիտարկել նաև առանց նշված՝ «Վերաներդրված եկամուտ» հոդվածի, քանի որ այն երկրներում, որտեղ օտարերկրյա ներդրումներն ու դրանցից ստացված եկամուտները զգալի են, բնականաբար զգալիորեն փոխվում է ընթացիկ հաշվի պակասուրդի մեծությունը, և առաջանում է ընթացիկ հաշվի պակասուրդի «ուռճացման» խնդիր:

ներն ավելացել են ընդամենը 13.5 մլն դոլարով և կազմել 82 մլն դոլար, որից 41.4 մլն դոլարը մարդասիրական օգնությունն է, 12.2 մլն դոլարը՝ տեխնիկական օգնությունը, իսկ 28.4 մլն դոլարը՝ ֆինանսական օգնությունը: Մասնավոր տրանսֆերտները կազմել են 614 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով ավելի քան 34%-ով:

2006 թվականին ՀՀ բանկային համակարգով ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումների՝ ընթացիկ մասնավոր տրանսֆերտների ու սեզոնային աշխատողների կողմից փոխանցված եկամուտների ներհոսքը կազմել է 961 մլն դոլար, իսկ արտահոսքը՝ 208 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ ավելացել է համապատասխանաբար 28% և 10 %-ով): Փոխանցումների ինչպես ներհոսքում, այնպես էլ արտահոսքում զգալի կշիռ ունեն Ռուսաստանն ու ԱՄՆ-ը. ներհոսքում համապատասխանաբար 77% և 10%, իսկ արտահոսքում՝ 52% և 6%:


Մասնավոր տրանսֆերտների և սեզոնային աշխատողների եկամուտների մեծ ներհոսք ունեն նաև Մոլդովան, Ղրղզստանն ու Վրաստանը, իսկ Ղազախստանն ու Ռուսաստանը համարվում են «արտահոսքի» երկրներ, որտեղ աշխատում են զգալի թվով միգրանտներ և որտեղից զգալի է վերը նշված փոխանցումների արտահոսքը:

Աղյուսակ 16. Մասնավոր հատվածի ընթացիկ տրանսֆերտների և սեզոնային աշխատողների աշխատավարձերի (զուտ) տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)

Երկիր	2002	2003	2004	2005	2006
Հայաստան	9.4	10.4	17.6	15.4	16.6
Ղազախստան	-1.0	-2.0	-2.7	-3.2	-3.6
Ղրղզստան	1.5	4.2	12.5	18.8	24.0
Մոլդովա	19.8	27.2	29.0	32.7	37.4
Ռուսաստան	-0.2	-0.3	-0.3	-0.4	-0.9
Վրաստան	7.6	7.7	8.6	7.6	8.7

ՀՀ վճարային հաշվեկշռի «Եկամուտներ» և «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածները, ինչպես և նախկինում, 2006 թվականին հանդիսացել են «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների բացասական ճեղքվածքի ֆինանսավորման հիմնական աղբյուրներ: Ընդ որում, նշված հոդվածների միջոցով ֆինանսավորվել է ապրանքների ու ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդի 88.6%-ը (նախորդ տարի՝ 92.7%-ը):

Գրաֆիկ 10. Ընթացիկ հաշվի տարրերի դինամիկան



Ընթացիկ հաշվի բաղադրատարրերի՝ վերը նշված դինամիկայի արդյունքում 2006 թվականին ավելի քան կրկնակի աճել է ընթացիկ հաշվի պակասուրդը և կազմել 117.1 մլն դոլար, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 1.8%՝ նախորդ տարվա 1.0 %-ի փոխարեն:

Աղյուսակ 17. Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)

Երկիր	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Ադրբեջան	-3.2	-0.9	-12.6	-27.8	-29.7	1.3	18.7
Էստոնիա	-5.4	-5.7	-10.1	-12.1	-12.5	-10.0	-15.6
Լատվիա	-4.6	-7.6	-6.7	-8.3	-12.9	-12.4	-21.3
Լիտվա	-5.9	-4.7	-5.1	-6.9	-7.7	-7.1	-10.8
Հայաստան	-14.6	-9.5	-6.2	-6.7	-0.5	-1.1	-1.8
Ղազախստան	2.0	-6.5	-4.2	-0.9	0.8	-1.8	-2.2
Ղրղզստան	-9.1	-3.7	-1.9	-2.2	1.3	-1.2	-14.0
Մոլդովա	-8.4	-2.3	-4.3	-6.6	-1.8	-7.6	-11.5
Ռուսաստան	18.0	11.0	8.4	8.2	10.1	11.0	9.8
Վրաստան	-8.8	-6.6	-6.5	-9.4	-6.7	-10.8	-14.9
Ուկրաինա	4.7	3.7	7.5	5.8	10.6	2.9	-1.5
Միջին	-3.2	-3.0	-3.8	-6.1	-4.4	-3.3	-5.9

Ուսումնասիրելով ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդի տեսակարար կշռի դինամիկան, կարելի է նկատել, որ ավելի զարգացած տնտեսություն ունեցող երկրներում, մասնավորապես մերձբալթյան երկրներում, տարիների ընթացքում տեղի է ունեցել ընթացիկ հաշվի պակասուրդի նվազում, սակայն վերջին մի քանի տարիներին (հիմնականում սկսած 2002-2003 թվականներից) նկատվել է ընթացիկ հաշվի պակասուրդի խորացում: Դրան նպաստել են մի շարք գործոններ, նախ՝ եկամուտների աճին զուգահեռ, ներմուծվող ապրանքների և ծառայությունների աճը, ինչպես նաև նախկինում կատարված օտարերկրյա ներդրումների դիմաց ստացված և վերաներդրված եկամուտների աճը, ինչը թեև փաստացի հոսք չի ենթադրում, սակայն ազդում է ընթացիկ հաշվի պակասուրդի մեծության վրա, քանի որ ըստ վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության, այն գրանցվում է ընթացիկ հաշվում բացասական նշանով՝ մեծացնելով ընթացիկ հաշվի պակասուրդը[17]:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ վերլուծական նպատակներով կարելի է որպես ընթացիկ հաշվի պակասուրդ դիտարկել առանց վերաներդրված եկամտի ընթացիկ հաշվի պակասուրդը:

Աղյուսակ 18. Ընթացիկ հաշվի (առանց վերաներդրված եկամտի) տես. կշիռը ՀՆԱ-ում (%)


Երկիր	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Էստոնիա	-3.4	-1.9	-7.2	-6.8	-6.9	-5.3	-8.7
Լատվիա	-3.8	-7.2	-6.4	-7.4	-10.6	-10.2	-17.8
Լիտվա	-5.2	-4.0	-4.6	-5.7	-5.8	-6.0	-8.5
Հայաստան	-13.5	-9.3	-5.9	-5.8	-2.5	2.1	1.2
Ղազախստան	4.6	-4.4	-2.2	1.7	2.0	-1.5	-1.3
Մոլդովա	-8.6	-4.8	-6.0	-5.8	-0.3	-6.7	-10.3
Ռուսաստան	18.0	11.2	8.6	9.8	11.0	12.3	11.1
Վրաստան	-8.8	-6.6	-5.3	-8.2	-5.9	-10.2	-14.1
Միջին	-3.2	-3.0	-3.8	-6.1	-1.8	-3.2	-6.0

Ըստ աղյուսակ 18-ում ներկայացված տվյալների, ի տարբերություն «Մասնավոր տրանսֆերտներ և աշխատուժից եկամուտներ» հոդվածով մեծ ներհոսք ունեցող ԱՊՀ մյուս երկրների՝ Մոլդովայի, Ղրղզստանի և Վրաստանի, Հայաստանում առկա է նման միջոցների զգալի ներհոսք, միևնույն ժամանակ՝ զգալի են վերաներդրված եկամտի չափերը, ինչը բացառելու դեպքում նկատվում է ընթացիկ հաշվի պակասուրդի զգալի կրճատում, իսկ 2004 – 2006 թվականներին՝ արդեն նույնիսկ հավելուրդ:

ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի աճը ուղեկցվել է կապիտալի ու ֆինանսական հաշվով ստացվող միջոցների ներհոսքի զգալի աճով: Վերջինս (առանց ԿԲ զուտ արտաքին ակտիվների փոփոխության) 2006 թվականին կազմել է 520.5 մլն դոլար՝ նախորդ տարվա 236 մլն դոլարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ աճել է հատկապես ֆինանսական հաշիվը, ինչի արդյունքում Կենտրոնական բանկի պահուստների աննախադեպ աճը կազմել է ավելի քան 366 մլն դոլար:

Գրաֆիկ 11. ՀՀ վճարային հաշվեկշռի կապիտալի ու ֆինանսական հաշվի բաղադրատարրերի դինամիկան 2002-2006 թվականներին



ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ

Կապիտալի հաշվի հիմնական բաղադրատարր հանդիսացող կապիտալ տրանսֆերտները տարվա ընթացքում կազմել են 86.4 մլն դոլար: Նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 18 %-ով կամ 13 մլն դոլարով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Որպես վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի՝ 2006 թվականին դրսևորված առանձնահատկություն կարելի է նշել ուղղակի ներդրումների և պահուստային ակտիվների զգալի աճը, որոնց գծով հոսքերը տարվա ընթացքում կազմել են համապատասխանաբար 450 մլն ԱՄՆ դոլար և 366 մլն ԱՄՆ դոլար:


Աղյուսակ 18. Ֆինանսական հաշվի կառուցվածքը (ծավալը՝ մլն ԱՄՆ դոլար)

	2003	2004	2005	2006
Ուղղակի ներդրումներ (զուտ)	120.5	245.6	232.7	450.1
Պորտֆելային ներդրումներ (զուտ)	0.3	-2.9	-1.6	9.2
Այլ ներդրումներ (զուտ)	27.4	-232.5	-94.3	-46.8
Պահուստային ակտիվների փոփոխություն	-47.3	-26.3	-162.1	-366.0
Ընդամենը	**100.9**	**-16.1**	**-25.3**	**46.5**

Ուղղակի ներդրումներ

